

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

*Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ  
եւ մաքուր վարուց առաքինութեան*



**Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ**

**ST. GREGORY OF NAREK**

**ԲԱՆ ԽՐԱՏՈՒ ՎԱՍՆ ՈՒՂԻՂ ՀԱԻԱՏՈՅ  
ԵՒ ՄԱՔՈՒՐ ՎԱՐՈՒՅ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ**

**INSTRUCTION ON THE ORTHODOX FAITH  
AND VIRTUOUS AND PURE LIFE**

**ԽՐԱՏ ՈՒՂԻՂ ՀԱԻԱՏՔԻ  
ԵՒ ԱՌԱՔԻՆԻ ՄԱՔՈՒՐ ՎԱՐՔԻ**

**Աշխարհաբարի վերածում եւ ուսումնասիրութիւն՝  
ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵՄԷՉԵԱՆ**

**Modern Armenian translation and commentary by  
ARCHBISHOP NAREG ALEMEZIAN**

**ԱՆԹԻԼԻԱՍ-ԼԻԲԱՆՈՆ  
ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐ-ԵՐԵՎԱՆ**

**ANTELIAS-LEBANON  
ANKYUNACAR-YEREVAN**

Ս. Գրիգոր Նարեկացի. *Խրատ ուղիղ հաւատքի եւ առաքինի մաքուր վարքի: Աշխարհաբարի վերածում եւ ուսումնասիրութիւն Նարեկ արք. Ալեէմեզեան, անգլերեն նախնական թարգմանութիւն՝ Խաչիկ Գրիգորեան, Եր., Անկիւնաքար, 2023, 306 էջ*

**St. Grigor Narekatsi**, Instruction on the orthodox faith and virtuous and pure life. Modern Armenian translation and commentary by Archbishop Nareg Alemeezian, preliminary English translation by Khachik Grigoryan, Yerevan, Ankyunacar, 2023 306 pages

Կազմի վրա՝

© Nareg Alemeezian, for modern Armenian translation and commentary  
© Khachik Grigoryan, for English translation  
© Ankyunacar Publishing, for design

ISBN 978-9939-850-62-7

DEDICATED TO HIS HOLINESS POPE FRANCIS

IN GRATITUDE FOR DECLARING

ST. GREGORY OF NAREK

A DOCTOR OF THE CHURCH

DURING THE PONTIFICATE

OF HIS HOLINESS CATHOLICOS ARAM I

OF THE HOLY SEE OF CILICIA

## ՆԵՐԱԾԱԿԱՆ

SPONSORED BY ARMEN AND ARTAK DOVLATIAN FAMILIES

IN MEMORY OF THEIR FATHER GRIGOR AND

IN HONOR OF THEIR MOTHER MARI

*1981–1983-ին որպէս մասնաւոր վարդապետութեան գաւազանի աւարտաճառ պատրաստուած այս Հայերէն ուսումնասիրութիւնը՝ 2002-ին<sup>1</sup> ուրախութեամբ որպէս գիրք հրամցուցի Հաւատացեալ ընթերցողին եւ Հայ մատենագրութեամբ հետաքրքրուած բանասէրին՝ Ս. Գրիգոր Նարեկացիի Մատենան ողբերգութեան-ի գրութեան 1000-ամեակին առթիւ, փոխարկելով Մեծ Հսկողին խօսքերը եւ զանոնք իրեն յղելով՝ «Կամքիս բուրվառով քեզի կը ձօնեմ զայն»:*

*Ս. Գրիգոր Նարեկացիի վերագրուած<sup>2</sup> ԽՐԱՏ ՈՒՂԻՂ, ՀԱՒԱՏՔԻ ԵՒ ԱՌԱՔԻՆԻ ՄԱՔՈՒՐ ՎԱՐՔԻ գրութիւնը<sup>3</sup> իր ուրոյն տեղը ունի Հայ եկեղեցիի խրատաբանական գրականութեան մէջ՝ հետեւեալ մասնայատկութիւններով.*

*Առաջին, կը պարզաբանէ ուղղափառ Հաւատքը եւ անոր դաւանութեան կը հրաւիրէ Հայ Հաւատացեալը՝ որպէս ճշմարիտ հե-*

<sup>1</sup> Գիրքիս լոյս ընծայումէն առաջ եւ ետք (2002) *Խրատ-ը ուսումնասիրող յանդէսը երկերուն չեմ անդրադարձած, այլ միայն յղումներ կատարած եմ ճեւտեալներուն (ա) Պողոս Խաչատրյան, Գրիգոր Նարեկացի եւ իմ միջնադարը, Ս. Էջմիածին, 1996, (բ) Ս. Գրիգոր Նարեկացի, Մատենան ողբերգութեան եւ այլ երկասիրութիւնը (Հագարամեակի հրատարակութիւն), Անթիլիաս, 2003, (գ) Հրաչյա Թամրազյան, Գրիգոր Նարեկացի և նորայլատոմասկանությունը, Երևան, 2004 եւ (դ) Մատենագիրք հայոց, հատոր Ժբ., Անթիլիաս, 2008: Առաւել, հոս գտնուող հայերէն ուսումնասիրութիւնը բարեփոխուած է:*

<sup>2</sup> *Վերագրումի հարցին համար տես Վանօ Երիսազարեան, Գրիգոր Նարեկացուն վերագրուած Խրատի՝ «Մատենագիրք Հայոց»-ում որպէս Նարեկացու գրական երախայրիք տպագրելու շուրջ, «Հանդէս ամսօրեայ», 2017, 1–12, էջ 463–484*

[https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Handesamsorya/2017\(1-12\).pdf](https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Handesamsorya/2017(1-12).pdf)

<sup>3</sup> Յետ պատրիկ՝ *Խրատ*:

տեւորդ Աստուծոյ՝ սուրբ եւ անբաժանելի Երրորդութեան:

Երկրորդ, կը մանրամասնէ Ընդհանրական եկեղեցիի վարդապետութեան կենսական երեսները՝ սուրբ մկրտութիւնը, սուրբ Հաղորդութիւնը, ապաշխարութիւնը, մեռելներու յարութիւնն ու վերջին դատաստանը եւ երկինքի արքայութիւնն ու յաւիտենական կեանքը, որոնք Նիկիոյ Տիեզերական առաջին ժողովին մէջ (325 թ.) բանաձեւուեցան եւ մաս կազմեցին Հաւատքի Հանգանակին:

Երրորդ, կ'ընդգծէ ուղղափառ Հաւատքի եւ առաքելի գործերու փոխառնչութիւնը՝ որպէս քրիստոնէական կեանքի պտղաբերումին ամբողջացուցիչ տարր:

Չորրորդ, կը վերահաստատէ, որ մարդ բարոյական էակ մըն է՝ բանական, ցասմնական եւ ցանկական Հակումներով առաջնորդուող, եւ ասոնց տրամաբանական Հաւասարակշռոյթով միայն կրնայ իր աստուածահաճոյ եւ քրիստոսատիպ կեանքը ապրի՝ առանց տարուբերելու արդարութեան եւ անարդարութեան միջեւ:

Հինգերորդ, կ'ուրուագծէ հինգ զգայարաններու ըստ պատշաճի բացումներով եւ փակումներով պայմանաւորուած կեանք մը ապրելու հրամայականը՝ որպէս երկնաւոր Փեսային՝ Յիսուսի պարգեւած անզուգական փառքին ժառանգութեան նախապայման: Նկատի ունենալով, որ այս տարի կը նշենք Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետի (1166–1173) վախճանումի 850-ամեակը, պարտ կը զգամ հոս մէջբերել անոր “Հաւատով խոստովանիմ” աղօթքէն քաղուած 9-րդ տունը, դիմելով Ս. Նարեկացիի եւ Ս. Շնորհալիի բարեխօսութեան.

«Ամենախնամ Տէր, դիր պահապան աչաց իմոց  
զերկիւղ քո սուրբ՝ ո՛չ եւս հայիլ յայրատ,  
եւ ականջաց իմոց՝ ո՛չ ախորժել լսել զբանս չարութեան,  
եւ բերանոյ իմոյ՝ ո՛չ խօսել զստութիւն,

եւ սրտի իմոյ՝ ո՛չ խորհել զչարութիւն,  
եւ ձեռաց իմոց՝ ո՛չ գործել զանիրաւութիւն,  
եւ ոտից իմոց՝ ո՛չ գնալ ի ճանապարհս անօրէնութեան.  
այլ ուղղեա զչարժումն սոցա՝ լինել միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի.  
եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս»  
(«Բողորը խնամող Տէր, քու սուրբ երկիւղը պահապան դիր աչքերուս՝ որ այլեւս անառակ ու ցանկացող աչքով չնայիմ,  
եւ ականջներուս՝ որ ախորժ չզգամ չար խօսքեր լսելէ,  
եւ բերանիս՝ որ ստութիւն չխօսիմ,  
եւ սրտիս՝ որ չարութիւն չխորհիմ,  
եւ ձեռքերուս՝ որ անիրաւութիւն չգործեմ,  
եւ ոտքերուս՝ որ անօրէնութեան ճամբաներէն չքայեմ.  
այլ ուղղէ ասոնց շարժումը, որպէսզի միշտ քու պատուիրաններուդ Համաձայն ըլլան ամեն բանի մէջ.  
եւ ողորմէ քու արարածներուդ եւ ինձի՝ բազմամեղիս»):

Այս խրատը կը պահէ իր այժմէականութիւնն ու թելադրականութիւնը, որովհետեւ մեղքը տակաւին կը փորձէ սողոսկիլ մեր հոգիներուն մէջ, եւ մեր սուրբ Հայրերու խրատներուն վահանով միայն մենք կրնանք արգիլել անոր թափանցումը մեր ներաշխարհին մէջ:

Այս խրատը եզակի է նաեւ այն իրողութեամբ, որ ան որպէս ամփոփ ուղեցոյց կրնայ ծառայել բոլոր անոնց, որոնք աստուածահաճոյ կենցաղավարութեան կը ձգտին:

Շնորհակալութիւն ինչպէս Գրիգորեանին, խրատ-ի նախնական անգլերէն թարգմանութեան եւ հրատարակչական աշխատանքներուն համար:

Շնորհակալութիւն Դոկտ. Թովմաս Սամուէլեանին, որ Խրատ-ին նախնական անգլերէն թարգմանութիւնը կարդաց եւ անհրաժեշտ թելադրութիւնները կատարեց:

Շնորհակալութիւն Դոկտ. Մայքըլ Փափազեանին, որ Խրատ-ին ամբողջացած անգլերէն թարգմանութիւնը կարդաց եւ աստուածաբանական եզրերուն ու սահմանումներուն ստուգումները ըրաւ:

Նարեկ արք. Ալեւմէզեան

## INTRODUCTION

*The Western Armenian version of Instruction on the Orthodox Faith and Virtuous and Pure Life<sup>4</sup> was written during the years 1981–1983 as my thesis for the ecclesiastical degree of Doctor (Vartabed) in the Armenian Apostolic Orthodox Church-Holy See of Cilicia, Antelias-Lebanon.*

*In 2002<sup>5</sup>, on the occasion of 1000<sup>th</sup> anniversary of St. Gregory of Narek's Book of Lamentation, I published the Armenian version of this study inspired by the words of our revered Exemplar of Vigilance, St. Gregory of Narek, and addressing them to him: "I dedicate it to you by the censer of my will."*

*The Instruction, attributed to St. Gregory of Narek<sup>6</sup>, has a*

<sup>4</sup> Hereafter *Instruction*.

<sup>5</sup> I have not included in this publication additional sources related to the research of *Instruction*, which were published before and after the 2002 publication of my book but I only referred to the following Armenian books: (1) Boghos Khachaderian, *Grigor Narekatsi and the Armenian Middle Ages, Holy Ejmiadzin*, 1996, (2) *St. Grigor Narekatsi, The Book of Lamentation and other Works*, (1000<sup>th</sup> Anniversary Publication), Antelias, 2003, (3) Hratchya Tamrazian, *Grigor Narekatsi and Neo-Platonism*, Yervan, 2004 and (4) *Armenian Classical Authors*, Volume XII, Antelias, 2008. Additionally, the original Armenian version is modified in this publication.

<sup>6</sup> The issue of attribution is discussed in Vano Yeghiazarian's article (Vano Yeghiazarian, The publication of *Instruction* attributed to Grigor Narekatsi as authentic in *Armenian Classical Authors, Hantes Amsorya*, 2017, 1–12, pp. 463–484.)

[https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Handesamsorya/2017\(1-12\).pdf](https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Handesamsorya/2017(1-12).pdf)

*distinct place in the hortatory literature of the Armenian Church for the following five reasons:*

*First, it explains the orthodox faith and invites the faithful of God to confess the holy and indivisible Trinity.*

*Second, it details the vital doctrines of the universal Church which were formulated in the First Ecumenical Council of Nicaea (325) and became integral part of the Creed.*

*Third, it underlines the interrelation of orthodox faith and virtuous deeds as an element which perfects the fruit-bearing of the Christian life.*

*Fourth, it restates that the human being is a moral creature led by the inclinations of reason (logos), spirit (thymos) and appetite (eros, epitymia) and only by rational balance of these inclinations can human beings live the God-pleasing and Christ-like life, without wavering between justice and injustice.*

*Fifth, it outlines the imperative to live a life governed by the proper opening and closing of human five senses, as a precondition to inheriting the unparalleled glory of the Kingdom of Heaven.*

*As we are honoring the 850<sup>th</sup> anniversary of St. Nerses Shnorhali (1166–1173) this year it is appropriate to quote the 9<sup>th</sup> stanza of his prayer “In faith I Confess” and ask the intercession of St. Gregory of Narek and St. Nerses the Graceful:*

All-caring God, place your holy fear  
before my eyes as a shield, that they may no longer gaze  
with lust;  
before my ears, that they may not enjoy hearing words of  
evil;

before my mouth, that it may utter no falsehood;  
before my heart, that it may think no evil;  
before my hands, that they may do no injustice;  
before my feet, that they may not walk on the paths of  
iniquity.

But so direct their movements that they may, at all times,  
be according to your commandments in all things.

Have mercy on your creatures, and on me, great sinner  
that I am.

*The Instruction remains ever timely because sin always tries to crawl into our souls, and only with the shield of this type of counsel we can block its penetration into our lives.*

*The uniqueness of the Instruction lies in the reality that it is a precious manual for a God-pleasing life for all people of good will.*

*My thanks to Khachik Grigoryan for his draft English translation of the Instruction and the publication of this volume.*

*My thanks to Dr. Thomas Samuelian for reading the draft English translation of the Instruction and providing his observations.*

*My thanks to Dr. Michael Papazian for reading the English translation of the Instruction and providing advice on theological terms and expressions.*

*Archbishop Narek Alemezian*

ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՅՈՔՆԵՐԱՆԵԱՆ  
ՄԵՆԱԻՈՐԻ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՄԱՌՈՏԻՒՔ  
ԲԱՆ ԽՐԱՏՈՒ ՎԱՍՆ ՈՒՂԻՂ ՀԱԻԱՏՈՅ  
ԵՒ ՄԱՔՈՒՐ ՎԱՐՈՒՅ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ

Ի ԽՆԴՐՈՅ ՆՈՐԻՆ ՀԱՐԱԶԱՏԻ ՎԱՐԴԱՆԱՅ  
ԴԻԻԱՆԱԴՊՐԻ

Ա. ՏԵՐՈՒՆԵԱՆՆ Հաւանեալ խրատու, որ ըստ պարգեւատէր եւ յոբնառատ բարերարութեան տայ ամենայնի առատապէս եւ ոչ նախատէ. ըստ որում եւ ասացն, «Ամենայն որ խնդրէ՛ առնու, եւ որ հայցէ՛ գտանէ»<sup>1</sup>: Որ եւ զիմանալին սեղանաւորեաց Հաց գիտութեան եւ զինի իմաստութեան՝ գեղեցկապէս նմին քաղցելոց բանական անձանց. եւ բարձր ձայնիւ քարոզչացն կոչեաց ի խրախճանութիւն հոգեւոր ըստ առակողին. եւ մեզ զնոյն օրինադրեաց ասելով. «Ամենայնի որ խնդրէ ի քէն՝ տուր»:

Եւ եթէ զմարմնականն բարւոք է տալ կարօտելոցն պէտս, որոյ եւ փոխարէն զ՛խկզբանէ աշխարհի պատրաստեալ արքայութիւն պարգեւեաց, ո՞րչափ եւս առաւել զհոգւոցն ի բարեաց աղքատութիւն լցուցանել է գովելի: Եւ այնքան առաւել, ըստ որում առաջին եւ մեծ եւ պատուական է ոգի քան զմարմին՝ տիրականին գոլով պատկեր, եւ սա երկրորդ նմին եւ հողանիւթ. զոր եւ Տէրն գործով յայտ արարեալ: Քանզի զհետեւեալսն ինքեան ժողովուրդս՝ երկիցս միայն գրեալ՝ եթէ կերակրեաց հացիւ. բայց կենարար բանին վարդապետութեամբ, որ է հոգւոց կերակուր, ըստ այնմ, եթէ «Ոչ հացի միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանի որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ», միշտ զհոգիս նոցա կերակրէր ի ժամու: Այլեւ առակաւ իմաստուն ծառային տալ ի ժամու ծառայակցացն զկերակուր, եւ քանքարացն օրինակաւ՝ կրկնապատիկ շահողին եւ զլա-

<sup>1</sup> Խրատ-ին մէջ աստուածաշնչական մէքքերումները յիշողութեամբ արձանագրուած են: Ես գրաբարին մէջ զանոնք միայն չակերտած եմ, իսկ աշխարհաբարին մէջ նշած եմ համապատասխան մէքքերումին գիրքն ու համարը:

ցողին, զնոյն նշանակեաց՝ եթէ պարտ է տալ ամենայնի որ խնդրիցէ:

Բ. Իսկ ինձ առ քեզ, ով սիրեցեալ անձին իմոյ, կրկին եւ ոչ մեկին է հարկաւորութիւն տալոյ: Մի՛ ըստ վերագոյն ցուցեալ Տեսառն Հրամանին, որ ամենայն խնդրողի օրինադրէ գտալն. եւ երկրորդ՝ ըստ բնաւոր արեանառու մերձաւորութեան եւ սննդակցութեան:

Ձոր ի հեղգարն՝ երկնչիմ ի ձայնէ մեծաբարբառ փողոցն, մարգարէիցն եւ առաքելոց. միոյն զի ասէ, «Յընտանեացն զաւակի քո զակն ի վայր մի՛ արկանիցես՝ անտես առնելով»: Եւ միւսոյն, «Եթէ ոք իւրոցն՝ մանաւանդ եւ ընտանեացն խնամ ոչ տանիցի, ի հաւատոցն ուրացեալ է, եւ շար եւս քան զանհաւատսն»: Բայց դու զգոյշ լեր՝ գործով փութալ ի կատարումն ասացելոցս, ըստ նմանութեան ժիր եւ հաւատարիմ ծառային՝ որ արթնութեամբ սպասէր Տեսառն գալստեան. զի «Ոչ եթէ լսելիք օրինացն արդարացիին, — գրեալ է առաքեալ, — այլ առնելիք օրինացն»: Ձի ըստ որում ես ի յոչ տալն զատապարտիմ իբր զլացող տէրունեացն, նոյնպէս եւ դու յոչ հետեւել գործով տուեցելոցն: Ձի որ զտէրունեանն թագուցանէ զբանին արծաթ՝ ասաց հանել յարտաքին խաւարն, նոյն եւ զարկեալն ի սեղանաւորս ի լսելիս մարդկան, ի լսողացն տոկոսեօք ասաց պահանջել. եւ գիտողացն զկամս տեսառն իւրոյ եւ ոչ արարողացն, զան բազում ըմպել: Այլ որ շտեմարանապետն է ամենայն բարեաց, եւ զամենեցուն կամի զկեալն, եւ ի գիտութիւն ճշմարտութեան հասանել, տացէ եւ մեզ յիւրոցն առնուլ արժանապէս ըստ բարեսէր կամացն որպէս հաւատարիմ տնտես գիտութեան բանին, որ է հաց ի յերկնից իջեալ կերակուր հոգւոց, եւ օրինօք մատակարարել:

Եւ ձեզ մտադիւրութեամբ եւ բարուք հաւանութեամբ ընդունել, եւ տալ պտուղ ըստ յոքնաբեղուն եւ պարարտ երկրին յաննախանձ սերմանողէն՝ զչորրորդն ընկալեալ մասն կենացն սերման:

Գ. Եւ արդ սկսցուք ուստի սկսանելն է արժան, ի դաւանութիւն հաւատոյն ճշմարտութեան, որ է հիմն եւ արմատ ամենայն բարեաց: Քանզի եւ Տէրն զայս եղ հիմն եկեղեցւոյ՝ ասելով առ նախնի դաւանողն Պետրոս, թէ դու քո խոստովանութեամբդ ես իբրեւ զվէմ հաստատուն եւ անշարժ. եւ ի վերայ այդք վիմի շինեցից զեկեղեցի իմ. այսինքն զամենայն հաւատացեալս եւ ճշմարիտ խոստովանողս համագոյ եւ զուգական Երրորդութեան: Նա եւ շինիչն եկեղեցւոյ Պաւղոս ասէ. «Եինեալ էք ի վերայ հիման հաւատոյ առաքելոց եւ մարգարէից»: Եւ թէ «Ես իբրեւ զիմաստունն նախաւորապէս հիմն եղի» զհաւատսն, որ ի սուրբ Երրորդութիւն. յորոյ վերայ գեղեցկապէս յարմարի շինուած ամենայն առաքինութեան:

Դ. Եւ արդ այս է ճշմարիտ հաւատոյ դաւանութիւն: Հաւատալ զԱստուած Հայր՝ էութիւն ճշմարիտ, զոյ կատարեալ, անեղ, անսկիզբն, անժամանակ, անպատճառ, անիմանալի, անտեսանելի, անճառելի, անհաս, պարզ, անզնին, անկէտ, անսահման, աներբ, անուր, անբովանդակելի, անայլայլելի, անփոփոխ, գերաբուն, գերագոյ, գերալոյս, գերանճառ: Ոչ յումեքէ եղեալ, եւ ոչ ինքն զինքն արարեալ. ոչ ինչ յառաջ քան զնա, եւ ոչ զոյգ ընդ նմին. այլ ինքն գոյով սկիզբ եւ պատճառ ամենայնի, համագոյիցն ծննդեամբ եւ երողութեամբ, եւ եղականացն արարչութեամբ:

Ե. Իսկ զՄիածինն Բան նորին եւ ծնունդ՝ ի վեր քան զբան. կերպարան եւ ճառագայթ, էութեանն նկարագիր, կնիք կենդանի, իմաստութիւն եւ զօրութիւն, ամենայն աստուածալայելչակամ կոչմանցն Հօր՝ էապէս ունող որպէս նոյնագոյ բնութիւն: Աստուած յԱստուծոյ. անեղ յանեղէ. անժամանակ յանժամանակականէ. կեանք ի կենաց. լոյս ի լուսոյ: Ոչ կրտսեր քան զՀայր՝ թէ եւ ծնունդ. այլ որքան

Հայր՝ հայր, եւ Որդի՝ որդի. զի եւ Հայր՝ Որդւոյ Հայր. եւ որդի ոչ ունեւորով, եւ ոչ հայրութիւն ունել կարէ. ըստ որում եւ ոչ Որդի՝ որդի առանց հօր. այլ յատկութիւնք երկաբանչիւրոցն ի միմեանց ճանաչի:

Ձ. Եւ Հոգին Սուրբ բոլորումն ի Հօրէ անճառաբար. ոչ ըստ Որդւոյ ծննդեամբ, այլ ելումն յէութենէն. ըստ որում, «Հոգին ճշմարտութեան որ ի Հօրէ ելանէ». էակից Հօր, եւ փառակից Որդւոյ: Նոյն բնութեամբ՝ համագոյիցն ամենայնի հաղորդ եւ գուգական, որ ինչ զՀօրէ եւ զՈրդւոյ ասացաւ անեղութեան, եւ որ ի կարգին: Վասն զի ոչ ինչ առաւելութիւն եւ կամ նուազութիւն ի պաշտելի Երրորդութեանն տեսանի. այլ համայնիւք գոլով զոյգ եւ հաւասար եւ միաւոր, բաց յանճառորութեանցն յատկութեանց, եւ որ նոցին հետեւի. այսինքն զի Հայր՝ Հայր, եւ Որդի՝ Որդի, եւ Հոգի՝ Հոգի: Եւ ոչ է իմանալ եւ կամ ասել զՀայր՝ Որդի եւ կամ Հոգի. եւ ոչ զՈրդի՝ Հայր կամ Հոգի. եւ ոչ զՀոգի՝ Որդի եւ կամ Հայր: Այլ Հայր՝ միշտ Հայր. եւ Որդի՝ միշտ Որդի. եւ Հոգի՝ միշտ Հոգի Աստուծոյ:

Է. Եւ ըստ առանճառորութեանցն եւ յատկութիւնքն զանազանեալ. այսինքն ծնողութիւնն, եւ ծնելութիւնն, եւ երողութիւնն: Զի ոչ երբէք Հայր՝ ծնունդ կամ երողութիւն. եւ ոչ Որդի՝ ծնող կամ երողմն. եւ ոչ Հոգի՝ ծնունդ եւ կամ ծնող: Այլ միշտ պատշաճի ծնողութիւնն Հօր, եւ ծնելութիւնն Որդւոյ, եւ երողութիւնն Հոգւոյ. զի որպէս առանճառորութիւնքն անփոփոխելի, այսպէս եւ յատկութիւնքն: Է Հայր պատճառ եւ սկիզբն համագոյիցն ծննդեան եւ երողութեան: Բայց եթէ ի ժամանակական ոք այսու իջանէ ի կարծիս, եւ անպատճառ, եւ անսկիզբն՝ մշտնջենաբար ընդ սկզբանն գոլով եւ պատճառի՝ նոյնագոյ բնութեամբ: Եւ ոչ երիցութիւն եւ

կրտսերութիւն, ոչ մեծութիւն եւ փոքրկութիւն, ոչ անեղութիւն եւ արարչութիւն ի համաբունան իմանի. այլ ամենայնիւ բաց յառանճառորութեանցն՝ հաւասար եւ միաւոր բնութեամբ, աստուածութեամբ, անեղութեամբ, զօրութեամբ, մեծութեամբ, փառօք, պատուով, անհասութեամբ, անտեսութեամբ, անճառութեամբ, իմաստութեամբ, բարութեամբ, արարչութեամբ, նախախնամութեամբ: Անեղ եւ եղբոց էակ՝ իմանալեաց եւ զգալեաց. լոյս եւ լուսոյ արարիչ. կեանք եւ կենդանարար ամենայնի. իմաստութիւն եւ իմաստարար բոլորից. սուրբ եւ սրբոց սրբարար. բարի եւ բարեաց պարգեւաբաշխ. զօրաւոր եւ զօրացուցիչ զօրացելոց. կատարեալ եւ կատարելոց կատարելագործ. լի եւ լցուցիչ կարօտելոց. յաւիտենական եւ յաւիտեանց զոյացուցիչ. անժամանակ եւ սահմանիչ ժամանակաց: Վասն զի ժամանակք եւ յաւիտեանք, եւ որ ընդ նոքօք իմանալիք եւ զգալիք, նովաւ եւ ի նորին ակնարկելոյ եղեն եւ կառավարին, եւ կան մնան յանլոյծ հաստատութեան:

Այսոքիկ համառօտիւք Երրորդութեանն խոստովանութիւն. յորս պարտ է յարել եւ զխորհուրդ տնօրէնութեան:

Ը. Քանզի մինն ի յերից այս անբաւից անճառորութեանց, ծնեալն ի Հօրէ անժամանակ եւ անմարմին նախ քան զյաւիտեանս, էակից եւ փառակից Հոգւոյն, կամաւ եւ հաճութեամբ համաբնիցն՝ խոնարհի յանճառ փառացն եւ յանբաւ բարձրութիւնէն ի խնդիր եղծեալ եւ ապականեալ իւրաստեղծ պատկերին: Ոչ զբնաւոր զօրութիւն ամենակարող իշխանութեան արկեալ ի կիր, այլ զամենահնար բազմապատիկ իմաստութիւնն: Աւետեօք հրեշտակապետին բնակի յարգանդի Հոգւով մաքրելոյ ամեներջանիկ եւ փառաւորեալ կուսին Մարիամու. եւ ի նորին բնութենէն զգե՛նու մարմին հոգւով եւ մտօք. մարդ կատարեալ, եւ Աստուած ճշմարիտ, անշփոթ միութեամբ:

Թեամբ խառնեալ զանխառնելիսն՝ նոր եւ սքանչելի խառնմամբ: Քանզի ոչ պարզութիւն անյօդ եւ անմարմին էութեան աստուածութեանն փոփոխեցաւ ի նիւթական եւ յօղաւոր թանձրութիւն մարմնոյ, եւ ոչ հիւթաւոր եւ թանձր բնութիւն մարմնոյն յեղաւ յանօսր եւ աննիւթ աստուածութեանն պարզութիւն. այլ երկաքանչիւրոցն յատկութիւն բնութեանց պահեալ անշփոթ, եւ միացեալ անճառապէս, եւ ի վեր քան զամենայն խառնումն եւ միութիւն: Մի Որդի եւ մի Տէր Յիսուս Քրիստոս յերկուց կատարելոց: Եւ ի քրայս հրակիր որովայնին ձուկեաց ամենարուեստն վերստին զբնութիւնս յառաջին անապականութիւնն: Եւ զի ոչ մասամբ էր ապականեալ մեղօք մարդկութիւն, այլ բոլորովին հոգւով, մարմնով եւ մտօք, վասն այնորիկ զբոլորս զգեցաւ Բանն եւ միացոյց յինքն. զի իւրով անմեղութեամբն եւ անապականութեամբն արասցէ զմեղանշականն անմեղ, եւ զապականեալն անապական:

Թ. Եւ զամենայն կիրս մարդկայինս կրեալ բաց ի մեղաց: Այսինքն քաղցեաւ, որ տայ կերակուր ամենայն կենդանեաց. ծարաւեցաւ, որ զկենաց ջուրն պարգեւէ հաւատացելոց իւրոց. վաստակեցաւ, որ հանգիստն է աշխատելոց. ննջեաց, որ պահէրն գիտարայէլ անքուն. արտասուեաց, որ երարձ զամենայն արտօսր յամենայն երեսաց. շրջեցաւ յաշխարհի զամս երեսուն, լուեալ եւ ոչ յայտնեալ զփառս աստուածութեան իւրոյ մինչեւ ի լրումն կատարեալ հասակին:

Գայ այնուհետեւ ի մկրտութիւն ամենասուրբն ի մեղաց եւ անկարօտն մաքրութեան. մկրտի ի յամրողւոյն, ի մեզ զչնորհ մաքրութեանն ցուցանելով: Վկայի ի Հօրէ Որդի սիրելի եւ կատարիչ կամաց նորա, զմեզ յորդեգրութիւն Հօրն վերածեալ: Յայտնի եւ յագգակից Հոգւոյն աղաւնակերպ իջմամբն, որ ի մեզ պարգեւ իջմանն խորհրդածի: Վարի ի Հոգւոյն յանապատ, պահեալ քառասնամթիւ

աւուրբք. եւ յաղթեալ փորձողին մերովս, զչնորհ յաղթութեան եւ որ ի նմանէ բրաբրոնն՝ մեզ պարգեւելով, եւ զմեզ ուսուցանելով՝ պահօք յաղթել փորձողին: Եւ զգոռոզն զբռամբ ածեալ եւ զհսկայն կապեալ, դառնայ այնուհետեւ զօրութեամբ մեծաւ յաւարի առնուլ զստացուածսն անիրաւութեան, զոր յափշտակեալ էր պատրանօք եւ ոչ զօրութեամբ: Եւ սկիզբն առնէ նշանաց վարդապետութեանն. որով զամենայն դարձոյց զկապուտն ի գերողէն:

Ժ. Եւ ի լրման այտորիկ ըստ նախատեսացն կանխաձայնութեան ի կամաւորն զայ ի չարչարանս: Զի թէպէտ եւ մարմնանալովն եւ անմեղութեամբ մարմնոյն սրբեաց զբնութիւնս եւ արդար եցոյց առաջի Հօր եւ հրեշտակաց եւ կարծեցեալ իշխանի աշխարհիս, քանզի ոչ ինչ յիւրոցն ի նմա եգիտ, այլ պարտիք նախագործելոց մեղացն տակաւին կայր ի վերայ բնութեանս, վասն որոյ տայ զիւր անմեղ մարմինն նուէր եւ պատարագ հաշտութեան Հօր ընդ արարածոց՝ եզնն պարարեալ եւ գառնն անմեղ, եւ բառնայ զմեղս աշխարհի:

Եւ զի անհնար էր աստուածային անչարչարելի եւ անմահ բնութեանն չարչարանս եւ մահ ընդունել, նմին իրի եւ զչարչարելիս զգեցաւ մարմին. զի չարչարեսցի անչարչարն չարչարելեան, եւ մեռցի անմահն մահկանացուան, եւ ազատեսցէ զպատժապարտքս ի դատապարտութենէ յանցաւորութեանն: Եւ ոչ եթէ այլ ոք էր որ չարչարիւր, եւ այլ որ ոչ չարչարիւր. եւ կամ այլ՝ որ մեռանէր, եւ այլ որ անմահ մնայր. այլ մի եւ նոյն գոլով ի չարչարանսն էր անչարչարելի, եւ ի մահուն անմահ:

ԺԱ. Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ անպարագիւր եւ անվարափակ գոլով բնութիւն, էր ի խաչին, եւ ընդ աջմէ Հօր. ի գերեզմանին, եւ

յաթոռն քառակերպեան. ի ստորին վայրս դժոխոց, եւ գեր ի վերոյ քան զամենայն բարձրութիւնս. ի դպրաց եւ փարիսեցոց թշնամանեալ, եւ ի սերովբէից ընդ Հօր եւ Հոգւոյ սրբաբանեալ. մարմնովն ի գերեզմանի, եւ հոգւովն ի խաւարաբնակ արգելանս դժոխոց. ոչ որոշեալ աստուածութիւնն ի մարմնոյն եւ ի հոգւոյն: Յարուցեալ աստուածապէս եւ ինքնիշխանաբար նովին մարմնովն՝ որով չարչարեցաւ եւ մեռաւ, երեւեալ աշակերտացն եւ հաստատեալ զնոսա ի հաւատս յարութեան տեսութեամբ եւ շօշափմամբ եւ խօսելով եւ ի կերակուր մերձենալով, համբառնայ յերկինս ի սեպհական փառան հայրենի եւ նստի ընդ աջմէ Հօր, յորմէ ոչ երբէք պակասեաց: Խոստացաւ զայ միւսանդամ փառօք հայրենի եւ դատողական իշխանութեամբ առնել յարութիւն արդեամբք յանլուծանելի կեանս եւ ի մշտնջենաւոր անմահութիւն ամենեցուն, զոր այժմ յուսով նորոգեաց:

Այս է հաւատ ուղիղ դաւանութեան կարճառօտ բանիւ ի փրկական տնօրէնութիւն մարդացելոյն վասն մեր կամաւ Հօր եւ Հոգւոյն Միածին Բանին:

ԺԲ. Այլ պարտ է գիտել, զի թէպէտ անուն հաւատոյն մի է, այլ ի բազումս գանազանին:

Ձի մեծ եւ առաջին հիմն եւ արմատ ամենայն հաւատոյ՝ վերագրեալդ է. այլ հետեւաբար այսորիկ պարտ է յամենայնս հաւատալ յԱստուծոյ տուեցելոցն մեզ փրկական խորհրդոցն: Այսինքն հաւատալ գեկեղեցի Քրիստոսի որ ընդ տիեզերս. որք ճշմարիտ եւ աներկբայ հաւատով խոստովանին զհամազոյ եւ զպաշտելի Երրորդութիւնն, եւ զներմարդկութեան խորհուրդ Միածինն՝ Աստուած եւ մարդ կատարեալ, եւ վասն մեր չարչարեալ եւ մեռեալ անչարչարելին եւ անմահն. յարուցեալ եւ ի յերկինս համբարձեալ եւ ընդ

աջմէ Հօր նստեալ. որ եւ զալոց է միւսանդամ: Զամենեսեան որք ընդ այսպիսի խոստովանութեամբ՝ մի եկեղեցի Քրիստոսի համարեալ, եւ միոյ զլիտոյն Քրիստոսի մարմին եւ անդամք՝ ըստ առաքելոյ:

Ոչ բաժանել եւ պատառել հայհոյական բանիւ վասն դոյզն ինչ եկեղեցական աւանդութեան զմարմինն Քրիստոսի. զոր խաչիւ եւ չարչարանօք ստացաւ, եւ փրկական արեամբն զնեաց եւ սրբեաց եւ միացոյց ինքեան:

ԺԳ. Հաւատալ եւ ի մկրտութիւնն սուրբ՝ եթէ մաքրիչ է ամենայն յանցանաց. եւ զախտաւոր ծնունդս մարմնոյ՝ անախտաբար ծնանի յորդիս երկնաւոր Հօրն, եւ յեղբայրակցութիւն Միածինն, եւ ի հաղորդութիւն Հոգւոյն Սրբոյ, եւ ի ժառանգութիւն երկնից արքայութեան:

ԺԴ. Հաւատալ եւ ի մարմին եւ յարիւն Որդւոյն Աստուծոյ, որ պատարագի ի վերայ սրբոյ սեղանոյն, թէ ճշմարտապէս է նա մարմին եւ արիւն Քրիստոսի: Քանզի այն որ ասաց՝ «Երկինք եւ երկիր, ու անլուծանելիք են եւ հաստատունք՝ դիւրաւ անցանեն՝ քան թէ յինէն ասացեալ բանն անկատար մնայ», նովին բանիւ ասաց՝ «Այս է իմ մարմին եւ արիւն ի քաղցրութիւն մեղաց», հաւատով եւ սրբութեամբ ճաշակողացն ետու զսա: Որք թէպէտ եւ մեղաւորք են, այլ խոստովանութեամբն եւ ապաշխարութեամբն սրբեալ՝ մերձեանս յիս ճաշակմամբ ի ճշմարիտ կենդանութիւնս, եւ յիս բնակեն եւ ես ի նոսա. որ թէ եւ մարմնով մեռանին, այլ զսերմն ճշմարիտ կենացս յինքեանս ունելով, ի հոգեւոր գարունն՝ որ է հասարակաց յարութիւն՝ բողբոջեալ վերանորոգին ճշմարիտ եւ անմահ կենդանութեամբ, ոչ առնելով զգառնաշունչ հոգւոց մահուն ճաշակ յաւիտեան:

ԺԵ. Հաւատալ եւ ապաշխարութեան մեղաց. զոր մարդասէրն Աստուած, «Որ ոչ կամի զմահ մեղաւորի, այլ զդառնալ նորա ի շար նանապարհէ եւ զկեալն», ետ օճառ յուացման եւ սրբութեան եկեղեցւոյ: Զի թէպէտ եւ առաջին կամք նորա է մնալն մեր սրբութեամբ եւ արդարութեամբ յանմեղութիւն, այլ որպէս արարիչ բնութեանն՝ զիտէ գտկարութիւնս մեր զի դիւրագլխիք եմք եւ սխալոյք, եւ հանապազ ի վայր հակիմք ի բարձրութենէ առաքինութեան, ունիմք եւ մարտակից թշնամի յոքնահնար եւ բազմաբուռեատ եւ ի չար առնել իմաստուն, վասն այնորիկ երկրորդ կամօք որպէս առաջնով ըստ բազում ողորմութեան իւրոյ եւ անոխակալ զթութեան եւ այնքան սիրոյն՝ զի Հայրն բարերար զՈրդին ետ ի մահ վասն մեր, եւ Միածինն զինքն, եւ Հոգին Սուրբ զփառակիցն, ետ եւ զխոստովանութիւն, զի նեխեալքն եւ հոտեալքն յանդամոց Քրիստոսի մեղօքն՝ առողջասցին ապաշխարութեամբն, եւ վերստին ի գլուխն պատկանեալ յօգեսցին: Վասն որոյ պարտ է հաւատալ՝ զի որչափ եւ մեծամեղք իցեն, զղջմամբն եւ խոստովանութեամբն եւ արտասուօքն եւ ողորմութեամբն, պահօքն եւ աղօթիւք, եւ որ ի սոյն յարմարին բարեգործութիւնք, եթէ իցեն մեղքն իբրեւ զճանճախարիթ անլուանալի սեւութեամբ՝ իբրեւ զձիւն սպիտակասցին. եւ եթէ իցեն արեամբ չափ որպէս զներկած որդան ի գոյն կարմրութեան անեղանելի, իբրեւ զասր սրբեսցին:

ԺԶ. Հաւատալ եւ յարութեան մեռելոց եւ դատաստանին յաւիտենից, որ է սկիզբն եւ արմատ ամենայն բարեգործութեանց. առանց որոյ անհնար է հաճոյ լինել Աստուծոյ: Զի եթէ ոք յարութեան յուսով ոչ է հաստատեալ, զիս՞րդ տայ զանձն ի ճգունս առաքինութեան. եւ եթէ ի դատաստան մտանելոյ ակն ոչ ունիցի, ե՞րբ դադարէ ի մեղաց: Զի եթէ յարութեան հաւատացեալ եւ դատաստանի

տանի ակն կալեալ՝ օր ըստ օրէ ի չարիս յաճախեմք, զի՞նչ ոչ զորձէաք՝ եթէ ոչ էր երկիւղ դատաստանին. ապաքէն անխտիր բերէաք յամենայն զարշութիւնս մեղաց, ի սպանութիւն, ի զրկանս, յանիրաւութիւն, ի յափշտակութիւն, ի պտունկութիւն, յարուագիտութիւն, ի հպարտութիւն, ի նախանձ, յատելութիւն, եւ ի սոցին նմանս պէսպէս եւ բիւրապատիկ չարիս:

Յաղագս որոյ յոյժ կարեւոր է հաւատալ յարութեան եւ դատաստանին. զի իբրեւ սանձս ի բերան լինելով, զյարձակումն չարութեան յետս նահանջեալ՝ յառաջադէմ յառաքինութիւնս լինիցիմք:

ԺԷ. Հաւատալ եւ յայս՝ թէ յարութիւն եւ դատաստան ոչ հոգւոց միայն է լինելոց, ըստ որում ոմանց թուեցաւ, այլ եւ մարմնոց. եւ մանաւանդ սմա, քանզի հոգին անմահ է: Զի եւ մահն ոչ այլ ինչ էր, քան անջատումն հոգւոյ ի մարմնոյ. այսպէս եւ յարութիւնն, վերստին նոցա կապիլ ի միմեանս անլոյծ միաւորութեամբ: Եւ որպէս աստ ի միասին քաղաքավարեցան լաւ եւ կամ վատթար գնացիւք, նմանապէս եւ յանժամ ի միասին վայելեցեն եւ կամ տանջեսցին: Եւ ոչ ըստ դանդաչելոյ ոմանց՝ եթէ այլ մարմին յարիցէ փոխանակ այնմ որ մեռան. այլ նոյն վախճանեալն: Զի եւ ոչ անիրաւ է Աստուած՝ զայլ փոխանակ այլոյ պատժել եւ կամ պսակել. ըստ առաքելոյ, «Ընդունի իւրֆանչիւր ոք իւրով մարմնով գոր ինչ գործեաց յառաջագոյն՝ եթէ բարի եւ եթէ չար»:

ԺԸ. Հաւատալ դարձեալ թէ եւ արքայութիւն երկնաւոր ընդունելոց են այնմիկ արժանացեալքն, եւ կեանք յաւիտենականք. զի այս է որ թեթեւացուցանէ զբեռն օրինացն, եւ քաղցրացուցանէ զլուծ պատուիրանին, եւ առնէ զդժուարինսն դիւրինս, եւ զառապարն ի հարթ ճանապարհս, եւ դիւրակոխ զանձուկն եւ զնեղ քան զլայնն

եւ ընդարձակ: Սոյն այս հաւատ զօրացաւ ի վերայ ամենայն ընդդէմահարաց մարմնոյ. կոխեաց զհուր, եւ բլթեաց զսուր, մարտեաւ ընդ գազանս, խզեաց զկապանս, խորտակեաց զզէնս, փշրեաց զաղեղունս, արհամարհեաց զքաղց, նշկահեաց զմերկութիւն, ոչ երկեաւ ի բռնաւորաց, խրոխտացաւ ի վերայ մահու, եւ միանգամայն զբոլոր ի վերայ յարուցեալ ներհակ զօրութիւնսն կործանեաց:

ԺԹ. Ջայս վայելչական կարգ հաւատոց գտցես եւ յընդհանրական դաւանութիւն սուրբ եւ տիեզերական ժողովոյն Նիկիոյ. զոր օր ըստ օրէ վերադրեն դասք հաւատացելոց բազմաձայն լեզուօք՝ մեծամեծք եւ փոքունք: Քանզի յետ խոստովանելոյ զհամարուն եւ պաշտելի Երրորդութիւնն, եւ զներմարդութեան տնօրէնութիւն, յաւելուն թէ «Հաւատամք եւ յայս միայն ընդհանրական եւ առաքելական եկեղեցի. ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի թողութիւն մեղաց, ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենական հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւնն երկնից, եւ ի կեանսն յաւիտենից»: Այսոքիկ լի եւ անթերի հաւատոյ խոստովանութիւն, շինեալ ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից:

Ի. Սակայն ոչ կատարեալ փրկութիւն ինքն ըստ ինքեան առանց գործոց առաքինութեան. զի «Հաւատք առանց գործոց մեռեալ են» գրեալ է, որպէս եւ գործք առանց հաւատոյ. զի եւ դեւք հաւատան ըստ առաքելոյ. եւ ոչ միայն հաւատան, այլ եւ սարսեն եւս. այլ ոչ ինչ օգտին առանց գործոց: Այլ պարտ է ընդ մաքուր ոսկւոյ հաւատոյն եւ զգանազան քարինս առաքինութեան յետև ըստ Սողոմոնի (հմտ Սղ 20.4 [գրաբար Աստուածաշունչ]). որք հանդերձեալ են արքայական թագ յօրինել եւ ընծայել երկնաւոր թագաւորին, որով մանաւանդ ինքեանց պսակեսցի գլուխ: Զի եւ այսորիկ հանճարիչն

Պաւղոս ասէ. «Ես իբրեւ իմաստուն ճարտարապետ հիմն եղի զհաւատոյն վարդապետութիւն. բայց այլ է որ շինէն. եւ իւրաքանչիւր ո՛ր գգոյշ լինիցի զհարդ շինեսցէ. զի եթէ ո՛ր շինիցէ,— ասէ,— ի վերայ հիման հաւատոյն ոսկի, արծաթ, ականս պատուականս, փայտ, խոտ, եղէգն», որ են գործք. ոսկի՛ խոհական իմաստութիւնն. արծաթ՛ բանական առաքինութիւնն. պատուական քարինք՝ պէսպէս եւ զանազան բարեգործութիւնք: Իսկ փայտ՝ խոտ եւ եղէգն՝ զեղեռնագործութեան բերէ զնշանակ. փայտիւն՝ զթանճրագոյն եւ զգործով մեղսն յայտ առնէ, որ է յատուկ մարմնոյ. եւ դիւրաշարժ եւ անհաստատ եղեգամբն՝ զյոքնաշարժ բանիւ յանցանսն ի ձեռն լեզուոյ. եւ յոքնաբոյս խոտովն՝ զբազմաբեղուն եւ բիւրակերպ մտաւորական շարժմանցն սխալանս: Եւ ի վերայ ածէ՛ թէ «Իւրաքանչիւր գործն յայտնելոց է, զի օր դատաստանին ընտրեսցէ. զի հոռվ յայտնելոց է դատաւորն. եւ իւրաքանչիւր գործն զհարդ եւ իցէ՛ հուրն փորձեսցէ»: Զի թէ ոսկի է կամ արծաթ, ոչ միայն թէ ծախի ի հրոյն, այլ առաւել եւս գտեալ պայծառանայ. եւ թէ ունէր դուզնաքեայ ինչ խառնուած ժանկոյ՝ սրբեսցի եւ ճառագայթածեւ փայլէ: Իսկ եթէ փայտ, խոտ եւ եղէգն, վաղվաղակի ծախեալ ապականի: Եւ զի մի՛ կարծես, թէ ընդ կիզելի գործոցն եւ գործողն ծախեալ յոչէութիւն դառնայ, յաւելու՛ թէ «իմքն կեցցէ»: Եւ զի մի՛ այնպէս իմասցիս՝ թէ զճմարիտ կենացն ասէ, ածէ ի վերայ. «այլ այնպէս՝ որպէս թէ ի հուր»: Զայն յայտ արարեալ՝ թէ անմահութիւն ունի եւ կիզելի միշտ այրի, եւ ոչ մեռանի:

ԻԱ. Եւ արդ ի վերայ այսպիսի գեղեցիկ եւ աստուածահաստատ եւ առաքելաշէն հիման, որ ոչ ի շնչմանէ հողոց շարժի եւ ոչ յիջմանէ անձրեւաց անկանի եւ ոչ ի յարուցմանէ գետոց կործանի, որ առակեալ են ի զանազան փորձութիւնք, յայնպիսի նիւթոց պարտ է

յարմարել շինուածս, որ ի հուր ընտրութեան մերձենալով պայծառանայ՝ քան թէ ապականի. որ են հոգեկան եւ մարմնական առաքիներութիւնք:

ԻԲ. Եւ զի նախադաս է եւ պատուական ամենայնիւ անձն բանական քան զմարմին՝ իմանալին գոյոյ եւ ազգակից վերնոցն եւ տիրականին պատկեր, իրաւացի է նախ գնորայն զարդարել մասունս՝ իւրական եւ բնաւոր առաքինութեամբք:

Եւ վասն զի եռամասնեայ գոյով ոգի՝ ունելով բան, ցասումն եւ ցանկութիւն, արարչաստեղծ հրամանաւ եւ դրութեամբ, որով ուղիղ բնականին վարեալ ոչինչ ի վերնոցն վերջանայ նմանութենէ: Եւ իւրաքանչիւր սոքա ունին ինքեանց յատուկ առաքինութիւնս: Եւ է բնականին առաքինութիւն խոհականութիւնն, եւ ցասմնականին՝ արիութիւնն, իսկ ցանկականին՝ ողջախոհութիւնն: Եւ խոհականին գործ է խորհելն եւ ընտրելն զլաւն ի վատթարէն: Իսկ արիութեանն՝ զառ ի խոհականէն ընտրեալն քաջապէս եւ արիաբար կատարել: Իսկ ողջախոհութեանն՝ ըստ ընտրութեան եւ կատարմանն՝ ի սէրն որ առ Աստուած բորբոքել. որով գնախադասսն ինքեան՝ սիրոյն ջերմութեամբ առաւել զօրացուցանէ ի բնաւորան ունակութիւնս:

ԻԳ. Բայց տեսանել արժան է եւ զբարեձեւ սոցա կարգաւորութիւն: Զի նախ բանականն յառաջադասի որպէս վեհ քան զայլսն, եւ իշխան եւ հրամանատար ի վերայ նոցա. զի նորա է գործ խորհելն եւ ըստ նմին աւանդել երկաքանչիւրոցն՝ ցասմնականին եւ ցանկականին զարժանն: Իսկ ցասմնականին՝ հաւանութեամբ եւ արիութեամբ հրամայելոցն հետեւել. ունել եւ սաստ ի վերայ ցանկականին. զի զաւանդեալն նմա ի բանականէն՝ ուղիղ ցանկութեամբ առ Աստուած եւ աստուածային պատուիրանն ամբողջ եւ անարատ

պահեսցէ: Եւ է բանականն ինքնիշխան, ոչ ունելով եւ ոչ մի ոք համակարգիցն իշխանութիւն ի վերայ նորա: Իսկ ցասմնականն իշխի ի բանականէն եւ իշխէ ցանկականին: Իսկ ցանկականն իշխի ի ցասմնականէն եւ ինքն այլում ոչ իշխէ:

ԻԿ. Յայտնէ զայս եւ կայումն նոցա ի մարմինս: Վասն զի բանականին կայումն է ի գլուխ եւ ի խելապատակ եւ յուղիղ: Եւ որպէս գլուխ զվեհն եւ զառաջինն ընկալեալ նախադասութիւն յանդամ մարմնոյ՝ է իբրեւ զթագաւոր եւ զիշխան եւ հրամանատար ի վերայ ամենայն մարմնոյն, այսպէս եւ խոհականն անդ ունելով գնխատ արքունեացն՝ որպէս զթագաւոր իշխէ ի վերայ խոնարհ կացելոցն՝ ցասմնականին եւ ցանկականին: Իսկ ցասմնականէն կայումն է ի սրտի ի ներքոյ քան զգլուխ. իշխի ի բանականէն ի վերոյ կացեալ քան զինքն, եւ իշխէ ցանկականին՝ որ ի խոնարհ քան զնա: Իսկ ցանկականն բնակէ յերիկամունսն եւ ի ներքին համան. վասն այնորիկ եւ իշխի ի ցասմնականէն՝ որ ի վերոյ քան զնա, եւ ինքն ոչ իշխէ ումեք. զի եւ ոչ է զօրութիւն ինչ ի խոնարհ քան զնա, եթէ հնազանդեացի նմա:

ԻԵ. Այս բարւոք կարգաւորութիւն տեսանի եւ յոյժ հրաշափառապէս եւ պատկառելի յարացուցիւ: Վասն զի Աստուած ինքնիշխան գոյով եւ թագաւոր ի վերայ ամենայն եղելոց՝ իշխէ ի վերայ բնակից. որով եւ ի վերայ մարդոյ, եւ ինքն անիշխան գոյով: Իսկ զմարդն ի պատկեր իւր արարեալ՝ ասաց իշխել ի վերայ երեւելի արարածոցս ընդ իշխանութեամբ ինքեան. իսկ զգալիքս ամենայն ընդ իշխանութեամբ մարդոյն, ինքեանք ոչ իշխելով ումեք:

ԻԶ. Արդ որքան այս կարգաւորութիւն վայելչապէս ըստ բնաւորն

ասհմանի ուղղի ի մեզ, ամենայն ինչ բարեձեւ եւ ըստ առաքելոյ կարգի լինիցի. եւ տէրունականն ի մեզ հրաման պատուիրանի անխափան կատարեսցի: Զի խոհականն միշտ յաստուածայինսն խոհասցի ըստ գրոյն՝ «Նիցիցին բանքս այսոքիկ ի սրտի բով եւ յանձին բով. եւ խօսեսցիս նոօֆ ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի ննջել եւ ի յառնել»։ Եւ ըստ միւսոյն՝ «Յօթնս Տեառն խորհեսցի նա ի տուէ եւ ի գիշերի»։ Եւ զի ամենայն գործոյ, եթէ բարի եւ եթէ չար, նախ խորհելն է եւ ապա առնելն, եւ առանց խորհելոյ ոք ինչ ոչ գործէ, ապա ուրեմն որ բարւոք եւ ուղիղ խորհի, ըստ նմին եւ զգործն կատարէ։

Եւ յորժամ խոհականն զիշխանութիւն իւր եւ զգործ ամբողջ ունի, իշխէ ի վերայ ցասմնականին, եւ հրաման տայ զամենայն բարելաւութեանց իրողութիւնս. եւ ցասմնականն արիութեամբ եւ քաջութեամբ ամենայնի հպատակեալ՝ բարւոք կատարէ։ Նոյնպէս եւ ցասմնականն բնաւորականին հետեւելով՝ կայ ի հնազանդութեան բանականէն, եւ իշխէ ի վերայ ցանկականին։ Իսկ ցանկականն ուղիղ եւ ամբողջ պահելով զբանականն՝ ոչ ապստամբէ ի հրամանէ ցասմնականին. այլ որպէս զծառայ Հլու եւ հնազանդութեամբ կատարէ զամենայն հրամանսն, եւ ինքն ոչ ամբառնայ զեղջիւր ի վերայ ուրուք զի չէ ոք ընդ նորա իշխանութեամբ։

Ի՛է. է եւ այլ միւս եւս մասն բանականին, որ կոչի արդարութիւն. եւ է սա կառավար եւ ուղղիչ եւ դատաւոր ամենայն մասանցն։ Քանզի նովաւ որպէս գործեաւ բանականն զբոլորսն ուղղէ, զիւրաքանչիւր ոք յիւրումն անսայթաք պահելով բնաւոր շարժութիւնս։ Եւ այսմ այսպէս լինելով՝ այնուհետեւ է բանականն խոհական, եւ ցասմնականն արիական, եւ ցանկականն ողջախոհական։ Եւ յայսմհետէ ոչ ինչ է խափան եւ արգել կամացն Տեառն եւ պատուիրանացն ի

մարդն կատարելոյ. ըստ որում եւ ետ զգորութիւն ի մեզ, եւ պահանջէ զկատարումն։ Վասն զի բանականն խորհի զուղիղն եւ զօգտակարն, եւ արդարութիւն բաժանէ ստորակայիցն, եւ նոքա կատարել յանխափան։ Վասն զի է ցասմնականն ի ձեռին խոհականին որպէս զընտանի գազան, այսինքն շուն. վասն զի նոքա կրկին ունին բնաւոր շարժութիւնս. գտեարսն եւ զընտանիսն սիրեն եւ շողոքորթեն եւ քծնին. իսկ օտարացն եւ անընդելից գազանին, եւ վայրենի եւ պատառող բարս եւ գործառութիւնս ցուցանեն։ Այսպէս եւ ցասմնականն յորժամ ուղիղ զբանականն ունի, ամենայն բարւոք խորհելոցն ի բանականէն՝ արիաբար սիրելի եւ բարեկամ եւ կատարող երեւի. իսկ հակառակ եւ անընտանի եւ օտար խորհրդոցն եւ գործոց ընդէմ յառնէ ցասմամբ մեծաւ, եւ ի բաց վարէ եւ կամ չարաչար պատառէ, ոչ բնաւ թոյլ տուեալ զրժիլ ինչ յընտանեացն։

Ի՛Ը. Նմանապէս եւ ցանկականն ի բանականին գորով, լինի եւ անուանի ողջախոհութիւն եւ սէր արիականին վերակացութեամբ. անշարժ առ ախտաւորսն լինելով ցանկութիւնս, եւ դիւրաշարժ առ ամենայն բարեաց սէր եւ բաղձանս։ Եւ սատարութեամբ արդարութեան ուղիղ կարգաւորէ զսիրոյն օրէնս, զառաջինն եւ զմեծն Աստուծոյ տարով ըստ նորին օրինադրութեան. զի ասէ. «Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն անձնէ բովմէ եւ յամենայն զօրութենէ եւ ի մտաց»։ Եւ ոչ այլ ինչ նորա փոխանակէ յէիցս։ Ըստ որում եւ այսոցիկ տիրապէս ուղղիչն Դաւիթ ասէ. «Զի՞նչ կայ իմ բնաւ յերկինս, կամ ի քնն զի՞նչ եւս ինդրեցից յերկրէ. նուաղեաց սիրտ իմ եւ մարմին իմ յառ Աստուած սէրն. Աստուած սրտի իմոյ, բաժին յալիտեան»։ Որ ըստ փառաբան ծարաւոյ ի Շուր՝ բաղձայր յանդիման լինել երեսացն Աստուծոյ, եւ յալելոյր. «Դու ես յոյս եւ բաժին իմ յերկրին կենդանեաց»։ Իսկ զարմանալին Պաւղոս յոյժ հրա-

շափառագոյնս զիւրոյ սիրոյն ցուցանէ զառաւելութիւնս. քանզի ասէ համարձակութեամբ խորխտացեալ ի վերայ ամենայն դժնդակաց. «Ո՛վ մեկնեսցէ զիս ի սիրոյն Քրիստոսի. նեղութի՛ւն, թէ անձկութիւն, թէ հալածանք, եւ այլն. զի վասն քո,– ասէ,– մեռանիմ զօրհանապագ»։ Եւ զի ոչ միայն դառինքն եւ դժուարակիրքն են հակառակ Աստուծոյ սիրոյն, այլ եւս առաւել հեշտականքն եւ արտոյթելիք, յաղաքս որոյ եւ զայնս ի վերայ բերէ եւ ասէ. «Հաստատեալ եմ՝ թէ ո՛չ կեանք, ոչ իշխանութիւնք, ոչ զօրութիւնք, ոչ բարձրութիւնք, ոչ հրեշտակք, ոչ պետք, ոչ այս աշխարհս յոր կամս, ոչ հանդերձեալ արհայութիւն, եւ ոչ թէ այլ ինչ արարած լինի քան զերկինս եւ զերկիր եւ որ ի սոսա բարութիւնք գոր մեք ոչ զիտեմք, կարեն մեկնել զիս ի սիրոյն Քրիստոսի»։ Եւ զոր ասեն՝ այսպիսի ինչ է. թէ ոք ամենայն չարչարանք եւ մահուամբք չարչարէ զիս եւ սպանանէ վասն ի Քրիստոսէ բաժանելոյ, յօժարութեամբ զամենայն չարչարանսն եւ զմահուանսն յանձն առնում, քան թէ ի Քրիստոսի սիրոյն բաժանիմ։ Եւ դարձեալ ասէ. թէ ոք տայր ինձ զերկինս եւ որ յերկնի են բարութիւնք, զերկիր ամենայն եւ որ յերկրի են ցանկալիք, եւ ոչ միայն զայս՝ այլ թէ եւ այլ ինչ լինէր քան զայստսիկ մեծ եւ բաղձալի զոր մեք ոչ լուաք եւ ոչ տեսաք, եւ այսոքիւք կամէր զիս ի Քրիստոսի սիրոյն մեկնել, զամենայն արհամարհէի եւ անարգէի եւ իբրեւ զաղբ անպիտան համարէի, եւ զՔրիստոսի սէրն ընտրէի ինձ սեպհականել։

Ի՞նչ. Եւ յետ այսորիկ ապա երկրորդ մասն սիրոյն առ մարդիկ ցուցանել. ըստ որում յօրէնսն եւ յաւետարանն է կարգեալ։ Քանզի յետ ասելոյն՝ «Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումբ», ապա ասէ՝ թէ «եւ զընկեր քո իբրեւ զանձն քո». եւ յաւելու՝ թէ «Յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք եւ մարգարէք կախեալ կան»։ Եւ սակայն թէպէտ եւ երկուս ասէ, վասն զի յԱստուած

եւ ընկերն բաժանէ, այլ մի է. վասն զի սէր է։ Եւ ճշմարիտ ասաց աղբիւրն ամենայն ճշմարտութեան, թէ ամենայն պատուիրանք ի սէրն բովանդակի։ Զի չէ ինչ պատուիրան որ արտաբոյ սիրոյն գտանի, յորժամ զսէրն ոք ուղիղ եւ անարատ եւ առանց կեղծաւորութեան ունի առ Աստուած եւ առ մարդիկ։ Զի յորժամ զԱստուած ի բոլոր սրտէ սիրէ ոք, զամենայն արհամարհէ որ ինչ խափան լինի Աստուծոյ սիրոյն. այսինքն զփառս եւ զմեծութիւնս եւ զպատիւս եւ զիշխանութիւնս եւ զստացուածս, զհայր եւ զմայր եւ զեղբարս եւ զքորս եւ զկին եւ զորդիս, նա եւ զիւր անձն։ Ըստ որում եւ ինքն Տէրն ասաց. «Եթէ ոք գալ առ իս, եւ ոչ առեալ զհայր եւ զմայր,– եւ որ ի կարգին,– ոչ կարէ իմ աշակերտ լինել»։ Եւ յայտ անտի է, զի որք ճշմարտապէս սիրեցին զԱստուած, ոչ թէ միայն զինչս եւ զփառս երկրաւորս արհամարհեցին, եւ զընտանիս եւ զորդիս անտես արարին, այլ եւ զանձինս եւս պէսպէս եւ ազգի ազգի չարչարանք ի մահ մատնեցին։ Իսկ որ առ ընկերն անկեղծ եւ անարատ ունի զսէրն՝ ոչ ինչ չար խորհի նմա եւ ոչ առնէ. այսինքն ոչ աստէ զնա եւ ոչ նախանձի ընդ նմա, ոչ զրկէ զնա եւ ոչ անիրաւէ, ոչ գողանայ զինչս նորա, ոչ խորհի նմա սպանութիւն, ոչ առ ոտն հարկանէ, ոչ նենգէ նմա, ոչ ասէ, ոչ մատնէ՝ թէպէտ եւ բազում վնասուց պարտաւոր զիտէ զնա, ոչ հպարտանայ ի վերայ նորա, ոչ ամբարտաւանէ, ոչ զրգուի ընդ նմա, ոչ արհամարհէ, ոչ թշնամանէ, ոչ զրպարտէ, ոչ քամոսէ, ոչ մախայ, ոչ ռիս պահէ, ոչ բամբասէ, ոչ տրտնջէ, ոչ ինքն առնէ նմա չար, եւ ոչ կամի թէ այլ ոք արասցէ, այլ զամենայն որ ինչ բարի է, կամի նմա, եւ որչափ կարող է, առնէ։ Կամի լինել զնա ողջ մարմնով, եւ առաքինի հոգւով, եւ ամենայնիւ յաջողեալ ըստ կենցաղոյս բերմանց. մարմնաւոր գոյիւք փարթամ, պատուով առաւելեալ, իշխանութեամբ բարձրացեալ, յամենեցունց փառաւորեալ, տամբ աջողեալ։ Կին ըստ մտի, որդիք բարետեսակք

եւ խրատեալք, մտօք խոհական, ի բանս կարգաւոր, մինչ զի սիրելի լինել ամենեցունց: Եւ եթէ աղքատ է, ցանկայ ընու զկարօտութիւնն. եւ եթէ տկար է, ի բժշկութիւն փութայ. եւ եթէ ներհակ ինչ ուստեք ի վերայ յառնէ, որչափ ի կարի է, ընդդիմակաց լինի. տրտմութեան տրտմակից լինի, եւ խնդութեան խնդակից. եւ ոչ երբէք է չար զոր կամի նմա, եւ ոչ բարի զոր ոչ կամի:

Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ «Զբազմութիւն մեղացն ծածկէ սէր», որպէս եւ ատելութիւն զբարեացն: Զի զոր օրինակ գատելին ի բարեգործութեան տեսեալ թուի չար առնել, այսպէս եւ զսիրելին ի չարագործութեան տեսեալ թուի բարի առնել: Զայս ամենայն եւ առաւել քան զսոյն եւ առաքեալ թուէ զսիրոյ մասունս: Տեսանե՞ս ահա, զի զամենայն զոր օրէնքն եւ մարգարէքն եւ աւետարանական վարդապետութիւնն ուսուցանեն, սէրն յինքեան ունի զբովանդակն: Յիրաւի ուրեմն եւ Քրիստոս ասէր աշակերտացն. «Այսու ծանիցեն զձեզ ամենեւեմն եթէ իմ աշակերտոք էի, յորժամ զմիմեանս սիրիցէի»: Ոչ ասաց՝ թէ այն է իմ աշակերտութեան նշան, յորժամ զհիւանդս բժշկէք, կամ զկոյրս լուսաւորէք, կամ զանդամալոյծս հաստատէք, կամ զղեւս հանէք, կամ զմեռեալս յարուցանէք, կամ զյերինս փոփոխէք. այլ յորժամ սիրէք զմիմեանս: Քանզի գիտէր թէ յորժամ ճշմարիտ սիրով սիրեն զԱստուած եւ զընկերս, ընդ նմին եւ ամենայն պատուիրանք կատարին:

Լ. Արդ որպէս վերագոյն ցուցաք, յորժամ մասունք հոգւոյն ուղիղ զիւրեանց կարգաւորութիւնսն պահեն, զի իշխանն յիշխանութեան կայցէ եւ իշխեցեալն ի հնազանդութեան, ամենայն այսոքիկ բարեգործութիւնք անսխալ կատարին: Իսկ եթէ եղծեալ ապականի վայելչական կարգն, եւ ծառայքն ի վերայ տերանցն յառնեն. եւ զիշխանութիւն յափշտակեն եւ զտեսարան ծառայեցուցանեն, այ-

սինքն ցանկականն ցասմնականին եւ ցասմնականն խոհականին տիրելով, ամենայն չփոթեալ վեր ի վայր կործանի, եւ իւրաքանչիւրքն ի հակառակ ներգործութիւնս շարժին: Եւ ըստ գործոյն եւ անուանցն փոփոխումն լինի եւ այնուհետեւ ոչ խոհականութիւն եւ արիութիւն եւ ողջախոհութիւն եւ արդարութիւն, այլ անմտութիւն եւ սրտմտութիւն եւ բղջախոհութիւն եւ անիրաւութիւն կոչին: Քանզի ոչ խոհականն զբարւոքն խորհի, եւ ոչ ցասմնականն ընդդէմ չարին կքրի, եւ ոչ ցանկականն ողջախոհաբար Աստուծոյ եւ աստուածայնոցն ցանկայ. եւ ոչ արդարութիւն այսոցիկ ուղղի լինի, վերակացու եւ կառավար, այլ ի բնականէն յանբնականսն շարժեալ՝ չարաչար տապալմամբ կործանի, ըստ առակողին բանի թէ «Երիւք շարժի երկիր. յորժամ ծառայ թագաւորէ, եւ աղախին եթէ հանէ զտիկինն, եւ անմիտն եթէ լցցի հացի»: Քանզի ծառայ սրտմտութիւն՝ թագաւորեաց ի վերայ իշխանականին, եւ աղախին բղջախոհութիւն՝ եհան զտիկին արիութիւն, եւ անզգամ անմտութիւն լցաւ հացիւ խոհականութեան, այսինքն ստութիւն հացիւ նանրախոհութեան, որով եւ շարժեցաւ ամենայն լաւն ի վատթարն կոյս. եւ զամենայն նանրութիւն խորհի մոլար իշխանն այնուհետեւ, որ ծառայ եղեւ ախտից:

ԼԱ. Եւ այս է անիրաւ դատաւորն ի քաղաքի բնութեանս, զոր Տէրն յաւետարանէն ասէ՝ թէ «ՅԱստուծոյ ոչ երկնչէր, եւ ի մարդկանն ոչ ամաչէր». զի խորհի եւ ոչ տերամբ, դատի եւ ոչ իրաւամբք: Եւ որ բնաւորեալն էր յօրէնս Տեսուն խորհել, ընդ ամենայն խոկումն չարութեան յածեալ լինի. եւ զի թեթեւ եւ դիւրաշարժ գոլով բնութիւն, վաղվաղակի ընդ բիւրապատիկ զարչ եւ աղտեղի ցանկութիւնս անցանէ խորհրդով. ինքն զազրանայ խոկմամբն, եւ զզգայութիւնսն ընդ ինքեան շարժէ յախտակրութիւն: Եւ զի անտեսանելի գոլով

ընութիւնն ոչ ի մարդկանէ ամաչէ. այլ թէ եւ մերձակայ է բազմաց՝ շարժի ըստ չար յօժարութեան յամենայն պղծութիւնս, եւ կատարէ զգործ անօրէնութեան, թէպէտ եւ ոչ մարմնով: Այսինքն ընդ որ ունէր զատելութիւնն, յօժարախորժ կամօքն ընկէց ի պատուոյն, կողոպտեաց յընչիցն, անարգեաց ի փառացն, կործանեաց յիշխանութենէն, յարգել եղ անելանելի, պնդեաց ի կոճեղս, տարաշխարհիկ արար զկարեւորսն եւ հատանդամս. եւ ոչ այսու շատացաւ, այլ եւ չարաչար եւ դառն մահու մատնեաց: Եւ այս է ասելն որդւոյն Որոտման, եթէ «Ամենայն որ ատէ զեղբայր իւր, մարդասպան է»։ զի թէպէտ եւ մարմնով ոչ, այլ կամօքն եւ յօժարութեամբն սպան: Եւ այս է կէս սպանութեան. զի մարդ հոգի է եւ մարմին. եւ հոգին է մեծ քան զմարմինն. եւ նա հոգւովն սպան. զի որպէս մարմինն արդեամբք սպանանէ, այսպէս եւ հոգին կամօքն եւ յօժարութեամբն:

ԼԲ. Եւ եթէ ախտաւոր ցանկութեամբն հարեալ է ի սէր ուրուք, անարգելաբար երթեալ չնայցէ ընդ նմա. թէպէտ եւ ի մէջ բազմացն է տուփեալն եւ անձեռնարկելի նմա ըստ մարմնոյ: Վասն զի ոչ արգելու զնա ոչ հեռաւորութիւն տեղոյ, ոչ թշուառութիւն ճանապարհի, ոչ լեռոն բքացեալ, ոչ դաշտ տօթագին, ոչ ծով լայնածաւալ, ոչ քաղաք պարսպեալ, ոչ դղեակ ամրագոյն, ոչ աշտարակ անպարտելի, ոչ աղիւեալ դրունք, ոչ երկիւղ պահապանաց. այլ զամենեքումբք քայլեալ՝ աներկիւղ համարձակութեամբ առ տուփելին հասանէ եւ զգարչ ցանկութիւնն կատարէ: Եւ այս է ասելն Տեառն, թէ «Ամենայն որ հայի ի կին ցանկութեամբ, անդէն եւ անդ շնացաւ ընդ նա ի ստիւն»։ այսինքն յոգւոյն: Նոյնպէս եւ եթէ կին՝ առն ցանկայ, նովին օրինակաւ շնացաւ. զի ամենայն ասացեալս որպէս ի վերայ առն է, նոյն եւ կնոջ: Եւ որպէս վասն սպանութեան ասացաք, նմանապէս եւ վասն այտորիկ, զի կէս շնութեան է. զի ոչ մարմնովն

կատարեաց զշնութիւն, այլ հոգւովն: Գունակ սոցին իմա եւ առ ամենայն մեղս դիւրաշարժ գոլ զմտաւորական շարժմունսն եւ դիւրակատար: Եւ զի վասն անտես գոյոյն ի մարդկանէ ոչ ամաչէ, այսպէս եւ վասն հեշտախտութեան եւ յիմարելոյն ցանկութեամբն յԱստուծոյ ոչ երկնչի: Եւ ամենայն մեղաց պատճառ խոհականին մոլորութիւնն եւ անընտրող յիմարութիւնն լինի. եւ յորժամ նա որ իշխանն էր ի վերայ այլոցն եւ ուղղիչ, այսպէս ծառայական ախտիւք կաշկանդի, այլքն սորին մոլար ընտրողութեան հետեւին. զի ամենայն ինչ, եթէ բարի եւ եթէ չար, նախ խորհի եւ ապա գործի:

ԼԳ. Իսկ ցասմնականն զօրութիւն յեղափոխեալ եւ այլ փոխանակ այլոյ եղեալ. վասն զի որ երբեմն քաջանայր ընդդէմ օտարացն, այսինքն բանասարկուին եւ նորին չար արկածիցն, այժմ զինի ընդդէմ ընտանեացն, այս է ամենայն բարեգործութեան. եւ մանաւանդ ի համազգիւն եւ յեղբարսն դարձուցեալ զսրտմտութիւն՝ զազանաբար յարձակի: Քանզի սրտմտութիւն նոցա ըստ նմանութեան օձին, այսինքն սատանայի, իժի եւ քարբի դիւաց նորին. զի խցեալ են զականջս իւրեանց ընդդէմ ճարտար թովչաց՝ մարգարէից եւ առաքելոց եւ վարդապետաց եկեղեցւոյ. եւ ոչ կամին առնուլ յիմաստուն բժշկաց զղեղ սպաշխարութեան եւ առողջանալ յախտէն: Եւ ոչ կարեն այնպիսիքն եւ ոչ դոյզն ինչ թշնամանաց համբերել. այլ եթէ դէպ լինի յումեքէ ինչ կարծիս հակառակութեան առնուլ, կամ արհամարհութեան եւ դարովանաց, վաղվաղակի բարկութեամբ մեծաւ ընդդէմ յառնէ. աղաղակէ, թշնամանէ, նախատէ, հայհոյէ, անարգէ, որպէս զխելայեղ ոչ գիտէ զինչ խօսի: Չամենայն որ ինչ մոլար միտքն ծնանի եպերանաց բան, իբրեւ կորիւնս զազանաց արիւնարբուս ի գառագղէ՝ սրտին լեզուաւ յառաք բերէ. մինչ զի ի յանդուզն յարձակմանէն եւ զթոյնսն ընդ բանին արտաքս ժայթքէ:

Այլ եւ զձեռան եւ զոտան անհանճարաբար ի հարուածս շարժէ. եւ յորով անգամ եթէ դէպ լինի, եւ ի սպանութիւն: Զդիւահարացն ամենայնիւ բերէ զնմանութիւնդ մանաւանդ եթէ չար քան զդիւահարան. որքան նոքա ակամայ, եւ սոքա կամօք ջերանին յախտան: Եւ ընդ որս թշնամութեամբն բերին, ատեն մինչեւ իսպառ, որս պահեն անլուծանելիս, մախան, բամբասեն, դարանակալ լինին նենգութեամբ, որողայլթս կազմեն բանիւք եւ արդեամբք՝ ընկենու ի փառաց, ի պատուոյ յիշխանութենէն, ի փարթամութենէ: Եւ ոչ ինչ է նոցա ըղձալի, քան եթէ զնախանձելին ի թշուառութեան տեսանել. եւ ոչ ինչ դժուակ, քան եթէ ըստ որում եւ իցէ իւրք բարեկրեալ տեսանել. ոչ այնքան ինքեանց թշուառութեամբքն տիրին, որքան նոցա բարեկրութեամբքն. զամենայն որքան հնար է՝ շարժեն ընդ նոսա ի թշնամութիւն, եւ կամին զի յամենեցունց ատեցեալք լիցին: Այսքան եւ եւս քան զսոյնս է ատելութիւն եւ մախանք անկարգաբար սրտմտելոցն:

ԼԳ. Իսկ ցանկականն որ այլայլեցաւ ի գեղեցիկ ողջախոհութենէն, եւ ի սիրոյն որ առ Աստուած եւ առ ընկերս, իբրեւ զբանդաչեալ շրջի յամենայն նիւթականիս բաղձանս: Զի ի բնաւոր եւ յողջախոհ սիրոյն անկեալ՝ բերեալ լինի զարչ ցանկութեամբք ընդ վաւաչոտ տուփանս. եւ ոչ սոսկ ցանկութեամբ, այլ եւ լրմամբ կորստական գործոյն, ոչ ի բնականսն յատուկ, այլ եւ յանբնականսն: Ըստ այնմ զոր առաքեալ ասէ. «Թողեալ զբնական պէտս իգութեան՝ բորբոքեցան ցանկութեամբ իւրեանց ի միմեանս. արու՛մ ընդ արուս զխայտառակութիւն գործին, եւ զդարձ փոխարինին՝ որ պարտ էր մոլորութեան նոցա, յանձինս իւրեանց ընդունելին»: Այսինքն զկիզումն հրոյն եւ ծծմբոյն երկնատեղաց՝ նորորէն անձրեւեալ հրածին ամպովք՝ ըստ նորագիւտ հրոյ ցանկութեանն զորէն բերեալ յաւիտենական եւ

մշտավատ բոցոյն: Եւ ոչ զարուացն միայն ամբաստանէ, այլ եւ էգքն, ասէ. «Փոխանակեցին զպէտս բնականս ի պէտս անբնականս»: ԼԵ. Թողում ասել եւ որ քան զայստսիկ է դժուակ եւ անբնական եւ առաւել արտաբոյ բնութեան, որ յանամայինս եւ ի զազանայինսն խոտորին զազրագործութիւնս. զոր եւ ինքեանք իսկ անասունքն եւ զազանք թէպէտ եւ անկապ եւ արձակ գորով բնութիւնք, զի եւ ոչ ընդ օրինաց են սահմանադրութեամբ, եւ ոչ սաստ պատուհասի եւ կամ տանջանաց է ի վերայ նոցա, այլ բնական օրինացն՝ որ ընդ ստեղծմանն եղաւ ի բնութիւնսն՝ հետեւելով, ոչ երբէք արտաբոյ ընտանի ազգակցացն ելանեն իւրաքանչիւր ազգք կենդանեաց ի խառնական իւրեանց: Զի ոչ ձի յարջառ, եւ կամ արջառ յոչխար, եւ կամ այլք յայլ օտարացեղ ազգս. այլ իւրաքանչիւր ազգք կենդանեացն առ իւրեանց ցեղսն դառնան. եւ զայն ոչ անչափութեամբ, այլ ըստ սահմանեալ ժամանակի՝ միայն ծննդագործութեան սպասաւորեն արարչադիր հրամանին, որ ասաց՝ «Անեցի՛ եւ բազմացարու՛մ եւ լցի՛ գերկիր»»: Եւ այն զի ոչ բան ունին եւ իմաստութիւն եթէ խորհրդեամբ եւ ընտրութեամբ ի վատթարացն խոտորին. այլ միայն բնական օրինացն հետեւելով: Իսկ մարդիկ եւ բանիւ եւ իմաստութեամբ պատուեալ, որ մի ինչ յայցանէ բաւական էր զնոսա ի չափ սահմանի արդարագործութեան պահել, զամենեքումբք զանց արարեալ՝ քան զգազանս եւ զանասունս անմտագոյնք եւ զազրագործք գտանին:

Եւ զայլ զարչ եւ աղտեղագոյնան լուծմ որ յայնպիսի անհանճարիցն գործի, զոր եւ գիտեմ եւ ընդ լսելիս է անցեալ. այլ ոչ կամիմ զազրացուցանել զբանս, զի մի գուցէ ողջախոհ ոք լսելով տաղտկասցի. մանաւանդ թէ գիտողացն թողում. քանզի այժմ յայստսիկ քաջահմուտք են ամենեքեան:

ԼԶ. Արդ այսպիսի մոլորեալքս ի ճշմարիտ ցանկութենէն եւ ի սիրոյ որ առ Աստուած եւ յաստուածայինսն ամենայն, ընդ բոլոր ապակահանացու եւ ցնդելի նիւթականացս իբր տոռամբ կապին ի սէր եւ ի բաղձանս, փոխանակեալք զճշմարիտ կենացն սէր ընդ սնոտեացս, եւ զանապականին ընդ ապականացուիս, եւ զանայլայլելոյն ընդ փոփոխելեացս, եւ զերկնաւորին ընդ երկրաւորացս. քանզի քաղցրանայ նմին անցաւորիս մեծութիւն, փառք, պատիւ, իշխանութիւն, փարթամութիւն, որովայնամոլութիւն, արբեցութիւն, զրկանք, ագահութիւն, անիրաւութիւն, յափշտակութիւն, եւ այլ ամենայն սնոտեացս բաջաղանք:

ԼԷ. Իսկ արդարութիւնն յեղու յանիրաւութիւն. եւ որ երբեմն ի լաւագոյնսն առաջնորդէր եւ կարգաւորէր զընդ ինքեամբ մասունսն, այժմ ներհակին լինի տնօրէն եւ առաջնորդ:

Այսքան եւ այսպիսի անկարգութիւն բարեաց եւ կարգաւորութիւն չարեաց յանձնական մասանցն ի բնականացն խոտորմանց եւ յանբնականացն Հետեւմանց լինին: Վասն որոյ բազում զգուշութեամբ եւ արթնութեամբ պարտ է հսկել ամենայն ումեք. զի զբանական իւր հոգի, որ է պատկեր Աստուծոյ, իւրական առաքինութեամբքն զարդարեսցէ. որով յառաջինն փայլեսցէ լուսատիպ կերպարան, եւ զնախատպին հրաշագարդապէս յինքեան գաղափարեսցէ նմանութիւն: Որով լիցի տաճար եւ բնակարան անվայրափակ էութեան՝ ըստ ասելոյն. «Ես եւ Հայր եկեցոմք, եւ օրեւանս առ նմա արասցոմք»:

ԼԸ. Արդ մինչ այսպէս գեղեցկայարմար պատկանաւորութեամբ ուղղեցաք զանձնական առաքինութիւնսն, պարտ է նմին հետեւեցուցանել եւ զմարմնական բարեգործութիւնսն. որպէս զի

ըստ առաքելոյ՝ «Լիցի մարդն Աստուծոյ կատարեալ ամենայնիս» եւ ոչ իւրք նուազեալ: Զի որպէս անձն մասամբքն զարդարի, այսպէս եւ մարմինն զգայութեամբքն պայծառանայ:

Եւ են զգայութիւնք հինգ, որ են այտօքիկ. տեսանելիք, լսելիք, հոտոտելիք, ճաշակելիք, շօշափելիք: Եւ պարտ է նախ յայտնել թէ զինչ զգայութիւն իցէ, եւ ապա զնոսա ընտանի ներգործութեամբքն զարդարել:

ԼԹ. Զգայութիւն ասի այն, որ ըստ իւր ներգործութեան զինչ եւ իցէ՝ արտաքուստ ընդունելով զկիրան՝ զգայ եւ ճանաչէ: Որպէս ակն զծագումն լուսոյ ընդունելով՝ զգայ եւ ճանաչէ եւ լուսաւորի, եւ նովաւ զամենայն զոր տեսանէ՝ զգայ եւ ճանաչէ թէ զինչ է: Եւ ունին զհնչումն ձայնից ընդունելով՝ զգայ թէ յումմէ է բացազանչումն: Եւ հոտոտելիք զազդմունս զանազան հոտոց առնելով՝ զգայ եւ իմանայ եւ բացատրոհէ զնոսա ի միմեանց: Եւ ճաշակելիք զպէսպէս կերակրոցն եւ ըմպելեացն համադամս քաղցրունս, եւ դառինցն, պարարտացն եւ կծուագունիցն յինքն ընկալեալ՝ զգայ իւրաքանչիւր համադամացն ազդողութեանց: Եւ շօշափելիք զագգի ազգի նիւթոցն զանազանութիւն շօշափելովն զգայ եւ ընտրէ ի միմեանց զխոշորագոյնսն եւ զոտորկան, զընդդիմատիպան եւ զփաղփուսան: Արդ վասն այսորիկ զգայութիւնք ասին:

Խ. Բայց են սոքա որպէս զգրուես ի տան մարմնոյս՝ մտից արտաքուստ եւ ելից ի ներքուստ՝ ամենայնի որ է լաւ եւ կամ վատթար. ըստ մարդարէին որ ասէ. «Ընդ պատուհանս եմուտ մահ»: Եւ զոր օրինակ ընդ դրունս ածեմք ի տուն զամենայն գոյս պատուականս եւ պիտանիս, եւ ընդ նոյն դարձեալ եթէ ինչ անպիտան է ի տան՝ արտաքս հանեմք, այսպէս եւ զամենայն հոգեւորական փարթա-

մուլթիւնս՝ որովք անկարօտ ճոխանայ անձն բանական ըստ Համազգեաց հոգեղինացն՝ ընկալցուք ի ներքս ի մեզ ընդ զգայարանացս դրունս ընդ իւրաքանչիւր ներգործութեան: Եւ զսպաւառ, երկրաւոր ցանկութեանց եւ ստորային սիրոյ, որ է որոմնացան թշնամւոյն սերմանք, իբրեւ զվնասակարս եւ մահացուս ընդ սոսին դարձեալ արտաքս հանցուք: Եւ զոր օրինակ ոչ միշտ փակեալ պահեմք զդրունս տանց. զի թէ յար փակեալ կացցէ, զօգտակարան ոչ հաւաքեմք փարթամութիւնս, նա եւ մեզ անպիտան առ բնակութիւն. եւ ոչ հանապազ բացեալ, զի եւ այնպէս թշնամեաց եւ դրժողաց գողոց եւ աւազակաց մուտ լինելով ի կորուստ անձանց եւ ի յափշտակութիւն ընչից, այլ ի դէպ ժամանակի ըստ պատշաճի բանամք եւ փակեմք, իմաստնոյն հաւանեալ խրատու՝ որ ամենայնի ժամ եւ ժամանակ սահմանէ որ ընդ երկնաւ. այսպէս եւ զզգայութեանց մեր դրունս ոչ հանապազ փակել պարտ է՝ զի եւ յի՞նչ պէտս եղաւ ի բնութիւնս, եթէ միշտ փակեալ կայցէ. զի սկսն գործ է տեսանելն, եւ ունկան լսելն. նմանապէս եւ այլոցն ըստ ինքեանց սահմանի: Եւ ահա անպիտանք են եթէ զքնաւորսն ոչ ներգործեն. այլ ի պատշաճ ժամանակի պարտ է բանալ ի լաւագունիցն հաւաքումն, եւ յայլում ժամու փակել ի մուտս վնասակարացն:

ԽԱ. Եւ զոր ասեմս այսպիսի ինչ է: Պարտ է խնուլ զակն ի յարատ հայեցուածոց, եւ ոչ զննել բղջախոհ ցանկութեամբ եւ վաւաշոտ տուփանօք զգեղ իբի եւ կամ արուի. փասն զի որպէս ի կորովածիզ աղեղնաւորէ առնու անտի զնետս հարուածոց կարեվէր խոցման յոգիակողմն կոյս. որով անմահն մահ մեռանի: Վասն զի ախտաւոր հայեցմամբն կերպարանէ զգործ պղծութեան, եւ անդէն շնայ ընդ նմա ըստ Տեսուն Հրամանի որ ասէ. «Որ հայի ի կին ցանկութեամբ, իսկոյն շնացաւ ընդ նա ի սրտին» եւ «Ամենայն շուն եւ

պոռնիկ,– ըստ առաքելոյ,– ոչ ունի մասն եւ ժառանգութիւն յարեալութեանն Աստուծոյ»: Թողում ասել եւ զարտաքոյ բնութեան պղծութիւնս անասնային եւ զազանային՝ որպէս անարժան յիշատակի:

ԽԲ. Փակել արժան է դարձեալ զակն ընդդէմ չարակնութեան որ առ ընկերս. յորժամ տեսանէ զոք բարեկրեալ ըստ կենցաղոյս ինչ յաջողութեանց, տան եւ որդւոց եւ ստացուածոց, իշխանութեան, պատուոյ, փառաց, բարեհամբաւ անուան, սիրոյ եւ ընդունելութեան առ ամենայն: Զոր իբրեւ տեսանէ չարակնն, որպէս սայրատուր արով հարկանի, նախանձի, մախայ. եւ լաւ համարի ինքեան մեծամեծ եւ դժնդակ տոյժս կրել, քան եթէ զնա այնպէս փառաւորութեամբ տեսանել: Յորովք եւ մահու դաւ գործեն ընդ որս չարակնութեամբն հային: Եւ ապացոյց բազումս այսորիկ ունիմք ի Գրոց. եւ մանաւանդ թէ սկիզբն մեղաց եւ մահու՝ յայսմանէ եմուտ յաշխարհ: Վասն զի չարակն բանասարկուն ոչ կարացեալ տանել զտեսութիւնս գերունակ փառաց նախաստեղծին, մատեաւ առ նա հրապուրանօք խաբէութեան, եւ զմահու ձօնեաց նմա ճաշակ: Եւ Կայենի եղբայրասպանութիւնն ոչ այլ ինչ էր, այլ զի ոչ կարաց հայել ընդ հաճելի Աստուծոյ պատարագսն Հաբելի: Իսկ եղբարքն Յովսէփու եւ զանրջոցն յաչաղեալ բաղձալի տեսութիւն, կամեցան սպանանել զնա, եւ ապա այլասեռիցն վաճառեալ. որպէս զՏէրն ի չարչարանս եւ ի մահ: Նա եւ բազմահնար մեքենայք Սաւուղայ առ ի սպանանել զԴաւիթ ուստի՞ այլ, քան թէ սիրեցեալ եւ պատուեալ զնա յաչս ժողովրդեանն տեսանէր, եւ լսէր ի պարաւորացն՝ եթէ եհար Դաւիթ զբերս: Իսկ փարիսեցւոցն եւ դպրացն խաչ կանգնեալ, եւ զառաջնորդն փրկութեան՝ որ զնոսայն էր եկեալ բարձրացուցանել եւ փառաւորել՝ զփայտէ կախեալ, զի՞նչ այլ, քան թէ

բիւրապատիկ սքանչելեաց եւ լուսաւոր վարդապետութեան կե-  
նարարին եւ փառաց եւ պատուոյ նորա որ ի ժողովրդոց՝ ոչ կա-  
րացեալ տանել: Զի թէպետ եւ նա յայն սակս էր եկեալ զի մեռցի, եւ  
մահուամբ իւրով զմահու բարձցէ զդատապարտութիւնս ազգի  
մարդկան, այլ նոքա ի նախանձուէն չարակնութեամբ հեղձեալ խա-  
չեցին զնա:

Արդ այսպիսեաց ամենայնի չարակնութեանց ընդդէմ պարտ է  
փակել զակն, զի մի՛ զկուրացուցիչ եւ զմահացուցիչ հոգւոց տե-  
սութիւնս ի ներքս ընկալցի:

ԽԳ. Իսկ ընդդէմ լաւացն եւ օգտակարացն բանալ յօժարութեամբ.  
եւ զբիծ ամենայն ախտից, որ խափան գեղեցկագործ տեսութեանն  
լինի, մաքրել. զի յստակ հայեցուածովք կարասցէ հայել եւ տե-  
սանել զսքանչելի գործս Աստուծոյ. որովք եւ յարարչին գի-  
տութիւն վայելչապէս հասանէ, ըստ առաքելոյ. «Ամերեւոյթն  
ամենայն ի սկզբանէ աշխարհի,— ասէ,— արարածովքս իմացեալ  
տեսանին. այսինքն մշտնջենաստութիւն եւ զօրութիւն եւ աստուա-  
ծութիւն նորա»:

Եւ արդ Դաւիթ ասէ. «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ»: Որ  
եւ մեծափափագ տենչանօք մաղթէր զլուսաւորութիւնս աչացն  
յայսպիսի հայել սքանչելիս. «Զարթո՛,— ասէ,— զաչս իմ, եւ նա-  
յեցայց ի սփանչելիս օրինաց քոց». եւ «Լոյս տուր Տէր աչաց իմոց,  
զի մի՛ ննջեցից զմահուն քոն». եւ «Իարձո՛ զաչս իմ ի նանուր-  
թենէ»: Յետ որոյ համարձակութեամբ եւ պանծանօք ասէր. «Աչք իմ  
յամենայն ժամ առ Տէր են». եւ «Յառաջագոյն տեսանէի զՏէր  
առաջի իմ յամենայն ժամ, զի էր ընդ աջմէ իմմէ՛ զի մի՛ սասանե-  
ցայց». այսինքն զի մտացս աչօք հանապազ զԱստուած ինձ մեր-  
ձակայ եւ ընդ աջմէ իմ կացեալ տեսանէի, եւ ի նորա տեսութենէն

երկուցեալ եւ պատկառեալ սասանէի ի մեղաց: Այս ոչ միայն  
Դաւիթի, այլ եւ ամենայն ումեք այսպէս պատահէ. զի յորժամ  
զԱստուած ինքեան մերձակայ եւ տեսող հաւատայ, զիս՞րդ կարէ  
մեղանչել: Ըստ որում որդին Որոտման ասէ. «Ամենայն որ յԱստուած  
է հաստատեալ, ոչ մեղանչէ»: Զի եթէ յորժամ մարդ ոք ուրուք մեր-  
ձակայ լինի եւ տեսող՝ ոչ առնէ չար ինչ, այսինքն ոչ շնայ, ոչ գո-  
ղանայ, ոչ սպանանէ, եւ ոչ այլ ինչ ի նմանեացն գործէ, ո՞րչափ եւս  
առաւել յորժամ զարարիչն ամենայնի եւ զդատաւորն եւ զվրէժին-  
դերն եւ զհատուցանողն ըստ գործոց՝ ինքեան մերձակայ եւ տեսող  
հաւատայ, յամենայն մեղաց եւ չար գործոց լուէ: Եւ զայս գիտելով  
Դաւիթ ասէ. «Աչք իմ յամենայն ժամ առ Տէր են»: Եւ ինքն Աստուած  
ասէր մարգարէիւ. «Աստուած մերձաւոր եմ ես եւ ոչ հեռաւոր»: Որոյ  
եւ նախանձաւորն Հեղիասս միշտ առաջի զինքն համարէր:

ԽԻ. Եւ ոչ զմարմնոյ միայն տեսանէ զգործսն, այլ եւ զմտացն շարժ-  
մունսն՝ ըստ Դաւթայ. «Որ քննես զփրտս եւ զերիկամունս  
Աստուած». եւ այլուք, թէ ոչ որպէս տեսանէ մարդ՝ տեսանէ Աստուած.  
զի մարդ հայի յերեսս, եւ Աստուած ի սիրտս: Եւ ոչ զսրտին խոր-  
հուրդն միայն տեսանէ, այլ եւ զայն որ տակաւին ոչ խորհեալ է եւ  
գործեալ. ըստ այնմ. «Զանգործս իմ տեսին աչք քո»: Եւ ոչ միայն  
տեսանէ զանգործսն, այլ եւ զրեալ պահէ. ըստ որում ասէ. «Եւ ի գիրս  
քո ամենեքեան գրեցան»: Արդ զայնպիսի տեսող պարտ է ամենայն  
ումեք ինքեան մերձաւոր համարել. եւ յայնժամ ոչ մեղանչէ:

ԽԵ. Դարձեալ բանալ պարտ է զակն ի տեսութիւնս արարածոցս, եւ  
տեսանել զսքանչելի գործս Աստուծոյ. եւ ի տեսանէն մարմնոյ  
աչօք՝ ընդ նմին բանալ եւ զմտացն աչս, եւ իմաստութեամբ տե-  
սանել զզարմանագործութիւնս արարածոցս. ըստ որում եւ Դաւիթ

տեսեալ ասէր. «Տեսի գերկինս զգործս մատանց քոց՝ զլուսին եւ զաստեղս գորս դու հաստատեցեր»։ Այսինքն հայել յերկնի բարձրութիւն եւ յընդարձակութիւն, ի լուսաւորացոյ պայծառութիւն եւ ի գեղեցկակարգաւորութիւն. եւ որ յետ այսորիկ յամպս, յանձրեւ, ի հողմս, ի ձիւն, ի սառն, ի կարկուտ, յերկիր, ի բոյսս, ի տունկս, ի մարդոյս գեղեցկակարգմութիւն, յանասունս, ի գազանս, ի թռչունս, ի ծով, յաղբիւրս, ի գետս. եւ զի՞ եւս մի ըստ միոջէ ասացից, յայլ ամենայն եղելութիւնս։ Եւ յայմանէ նախ ճանաչել զմեծութիւն եւ զիմաստութիւն եւ զանչափ զօրութիւն Աստուծոյ եւ զբարերարութիւն, թէ զայս ամենայն վասն մեր է արարեալ։ Եւ որ քան զայս է հրաշափառագոյն, եթէ զիս՞ ըղ նախախնամող զօրութեամբն կառավարէ զամենայն եւ ունի յանլոյծ հաստատութեան. զի այս անբաւ ծանրութեան մարմնոյ աշխարհիս՝ երկրի եւ ծովու՝ ոչ գոյ հիմն եւ ոչ հաստատութիւն եւ ոչ սիւնս. այլ ամենայնս ի վերայ ոչնչի է հաստատեալ. մանաւանդ թէ ի վերայ հրամանին Աստուծոյ ըստ առաքելոյ՝ թէ «Կրէ զամենայն բանի զօրութեան իւրոյ»։

ԽԶ. Արդ յայս ամենայն եւ ի սոյնպիսինս պարտ է զակն բանալ եւ տեսանել եւ ճանաչել զանհաս զօրութիւն Աստուծոյ եւ զիմաստութիւնն եւ զմեծութիւնն։ Քանզի երկինք եւ երկիր՝ եւ որ ի նոսա լինելութիւնք՝ որպէս թէ գրով եւ բանիւ պատմեն զանբաւութիւնն Աստուծոյ։ Ըստ այնմ. «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ»։ Եւ ի տեսանելին զայսպիսի անպատմելի արարչութիւն, շարժել այնուհետեւ զմիտս եւ զլեզու ի փառաբանութիւն Աստուծոյ, եւ յամենայն եղելոցս փառաւորել զարարիչն։ Քանզի յայսոսիկ հայեցեալ Անանիանքն՝ զամենայն արարածս յօրհնութիւն Աստուծոյ կոչէին ասելով. «Ամենայն գործք Տեսոն՝ զՏէր օրհնեցէք»։ Եւ ի կարգ անկեալ՝ «Զերկին եւ ո՞ր երկնի, զօդ եւ ո՞ր ի սմա՝ ասէին օրհնել

զԱստուած»։ Եւ ոչ եթէ զի նոքա օրհնեն զԱստուած, վասն զի անբանք են եւ անիմաստք. այլ մարդիկ մտաւորք եւ բանաւորք՝ տեսանելով զոր ի նոսա սքանչելագործութիւն՝ փառաւորեն զարարիչն։

Եւ ոչ միայն յայսպիսի հրաշագան եւ զարմանագործ տեսութեանէ իմաստաբար հայեցողքն զԱստուած փառաւորեն, այլ եւ յայնց տեսութեանց որ յուրից թուի թէ պատճառք չար էին. զի որ ընդ մարմնոյ ական եւ զհոգւոյ աչս բաց ունին, յայնցանէ յորմէ կուրացեալն հոգւով վնասին՝ նոքա մեծամեծս շահին, ըստ նմանութեան բժշկաց, որ բազում անգամ ի վնասակարացն զօգտակար դեղոն առնուն. որպէս յօձից առնուն զլուծիչս թունից նոցա, եւ յայլ մահացու դեղոց սատակչական զօրութիւնս։

ԽԷ. Եւ եթէ ախորժէք, յեղելոց եւ ի գրելոց իրաց ստուգեցից զասացեալս։ Քանզի պրոնիկ ոմն հռչակելի գեղեցկութեամբ յԱնտիոք քաղաքի, անուն Պեղազիա, որ ոչ միայն ի քաղաքին՝ այլ եւ յամենայն աշխարհին մերձակայ տարածեալ էր համբաւ գեղոյ նորա, որ եւ յամենայն կողմանց վաւաշոտ երիտասարդք զային առ նա, նա յաւուր միում երեալ ի բաղանեաց եւ զգեցեալ բեհեզս եւ ծիրանիս, եւ զարդարեալ ոսկով եւ մարգարտով եւ քարամբք պատուականօք զգլուխն եւ զլանջան եւ զպարանոց, եւ գրեթէ զամենայն մասունս մարմնոյն, եւ սեւութեամբ զաչան, եւ ի սպիտակէ եւ ի կարմրոյ զայտոսն, եւ օծեալ անուշահոտ իւղով զայր անցանէր լկտի կերպարանօք ընդ մէջ քաղաքին՝ ի բազմաց յայնոսիկ հեշտացելոց սպասաւորեալ։ Իսկ եպիսկոպոս ոմն, Նոննոս անուն, նստէր եկեղեցականօքն հանդերձ ի սրահ եկեղեցոյն՝ ընդ որ անցանէր պրոնիկն. որ եւ բազումք յողջախոհ ժառանգաւորացն դարձուցանէին զղէմս ի տեսութեանէն։ Իսկ սուրբ եպիսկոպոսն յար պշուցեալ հայէր ընդ նա. մինչ զի եւ բազումք ի տեսողացն ի միտս

իւրեանց բամբասէին զնա՝ եթէ ընդ երկար նայի ընդ գեղ պտոնկին: Իսկ նա յանկարծակի ընդ արտասուս ցնդեալ լայր դառնապէս: Իսկ մերձակայք որ բամբասէին զՀայեցուածս նորա, մատուցեալ Հարցանէին, թէ զի՞նչ էր պշնուլն ընդ գեղ պտոնկին եւ զի՞նչ ողբումն: Իսկ նա տակաւին արտասուելով պատասխանէր. «Վա՛յ ինձ որդեակք, վասն զի տեսի զկիինն զայն՝ զի ամենայն Հնարիւք պէսպէս եւ զանազան զարդուք զարդարեալ էր զինքն՝ որչափ եւ էր կարողութիւն. եւ այն վասն մոլեկան եւ մեղաստէր երիտասարդացն, զի նոցա Հաճոյ երեւեսցի, եւ զախտաւոր ցանկութիւն նոցա շարժեացէ խառնումն ինքեան: Իսկ ես երկնաւոր փեսային եմ Հարմնացեալ. որ վասն անճառ սիրոյն իւրոյ սուրբ որ յիս՝ յանբաւ բարձրութենէ գերակայ փառացն խոնարհեցաւ յիմ գարշութիւնս, եւ խաչիւ եւ արեամբ գնեաց ի ծառայութենէ մեղաց, եւ սրբարար ավագանան լուաց, եւ Հոգւոյն շնորհօք զարդարեաց, ետ եւ զգեղեցկացուցիչ պատուիրանս իւր եւ ուսոյց, եթէ զիարդ նոքօք օր ըստ օրէ զարդարեցից զամենայն մասունս Հոգւոյ եւ մարմնոյ, որով անճառելի սիրով նա յիս բնակէր եւ ես ի նմա: Իսկ ես ըստ առակողին՝ ի փախածն անդրէն դարձայ, եւ ընդ տիղմն թաւալեցայ՝ յորմէ լուացայ, եւ զշնորհօք զարդարանան որ ի նմանէ՝ մեղօք աղտեղացուցի, եւ ոչ փութացայ վերստին ապաշխարութեան ջրով լուանալ զանձն, եւ պատուիրանին պահպանութեամբ զարդարել՝ զի Հաճոյ գտայց երկնաւոր փեսային, որ սիրեացն զիս եւ զանձն իւր ի մահ մատնեաց վասն իմ»: Եւ լուեալ զայս զարմացան ընդ արթնութիւն մտաց նորա եւ ընդ անախտութիւն Հոգւոյն, եւ փառաւորեցին զԱստուած: Տեսանէ՞ս ահա, զի փոյթքն եւ արթունքն ի վնասակարացն շահին. բայց ծոյքն եւ մեղկքն բազում անգամ եւ յօգտակարացն վնասին:

ԽԸ. Արդ առաջին դուռն զգայարանացս բարւոք փակեցաւ եւ բա-

ցաւ: Այլ պարտ է եւ գերկրորդն ըստ նմին օրինակի փակել ընդդէմ ամենայն մահացու եւ կորստական բանից: Զի որպէս ակն տեսութեամբն խոտորի առ չարութիւնն, եւ ընդ ինքեան շարժէ զբոլոր մարմինն ի գործակցութիւն, այսպէս եւ ունկն լսելութեամբն ապականի, եւ զապականագործ լուրն ի ներքս ընդունելով՝ ի շտեմարանս սրտին ամբարէ իբրեւ զկայծակն ընդ յարդիւ թաքուցեալ. որ ի դիպող ժամանակի ի շնչմանէ իրիք արծարծեալ՝ զկիզողական բոցն բորբոքէ:

Եւ է սա սկզբնաւորագոյն մեղք. զի եւ նախ քան զամենայն բանսարկուն օձիւն մատուցեալ յունկն նախամօրն եհեղ զթոյնս դառնութեան. որով ինքն մեռաւ, եւ եղեւ պատճառ մահու ծննդոց իւրոց: Արդ առաջին մուտ ախտաւոր լսելութեան է այս. յորժամ տուփոյք իրերաց՝ այր եւ կամ կին՝ լսեն ի միմեանց բան կակղութեան եւ թուլութեան, որ իբրեւ զսուր երկսայրի յոգւոջն Հարկանի, եւ գերի առեալ տանի տուամբք ցանկութեան ի կատարումն մեղաց:

ԽԹ. Ի սոյն յարի եւ չար միջնորդացն բան, որ ի մէջ երկուցն տանի եւ բերէ զկորստական պատգամսն. որպէս եւ օձն ի մէջ Եւայի եւ բանսարկուին: Եւ այս առաւել աններելի է քան զշնութիւն. զի թէպէտ դժնդակ եւ չար յանցանք է շնութիւնն, զի յարքայութենէն արտաքս Հանէ եւ գեհնինն ժառանգ առնէ, այլ սակայն բռնաւորագոյն պատճառ, եւ Հարկեցուցիչ ի մեղս՝ ունի զցանկութիւն մարմնոյն եւ զթելադրութիւն սատանայի եւ զբորբոքումն յախտագարշութիւն: Իսկ անօրէն միջնորդն որո՞վ պատճառաւ յանհնարին յայս մեղս կործանի՝ ոչ եւ մի ինչ Հարկ եւ կամ բռնութիւն ի բնութենէն ունելով. զի կրկին ըստ չափու երկուցն յանցանաց՝ որոց պատճառ եղեւ մեղաց՝ եւ եւս առաւելագոյն տացէ զվրէժ յաւուրն դատաստանի ի կիզողական Հուր գեհնինն:

Ծ. Դարձեալ ի ձեռն ունկան է եւ լսելութիւն ամենայն չար խորհրդակցութեան եւ գործոյ անօրէնութեան, աւազակութեան, գործակցութեան. յորմէ առակացն բան հրաժարեցուցանէ ասելով. «Որդեա՛կ, մի՛ խաբեացեն զեզ արք ամբարիշտք եւ ասիցեն. “Եկ ընդ մեզ կցորդ լեր արեան. ծածկեսցո՛ւմ յերկրի զայր արդար ի տաւապարտուց. կլցո՛ւմ զնա կենդանայն իբրեւ դժոխք”»։ Զորս խրատէ ասելով. «Մի՛ երթար նամապարհ ընդ նոսա. խոտորեա զոտն քո ի շաղագ նոցա»։

Նա եւ զմարդկանէ չարախօսութիւն ունկամբ ի սիրտ մտանէ յանկալ լեզուացն եւ յանդուռն բերանոցն. որք գործիք աստանայի եղեալ՝ զնորա հեղեալ թոյնսն ինքեանց լեզուան ի լսելիս այլոց մատուցանեն, եւ շարժեն զնոսա ի բարկութիւն, յատելութիւն, ի հայհոյութիւն, յոխակալութիւն, ի թշնամանս, ի բամբասանս, ի մատնութիւն, ի դաւաճանութիւն, ի զրպարտութիւն, յորոգայթադրութիւն, ի սպանութիւն եւ ի նոյնպիսի չարիս։

ԾԱ. Է դարձեալ եւ այս ունկան արտ. յորժամ ոչ է միջնորդաց լսելութենէ, այլ դէմ յանդիման կրէ յումեքէ թշնամանս եւ նախատինս եւ դարովանս եւ արհամարհութիւնս եւ հայհոյութիւնս եւ զրկանս եւ յափշտակութիւն եւ տուգանս եւ ոտնահարութիւն։

Արդ այսպիսեաց ամենայնի, զոր վերագոյն ասացաք եւ որ նման է սոցին, պարտ է փակել զուսկնն ընդդէմ եւ ոչ բնաւ տալ մուտ լսելութեան, զի մի՛ ի նախասացեալ չարիսդ անկանիցին. քանզի իբրեւ գբաղցկեղ ճարակեն այսպիսի արտք զողին։ Այլ նախանձել զբարուք նախանձն ընդ Դաւթի որ ասէ. «Ի հակառակել մեղաւորին առաջի իմ, խոյ եղէ եւ խոնարհեցայ. եւ եղէ որպէս մարդ որ ոչ լսէ»։ Զի որ կամի զողին կեցուցանել, կամ սկզբանն ոչ լսէ, եւ կամ թէ լսէ, ոչ զայրանայ եւ ոչ առնու ի միտ եւ ոչ պատասխանէ։

ԾԲ. Եւ զսոյն դարձեալ բանալ ընդարձակ ամենայն բարուք լսելութեան մտից. այսինքն հաւատոյ բանի եւ պատուիրանաց Աստուծոյ. խօսել օրինօք եւ մարդարէիւք, աւետարանական եւ առաքելական վարդապետութեամբ։ Լսել յօրինացն՝ որ ասէ. «Տէր Աստուած քո՛ Տէր մի է. եւ սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քոնմէ, եւ զընկեր քո իբրեւ զանձն քո»։ Եւ «Մի՛ սպանաներ, մի՛ շնար, մի՛ գողանար. պատուեա՛ զհայր քո եւ զմայր»։ Եւ ի մարդարէիցն որ ասեն. «Խոտորեա՛ ի շարէ եւ արա զբարի եւ երթ զհետ խաղաղութեան»։ Եւ դարձեալ. «Լուսացարո՛ւմ ի մեղաց, սրբեցարո՛ւմ յանօրէնութեանց. ընկեցէ՛ք զչարութիւն յանձանց. ուսարո՛ւմ գործել զբարիս. խնդրեցէ՛ք զիրատունս. փրկեցէ՛ք զգրկեալն. դատ արարէ՛ք որոյն, եւ տո՛ւմ իրատունս այրոյն»։ Եւ թէ «Բրդեա փաղցելոց զհաց քո, եւ զաղխատս անյարկս տար ի տուն քո. եթէ տեսանես մերկ՝ զգեցո՛, եւ զգաակ ընտանեաց մի՛ անտես առներ»։ Եւ յաւետարանէն սրբոյ, եթէ «Որպէս կամի՛ք զի արացեն ձեզ մարդիկ, այնպէս եւ դո՛ւք արարէ՛ք նոցա»։ Եւ «Սիրեցէ՛ք զքշնամիս ձեր, եւ բարի արարէ՛ք ատելեաց ձերոց, եւ աղօթս ի վերայ լկողացն զձեզ»։ Եւ «Որ հարկանէ զծնօտ քո, մատո՛ւ նմա եւ զմիան. եւ որ հանէ ի քնն զբանկոն քո, մի՛ արգելուր եւ զշապիկս»։ Եւ «Գանձեցէ՛ք ձեզ զանձս յերկինս. եւ տո՛ւմ փոխ, ուստի ակն ոչ ունի՛ք առնու»։ Եւ յառաքելոցն, եթէ «Ամենայն դառնութիւն եւ աղաղակ եւ սրտմտութիւն եւ հայհոյութիւն բարձցի ի ձէնջ ամենայն շարութեամբն հանդերձ»։ Եւ «Արեգակն ի վերայ բարկութեան ձերոյ մի՛ մտցէ»։ Եւ «Սպանէ՛ք զանդամս ձեր զերկրատրս. ի բաց ընկեցէ՛ք զպոռնկութիւն, զպղծութիւն, եւ զագահութիւն որ է կռապաշտութիւն, եւ զգեցարո՛ւմ զգութ, զփաղցրութիւն, զերկայնմտութիւն. եւ ի բաց թօթափեցէ՛ք զամենայն շարութիւն եւ զկեղծատրութիւն եւ զնախանձ եւ զամենայն չարախօսութիւն»։ Եւ «Սիրեցէ՛ք զմիմեանս, զի սէր

յԱստուծոյ է. եւ ամենայն որ սիրէ, յԱստուծոյ է ծնեալ եւ ճանաչէ զԱստուած»։ Եւ «Մի՛ բանիւք եւ լեզուօք սիրիցե՛ք, այլ արդեամբք եւ ճշմարտութեամբք»։ Եւ զայն ամենայն փրկականս եւ ոգեկեցոյցս, որոց ոչ գոյ թիւ։

Բանալ դարձեալ պարտ է զականջս եւ ամենայն մաղթողի՝ որ զհարկաւորան պահանջէ պէտս ըստ լրման մարմնոյ պիտոյից. եւ կամ հոգեւորական խրատուց, որ է մեծ եւ օգտակար քան զմարմնոյ ընու կարօտութիւն։

Եւ այսպէս ըստ կամացն Աստուծոյ լինի ընդարձակութիւն քո լսելեաց։

ԾԳ. Եւ զհոտոտելիսդ խից ընդդէմ ամենայն հեշտալի եւ ախտաւոր հոտոց, որ սովորաբար առ վաւաչոտան է տեսանել. զի զամենայն հնարս անուշահոտութեան հնարին ի մարմին եւ ի հանդերձս առ ի նիւթ եւ զօրութիւն տալոյ ախտաւոր ցանկութեան. որով զհաստատութիւն ոգւոցն մեղկացուցեալ թուլացուցանեն ի վայր հոսելով ի բարձրութենէ պնդակազմութեան արիական հանդիսիցն։

Եւ զնոյն դարձեալ բաց Քրիստոսի անուշահոտութեան, զոր առաքելովքն ծալալեաց ընդ տիեզերս. ըստ որում եւ ասէ Պաւղոս. «Զհոտ գիտութեան իւրոյ յայտնի առնէ մեօք ընդ ամենայն տեղիս»։ Եւ թէ «Հոտ անոյշ եմք Քրիստոսի առ Աստուած ի մէջ փրկելոցն եւ ի մէջ կորուսելոցն. ոմանց հոտ ի մահուանէ ի մահ, եւ ոմանց ի կենդանութենէ ի կեանս»։ Զի որք զգարչութիւն ախտաւոր հոտոյ սիրեցին քան զկենդանացուցիչն զայն, նոցա ի մահ եղեւ՝ զատապարտելով զնոսա վասն անփափագ լինելոյն։ Իսկ որք զզգալալիս զայս արհամարհեցին սիրով ճշմարտին, նոցա տիրապէս կենաց եղեւ պատճառ։ Զոր եւ ըղձաւորն այսորիկ հարանս պանծալի յերգոյ Երզն հրատարակէ. «Իւղ թափեալ է ամուն քո. վասն այ-

սորիկ եւ օրիորդք սիրեցին զՔեզ», եւ անախտ սիրով յինքեանս ձգեցին զկեանսդ, եւ միաւորութեամբ կենացդ կենդանացան ի մշտնջենաւոր անմահութիւն։

ԾԴ. Պարտ է որք սրբութեամբ ամենասրբոյն ախորժեն լինել հաղորդ, եւ զճաշակելիսն փակել ընդդէմ ամենայն վնասակար հեշտութեանց։

Զի թէպէտ եւ ի հարկաւորան ընդարձակեալ է Աստուծոյ վաշիւր, ըստ որում եւ ասաց՝ «Ահաւաղիկ ետու ձեզ զամենայն, կերիչիք իբրեւ զբանջար խոտոյ», քանզի որպէս արարիչ մարմնոյ գիտէր զտկարութիւն նոցա եւ զպէտս, բայց յաւելորդացն արգել յորկորատութեան անչափութենէ։ Զոր անիմաստքն անյազաբար խճողեն զորովայնս. որ ոչ գիտեն զասհման ընութեանս, եթէ կերակուր վասն այսորիկ տուաւ յարարչէն կենդանեաց, որ զկենդանութիւն եւ զզօրութիւն եւ զառողջութիւն պահէ ի մարմինս. վասն զի հոսանուտ գոլով ընութիւն՝ զառեալն ոչ պահէ. եւ վասն այնորիկ թափեալն լրման կարօտանայ։ Իսկ նոքա զայս անգիտանալով՝ կարծեն առաւել շնորհ տալ որովայնի անյազութեամբն. որ ոչ թէ միայն զոգին, այլ եւ զմարմինն զոր բարեգործել կարծեն, վնասն եւ ընդ բազում ցաւովք արկանեն, յոլով անգամ եւ ընդ մահուամբ, անմտազոյն քան զանասունսն յայտոսիկ ցուցեալ. զի նոքա զբաւական պիտոյս կերակրոցն եւ ըմպելոյն առնելով, թէ եւ բազումս այլ առաջի կայցէ, եւ ոչ հայել կամին ընդ նոսա։ Իսկ սոքա զպատճառս կենացն անչափութեամբն մահու առնեն. զմարմինն աղցաւոր ցաւօք վտանգեն, եւ զհոգին անմահ յաւիտենական մահուն վիճակեն. մոռացեալք զառաքելոյ ողբումն զինքեանս, որ ասէ. «Լալով ասեմ զթշնամեաց խաչին Քրիստոսի, որոց կատարածն կորուստ է, որոց աստուած որովայնն իւրեանց է, եւ փառք ամօրն»։

այսինքն որովայնամորութիւնն: Եւ ոչ վայրապար այնպիսեացն աստուած անուանէ զորովայնան, այլ ճշմարտութեամբ. զի Աստուծոյ պատիւն ի պաշտամանէ նորա ճանաչի եւ ի պատուիրանին կատարմանէ. իսկ որովայնին ի նորին սպասաւորութենէ: Արդ որք որովայնին առաւել հպատակեն՝ քան Աստուծոյ պաշտամանն եւ պատուիրանին, քաջայայտ է զի աստուած զորովայնն ունին, որում զսպասահարկութիւն մատուցանեն: Յիրաւի եւ թշնամիս խաչին կոչէ զայնպիսին. վասն զի խաչին անուն չարչարանք են ըստ նորուն Տեառն բանի. «Որ կամի, – ասէ, – զկնի իմ գալ, զիաչն առցէ եւ եկեացէ»: այսինքն զչարչարանն: Ձի ես, ասէ, ի մարմնագգեցութեանս՝ խաչի եւ չարչարանաց ճանապարհաւ գնացի, որով եւ ի սեպհականն իմ փառս մտի. եւ որ զհետ իմ ախորժէ գալ, եւ ի փառսն իմ փառաւորել, խաչին՝ այսինքն չարչարանացն ճանապարհաւ եկեսցէ, որ է նեղ եւ անձուկ: Ձի որ ընդ լայնն եւ ընդ արձակն ընթանայ, որ է որկորատութիւն եւ այլ մարմական հեշտութիւնք, նա ոչ ի կեանսն եւ ի փառսն՝ այլ ի տանջանսն եւ ի կորուստն ժամանէ: Ջտոյն եւ առաքեալ յայտ առնէ յասելն. «Եթէ շարչարանացն Քրիստոսի կցորդ լինիմք, եւ փառացն նորա հաղորդ լինելոց եմք»:

ԾՆ. Ձի՞նչ ասացից եւ զարբեցողացն, որ յոյժ գեր ի վերոյ անցանէ չարութեամբ՝ քան զկերակրոցն անյագութիւն: Վասն զի որք կերակրոցն անչափութեամբ վարին, թէպէտ զհոգի եւ զմարմին վնասեն ըստ վերագոյն ասացելոցդ, այլ զբանական իմաստութիւն՝ որով յանբան կենդանեացն որոշեցաք, ոչ եղծանեն, այլ կան մնան ամբողջ բանաւորութեամբն եւ խոհականին ընտրողութեամբ: Իսկ արբեալքն զբանական իմաստն, որ է պատկեր տիրականին, ապականեն. զի ոչ խորհել եւ ոչ առնել գիտեն ըստ պատշաճի: Եւ ոչ թէ միայն անասնոցն այսու հաւասարեն, այլ եւ յոյժ անմտագոյնք քան

զնոսա երեւին: Վասն զի նոքա թէպէտ եւ ի բանական հանճարոյ զրկեալ են, այլ ունին բնաւոր շարժութիւնս ըստ չափոյ պիտոյից կենաց իւրեանց՝ զօգտակարսն ինքեանց ընտրել, այսինքն որոշել ի միմեանց զկենդանական եւ զմահացու կերակուրան. ի պատառող գագանաց խուսեն, յորոգայթից խորշին, ի վախից եւ ի խորխորատից ի բաց կան, յամարայնի ի ցրտային լերինս ելանեն, ի ձմերուտս ի տօթագին դաշտս իջանեն, եւ այլ ինչ բազում որ նման է սոցին՝ կերպարանս խոհականութեան յինքեանս ցուցանեն: Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ ոտիւք ուղիղ գնան, եւ աջօք անսխալ տեսանեն, եւ ունկամբ արագ լսեն: Իսկ արբեալքն ոչ միայն զբանական իմաստութիւն եւ զխոհական ընտրողութիւն կորուսանեն, այլ եւ ոչ գանասնայինս զայսոսիկ յինքեանս ունին. զի զգայական ներգործութիւնսն զամենայն կորուսանեն. զի ոչ ոտիւք ուղիղ ընթանալ կարեն, այլ գայթ ի գայթ. եւ վաղվաղակի անկեալ կործանին, եւ իբր զմեռեալ դի յայլոց բարձեալ բերին: Եւ ոչ ակն ըստ պատշաճի տեսանէ. մինչ զի եւ ոչ զբարեկամս եւ զթշնամիս տրոհել գիտեն ի միմեանց: Նա եւ ոչ ունկն ուղղակի լսէ. զի բազում զլուր բանից այլ ընդ այլոյ իմանայ: Եւ ոչ լեզու յօղաւոր եւ ըստ կարգի շարժի առ ի բանին յարմարութիւն: Եւ ոչ ձեռք յարարողականս պատշաճապէս շարժի գործատնութիւն: Իսկ շուայեալ եւ զանհանճար ծախուցն զոր ի հանգանակի գինարբուցացն անմտաբար ծախէ եւ յետոյ զղջանայ, զի՞նչ պարտ է ասել. զի յոյովք այն են՝ որ զամենայն պատճառս կենաց զգոյսն՝ ի միում աւուր վատնեն:

Եւ ոչ այսչափ միայն են վնասք արբեցութեանն. այլ քանզի խելայեղեալ է եւ ոչ գիտէ զինչ խօսի եւ կամ գործէ, բանիւք ի բանս անկանի եւ ի գրգուրութիւն եւ ի հակառակութիւն, ի բարկութիւն եւ ի սրտմտութիւն, ի կոխ եւ ի թշնամանս, ի հայհոյութիւն եւ ի նախատինս, յարհամարհանս եւ յոտնհարութիւն. եւ յայսցանէ ի հա-

ըուածս եւ ի գանս, ուստի բազում անգամ եւ սպանութիւնք. յորմէ բանտ եւ կապանք եւ տուգանք եւ յափշտակութիւն ընչից եւ հատուան անդամոց եւ զրկումն ի հայրենեաց եւ հայրածանք յօտարութիւն եւ կամ մահ փոխանակ մահու:

Տեսանե՞ս ահա, զի ոչ միայն անասնոց հաւասարէ արբեալն, այլ եւ քան զխոզս եւ զշունս եւ զգորտս եւ զայլ զազրագոյնս զեռնոց վատթարագոյնք են: Եւ այսոքիկ ըստ մարմնոյ, որ յոյժ փոքունք եւ նուաստք են առ բաղդատութիւն հոգեւորական տուգանացն: Քանզի ընդ շունս եւ ընդ պոռնիկս եւ ընդ սպանողս եւ ընդ այլ չարագործս զրկի յարքայութենէն, եւ զմշտավառն եւ զանշիջանելի ժառանգէ զգեհեանն ըստ առաքելական բանին՝ «Մի՛ խաբիք, – ասէ, – զի ոչ շունք, ոչ պոռնիկք, ոչ իգացեալք, ոչ արուագեւտք, ոչ բամբաստողք, ոչ արբեցողք, զարբայութիւն Աստուծոյ ոչ ժառանգեն»:

ԾԳ. Այլ բազումք են որ ոչ միայն որկորատութեամբն եւ արբեցութեամբն արտաքոյ սահմանին ելանեն, այլ եւ զաստուածային օրինօք սահմանեալ պահան լուծանեն. են որ ամենայն հրաժարեցուցեալ կերակրօք, եւ են որ ձկամք եւ զինուով եւ ձիթով: Եւ բարուրս կարկատեն ասելով. Աստուած վասն կերակրոց ոչ բարկանայ ումեք. զի եւ յայն սակս արար զնա եւ ետ մեզ, զի վայելեցուք յառատ պարգեւս նորա եւ փառաւորեցուք զնա: Զսիրտ, ասեն, պարտ է պահել ի չարեաց եւ չար ումեք ոչ առնել. քանզի զայս միշտ ուսուցանեն աստուածային պատուիրանք:

ԾԷ. Առ որս ասեմք, թէ եւ որ զպահան օրինադրեաց, ոչ զսիրտ պղծել ասաց չարեօք, կամ զընկերն տրտմեցուցանել, այլ եւ զայն ընդ այսմ պահել. զի եւ ոչ միոյ պատուիրանի պահպանութիւն բաւական է յուղղութիւն:

Եւ լո՛ւր յառաքելոյ որ ասէ. «Եթէ ոք զամենայն օրէնսն պահիցէ եւ միով իւրի գրիցէ, եղև ամենայն Օրինացն պարտական»: Արդ որպէս զմարմին ոչ միով կերակրով՝ այլ ամենայն պիտանացուօքն կերակրեմք, այսպէս եւ զհոգի՝ որոյ է կերակուր պատուիրանք Աստուծոյ, ոչ միով կամ սակաւուք՝ այլ ամենայն պատուիրանօք պարտ է կերակրել. զի եւ Տէրն ոչ սոսկ ասաց, թէ կեցցէ մարդ բանիւ որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ, այլ՝ թէ ամենայն բանիւ:

ԾԸ. Իսկ եթէ ոք ասիցէ, թէ հրաժարեցուցեալ կերակուր միս է եւ որ ինչ ի մտոյ՝ զի ծնունդ կենդանեաց է, իսկ ձուկն ջրոյ, եւ ձէթ եւ զինի պտղոց՝ զորս պարտ է անխտիր ուտել:

Ո՛ր ցուրտ եւ յիմար պատճառիս. ո՞չ ապաքէն տարերքս ամենայն հաւասար են, երկիր եւ ջուր, օդ եւ հուր. եւ ի նիւթական արարածոցս ոչ գոյ ինչ էութիւն, որ ոչ ի չորից տարերցս յայսցանէ է գոյացեալ, բանաւորք եւ անբանք, կենդանիք եւ անկենդանք: Իսկ եթէ ասիցէ դարձեալ, թէ Աստուած ասաց՝ «Բիղխեսցէ երկիր շունչ կենդանի ըստ ազգի չորհոտանի եւ սողունս եւ գազանս ըստ ազգի», եւ դարձեալ ասաց՝ «Հանցեն շուրֆ գեռունս շնչոց կենդանեաց եւ թռչունս թեաւորս եւ կէտս եւ ձկունս եւ կայտառս զանազան», եւ ահաւասիկ անասունք երկրի են ծնունդ, եւ ձուկն՝ ջրոյ. վասն այնորիկ զձկունս պարտ է ուտել, եւ զանասունս ոչ: Այլ յառաջագոյն ասացի, թէ ոչ ինչ գոյ ի վերայ երկրի ի միոյ տարրէ գոյացեալ, եւ ոչ յերկուց կամ յերից, այլ բովանդակն ի չորից: Եւ որ ասացաւ, ունի զջուրն եւ զայլն ընդ ինքեան. նմանապէս եւ որ ի ջրոյ՝ ունի եւ զերկրի եւ զայլոյն խառնուած: Իսկ եթէ դարձեալ հակառակիս՝ նուազ լինել զորս ի ջրոյ ասացաւ քան զոր յերկրէ, ընդէ՞ր ոչ եւ զթռչունսն ուտես, քանզի եւ նոքա ի ջրոյ են. եւ կամ ընդէ՞ր ոչ ի բուսոց եւ ի սերմանեաց հրաժարես, զի եւ նոքա յերկրէ են: Իսկ եթէ զկենդանին

ասես պատճառ, ահա եւ ձկուռք կենդանի են եւ մեծ եւ յաղթանդամ քան զամենայն կենդանիս որ ի վերայ երկրի:

ԾԹ. Այլ ես ոչ ասեմ զայս ինչ պատճառ, կամ զայն, այլ զանցանկէն ընդ եղեալ սահմանս. զի եւ առտնին պահոցն լուծումն՝ որով անէծք եւ մահ յաշխարհ եմուտ՝ ոչ մտով էր կամ ձկամբ կամ գինուով եւ ձիթով, այլ պտորով: «Ի ծառոյն, — ասէ, — գիտութեան բարոյ եւ չարի մի՛ ուտիցէք»: Եւ ի պատժելն յետ յանցաւորութեանն դարձեալ զոյն երկրորդեաց. «Փոխանակ, — ասէ, — զի կերար ի ծառոյն, յորմէ ասացի շուտել, անիծեալ լիցի երկիր ի գործս քո»: Եւ որ ի կարգին:

Կ. Արդ աստուածային օրէնսդիրքն որպէս զաւուրան որոշեցին պահոց եւ ուտելոյ, նոյնպէս եւ զկերակուրան զանազանեցին. զգորաւորան եւ զհեշտալիսն եւ զախորժականս մարմնոյ՝ զորս պատշաճ դատեցան՝ օրինադրեցին ոչ ուտել յաւուրս պահոց. ոչ թէ զի կարօտութիւն ունի Աստուած մերոց պահոցն, այլ զի երեսեցուք ընդ հնազանդութեամբ հրամանի նորա:

Զայս եւ ի մարդիկ է տեսանել. զի ի վերայ ընդ ձեռամբ անկելոցն ոչ այնքան զմեծամեծան կամ զփոքունան քննեն զպատճառս, որքան զանհնազանդութիւն եւ զարհամարհանս հրամանի իւրեանց. այսպէս ամենայն ումեք պարտ է հնազանդել աստուածայնոյ օրինադրութեանն զոր ի ձեռն եկեղեցւոյ առաջնորդաց կարգեաց: Եւ զորս ըստ աստուածային հրամանին կարճեաց յինքենէ յաւուրս պահոցն զկերակուրս, մասնաւորել զայն կարօտելոցն հարկաւորացն: Նա եւ զամենայն աւելորդս գոյիցն, կերակրոց եւ զինչ եւ իցէ, առատապէս սփռել եւ տալ աղքատաց, զի արդարութիւն բարեգործութեանն մնասցէ յաւիտեան. հաւանեալ բարերարէն խրատու, զապականացու եւ զցնդելի նիւթ երկրաւորիս՝ որ ցեցոյ եւ ժանգոյ

է կերակուր՝ որպէս վաճառականութեամբ տալ ի ձեռս աղքատաց եւ գանձել յերկինս, որ անդրժեյլին է գողոց եւ ցեցոյ. եւ առնուլ փոխարէն զանապականն եւ զանայլալելին զերկնից արքայութիւնն ըստ նորուն Տեսոն երանաւէտ ձայնի որ առ բարեգործացն դասս. «Եկայք, — ասէ, — օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարեայութիւնն ի սկզբանէ աշխարհի. վասն զի քաղցեայ եւ ետում ինձ ուտել, ծարաւեցայ եւ արբուցէք զիս, օտար էի եւ ժողովեցիք զիս ընդ յարկաւ ձերով, մերկ էի եւ զգեցուցէք զիս, հիւանդ էի եւ տեսէք զիս, ի բանտի էի եւ եկիք առ իս»: Որք իբրեւ տարակուսեցան՝ տեսեալ զնա յայնպիսի փառաւորութեան, եւ անարժան նմա զասացեալան վարկանէին, եւ հարցին՝ թէ ե՞րբ տեսաք զքեզ յայդպիսի կարօտութեան եւ բարեգործեցաք որպէս գոհանասդ, պատասխանեաց նոցա եւ ասէ. «Որովհետեւ արարէք միում ի փոքր եւ յարհամարհ թուեցեղոցս յայսցանէ, ինձ արարիք». զի ես էի որ նոցին ձեռօք առնուի զողորմութիւն ի ձեռաց ձերոց:

Արդ ըստ վերագոյն գրելոցդ ամենայն վնասակարացդ այդոցիկ ընդդէմ փակել արժան է զճաշակելիս, եւ լաւագունացդ բանալ, եթէ հանդերձեալ եմ ըստ արարչադիր սահմանին՝ չարժել զնա ի բնաւորականացն ներգործութիւն:

ԿԱ. Յետ այսորիկ դնել արժան է սանձս եւ ի վերայ լեզուոյ. զի «Թէ պէտ եւ փոքր ինչ անդամ է, այլ մեծամեծս բարբառի» ըստ առաքելոյ: Եւ զարդ անիրաւութեան զնա ասէ, եւ ամենայն մարմնոյն ապականիչ. «Նովաւ, — ասէ, — օրհնեմք զԱստուած, եւ նովաւ անիծանեմք զմարդիկ՝ որ ի պատկեր Աստուծոյ արարան»: Եւ քաղցր եւ ողորձական բանիւ ի խրատ մատուցեալ, ասէ. ոչ է պարտ, եղբարք, այսմ այսպէս լինել. զի որպէս աղբիւր անդատին ի միոյ ականէ ո՛չ բղխէ քաղցր եւ դառն, այսպէս եւ լեզու՝ որ քաղցր եւ

շնորհալից բանից գործարան յարարչէն ի բնութիւնս Հաստատեցաւ, ո՛չ է իրաւացի եթէ զդառնութիւն Հայհոյութեան եւ բամբասանաց, կագի եւ Հակառակութեան, ստութեան եւ չարախօսութեան, թշնամանաց եւ զրպարտութեան, քսութեան եւ մատնութեան, խեղկատակութեան եւ դատարկաբանութեան, երգմնահարութեան եւ շողոքորթութեան, եւ այլ յոգնապատիկ շաղակրատութեան յինքենէ բղխեսցէ: Մանաւանդ զանօրէն եւ զհոգեկորոյս բանս յիշոցատուութեան, որ է սերմ որոմնացան թշնամոյն ի նմանէ սերմանեալ, եւ ի Հաճոյակատար մշակաց իւրոց երկրագործեալ եւ արդիւնացեալ: Որ եւ քան զամենայն յանցանս է դժնդակ եւ ծանրագոյն, եւ առաւել խաւարեցուցանէ զոգուոյն պայծառութիւն, եւ անհրաժեշտ ժառանգս կացուցանէ մշտավառ հրոյ անշիջանելի գեհնին: Զի եթէ յիմար եւ մորոս ասել եղբօրն՝ ըստ Տեառն բանին պարտաւոր առնէ գեհնին, ո՞րչափ եւս առաւել զանհնարին եւ զդժնդակ ամենայն լսելութեան՝ անարգանաց եւ նախատանաց բանսն որպէս ի դժոխոց յանգականեալ մտացն եւ ի լեզուոյն զգայուելով. մինչ զի անասնոց եւ գազանաց առականօք անարգեն զի պատկեր Աստուծոյ եղեալ մարդն. որով զնախատիպն Աստուած շարժեն ի վերայ ինքեանց ի բարկութիւն եւ ի վրէժինդրութիւն: Յորով անգամ եւ զսուրբ եւ զանմեղ ոգիսն Հայհոյեն. զոր ասաց Տէրն՝ «Ոչ բնաւ ունել թողութիւն, ոչ յայսմ աշխարհի եւ ոչ ի հանդերձեալն»:

ԿԲ. Այլ ի սանձել առ այս ամենայն անկարգ բերուածն զլեզու, շարժել դարձեալ զեղեցկապէս զնա արժան է ի խոստովալանութիւն սուրբ եւ ուղղափառ Հաւատոյ երից անձնաւորութեանց եւ միոյ աստուածութեան Համարուն եւ զուգական Երրորդութեանն. եւ ի դաւանութիւն աշխարհամտորոգ եւ փրկական տնօրէնութեանն. եւ յօրհ-

նութիւն եւ ի փառաբանութիւն անսահման բարերարութեանն եւ յօրնառատ պարգեւաբաշխութեանն. եւ ի մաղթանս մշտանուէրս վասն փրկութեան անձին եւ Հոմասեռիցն. եւ ի խոստովանութիւն նախագործեալ յանցանացն՝ անպատկառապէս յանդիմանութեամբ եւ զովելի ամօթխածութեամբ, ի մեծամեծացն մինչ ի մանուսն իջանելով, որ ըստ գործոց՝ բանից եւ խորհրդոց. եւ ի խրատ եւ յօգտութիւն այնոցիկ, որ այնմ պէտս ունին հոգեւորաց եւ մարմնաւորաց: Ձեռն կարկառելով զլորելոցն. մխիթարել զսգաւորս. կանգնել զանկեալս յուսահատութեամբ. բժշկել զբեկեալս թերահաւատութեամբ, քաջալերել զվհատեալսն հեղձութեամբ. պնդակազմել զյողդողղան արիւթեամբ. զօրացուցանել զհաստատունսն պնդութեամբ: Եւ մի՛ երբէք խօսել զայն ինչ, որ ոչ ինքեան եւ ոչ յսոյին է պիտանացու. այլ զոր Հասարակաց ամենեցուն է ի յօգուտ, ըստ առաքելոյ զի ասէ. «Լիցի բանն ձեռ համեալ աղիւն նշմարաութեան», «զի տացէ շնորհս յսոյացն»:

ԿԳ. Կարգաւորապէս ասա եւ ի շօշափելիսն իրաւացի է անցանել բանիւ, եւ զնորայն նահանջել յանդուգն յարձակումն. որով առձեռն պատրաստ է ի չարութիւնն ճանապարհ եւ մուտք ի մեղս:

Եւ նախ ի գարշ եւ ի գագրալի շօշափմանէն կարճել, որ յամուսնութիւնսն եւ ի պոռնկութիւնսն լինի ի զեղխսն եւ ի շոպլեալսն: Ոչ ասեմ ի զգաստսն եւ ի պարկեշտսն. քանզի նոքա խորշին յայսպիսի աղտեղութեանց: Քանզի ամենայն պիտանացու գործոյ ունի բնութիւնս յինքենէ պատշաճաւոր գործիս. եւ որպէս յիւրաքանչիւր գործս իւրովք յարմարականօքն վարի, նմանապէս եւ յայնս իւրովքն շատասցի: Են ոմանք ի վաւաշոտացն, որք եւ առանց գործակցի ինքեանք ընդ ինքեանս մաքառին, եւ զգարշ ցանկութիւնսն Հոսմամբ ախտիցն կատարեն, որ ոչ ինչ նուազ քան զպոռնկութիւնսն է. այլ

զոյգ եւ հաւասար շնութեանն մերժէ յարքայութենէն զգործունեայն, եւ առնէ ժառանգ զեհէնին. յորմէ առաւել պարտ է զգուշանալ. վասն զի սակաւ է հեշտութիւնն եւ յորով պատուհասան:

ԿԳ. Արգելելով պարտ է եւ ի գողութենէն զձեռս ըստ առաքելոյ հրամանի, որ ասէ. «Ո՛ր գողանայր, մի՛ եւս գողացցի, այլ մանաւանդ վաստակեսցէ գործել ձեռովք իւրովք զբարիս. զի բաւական իցէ տալ ում պիտոյ իցէ»:

Թօթափել եւ ի կաշառաց զձեռս. զոր դարովէ մարգարէն ասելով. «Ձեռք իւրեանց յանօրէնութեան են, եւ աջ նոցա լի է կաշառօք»։ Ձի «Կաշառ կուրացուցանէ,— ասէ,— գառնելիսն առ ի թիւրել զդատաստան»։ զի անհնար է կաշառոց եւ իրաւանց ընթացակից լինել. զի որպէս հուր գմոմ եւ ծուխ գմեղուս, այսպէս եւ կաշառք զիրաւունս հալեն եւ փախուցանեն։ Իսկ զխոտորեալսն յայսմանէ՝ բարեբանութեամբ հոչակեն ասելով, թօթափէ զձեռս իւր ի կաշառոց. թէ «Կաշառ ի վերայ իրաւանց նա ոչ առնու. եւ որ զայս արացէ, նա մի՛ սասանեսցի յալիտեան»։ Ոչ տալ դարձեալ զարծաթ տոկոսեօք ի վարձու. քանզի «Ձվաշխս եւ գտնկոսիս ի տունս ամբարշտաց» ասէ իմաստունն։ Այլ թէ եւ ոչ ես կարող ըստ Տեառն հրամանին տալ փոխ՝ յորոց ակն ոչ ունիս առնուլ, որպէս զկատարեալ Քրիստոսի աշակերտ՝ զի առնուցու զայն բազմապատկութեամբ յարքայութեան, գոնէ տուր փոխ ըստ մեղաւորացն, զի առցէ անդրէն զհաւասար կշիռն։ Իսկ զանծնունդ բնութիւն արծաթոյն ծննդական առնել հակառակ է Աստուծոյ. քանզի նա զկենդանիս եւ ոչ զարծաթ ծննդական սահմանեաց։ Եւ կենդանիքն մի անգամ ի տարւոյն ծնանին. իսկ արծաթ յամսոջ։ Որ քան զամենայն է դժնդակ եւ առաւել ընդդէմ Աստուծոյ. զի դու որպէս զօրաւոր եւ իմաստուն քան զնա՝ կարացեր առնել զայն յորում նա տկարացաւ։

ԿԵ. Նա եւ ոչ ի հարուած ուրուք ձգել զձեռն. զի ոչ հարկանել ուսաք ի Տեառնէ, այլ հարկանելեաց մատուցանել զծնօտս։ Եւ զոր բանիւ վարդապետեաց, գործով կատարեաց՝ զի չար ծառային որ ան նմա ապտակ, ոչ սաստեաց եւ ոչ պատուհասեաց։ Ձի եւ բազում անգամ թող զսաստկագոյնս ի փոքունց հարուածոց սպանութիւն գործի։

ԿԶ. Դարձեալ ոչ ձգել զձեռն ի զրկանս եւ ի յափշտակութիւն որ զարդարութեամբ ստացեալն հրաման ընկալաք սիւռել եւ տալ կարօտելոց։ Եւ իբրեւ հակառակացս այսոցիկ եւ օրինօք հրաժարեցելոց ընդդէմ փակեմք զարձակումն շօշափելեաց, բացցուք նմա դրունս բարեգործութեան օգտակարս եւ պիտանիս. ամբարձցուք զնա մաքուր մաղթանօք եւ անդրօս մտօք առ Աստուած ըստ Դաւթայ՝ «Ի՛ գիշերի համբարձէք զձեռս ձեր ի սրբութիւն, եւ օրհնեցէք զՏէր»։ Եւ ըստ Պաւղոսի՝ «Կամիւմ, զի արք յամենայն ժամ ամբարձցեն զսուրբ ձեռս իւրեանց առ Աստուած առանց բարկութեան եւ երկմտութեան»։ Ձի քան զամենայն առաքիւնութիւն սա առաւել ընտանի եւ մերձաւոր է Աստուծոյ. զի այլքն ամենայն իբրեւ հանդերձանք եւ պատրաստութիւնք են առ Աստուած մտից. իսկ սա դէմ յանդիման խօսակցութիւն է Աստուծոյ։ Ձի որպէս ամենայն աշխատութիւն երկրագործի վասն հաւաքելոյ զպտուղսն է, եւ տաժանումն խոհագործի յաղագս կերակրելոյ, այսպէս եւ ամենայն բարեգործութիւն եւ զգաստութիւն եւ պարկեշտութիւն վասն ճանապարհ գործելոյ մտացն անզբաղապէս որպէս ընդ սիրելոյ բարեկամի Աստուծոյ խօսակից լինել աղօթիւք, եւ զպէտս ամենայն կարեաց հոգեւորաց եւ մարմնաւորաց անձին եւ աշխարհի առաջի դնել, եւ ի նմանէ զյաջողումն ամենայն բարութեան հայցել, եւ զփրկութիւն յորոգայթից թշնամւոյն։

ԿԷ. Եւ այս մասն առաքինութեան ոչ է ընդ սահմանաւ որպէս զայլսն. այլ անսահմանաբար յամենայն ժամու առնել, ըստ տէրունական հրամանին որ ասէ. «Արթուն կացէ՛ք, եւ յամենայն ժամ աղօթս արարէ՛ք»: Որ եւ յօրինակ մեզ եւ ի յորդորումն՝ ընդունողն ամենայն մաղթանաց բազում անգամ զգիշերս ի գլուխ հանէր յաղօթսն Աստուծոյ: Եւ առաքեալ ի նմանէ ուսեալ, ասէր. «Յամենայնի գոհացարո՛ւք, անդադար աղօթեցէ՛ք»: Քանզի եւ այսպէս վայելչական է նախ յաղագս տուելոց բարեացն գոհանալ, եւ ապա վասն առաջիկայիցն մաղթել: Եւ ոչ միայն վասն անձին եւ տան եւ որդւոց եւ ընտանեաց զայս առնել, այլ եւ վասն ամենայն աշխարհի. իւրաքանչիւրոցն զպիտոյսն եւ զօգտակարսն տնօրինել՝ ըստ ոգւոյ եւ մարմնոյ: Եւս առաւել ի վերայ թշնամեացն եւ ատելեացն, ըստ Տեառն բանին՝ թէ «Օրհնեցէ՛ք զանիծիչս ձեր, եւ աղօթս արարէ՛ք ի վերայ այնոցիկ՝ որ լկեան գծեզ եւ հալածեն»: Քանզի այս ամենայն զատելութիւն եւ զոխակալութիւն հալածական առնէ. զի յաղագս որոց ճշմարիտ եւ աներկբայ սիրով աղօթս առնէ, եւ ի Տեառնէ փրկութիւն հայցէ, եւ ընդ նոսա ոխակալութեամբ զիս՞րդ կարէ լինել: Նա եւ թէպէտ լինի ունել ընդ ումեք թշնամութիւն, նախ հաշտել պարտ է ըստ Տեառն բանին եւ ապա յաղօթս մատչել: Զի եթէ զպատարագն խափանել հրամայեաց նախ քան զհաշտութիւն, զի եւ ոչ իսկ էր ընդունելի առանց այնորիկ, ո՞րչափ եւս առաւել զաղօթսն. զի նախ զհաշտութիւնն պարտ է առնել, եւ զամենայն ատելութիւն եւ զոխս լուծանել, եւ ապա յաղօթսն խնդրել նոցա բարիս ի Տեառնէ: Եւ զայս առնել, զի եւ մեք առաւելապէս ընդ կարեօք եմք. քանզի անբաղդատելի են առ միմեանս՝ յանցանք մեր որ առ Աստուած, եւ ընկերացն որ առ մեզ, ըստ թուոյ բիւր քանքարացն եւ հարիւր դահեկանին: Յաղագս այնորիկ իրաւացի է թողուլ պարտապանին զսակաւն, զի գտցուք եւ մեք թողութիւն բազմացն:

Քանզի ասաց Տէրն. «Եթէ թողուցուք իւրախանչիւր եղբօր իւրում ի սրտից ձերոց զյանցանս նոցա, թողցէ եւ ձեզ Հայրն ձեր երկնատուր զյանցանս ձեր. ապա թէ ոչ թողուցուք զյանցանս եղբարց ձերոց, եւ ոչ Հայրն ձեր երկնատուր թողցէ ձեզ զյանցանս ձեր»: Արդ յաղագս այսպիսի սոսկալի եւ իրաւացի հրամանի պարտ է յամենայն սրտէ թողուլ պարտականացն եւ աղօթել սիրով ի վերայ նոցա. զի առ այս զմեզ արար Աստուած իշխանս ի վերայ թողութեան մեղացն մերոց. զի որով սրտիւ մեք թողումք նոցա զմեր պարտսն, եւ սէր եւ գուժ ցուցանեմք ի վերայ նոցա, ըստ այն չափոյ եւ Աստուած զմեր յանցանսն թողու, եւ զարարչական սէրն եւ զգթութիւնն իւր սփռէ ի վերայ մեր:

ԿԸ. Եւ յամենայն սահմանեալ ժամ աղօթից տուընջեան եւ գիշերոյ՝ պարտ է կանխել յեկեղեցի Աստուծոյ, եւ կամ յոր եւ իցէ տեղի աղօթից, եւս առաւել ի ժամ սոսկալի եւ մեղսաքաւիչ պատարագին: Զի եթէ Տէրն քո վասն անճառ սիրոյն խոնարհեալ յանբաւ բարձրութենէն՝ պատարագի վասն քաւութեան մեղաց քոց, եղեալ միջնորդ հաշտութեան ընդ Հայր եւ ընդ քեզ, ըստ որում եւ ասացն՝ «Այս է իմ մարմին որ վասն ձեր բաշխի ի թողութիւն մեղաց ձերոց», ո՞րչափ եւս առաւել քեզ իրաւացի է երթալ եւ անկանել առաջի, եւ գոհանալ եւ շնորհ ունել զանբաւ բարերարութենէն. որ վասն պարտաւորացս եւ անարժանիցս եւ ապստամբելոցս ի նմանէ բիւրապատիկ յանցաւորութեամբ զիւր անձն տայ նուէր եւ պատարագ հաշտութեան Հօր ընդ պատժապարտացս: Եւ զի մեք յամենայն ժամու, մեղանչեմք խորհրդով, բանիւ, եւ գործով, նմին իրի եւ նա յամենայն օր պատարագի, զի օր ըստ օրէ գործեալ մեղսն քաւեսցէ: Եւ եթէ գնամք յամենայն օր ի ժամ սոսկալի խորհրդոյն կատարման, եւ գոհանամք եւ շնորհ ունիմք զմարդասիրութենէն, եւ

ճանաչեմք զերախտիսն, եւ զմեր մաղթանան եւ յարտասուեն խառնեմք ընդ նորա գթութիւնն եւ ընդ բիւրապատիկ երախտագործութիւնսն, կատարի ի վերայ մեր շնորհ, եւ ընդունիմք զթողութիւն մեղաց: Իսկ եթէ հեղգամք եւ արհամարհեմք եւ ոչ գնամք ի ժամ սուրբ խորհրդոյն կատարման յեկեղեցին, եւ աղօթեմք եւ գոհանամք զանբաւ բարերարութենէ եւ խնդրեմք զթողութիւն մեղաց, այլ նախապատիւ համարիմք զհոգս մարմնականս եւ զզբաղանս անտոխ, եւ զծուլութիւն եւ զհեշտութիւն մարմնոյ քան զաշխարհակեցոյց եւ զփրկագործ խորհուրդն, ոչ միայն թէ չօգտիմք ի նմանէ, այլ եւ առաւել ի բարկութիւն շարժեմք զանախտակիր բնութիւնն ի վերայ մեր, փոխանակ արհամարհանացն եւ անտես առնելոյն: Զի եթէ երկրաւոր ոք թագաւոր վասն բարեգործելոյ ինչ զքաղաք, եւ պարգեւս բաշխելոյ քաղաքացեացն եկեացէ անդ, իսկ նորա ոչ եկեացեն նմա յողջոյն եւ յերկրպագութիւն եւ ի սպասաւորութիւն եւ ի շնորհակալութիւն, այլ արհամարհութեամբ անփոյթ առնեն՝ իւրաքանչիւր ոք յիւր գործ եւ յաշխատութիւն զբաղելով, ոչ միայն թէ պարգեւս բարեաց ոչ բաշխէ նոցա, այլ եւ մեծապէս ցասնու եւ պատուհասէ, քանի՞ եւս ապա յորժամ երկնաւոր թագաւորն եկեացէ՝ զանմահ կենաց եւ զանապական ձիրս պարգեւաց բաշխել՝ անտես առնեմք, զապականացուս եւ զցնդելիս նախամեծար վարկանելով քան զանապականն. եւ որ միշտ նոյնպէս ունի, ի բարկութիւն եւ ի ցասումն շարժեմք զնա ի վերայ մեր քան թէ յողորմութիւն:

ԿԹ. Եւ ոչ միայն աղօթել պարտ է առաջի սրբոյ պատարագին, այլ եւ հաղորդել փրկական խորհրդոյն. զի հաղորդելոցն ասաց լինել ի թողութիւն մեղաց եւ ոչ անհաղորդիցն: Քանզի նախ ասաց, թէ «Առե՛ք կերայք՝ այս է մարմին իմ». եւ ապա յաւել՝ «Որ վասն ձեռ բաշխի ի թողութիւն մեղաց»: Դարձեալ ասաց. «Եթէ ոչ կերիքի՛

զմարմին Որդոյ մարդոյ եւ արբջի՛ք զարիւն նորա, ոչ ունի՛ք կեանս յանձին»: Եւ դարձեալ. «Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ, յիս բնակեացէ եւ ես ի նմա»:

Տեսանե՞ս ահա, զի ճաշակողացն է փրկութիւն եւ ոչ անհաղորդիցն: Բայց եւ ոչ վարկպարագի հաղորդել հրամայէ, այլ սրբութեամբ: Քանզի ասէ առաքեալ. «Փորձեացէ մարդ զանձն իւր, եւ ապա ի հացէ անտի կերիցէ եւ ի բաժակէն արբցէ. զի որ ուտէ եւ ըմպէ անարժանութեամբ, դատաստան անձին իւրում ուտէ եւ ըմպէ»: Եւ թէ «Վասն այդորիկ իսկ են ի ձեզ բազում հիւանդիք եւ պիտաժէտք, եւ շատ ես այն են՝ որ եւ մեռեալքն են». այսինքն վասն անարժան հաղորդութեան:

Ն. Այլ թերեւս ասիցէ ոք արդեօք ո՞չ յառաջագոյն ասացեր, թէ ինքն է քաւիչ յանցանաց ճաշակողացն, ըստ որում ասացն՝ «այս է մարմին իմ որ վասն ձեր բաշխի ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց». եւ այժմ զառաքեալ ի մէջ բերես որ ասէ. «որ ուտէ եւ ըմպէ անարժանութեամբ, դատաստան անձին իւրում ուտէ եւ ըմպէ». եւ ահա տարակուսանք, զի հակառակս բարբառին:

Այլ լուր, ո՛վ դու, զի ոչ ընդ հակառակս խօսին, այլ կարի քաջ միաբան. եւ է այսպէս: Մարդ հողանիւթեայ՝ մարմնոյ եւ արեան վիճակեալ՝ զիա՞րդ ինքեան սրբութեամբ արժանանայ ընդ Աստուած միաւորել ճաշակմամբ մարմնոյ եւ արեան նորա: Զի եթէ սերովբէն ոչ համարձակէր մերձենալ յորինակն նորա, այլ ունելեաց կարօտանայր, մարդ՝ որ անչափ փոքրկութեամբ վերջանայ ի նմանութենէ սերովբէի, ո՞րպէս կարողանայ մերձենալ ի ճշմարտութիւնն: Այլ բարերար եւ մարդասէրն Աստուած ըստ անչափ սիրոյն իւրոյ զոր ունի առ ազգս մարդկան՝ կամելով զսոսա միացուցանել յինքն՝ ետ սոցա պատճառ սրբութեան զխոստովանութիւն եւ զապաշխա-

րութիւն: Զի ամենայն ոք ճշմարիտ սրտիւ, ըստ զիտակցութեան մտաց իւրոց ի շտեմարանս սրտին մտանելով՝ մանրամասնաբար որոնեսցէ զամենայն սխալանս հոգւոյ եւ մարմնոյ եւ մտաց, զխորհրդոց, զբանից եւ զգործոց, եւ խոստովանեսցի անպատկառաբար եւ անձածկապէս որպէս զթշնամուոյ ամբաստանելով զմեղացն. եւ առցէ ըստ չափոյ կարողութեան սահման ապաշխարութեան, եւ ապաշխարեսցէ եւ սրբեսցի:

ՀԱ. Սակայն զիտել պարտ է, զի զամենայն մեղսն մինչ ի մանուսն ի ջանելով՝ ոչ ոք կարէ զմտաւ ածել կամ խոստովանել, թէ եւ բիւր անգամ ջանայ: Եւ զրեւջիւր՝ թէ զգործոցն կարէ յիշել եւ խոստովանել. իսկ զխորհրդոցն կամ զբանիցն ո՞րպէս: Եւ եթէ յիմար ասելն եւ մորոս՝ գեհնիին դատապարտէ, եւ դատարկաբանութիւնն ի պահանջանս համարոյ ածէ, ո՞ր է որ զայս ամենայն մի ըստ միողէ զմտաւ ածել կարէ եւ խոստովանել: Արդ զոր մտածեացն եւ խոստովանեցաւ եւ ապաշխարեաց, այնու սրբեաց. եւ զոր ոչն կարաց յիշատակել, զայն մարմին եւ արիւն Քրիստոսի սրբէ: Եւ ճշմարտի երկոցուն բան Տեառն եւ առաքելոյն: Զի որ առանց խոստովանութեան եւ ապաշխարութեան ուտէ եւ ըմպէ, դատապարտի ըստ առաքելոյ. եւ որ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ, քաւի ըստ Քրիստոսի: Զսոյն զայս յայտ առնէ եւ Որոտմանն որդի. «Եթէ ասեմք, – ասէ, – եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խաբեմք, եւ ճշմարտութիւն ի մեզ ոչ գոյ. ապա եթէ խոստովան լինիմք զմեղս մեք, հաւատարիմ է նա եւ արդար առ ի թողոյ զմեղս մեք. եւ արիւն Յիսուսի Որդոյն Աստուծոյ սրբէ զմեզ յամենայն անօրէնութենէ»:

Թուի թէ զայն ակնարկէ. զի թէպէտ եւ խոստովանեցի ոք, բայց զկատարեալ թողութիւնն՝ Հաղորդութիւն մեղաքաւիչ մարմնոյ եւ արեանն Քրիստոսի պարգեւէ: Ուսանիմք զայս եւ յօրինակէ սերով-

բէին՝ որ առ մարգարէն. վասն զի խոստովան եղեւ մարգարէն, թէ պիղծ չըթունս ունիմ, եւ ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բնակեալ եմ ես: Եւ ապա սերովբէն էառ ունելեօք ի հրոյ անտի որ ի վերայ սեղանոյն, եբեր մերձեցոյց ի բերան մարգարէին եւ ասէ. «Ահա մեք՝ ձեցաւ այդ ի շրթունս քո, եւ հանցէ զանօրէնութիւնս քո, եւ զմեղս քո սրբեսցէ ի քեզն»: Տեսանե՞ս ահա, զի թէպէտ եւ սուրբ էր մարգարէն եւ առաւել քան զամենայն մարդիկ, մինչ զի Հոգւոյն էր բնակարան՝ եւ զՏէր զօրութեանց ետես յաթոռ փառաց, այլ օրինակի մարմնոյն Քրիստոսի կարօտացաւ առ ի մեղացն մաքրութիւն:

ՀԲ. Եւ յետ մաքուր մաղթանօք առ Աստուած զձեռս Համբառնալոյ զարդարեսցուք զնա եւ այլովք բարեգործութեամբք. տրօք տնանկաց, եւ կարկառելով ձեռն յաղքատս. զի եւ այս ոչ փոքր ինչ նպաստ լինի առ ի մեղացն քաւութիւն. ըստ այնմ՝ «Զմեղս քո ողորմութեամբ քաւեսցես, եւ զանօրէնութիւնս քո գթովք տնանկաց»:

Գործել ձեռօք եւ տալ կարօտելոց՝ ըստ խրատուն Պաւղոսի. «Զբարիս գործել, – ասէ, – մի ձանձրանայք, զի ի ժամանակի իւրում հնձեսցիք առանց լիանելոյ»: Եւ ամենայն վտանգելոց որք կարօտ են օգնականութեան, հիւանդաց, տկարաց, ծերոց սպասաւորել առանց հեղգութեան. որպէս իւրաքանչիւր ումեք կարեւոր պէտքն պահանջէ:

ՀԳ. Նա եւ զոտս ոչ է պարտ որոշել յընտանի անդամոցն միաբանութենէ, եւ անխնամաբար առանց զարդարանաց թողուլ. այլ իւրովք բնաւորական ներգործութեանցն գործառնութեամբք պսակել զնա: Զի թէպէտ եւ ի զգայութեանց ոչ է սա, այլ ոչ ինչ նուազ ի նոցանէ իշխանական մտացն առաջնորդութեամբ՝ յիւրաքանչիւրսն ունի շարժումն ընդդիմակ գործոց՝ բարւոյ եւ չարի: Վասն

որոյ պարտ է խոհականին վերակացութեամբ իբր ստուար եւ անխոզելի կապանօք արգելուլ զնա ի չար ընթացից եւ ի զնացից անօրէնութեան. ոչ չարժել զնա ի գողոց եւ յաւազակաց միաբնութիւն եւ ի հետեւողութիւն, ըստ իմաստնոյն խրատու՝ «Ուրդեա՛կ, — ասէ, — մի՛ երթար նանապարհ ընդ նոսա. խոտորեա գոտն քո ի շաղաց նոցա. զի ոտք նոցա ի շարիս ընթանան, եւ երագունք են ի հեղումն արեան»։ Ոչ եւ ի տուն պոռնկութեան կամ արեցութեան. զի կատարած երկոցուն յատակս հայի դժոխոց։ Ոչ ի թատերս խաղուց եւ լիտի տեսութեանց, զի յորովից չարեաց են պատճառ։ Ոչ առ դիւթս եւ կախարդս, զի օտարացուցիչք են յԱստուծոյ։ Ոչ եւ առ չար խորհրդակիցս եւ գործակիցս, խորհել եւ կամ առնել ումեք չարութիւն։

Եւ միանգամայն յամենայնէ՛ որ ընթացիւք ոտին լինի սպաստաբուրութիւն ի հրամանացն Աստուծոյ՝ ներգործութեամբ չարի յինքն եւ կամ յայլ՝ խոտորել։ Եւ արգելմամբ յայսմանէ ուղղել ի զնացս արդարութեան. ըստ առակողին՝ «Ի նանապարհս նշարտութեան զնամ, եւ ի շախիս արդարութեան շրջիմ»։ Այսինքն ստէպ ընթանալ յեկեղեցի Աստուծոյ եւ ի տունս աղօթից ի փառաբանութիւն Աստուծոյ։ Գնալ եւ առ խոստովանահայրս, եւ հոգեւոր խրատուց բաշխողս. խոստովանել զմեղս, եւ առնուլ խրատ սպաշխարութեան եւ բարեգործութեան։ Գնալ եւ յայցելութիւն հիւանդաց եւ որք ի բանտի, եւ ըստ չափու գօրութեան օգնական լինել։ Եւ բողոքովին յամենայն որ ինչ ըստ պատուիրանաց Աստուծոյ է՛ զնալ, եւ ի հրաժարելոցն խոտորել։ Մինչ զի կարել ասել ընդ Դաւթայ. «Ի նանապարհս պատուիրանաց քոց ընթացայ, եւ զնանապարհս նշարտութեան քո ընտրեցի»։ Եւ լսել ի Տեառնէ. «Դո՛ւք որ եկիք զկնի իմ, ի միւսանգամ գալստեանն իմոյ վայելեսցիք ի փառս իմ»։

ՀԴ. Եւ արդ ահաւասիկ շնորհօք Աստուծոյ՝ մասանց ոգւոյ եւ շարժմանց մտաց եւ զգայութեանց մարմնոյ, որ ինչ մուտք մեղաց են՝ փակեցան, եւ որ ինչ առաքինութեան եւ սրբութեան յառաջատուութիւնք՝ բացան։ Զի եւ այս իսկ է մարդ բողոքովին ոգի եւ գօրութիւնք իւր, միտք եւ շարժմունք իւր, մարմին եւ զգայութիւն իւր. զոր պարտ է ըստ վերագրելոցդ ամենայն զգուշութեամբ պահել։ Ոչ ընդ հրաժարեցուցեալսն ընտանենալ, եւ ոչ ի համարձակելոցն օտարանալ. զի մի՛ ի բարուք եւ յընտանի կայից սողոսկեալ ի վայր քարշեցի մարդն Աստուծոյ, եւ բիծ ինչ արատոյ ընդ անարատ մաքրութիւն խառնեցի՝ եղծանելով զնախատպին պատկերի լուսանկար գեղեցկութիւն։ Քանզի վերագրելովք՝ յառաջինն յայն ամենայնիւ զարդարեցի արարչաստեղծ կերպարան. ճոխ բողոքովին ըստ լաւագունին, եւ աղքատ ի հակառակէն։ Զի «Թէ՛ գամենայն, — ասէ, — գօրէնսն պահիցես, եւ միով իբիք գթիցես թերի ես եւ ոչ կատարեալ»։ Զոր օրինակ եթէ՛ որ ամենայն անդամօք մարմնոյն կազմ եւ յարդարուն իցէ, եւ միով իւրք նուազեալ՝ ակամբ կամ ձեռամբ կամ գոր եւ ասիցես յանդամոցն՝ ոչ ամենայն իրօք այնպիսին ընդ կատարեալսն է, այլ թերի կոչի։ Ի սոյն խորհուրդ եւ յօրինաւոր հրամանսն՝ զընծայեալսն Աստուծոյ պատարագ անարատս հրամայէր մատուցանել. քանզի կաղն կամ միականին կամ ունչատն կամ պնչատն կամ որ այլ ինչ թերութիւն ունէր, չէր ընդունելի ի պատարագսն։ Եւ Պաւղոս զամենայն օրինական «Սառուե հանդերձելոց բարեացս» ասէ։ Ուստի ընդ այլսն եւ զայս վարկանելի է ստուեր. զի մարմնաւորն այն պատարագ՝ հոգեւորիս էր սպաջոյց. զի որպէս անդ ըստ մարմնոյ կատարեալքն էին ընդունելի, աստ հոգեւորապէս լրացեալքն եւ անթերիք։

ՀԵ. Ունիմք եւ այլ յարացոյց գօրաւոր եւ ազդողական ի նիւթա-

կանէս յաննիւթն, եւ յախտաւորէս յանախտն բաղղատութիւն: Բայց ինձ մաքրեցէք զմիտս եւ զխորհուրդս՝ զամենայն հիւթական եւ ախտաւոր մտածութիւն ի բաց բառնալով, եւ յստակ հայեցուածովք յանարատ խորհուրդն յառեսցուք: Քանզի փեսայ Քրիստոս է, եւ կոչէ եկեղեցւոյ. եւ սա հարսն անախտաբար ի Բանն միացեալ: Որպէս եւ փեսաւէրն Յովհաննէս ասէր. «Որ ունի հարսն՝ նա է փեսայ»: Եւ հարսնածուն Պաւղոս՝ «Խօսեցայ զձեզ,– ասէ,– իբրեւ զկոյս սուրբ յանդիման կացուցանել փեսային Քրիստոսի»: Իսկ փեսայն եկեղեցւոյ՝ զիւր ընդ հարսինն եկեղեցւոյ լինել ի սոյն առակէ. «Միթէ մարթի՞նչ իցէ մանկանց առագաստի սուգ առնուլ՝ ցորեան զփեսայն ընդ իւրեանս ունիցին»: Թողում եւ զԵրզոյ Երզոյն բան, որ ի սկզբանէ մինչ ի կատարած զնոյն յեղեղէ՝ մարմնաւորօքն զհոգեւորսն ապացուցանելով. ոչ այլ ինչ այսու յայտնելով, քան եթէ զառաւելութիւն անչափ սիրոյն Քրիստոսի որ առ հաւատացեալս իւր: Եւ զի՞նչ գոյր այլ ինչ սիրոյ տեսակ յերկրաւորս առաւել քան զփեսայի եւ հարսին՝ որ կարողանայր զսէրն Քրիստոսի որ առ եկեղեցի՝ յանդիման կացուցանել. նմին իրի եւ այս առակեցաւ:

ՀԶ. Արդ զոր օրինակ փեսայն զհարսնացեալն ինքեան ոչ կամի բնաւին թերութիւն ինչ ունել յանդամս մարմնոյն՝ այլ ամենայնիւ կատարեալ լինել, այսպէս եւ Քրիստոս զհարսնացեալ ինքեան մաքուր անձնն կամի կատարելապէս ինքեան նուիրել սրբութեամբ. զի եւ ոչ մի ինչ ի մասանցն հոգւոյն կամ ի զգայութեանց մարմնոյն նուազիցէ ի բնաւորական իւր ներգործութենէն: Եւ որպէս փեսայն, թէպէտ եւ հարսն անթերի անդամօք մարմնոյն, բայց կամի եւ զարդարանս պէսպէս զգեցուցանել հարսինն՝ իւրաքանչիւր յարմար ըստ պատշաճի անդամոցն, ի զգեստուց եւ յոսկւոյ եւ ի մարգարտոյ եւ ի քարանց պատուականաց, զի առաւել գեղեցկացի ի հա-

ճութիւն նմին, այսպէս եւ Քրիստոս կամի զառաքիլնի ոգին ոչ միայն ի չարեաց ազատ լինել ըստ իւրաքանչիւր մասին եւ զգայութեան, զի այն է անարատութիւն անդամոցն՝ յորժամ մեղաց խառնուած ոչ ունիցի, բայց ոչ այսու շատանայ. այլ կամի իւրաքանչիւրոցն պէսպէս ոսկիանման եւ մարգարտատիպ եւ ականահանգէտ առաքիլութեամբք ըստ իւրաքանչիւր բնաւորականացն ներգործութեանց զարդարել: Վասն այսորիկ պարտ է ամենայն ումեք փութալ, զի մի՛ ինչ նուազ ի պատշաճ առաքիլութեանց գտանի, ըստ որում եցոյց բանս վերոյ, ըստ հոգւոյ եւ մասանց իւր, մտաց եւ շարժմանց իւր, մարմնոյ եւ զգայութեանց իւր: Որովք եւ հաճոյ յաչս երկնաւոր փեսային երեւեսցի, եւ լուցեալ լապտերաւ ընդ նմին մտցէ յառագաստ երկնաւոր հարսնարանին՝ անախտ միաւորութեամբ յանդուգական փառսն վայելել ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն:

**ԳՐԻԳՈՐ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԵՒ  
ԵՐԱՆԱԻԷՏ ՃԳՆԱԻՈՐԻՆ ՀԱՄԱՌՕՏ  
ԽՐԱՏԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ՈՒՂԻՂ ՀԱԻԱՏՔԻ  
ԵՒ ՄԱՔՈՒՐ ՈՒ ԱՌԱՔԻՆԻ ՎԱՐՔԻ  
ՄԱՍԻՆ**

**ԳՐՈՒԱԾ ԻՐ ՀԱՐԱԶԱՏԻՆ՝ ՎԱՐԴԱՆ  
ԴԻԻԱՆԱԴՊԻՐԻՆ ԽՆԴՐԱՆՔՈՎ**

1. Տէրունական խրատին հետեւելով, որ պարզեւատէր եւ բազմա-  
ուատ բարերարութեան համաձայն բողոքին կու տայ եւ ոչ ոք կը  
զրկէ, ինչպէս որ ըսաւ՝ «Խնդրողը պիտի ստանայ, փնտռողը պի-  
տի գտնէ» (Մտ 7.8)<sup>1</sup>, որ նաեւ իմանալին իբրեւ գիտութեան հաց եւ  
իմաստութեան գինի գեղեցկապէս մատակարարեց անոր քաղցը  
ունեցող բանական անձերուն, եւ քարոզիչներուն բարձրաձայն  
հրաւէրով հոգեւոր խրախճանքի կոչեց՝ առակողին համաձայն, մե-  
զի ալ նոյնը իբրեւ օրէնք տուաւ ըսելով՝ «Եթէ մէկը ֆեզմէ բան մը  
խնդրէ՝ տու» (Մտ 5.42):

Եթէ լաւ է կարօտեալներուն մարմնական պէտքերը հոգալ,  
որուն փոխարէն Տէրը խոստացաւ աշխարհի սկիզբէն պատրաստ-  
ուած արքայութիւնը տալ, որչա՛փ աւելի գովելի է լիացնել բարիք-  
ներէ աղքատ հոգիները (հմմտ Մտ 5.3): Այնքան աւելի, որքան  
նախապատիւ, մեծ եւ պատուական է հոգին՝ քան մարմինը, պատ-  
կեր ըլլալով աստուածայինին, մինչ մարմինը երկրորդական եւ հո-  
ղանիւթ է, որ Տէրն ալ գործով յայտնեց. որովհետեւ գրուած է, թէ  
իրեն հետեւող ժողովուրդը միայն երկու անգամ հացով կերակրեց,  
բայց կենարար խօսքին վարդապետութեամբ, — որ հոգիներու կե-  
րակուրն է, համաձայն այն խօսքին՝ թէ «Մարդ միայն հացով չ'ապ-

<sup>1</sup> Խրատ-ին մէջ աստուածաշնչական մէջբերումները յիշողութեամբ արձա-  
նագրուած են: Ես նշած եմ համապատասխան մէջբերումին գիրքն ու համարը՝  
Սաղմոսներու պարագային օգտագործելով Անթիլիասի 2002-ի եւ Նոր կտակարա-  
նի պարագային օգտագործելով Անթիլիասի 1993-ի հրատարակութիւնները: Մնա-  
ցեալ աստուածաշնչական մէջբերումները գրաբարէ աշխարհաբարի վերածուած  
են թարգմանական ընթացքի մէջ եղող բնագիրէն:

րիւր, այլ բոլոր այն խօսութեան, որ Աստուած խօսած է» (Մտ 4.4),— միշտ անոնց հոգիները կը կերակրէր: Նաեւ, իմաստուն ծառային առակով պատուիրեց ճիշդ ժամանակին տալ ծառայակիցներուն կերակուրը. եւ դեռ, կրկնապատիկ քանքարներ շահողին եւ զլացողին օրինակով նո՛յնը ցոյց տուաւ՝ թէ պէտք է տալ ամեն անոր, որ կը խնդրէ (Հմմտ Մտ 24.45–51, 25.14–30):

2. Իսկ ես, ով իմ անձիս սիրելին<sup>2</sup>, ոչ թէ մէկ, այլ կրկին պարտաւորութիւն ունիմ քեզի տալու: Առաջին՝ վերը ցոյց տրուած Տիրոջ հրամանին համաձայն, որ կը պատուիրէ ամեն ուզողին տալ: Երկրորդ՝ ըստ մեր արեւնակցական մօտիկութեան եւ ընտանութեան:

Ասոնք կատարելու եթէ ծուլանամ, կը վախնամ մարգարէներու եւ առաքեալներու ահաւոր փողերու ձայնէն. մին, որ կ'ըսէ՝ «Ընտանիք ու զաւակդ չգրկես» (Ես 58.7), եւ միւսը, որ կ'ըսէ՝ «Իսկ մէկը՝ որ իրեններուն եւ մանաւանդ իր ընտանիքի անդամներուն հոգ չի տանիր, այնպիսին իր հաւատքը ուրացած մըն է, շատ աւելի գէշ՝ քան անհաւատ մը» (Ա. Տմ 5.8): Բայց դուն զգուշ եղիր փութապէս գործով կատարելու այս ըսուածները, նման այն աշխատասէր եւ հաւատարիմ ծառային, որ արթնութեամբ կը սպասէր իր տիրոջ գայլուստին. որովհետեւ առաքեալը կը գրէ՝ «Օրէնքը զիսցողները չէ՛ որ կ'արդարանան Աստուծոյ առջեւ, այլ՝ օրէնքը գործադրողները պիտի արդարանան» (Հն 2.13): Ինչպէս որ ես չտալովս կը դատապարտուիմ՝ իբր տէրունի հրամանը անտեսող, նոյնպէս եւ դուն՝ գործով չհետեւելով: Որովհետեւ Յիսուս ըսաւ, թէ ով որ տէրունական խօսքին դրամը կը թաքցնէ, արտաքին խաւարին մէջ պիտի նետուի. նաեւ, լուծապարտիներուն քով մարդոց ունկնդրութեան դրուածքը, լսողներէն տոկոսով պիտի պահանջուի, իսկ Տիրոջ կամքը

<sup>2</sup> Ակնարկութիւն Վարդան դիւանադպիրին:

զիսցողները բայց չկատարողները շատ պիտի դանակոծուին (Հմմտ Մտ 25.14–30): Այլ, ան որ շտեմարանապետն է բոլոր բարիքներուն եւ կը կամենայ բոլորին փրկութիւնն ու ճշմարիտ գիտութեան հասնիլը, մեզի ալ պիտի շնորհէ կարելիութիւնը արժանապէս,— իր բարեսէր կամքին համաձայն՝ որպէս հաւատարիմ տնտես աստուածային խօսքին գիտութեան—, օգտուելու իր բարիքներէն, որ երկինքէն իջած հաց է՝ հոգիներու կերակուր, եւ օրէնքով պիտի մատակարարէ մեզի:

Ուրեմն, դուք<sup>3</sup> ալ սիրով եւ բարեհաճ հաւանութեամբ ընդունեցէք եւ պտուղ տուէք բազմաբեղուն ու պարարտ երկիրին նման՝ աննախանձ սերմանողէն սերմանուած կեանքի սերմին չորրորդ մասը ընդունելով (Հմմտ Մտ 13.1–9):

3. Արդ, սկսինք այն տեղէն ուրկէ պէտք է սկսիլ՝ ճշմարիտ հաւատքի դաւանութեան համար, որ բոլոր բարիքներուն հիմն ու արմատն է: Որովհետեւ Տէրն ալ ա՛յս եկեղեցիին հիմ դրաւ, ըսելով առաջին դաւանողին, Պետրոսի, թէ դուն քու խոստովանութեամբդ հաստատուն եւ անշարժ ժայռի պէս ես եւ այդ ժայռին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս (Հմմտ Մտ 16.18), այսինքն՝ բոլոր հաւատացեալներն ու ճշմարիտ խոստովանողները համազոյ եւ միասնական Երրորդութեան: Նաեւ, եկեղեցին շինողը, Պողոս, կ'ըսէ՝ «Մասերն էք այն մեծ կառոյցին, որուն հիմը առաքեալներն ու մարգարէներն են» (Եփ 2.20), եւ՝ ես իբրեւ իմաստուն ճարտարապետ սուրբ Երրորդութեան հաւատքը հիմ դրի (Հմմտ Ա. Կր 3.10), որուն վրայ գեղեցկապէս կը շինուի բոլոր առաքելութիւններու կառոյցը:

<sup>3</sup> Հոս յոգնակիի գործածութիւնը ակնարկութիւն մըն է Վարդան դիւանադպիրի ազնուական ծագումին եւ հրաւեր մը Խրատը կարդացողներուն՝ գործարկելու հեղինակին առաջադրանքները:

4. Արդ, ա՛յս է ճշմարիտ հաւատքի դաւանութիւնը: Հաւատալ, որ Հայրն Աստուած է ճշմարիտ էութիւն, կատարեալ գոյութիւն, անեղ, անսկիզբ, անժամանակ, անպատճառ, անիմանալի, անտեսանելի, անճառելի, անհասանելի, պարզ, անզնին, անհուն, անսահման, աներբ, անուր, անբովանդակելի, անայլայլելի, անփոփոխ, գերաբուն, գերազոյ, գերալոյս, գերանճառ: Ո՛չ ուրիշ մէկէ մը ստեղծուած է, եւ ո՛չ ալ ինքզինք ստեղծած է. ոչի՛նչ կար իրմէ առաջ, ո՛չ ալ իրեն հետ՝ գոյ էակ. այլ, ինքն էր սկիզբ եւ պատճառ ամեն բանի, համագոներուն՝ ծնունդով եւ բղխումով <sup>4</sup>, արարածներուն՝ արարչութեամբ:

5. Իսկ Հօր Միածինը՝ խօսք եւ ծնունդ Աստուծոյ՝ անճառելի, կերպարանք եւ ճառագայթ, նկարագիր էութեան (Հմնտ Եբբ 1.3), կենդանի կնիք, իմաստութիւն եւ զօրութիւն, Հօր աստուածավայել բոլոր կոչումները էապէս ունեցող՝ որպէս նոյնազոյ բնութիւն: Աստուած Աստուծմէ, անեղ անեղէ, անժամանակ անժամանակէ, կեանք կեանքէ, լոյս լոյսէ, ո՛չ կրտսեր Հօրմէն՝ թէեւ ծնունդ, այլ որչափ Հայրը հայր, նոյնքան Որդին որդի. որովհետեւ Հայրն ալ որդիին հայր է եւ որդի չունենալով չի՛ կրնար նաեւ հայրութիւն ունենալ. նոյնպէս ալ Որդին որդի չէ Հօր. այլ երկուքին՝ Հօր եւ Որդիին յատկութիւնները իրարմով կը ճանչցուին:

6. Եւ Սուրբ Հոգին՝ Հօրմէ բղխում անճառաբար, ո՛չ Որդիին պէս ծնունդով, այլ էութենէն երոզութեամբ. «որովհետեւ Հօրմէն կ'ելլէ» (ՅՏ 15.26), ան Հօր էակից եւ Որդիին փառակից է: Նոյն բնութեամբ՝ համագոներուն ամեն բանին հաղորդակից եւ զուգահաւասար, ինչ որ Հօր եւ Որդիին անեղութեան եւ միւս յատկութիւններուն մասին

<sup>4</sup> Ակնարկութիւն Որդիին եւ Սուրբ Հոգիին:

ըսուեցաւ: Որովհետեւ ո՛չ մէկ առաւելութիւն կամ նուազութիւն կը տեսնուի պաշտելի Երրորդութեան մէջ. այլ, ամեն բանով մէկ են եւ հաւասար, բացի անճնաւորութիւններու յատկութիւններէն եւ անոնց հետեւող արդիւնքներէն. այսինքն՝ թէ Հայրը հայր է, Որդին՝ որդի եւ Հոգին՝ հոգի: Կարելի չէ Հայրը համարել կամ ըսել թէ Որդի կամ Հոգի է, ոչ ալ Որդին՝ Հայր կամ Հոգի, եւ ոչ ալ Հոգին՝ Որդի կամ Հայր: Այլ, Հայրը միշտ Հայր է, Որդին՝ միշտ Որդի, եւ Հոգին՝ միշտ Հոգի Աստուծոյ:

7. Եւ ըստ անճնաւորութիւններու նաեւ յատկութիւնները զատորոշ են. այսինքն, ծնողութիւն եւ ծնելութիւն եւ երոզութիւն: Հայրը երբեք ծնունդ կամ երոզութիւն չէ, ոչ Որդին՝ ծնող կամ երոզ, եւ ոչ Հոգին՝ ծնունդ կամ ծնող: Այլ, ծնողութիւնը միշտ Հօր կը պատշաճի, ծնելութիւնը՝ Որդիին եւ երոզութիւնը՝ Հոգիին. ինչպէս որ անճնաւորութիւնները անփոփոխելի են, նոյնպէս եւ՝ յատկութիւնները: Հայրը համագոներու ծնունդին եւ երոզութեան պատճառն ու սկիզբն է. բայց եթէ կը կարծուի թէ ժամանակական են, պէտք է իմանալ որ անպատճառ են եւ անսկիզբ՝ մշտնջենաբար սկիզբին եւ պատճառին հետ նոյնազոյ բնութեամբ ըլլալով: Համագոներուն մէջ չկայ երիցութիւն եւ կրտսերութիւն, մեծութիւն եւ փոքրութիւն, անեղութիւն եւ արարչութիւն. այլ, ամեն բանով, բացի անճնաւորութիւններէն, հաւասար եւ մի են՝ բնութեամբ, աստուածութեամբ, անեղութեամբ, զօրութեամբ, մեծութեամբ, փառքով, պատիւով, անհասութեամբ, անտեսութեամբ, անճառութեամբ, իմաստութեամբ, բարութեամբ, արարչութեամբ, նախախնամութեամբ: Անեղ եւ իմանալի ու զգալի արարածներու ստեղծիչ, լոյս եւ լոյսի արարիչ, կեանք եւ ամեն բանի կենդանարար, իմաստութիւն եւ բոլորը իմաստուն դարձնող, սուրբ եւ սուրբերը սրբաց-

նող, բարի եւ բարիք բաշխող, զօրաւոր եւ զօրաւորները զօրացնող, կատարեալ եւ կատարեալները կատարելագործող, լի եւ կարօտեալները լիացնող, յաւիտենական եւ յաւիտեանները գոյացնող, անժամանակ եւ ժամանակները սահմանող: Որովհետեւ ժամանակ եւ յաւիտենութիւն, եւ անոնց ենթակայ բոլոր իմանալի եւ զգալի էակները, անով եւ անոր հրամանով եղան եւ կը կառավարուին, կան եւ կը մնան անլոյծ հաստատութեան մէջ:

Ասոնք համառօտ կերպով կը պարզեն Երրորդութեան խոստովանութիւնը, որուն պէտք է միացնել նաեւ Յիսուսի տնօրինութեան խորհուրդը:

8. Որովհետեւ այս երեք անհասանելի անձնաւորութիւններէն մին, նախ քան յաւիտեանները Հօրմէն անժամանակ եւ անմարմին ծնածը, Հոգիին էակիցն ու փառակիցը, համագոններու կամբով եւ հաճութեամբ կը խոնարհի անճառ փառքէն եւ անհուն բարձրութենէն, նորոգելու իր ստեղծած, ապա եղծուած, ապականած պատկերը<sup>5</sup>: Ան իր ամենակարող իշխանութեան բնական զօրութիւնը ի գործ չի դնել, այլ՝ ամենակարող անհուն իմաստութիւնը: Հրեշտակապետին աւետումով կը բնակի ամեներջանիկ եւ փառաւորեալ կոյս Մարիամի Սուրբ Հոգիով մաքրուած արգանդին մէջ, անոր բնութենէն մարմին կը հագնի՝ հոգիով եւ միտքով, եւ որպէս կատարեալ մարդ եւ ճշմարիտ Աստուած անչիոթ միութեամբ կը միացնէ անխառնելիները՝ նոր եւ սքանչելի միութեամբ: Որովհետեւ Աստուծոյ էութեան այնչօղ եւ անմարմին պարզութիւնը ո՛չ նիւթական մարմինի եւ ո՛չ ալ յօգաւոր թանձրութեան փոխուեցաւ, ո՛չ ալ նիւթական մարմինի թանձր բնութիւնը՝ աստուածութեան անօսը եւ աննիւթ պարզութեան. այլ, երկու բնութիւններուն յատկութիւնները անչիոթ պա-

<sup>5</sup> Ակնարկութիւն մարդ արարածին մեղքով ապականելուն:

Հուեցան եւ անճառապէս միացան, ամեն խառնումէ եւ միութենէ գեր ի վեր մնալով: Մէ՛կ Որդի եւ մէ՛կ Տէր Յիսուս Քրիստոս, երկու կատարեալ բնութիւններէ: Եւ հրակիր որովայնի քուրային մէջ, առաջին անապականութեամբ՝ ամենակարողը վերստին ճուղեց մեր բնութիւնը: Որովհետեւ մարդկութիւնը մեղքի պատճառով լոկ մասամբ ապականած չէր, այլ ամբողջապէս՝ հոգիով, մարմինով եւ միտքով. այս պատճառաւ այս բոլորը զգեցաւ Բանը եւ իրեն միացուց, որպէսզի իր անմեղութեամբ եւ անապականութեամբ մեղանշականը անմեղ դարձնէ եւ ապականածը՝ անապական:

9. Բանը մարդկային բոլոր կիրքերը կրեց, բացի մեղքէն: Այսինքն, անօթեցաւ՝ ան որ բոլոր պարզներուն կերակուր կու տայ. ծարաւեցաւ՝ ան որ իրեն հաւատացողներուն կեանքի ջուրը կը պարգեւէ. յոգնեցաւ՝ ան որ յոգնածներուն հանգիստն է. քնացաւ՝ ան որ արթնութեամբ կը հսկէր Իսրայէլի վրայ. լացաւ՝ ան որ բոլոր դէմքերէն ամեն արցունք սրբեց. աշխարհի վրայ շրջեցաւ երեսուն տարի, իր աստուածութեան փառքը առանց յայտնելու, մինչեւ կատարեալ հասակին լրումը:

Այնուհետեւ, մեղքերէ բոլորովին մաքուրը եւ մաքրութեան անկարօտը մկրտուելու կու գայ. ամբողջիէն<sup>6</sup> կը մկրտուի, մեզի մաքրութեան շնորհքը ցոյց տալով: Հօրմէն կը վկայուի որպէս սիրելի Որդի եւ անոր կամքին կատարիչ, մեզ Հօրը որդեգիրներ դարձնելով: Կը յայտնուի իր ազգակից Հոգիէն՝ աղաւակերպ իջմամբ, որ մեր վրայ շնորհքին էջքը կը խորհրդանշէ: Հոգիէն անապատ կ'առաջնորդուի, քառասուն օր ծոմ կը պահէ, Փորձիչին կը յաղթէ իբր մարդ՝ յաղթութեան շնորհքը եւ անոր հետեւող յաղթանակը մեզի պարգեւելով եւ մեզի սորվեցնելով պահքով յաղթել Փորձիչին: Գո-

<sup>6</sup> Ակնարկութիւն Յովհաննէս Մկրտիչի:

ուղը բռնելով եւ հսկան կապելով, այնուհետեւ մեծ զօրութեամբ կը վերադառնայ՝ անիրաւ ստացուածքները առնելու, որոնք յափշտակուած էին խաբէութեամբ եւ ոչ թէ զօրութեամբ, եւ կը սկսի իր վարդապետութեան ու հրաշագործութիւններուն, որով ամբողջ կողովուորը գերողէն կը վերադարձնէ<sup>7</sup> (Հմմտ Մտ 12.29, Մր 3.27, Ղկ 11.21–22):

10. Այս բոլորի լրումին, ըստ մարգարէներու կանխատեսութեան, կամաւորապէս չարչարանքի կու գայ. որովհետեւ մարմնանալովն ու անմեղութեամբը սրբեց մարդկային բնութիւնը եւ գայն արդարացուց Հօրը, հրեշտակներուն եւ այս աշխարհի կարծեցեալ իշխանին առջեւ, որ իր ունեցածներէն ոչինչ գտաւ անոր վրայ (Հմմտ ՅՅ 14.30), սակայն նախնական մեղքին պարտքը տակաւին կը մնար մեր բնութեան մէջ: Ասոր համար պարարտ եզն ու անմեղ գառնուկը իբր նուէր եւ պատարագ իր անմեղ մարմինը կու տայ Հօր՝ արարածներուն հետ հաշտութեան համար, եւ կը ջնջէ աշխարհի մեղքերը (Հմմտ ՅՅ 1.29):

Եւ որովհետեւ անհնար էր աստուածային անչարչարելի եւ անմահ բնութեան չարչարանք եւ մահ ընդունիլ, ուստի չարչարելի մարմին հազաւ, որպէսզի անչարչարելին չարչարելիով չարչարուի եւ անմահը մահկանացուով մեռնի եւ մեզ՝ պատժապարտներս ազատէ յանցաւորութեան դատապարտութենէն: Ո՛չ թէ ուրիշ մէկն էր որ կը չարչարուէր, ուրիշ մը որ կը մեռնէր եւ կամ ուրիշ մը որ անմահ կը մնար, այլ մի եւ նոյն անձը ըլլալով, անչարչարելին չարչարանքի մէջ անչարչարելի կը մնար եւ մահուան մէջ՝ անմահ:

<sup>7</sup> Ակնարկութիւն Յիսուսի Սատանային վրայ տարած ամբողջական յաղթանակին:

11. Ոչ այսքան միայն, այլ աւելին. անհուն ու անսահման բնութիւնը ըլլալով, խաչին վրայ էր՝ բայց նաեւ Հօր աջ կողմը, գերեզմանին մէջ՝ բայց նաեւ քառակերպեան ավտոլին վրայ, ստորին դժոխքին մէջ՝ բայց նաեւ բոլոր բարձունքներէն վեր, դալիւրներէն եւ փարիսեցիներէն նախատուած՝ բայց նաեւ Հօր եւ Հոգիին հետ սերովբէներէն սրբաբանուած, մարմինով գերեզմանի մէջ՝ իսկ հոգիով դժոխքի մութ արգելարաններուն մէջ, աստուածութիւնը մարմինէն եւ հոգիէն առանց զատուած ըլլալու: Նո՛յն մարմինով, որով չարչարուեցաւ եւ մեռաւ, յարութիւն առաւ աստուածապէս եւ ինքնիշխանաբար: Աշակերտներուն երեցաւ եւ զանոնք յարութեան հաւատքին մէջ հաստատեց՝ տեսութեամբ, շօշափումով, խօսելով եւ կերակուրի մերձենալով: Երկինք համբարձաւ հայրական սեփական փառքով եւ Հօր աջ կողմը նստաւ (Հմմտ Մր 16.19), ուրկէ բնաւ չէր բաժնուած: Խոստացաւ երկրորդ անգամ գալ հայրական փառքով ու դատողական իշխանութեամբ, ճշմարտապէս յարութիւն տալու բոլորին՝ անվախճան կեանքի եւ մշտնջենաւոր անմահութեան համար, որ այժմ յոյսով նորոգեց:

Համառօտ խօսքերով, ա՛յս է ուղիղ դաւանութեան հաւատքը՝ Հօր եւ Հոգիին կամքով մեզի համար մարդացած Միածին Բանին փրկական տնօրինութեան մասին:

12. Պէտք է նաեւ գիտնալ, որ թէեւ հաւատքին անունը մէկ է, սակայն զանազան մասերու կը բաժնուի:

Հաւատքի մեծ եւ առաջին հիմն ու արմատը վերեւ գրուածն է. ասոր հետեւողութեամբ պէտք է հաւատալ Աստուծոյ մեզի տրուած բոլոր փրկական խորհուրդներուն: Այսինքն, հաւատալ Քրիստոսի տիեզերական Եկեղեցիին, որ ճշմարիտ եւ աներկբայ հաւատքով կը խոստովանի համազոյ եւ պաշտելի Երրորդութիւնը եւ մարդացեալ

Միածինը՝ որպէս կատարեալ Աստուած եւ կատարեալ մարդ, ան-  
 չարչարելին եւ անմահ՝ մեզի համար չարչարուած եւ մեռած, յա-  
 ռութիւն առած եւ երկինք համբարձած եւ Հօր աջ կողմը նստած, որ  
 նաեւ երկրորդ անգամ պիտի գայ: Բոլոր անոնք, որոնք այսպէս կը  
 խոստովանին՝ Քրիստոսի մէ՛կ եկեղեցին կը համարուին, մէ՛կ գլու-  
 խին՝ Քրիստոսի (Հմմտ Կղ 1.18) մարմին եւ անդամ են, ըստ առաքեա-  
 ւին (Հմմտ Ա. Կր 6.15):

Եկեղեցական անշան ականդութեան մը պատճառով Հայհո-  
 յական խօսքով չբաժնենք եւ չմասնատենք Քրիստոսի մարմինը, որ  
 ան խաչով եւ չարչարանքներով ստացաւ եւ փրկական արիւնով  
 գնեց, սրբազործեց եւ իրեն միացուց:

13. Հաւատալ նաեւ սուրբ մկրտութեան, որ բոլոր յանցանքները կը  
 մաքրէ եւ մարմինի ախտաւոր ծնունդները անախտաբար կը վե-  
 րածնի իբր երկնաւոր Հօր որդիներ, Միածինին՝ եղբայրակիցներ,  
 Սուրբ Հոգիին՝ հաղորդակիցներ եւ երկինքի արքայութեան՝ ժա-  
 ոանգորդներ:

14. Հաւատալ նաեւ սուրբ սեղանին վրայ պատարագուող Աստու-  
 ծոյ Որդիին մարմինին եւ արիւնին, թէ անոնք ճշմարտապէս Քրիս-  
 տոսի մարմինն ու արիւնն են: Որովհետեւ ան որ ըսաւ՝ նոյնիսկ եթէ  
 երկինքն ու երկիրը անհետանան, խօսքերս պիտի չանհետանան  
 (Հմմտ Մտ 24.35), նոյն այդ խօսքով ըսաւ՝ այս է իմ մարմինս եւ  
 արիւնս, որ տուի մեղքերու քաւութեան եւ թողութեան համար՝  
 հաւատքով եւ սրբութեամբ ճաշակողներուն (Հմմտ Մտ 26.26–28,  
 Մր 14.22–25, Ղկ 22.14–20, Ա. Կր 11.23–29), որոնք թէպէտ մե-  
 դաւոր են, բայց խոստովանութեամբ եւ ասպաշխարութեամբ  
 սրբուած ինծի կը մերձենան այս ճշմարիտ կերակուրը ճաշակելով եւ

իմ մէջս կը բնակին եւ ես ալ՝ անոնց մէջ: որոնք թէեւ մարմինով կը  
 մեռնին, սակայն ճշմարիտ կեանքի սերմը իրենց մէջ ունենալով, հո-  
 գեւոր գարունի ժամանակ, որ հասարակաց յարութիւնն է, բողբո-  
 ջելով կը վերանորոգուին ճշմարիտ եւ անմահ կեանքով, առանց  
 առնելու հոգիներու մահուան դառնաշունչ համը՝ յաւիտեան:

15. Հաւատալ նաեւ մեղքերու ասպաշխարութեան, որ մարդասէրն  
 Աստուած, որ կ'ըսէ «Ես հաճոմ չեմ առնէր մեղաւորին մահը տես-  
 նելէն, այլ [կը ցանկամ] որ ան իր չար ընթացքը փոխէ եւ ապրի»  
 (Եզ 33.11), որպէս մեղքերու լուացումի եւ մաքրութեան օճառ  
 տուաւ եկեղեցիին: Թէեւ անոր առաջին կամքը մեր սրբութեամբ եւ  
 արդարութեամբ անմեղ մնալն է, բայց որպէս մեր բնութեան  
 արարիչը՝ մեր տկարութիւնները գիտէ, թէ դիւրաւ շեղող եւ սխա-  
 լող ենք եւ միշտ առաքինութեան բարձունքէն վար կ'իյնանք, եւ  
 մարտակից ունինք հնարամիտ եւ վարպետ թշնամի մը, իմաստուն՝  
 չարիք գործելու: Այս պատճառաւ իսկ, երկրորդ կամքով, ինչպէս  
 առաջինով, – ըստ իր բազում ողորմութեան, անոխակալ գթութեան  
 եւ անհուն սիրոյն, որով բարեբար Հայրը իր Որդին մեզի համար  
 մահուան մատնեց, եւ Միածինը՝ ինքզինք, եւ Սուրբ Հոգին՝ փա-  
 ոակիցը –, ասպաշխարութիւնն ալ տուաւ, որպէսզի Քրիստոսի ան-  
 դամներէն մեղքով նեխածներն ու հոտածները անով առողջանան եւ  
 գլուխին՝ Քրիստոսի պատկանելով՝ վերատին միանան: Արդ, պէտք է  
 հաւատալ, թէ ո՛րչափ ալ մեղսալից ըլլանք, գղջումով եւ խոստո-  
 վանութեամբ, արցունքով եւ ողորմութեամբ, պահքով եւ աղօթքով,  
 եւ ասոնց յարմար բարեգործութիւններով, մեր մեղքերը ձիւնի պէս  
 պիտի սալիտականան նոյնիսկ եթէ մուրի նման անմաքրելի ըլլան, եւ  
 բուրդի նման պիտի մաքրուին նոյնիսկ եթէ արիւնի չափ կարմիր  
 ներկուած ըլլան՝ անջնջելի որդան կարմիրով (Հմմտ Ես 1:18):

16. Հաւատալ նաեւ մեռելներու յարութեան եւ յաւիտենական դատաստանին, որ սկիզբն ու արմատն է բոլոր բարեգործութիւններուն, եւ առանց ասոր անհնար է Աստուծոյ Հաճելի դառնալ: Որովհետեւ եթէ մէկը յարութեան յոյսով չէ ամրացած, ինչո՞ւ ինքզինք առաքինութեան ճիգերու յանձնէ. եւ եթէ դատուելու վախ չունենայ, ե՞րբ կը դադրի մեղանչելէ: Եթէ յարութեան Հաւատալով եւ դատաստանի յուսալով օրէ օր աւելի չարիք գործենք, ի՞նչ չէինք գործեր՝ եթէ չըլլար դատաստանի վախը: Արդարեւ, աներկիւզ մեղքի բոլոր գարշութիւններուն մէջ կ'իյնայինք. սպանութեան, գրկանքի, անիրաւութեան, յափշտակութեան, պոռնկութեան, արուագիտութեան, Հպարտութեան, նախանձի, ատելութեան, եւ ասոնց նման բազմաթիւ ու բազմատեսակ չարիքներու:

Այս պատճառաւ ալ, շատ կարեւոր է Հաւատալ յարութեան եւ դատաստանին, որպէսզի իբրեւ մեր բերանին սանձ ունեցողներ, չարութեան յարձակումը ետ մղելով՝ առաքինութիւններու մէջ առաջ ընթանանք:

17. Հաւատալ նաեւ, թէ յարութիւնը եւ դատաստանը միայն Հոգիներուն Համար պիտի չըլլան, – ինչպէս որ ոմանց թուեցաւ, – այլ՝ մանաւանդ մարմիններուն. որովհետեւ Հոգին անմահ է, եւ մահը ուրիշ բան չէ եթէ ոչ Հոգիին անջատումը մարմինէն: Այսպէս նաեւ յարութիւնը Հոգիին եւ մարմինին վերստին անլուծանելի միաւորութեամբ կապուելուն Համար է: Եւ ինչպէս որ Հոս լաւ կամ վատթար ընթացքով միասին ապրեցան, նմանապէս ալ այն ատեն միասին պիտի վայելեն կամ տանջուին: Եւ ոչ թէ ըստ ոմանց ցնդած խօսքերուն՝ թէ մեռածին տեղ ուրիշ մարմին մը յարութիւն պիտի առնէ, այլ՝ նոյն մեռածը: Որովհետեւ Աստուած անիրաւ չէ մէկու մը փոխարէն ուրիշ մը պատժելու կամ պսակելու, ըստ առաքեալին՝

«Ուրպէսզի իւրաքանչիւրը իր մարմինով ընդունի հատուցումը երկիրի վրայ իր կատարած բարի կամ չար գործերուն» (Բ. Կր 5.10):

18. Հաւատալ դարձեալ, թէ երկինքի արքայութիւնը եւ յաւիտենական կեանքը պիտի ընդունին անոր արժանացածները. որովհետեւ ա՛յս է, որ կը թեթեւցնէ օրէնքին բեռը, կը քաղցրացնէ պատուիրանին լուծը, կը դիւրացնէ դժուարը, քարքարուտները Հարթ ճանապարհի կը վերածէ եւ անձուկը՝ դիւրակոխի, եւ նեղը լայնէն աւելի ընդարձակ կը դարձնէ: Այս նո՛յն Հաւատքն էր, որ զօրացաւ մարմինի բոլոր ընդդիմադիրներուն դէմ. ոտնակոխ ըրաւ կրակը, բթացուց սուրը, մարտնչեցաւ գազաններու դէմ, խզեց կապանքները, խորտակեց զէնքերը, փշրեց աղեղները, արհամարհեց անօթութիւնը, անարգեց մերկութիւնը, չվախցաւ բռնաւորներէն, խրոխտացաւ մահուան վրայ եւ միանգամայն կործանեց իր դէմ ելած բոլոր ներհակ զօրութիւնները<sup>8</sup>:

19. Հաւատքի այս վայելուչ կարգը կը գտնես Նիկիոյ սուրբ եւ տիեզերական ժողովի ընդհանրական դաւանութեան մէջ, որ Հաւատացեալներուն մեծ եւ փոքր խումբերը օրէ օր կը պանծացնեն բազմաձայն լեզուներով: Որովհետեւ խոստովանելէ ետք Համագոյ եւ պաշտելի Երրորդութիւնը եւ մարդեղութեան տնօրինութիւնը, կ'աւելցնեն՝ «Կը Հաւատանք նաեւ ընդհանրական եւ առաքելական եկեղեցիին, մէկ մկրտութեան, ապաշխարութեան, մեղքերու թողութեան, մեռելներու յարութեան, Հոգիներու եւ մարմիններու յաւիտենական դատաստանին, երկինքի արքայութեան եւ յաւիտենական կեանքին»: Ա՛յս է լրիւ եւ անթերի Հաւատքի խոստովանութիւնը, առաքեալներու եւ մարգարէներու Հիմին վրայ շինուած:

<sup>8</sup> Ակնարկութիւն սուրբերու հաւատքին:

20. Սակայն կատարեալ փրկութիւն չկայ՝ առանց առաքինի գործերու: Գրուած է՝ «Հաւատո՛ւր առանց գործերու մեռած է» (Յկ 2.26), ինչպէս նաեւ գործը՝ առանց հաւատքի, որովհետեւ, ըստ առաքելալին, դեւերն ալ կը հաւատան (Հմմտ Յկ 2.19). եւ ոչ միայն կը հաւատան, այլ նաեւ կը սարսափին. սակայն առանց գործի ոչինչ կը շահին: Այլ՝ անոնք, որոնք արքայական թագ պիտի պատրաստեն երկնաւոր թագաւորին ընծայելու, եւ մանաւանդ ասով ընծայողներուն գլուխը, Քրիստոս, պիտի պսակուի, ըստ Սողոմոնի, պէտք է հաւատքի մաքուր ոսկիին հետ առաքինութեան զանազան քարեր եւս շարեն: Որովհետեւ այս տեսակէտին հեղինակը, Պողոս, կ'ըսէ. «Ես՝ որպէս փորձառու ճարտարապետ՝ ճառագործիմ ճիւղը դրի. բայց ուրիշն է որ անոր վրայ պիտի շինէ: Ամեն ոք զգուշ պէտք է ըլլայ, սակայն, թէ ի՛նչպէս կը շինէ: Որովհետեւ այդ ճիւղին վրայ շինուածը կրնայ ոսկի, արծաթ կամ թանկագին քար ըլլալ, եւ կամ կրնայ փայտ, խոտ կամ եղէգ ըլլալ», որոնք մարդու մը գործերը կը խորհրդանշեն: Այսինքն, ոսկին՝ խոհական իմաստութիւն, արծաթը՝ բանական առաքինութիւն, պատուական քարերը՝ զանազան եւ բազմատեսակ բարեգործութիւններ: Իսկ փայտը, խոտն ու եղէգը չարագործութիւնը ցոյց կու տան. փայտով առաքեալը կը յայտնէ թանձրական եւ գործով կատարուած մեղքը, որ մարմինին յատուկ է. դիւրաշարժ եւ անհաստատ եղէգով լեզուին միջոցաւ գործուած շատախօսութեան մեղքը, եւ բազմաբոյս խոտով՝ մտածումի բազմաբեղուն եւ բազմակերպ մեղանշումները: Եւ կ'աւելցնէ՝ թէ «Իւրաքանչիւրին գործը դատաստանի օրը պիտի յայտնուի, եւ ատ կրակը պիտի յայտնէ, որովհետեւ իւրաքանչիւրին գործին որակը կրակով պիտի փորձուի»: Եթէ ոսկի է կամ արծաթ, ո՛չ միայն չի՛ փճանար կրակէն, այլ մաքրուելով աւելի եւս կը պայծառանայ. եւ եթէ քիչ մը ժանգ ալ խառնուած է, պիտի սրբուի եւ ճառագայթածե

փայլի: Իսկ եթէ փայտ, խոտ եւ եղէգ է, շուտով կ'այրի եւ կը փճանայ: Եւ որպէսզի չկարծես թէ կիզելի գործերուն գործողն ալ այրուելով կ'ոչնչանայ, կ'աւելցնէ՝ թէ «Ենթական պիտի վարձատրուի»: Եւ որպէսզի չկարծես, թէ ճշմարիտ կեանքի մէջ պիտի ապրի, կ'աւելցնէ, թէ պիտի «կրակին դիմանայ», ցոյց տալով թէ անմահ եւ կիզելի է. միշտ կ'այրի, բայց չի՛ մեռնիր (Ա. կր 3.10–15):

21. Արդ՝ այսպիսի գեղեցիկ, աստուածահաստատ եւ առաքելաչէն հիման վրայ, որ ո՛չ հովերու փչելէն կը շարժի, ո՛չ տեղացող անձրեւներէն կը փչի, ո՛չ ալ բարձրացող գետերէն կը կործանի (Հմմտ Մտ 7.24–25). անոնք, որոնք զանազան փորձութիւններու ենթակայ են, պէտք է շէնք շինեն հոգեկան եւ մարմնական առաքինութիւններէ բաղկացած նիւթերէ, որոնք վերջին դատաստանի ընտրող կրակին մերձենալով կը պայծառանան եւ չեն այրիր:

22. Եւ որովհետեւ բանական անձը իմանալի, երկնայիններուն ազգակից եւ Աստուծոյ պատկեր ըլլալով՝ ամեն բանով մարմինէն աւելի նախադաս եւ պատուական է, արդար է նախ անոր մասերը զարդարել իւրայատուկ եւ բնական առաքինութիւններով:

Եւ որովհետեւ հոգին արարչաստեղծ հրամանով եւ կարգադրութեամբ եռամասնեայ է՝ որպէս խօսք, ցատուձ եւ ցանկութիւն, բնականօրէն ուղիղ կ'ընթանայ եւ երկնայիններուն նմանելէ ոչինչով ետ կը մնայ: Աստուծոյ իւրաքանչիւրը իրենց յատուկ առաքինութիւնները ունին. բանականին առաքինութիւնը խոհականութիւնն է, ցամաքականինը՝ արիութիւնը, իսկ ցանկականինը՝ ողջախոհութիւնը: Խոհականին գործն է խորհիլ ու լաւը գէշէն ընտրել. արիութեան գործը՝ խոհականէն ընտրուածը քաջաբար ու արիապէս կատարել. եւ ողջախոհութեան գործը՝ ըստ ընտրութեան ու կատար-

ման՝ Աստուծոյ Հանդէպ սիրով բորբոքիլ, որով իրմէ նախադաս խոհականն ու արիութիւնը սիրոյ ջերմութեամբ ասելի կը զօրացնէ բնական կարողութիւններով:

23. Բայց պէտք է տեսնել նաեւ ասոնց բարեձեւ կարգաւորութիւնը: Բանականը առաջին կը դասուի՝ որպէս միւսներէն վեհագոյն, եւ իշխան ու հրամանատար անոնց վրայ, որովհետեւ անոր գործն է խորհիլ եւ ըստ այնմ երկուքին, ցասմնականին եւ ցանկականին, անհրաժեշտը աւանդել: Իսկ ցասմնականին գործն է հրամայուածներուն հաւանութեամբ եւ արիութեամբ հետեւիլ եւ ցանկականը սաստել, որպէսզի բանականէն իրեն աւանդուածը ուղիղ ցանկութեամբ ամբողջ եւ անարատ պահէ Աստուծոյ եւ աստուածային պատուիրաններուն հանդէպ: Բանականը ինքնիշխան է իրեն հաւասար եղողներէն՝ ո՛չ ոք իր վրայ իշխանութիւն ունենայով: Իսկ ցասմնականը կ'իշխուի բանականէն եւ կ'իշխէ ցանկականին: Իսկ ցանկականը կ'իշխուի ցասմնականէն եւ ինք ուրիշին չ'իշխեր:

24. Այս կը յայտնէ նաեւ անոնց ներկայութիւնը մարդկային մարմինին մէջ, որովհետեւ բանականին տեղը գլուխին, խեղքին եւ ուղեղին մէջն է: Ինչպէս որ գլուխը վեհ եւ առաջին դասուած է մարմինի անդամներուն մէջ, եւ թագաւորի, իշխանի ու հրամանատարի պէս է ամբողջ մարմինին վրայ, այսպէս ալ խոհականը արքունական աթոռ ունենալով հոն, թագաւորի պէս կ'իշխէ իրմէ ցած եղողներուն, ցասմնականին եւ ցանկականին վրայ: Իսկ ցասմնականին տեղը գլուխէն վար, սիրտին մէջն է: Կ'իշխուի բանականէն՝ որ իրմէ վեր է, եւ կ'իշխէ ցանկականին՝ որ իրմէ վար է: Իսկ ցանկականը կը բնակի երկրամուկներուն եւ հեշտութեան ներքին գործարաններուն մէջ. այս իսկ պատճառաւ կ'իշխուի ցասմնականէն՝ որ

իրմէ վեր է եւ ինք ոչ ոքի կ'իշխէ, որովհետեւ իրմէ ցած գորութիւն չկայ որ իրեն հնազանդեցնէ:

25. Այս պատշաճ կարգաւորութիւնը կը տեսնուի շատ հրաշալի եւ պատկառելի նմանութեամբ, որովհետեւ Աստուած ինքնիշխան եւ թագաւոր ըլլալով բոլոր արարածներուն վրայ՝ կ'իշխէ բոլորին, ինչպէս նաեւ՝ մարդուն, բայց ինք անիշխան է: Իսկ մարդը իր պատկերով ստեղծելով, հրամայեց իշխել իր իշխանութեան տակ ինկող երեւելի արարածներուն վրայ, իսկ բոլոր զգալիները մարդուն իշխանութեան տակ գրաւ, եւ անոնք ոչ ոքի վրայ կ'իշխեն:

26. Արդ, որքան ատեն որ այս կարգաւորութիւնը, ըստ բնական սահմանի, վայելչօրէն կ'ուղղուի մեր մէջ, ամեն ինչ բարեձեւ եւ առաքեալին կարգադրութեան համաձայն կ'ըլլայ (Հմմտ Ա. Կր 14.40) եւ տէրունական պատուիրանին հրամանը անխափան կը կատարուի: Որովհետեւ խոհականը միշտ աստուածայիններուն մասին կը խոկայ, ըստ Սուրբ գիրքին՝ թէ «Այս պատուիրանները որ Բեգի կու տամ, սիրտիդ մէջ արձանագրուած պահել: Զանոնք [շարունակ] սուրվեցուր զաւակներուդ եւ միշտ կրկնէ զանոնք՝ տունին մէջ թէ տունէն դուրս եղած ատեն, քննալու ատեն եւ արթնցած պահուն» (Բ. Օր 6.6–7), եւ ըստ միւս խօսքին՝ թէ ան Տիրոջ «Օրէնքը կը սերտէ գիշեր ու ցերեկ» (Սղ 1.2): Առաւել, որովհետեւ ամեն բարի թէ չար գործ նախ կը մտածեն եւ ապա կը կատարեն, եւ առանց մտածելու մարդ բան չի՛ գործեր, հետեւաբար ով որ բարի եւ ուղիղ կը խորհի, ըստ այնմ նաեւ գործը կը կատարէ:

Եւ երբ խոհականը իր իշխանութիւնը եւ գործը ամբողջականօրէն կը պահէ, կ'իշխէ ցասմնականին վրայ եւ բոլոր բարի գործերը կատարել կը հրամայէ. ցասմնականն ալ արիութեամբ եւ քա-

ջուլթեամբ հպատակելով բոլորին՝ լա՛ւը կը կատարէ: Նոյնպէս ցասմնականը, բանականին հետեւելով, անոր կը հնազանդի եւ կ'իշխէ ցանկականին վրայ: Իսկ ցանկականը ուղիղ եւ լրիւ պահելով բանականը, ցասմնականին հրամանին դէմ չի՛ կենար, այլ հլու ծառայի նման հնազանդութեամբ կը կատարէ բոլոր հրամանները եւ ինք ոչ ոքի վրայ կը հպարտանայ, որովհետեւ իր իշխանութեան տակ մէկը չկայ:

27. Բանականը ուրիշ մաս մըն ալ ունի, որ արդարութիւն կը կոչուի եւ ա՛ն է կառավարիչը, ուղղիչն ու դատաւորը բոլոր մասերուն: Որովհետեւ բանականը անով, որպէս գործիք, բոլորը կ'ուղղէ եւ իւրաքանչիւրը իր բնական շարժումներուն մէջ անսայթաք կը պահէ: Եւ այսպէս ըլլալով, բանականը խոհական է, ցասմնականը՝ արիական, եւ ցանկականը՝ ողջախոհական: Եւ ասկէ ետք մարդուն մէջ Տիրոջ կամքին եւ պատուիրաններուն կատարման ո՛չ մէկ արգելք եւ խափանիչ կայ. ասոր համար ալ Տէրը մեզի գորութիւն տուաւ եւ մեզմէ գործադրութիւն կը պահանջէ: Որովհետեւ բանականը ուղիղը եւ օգտակարը կը խորհի եւ արդարութիւն կը բաժնէ ստորադասներուն, եւ անոնք իրենց գործերը անխափան կը կատարեն: Իսկ ցասմնականը խոհականին ձեռքին մէջ ընտանի գահանի, շունի, նման է, որովհետեւ շուները կրկնակի բնական մղումներ ունին. իրենց տէրերը եւ ընտանիքը կը սիրեն եւ անոնց կը շողորթեն ու կը քծնին, իսկ օտարներուն եւ անընտելներուն գահանային, վայրենի ու պատառող վարմունք եւ արարք կը ցուցաբերեն: Այսպէս ալ ցասմնականը երբ բանականը ուղիղ կը պահէ, բանականին բոլոր բարի խորհուրդները արիաբար սիրող, կատարող եւ ցանկացող կը դառնայ. իսկ հակառակը, անընտել ու օտար խորհուրդներուն եւ գործերուն դէմ կ'ելլէ մեծ ցասումով, կը հեռացնէ

եւ կամ չարաչար կը պատառէ, առանց երբեք թոյլ տալու ընտանիներէն բան մը փճացնել:

28. Նմանապէս, ցանկականն ալ բանականին մէջ ըլլալով, ողջախոհութիւն եւ սէր կը համարուի ու կը կոչուի, արիականին վերակացութեամբ անշարժ մնալով ախտաւոր ցանկութիւններուն հանդէպ, բայց դիւրաշարժ բոլոր բարիքներու սիրոյն եւ բաղձանքին հանդէպ: Եւ արդարութեան օժանդակութեամբ ուղիղ կը կարգաւորէ սիրոյ օրէնքը, առաջին եւ մեծ մասը Աստուծոյ տալով, ըստ անոր օրինադրութեան, որ կ'ըսէ՝ «Սիրէ՛ Տէ՛րը՝ քու Աստուածդ, ամբողջ սիրտովդ, ամբողջ հոգիովդ եւ ամբողջ զօրութեամբդ» (Բ. Օր 6.5), եւ արարածներէն ո՛չ ոք կրնայ զինք փոխարինել: Ինչպէս նաեւ ասոնց ուղղիչը, Դաւիթ, տիրապէս կ'ըսէ՝ «Երկիմբի մէջ ո՛վ ունիմ եւ Բեզմէ զատ, երկիրի վրայ ալ Բեզմէ զատ մէկը չեմ ուզեր: Մարմինս ու միտքս կը տկարանան, բայց իմ միտքիս յենաւանը եւ իմ միակ ունեցածս՝ Աստուած ի՛նքն է յալիտեան» (Սղ 73.25–26): Ան ջուրին ծարաւածի նման կը բաղձար Աստուծոյ ներկայութեան գտնուիլ, եւ կ'աւելցնէր՝ «Դո՛ւն եւ իմ ապաւէնս, եւ ողջերու երկիրին մէջ ինծի վիճակուած բաժինը» (Սղ 142. 5): Իսկ զարմանային Պօղոս, որ իր մեծ սէրը ցոյց կու տայ հրաշալիօրէն, բոլոր գորաւորներուն վրայ համարձակութեամբ խորխտանալով, կ'ըսէ՝ «Ո՛վ կրնայ, ուրեմն, մեզ բաժնել Քրիստոսի սէրէն. նեղութի՞ւնը, վտա՛նգը կամ սո՛ւրը». որովհետեւ «Քեզի համար՝ մարդիկ մեզ կը սպաննեն ամեն օր» (Հռ 8.35–36): Եւ որովհետեւ ո՛չ միայն դառն եւ դժուարակիրները հակառակ են Աստուծոյ սիրոյն, այլ եւ շատ աւելի դիւրիները եւ ախորժեղիները, ասոնք ալ կ'աւելցնէ եւ կ'ըսէ՝ «Համոզուած եմ, որ ո՛չ մահը եւ ո՛չ կեանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ շար ոգիներու իշխանութիւնները, ո՛չ ներկան եւ ո՛չ գալիքը, ո՛չ ալ

որեւէ զօրութիւն, ո՛չ վերին եւ ո՛չ ալ ներքին աշխարհները, ո՛չ ալ ուրիշ ստեղծագործութիւն մը կրնայ մեզ բաժնել Աստուծոյ սէրէն, որ մենք նանչցանք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ» (Հո Տ.38–39): Իր ըսած խօսքը այս է. եթէ մէկը բոլոր տեսակի չարչարանքներով եւ մահով չարչարէ եւ սպանէ զիս Քրիստոսէ բաժնուելու համար, յօժարութեամբ յանձն կ'առնեմ բոլոր չարչարանքներն ու մահը, քան թէ Քրիստոսի սէրէն բաժնուիլը: Եւ դարձեալ կ'ըսէ՝ եթէ մէկը ինձի երկիրքը եւ երկիրքի բարիքները տար, ամբողջ երկիրը եւ անոր մէջ գտնուող բոլոր ցանկալի բաները, եւ ո՛չ միայն այս, այլ եթէ ասոնցմէ մեծն ու բաղձալին ալ ըլլար, որոնց մասին ո՛չ լսած եւ ո՛չ տեսած ենք, եւ ասոնցմով ուզէր զիս Քրիստոսի սէրէն բաժնել, բոլորը կ'արհամարհէի, կ'անարգէի, անպէտք աղբ կը համարէի եւ Քրիստոսի սէրը կ'ընտրէի:

29. Ասոր կը յաջորդէ սիրոյ երկրորդ մասը՝ մարդոց հանդէպ մեր ունեցածը, ինչպէս որ Օրէնքին եւ Աւետարանին մէջ հաստատուած է: Որովհետեւ ըսելէ ետք՝ «Սիրէ՛ քու Տէր Աստուածդ ամբողջ սիրտովդ», կ'ըսէ՝ «Սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս», եւ կ'աւելցնէ՝ «Այս երկու պատուիրաններէն կախեալ են Օրէնքը եւ մարգարէներու ուսուցումները» (Մտ 22.37–40): Թէպէտ սիրոյ համար երկու կ'ըսէ, զայն Աստուծոյ եւ ընկերոջ բաժնելով, բայց՝ ան մէկ է, որովհետեւ սէր է: Եւ բոլոր ճշմարտութիւններու աղբիւրը<sup>9</sup> ճիշդ ըսաւ՝ թէ բոլոր պատուիրանները սիրոյ մէջ կը բովանդակուին, որովհետեւ սէրէն դուրս գտնուող պատուիրան չկայ՝ երբ մէկը ճշմարիտ, անարատ եւ անկեղծ սէր կը ցուցաբերէ Աստուծոյ եւ մարդոց հանդէպ: Եթէ մէկը Աստուած ամբողջ սիրտով կը սիրէ՝ կ'արհամարհէ ամեն բան, որ Աստուծոյ սէրը կը խափանէ. այսինքն՝

<sup>9</sup> Ակնարկութիւն Յիսուսի:

փառքը, մեծութիւնը, պատիւը, իշխանութիւնը, ստացուածքը, հայրը, մայրը, եղբայրները, քոյրերը, կիներ, զաւակները, նաեւ՝ իր անձը: Ինչպէս Տէրը Ինքն ալ ըսաւ՝ «Ով որ ինձի կու գայ եւ զիս աւելի չի սիրեր քան իր հայրն ու մայրը, կիներն ու զաւակները, եղբայրներն ու քոյրերը, ինչպէս նաեւ իր իսկ անձը, չի կրնար ինձի աշակերտ ըլլալ» (Ղկ 14.26): Եւ բացայայտ է՝ որ անոնք, որոնք ճշմարտապէս սիրեցին Աստուած՝ ո՛չ թէ միայն երկրաւոր ինչքերը եւ փառքը արհամարհեցին, եւ իրենց ընտանիքը եւ զաւակները անտեսեցին, այլ իրենք զիրենք եւս զանազան եւ բազմատեսակ չարչարանքներով մահուան մատնեցին: Իսկ ան որ իր ընկերը անկեղծ եւ անարատ սիրով կը սիրէ, ո՛չ մէկ չարիք կը խորհի կամ կը գործէ անոր հանդէպ. այսինքն՝ զայն չ'ատեր եւ չի՛ նախանձիր, զայն չի՛ զրկեր եւ չ'անիրաւեր, անոր ունեցածը չի՛ գողնար, զայն սպանել չի՛ խորհիր, զայն ոտնակոխ չ'ըներ, անոր նենգութիւն չի՛ պատճառեր, չի՛ ստեր, չի մատներ զայն՝ նոյնիսկ եթէ անոր պատճառաւ շատ վնասներ կրէ, անոր վրայ չի՛ հպարտանար, ամբարտաւան չ'ըլլար, չի՛ կոտիր անոր հետ, չ'արհամարհեր, չի՛ թշնամանար, չի՛ զրպարտեր, չի՛ չարախօսեր, չի՛ նախանձիր, որս չի՛ պահեր, չի՛ բամբասեր, չի՛ տրտնջար (հմտա Ա. Կր 13.4–6), ո՛չ ինք անոր չարիք կը գործէ եւ ո՛չ ալ կ'ուզէ որ ուրիշ մը անոր չարիք գործէ. այլ, ինչ որ բարի է՝ այն կը կամենայ անոր, եւ որչափ որ կրնայ բարիք կը գործէ: Կ'ուզէ որ ան մարմինով առողջ ըլլայ, հոգիով՝ առաքինի, ամեն բանով յաջող՝ կեանքի բոլոր մարգերուն մէջ, նիւթական բարիքներով՝ հարուստ, պատիւով՝ ճոխ, իշխանութեամբ՝ բարձր, բոլորէն՝ փառաւորուած. տունով յաջող՝ իրեն յարմար կիներ, բարի եւ կիրթ զաւակներ ունեցող, միտքով՝ խոհական, խօսքի մէջ՝ վայելուչ՝ բոլորին սիրելի ըլլալու աստիճան: Ան եթէ աղքատ է՝ կը ցանկայ անոր կարիքները գոհացնել. եթէ տկար է՝ բժշկելու կը փութայ. եթէ անոր հակառա-

կող ըլլայ՝ որչափ հնարաւոր է կ'ընդդիմանայ. տրտմութեան տրտմակից կ'ըլլայ եւ ուրախութեան՝ ուրախակից. չկայ երբեք չար բան մը որ անոր կամենայ եւ ո՛չ ալ բարի բան մը, որ չկամենայ:

Եւ աւելին, «Մէքը պատեալ կ'ըլլայ որ ձեր բազմաթիւ մեղքերը ներուիմ» (Ա. Պտ 4.8), ինչպէս աստելութիւնը՝ առաքինութիւնները: Որովհետեւ ինչպէս որ ասելին բարեգործութեան մէջ տեսնելով կը թուի թէ չար է, այսպէս ալ սիրելին չարագործութեան մէջ տեսնելով կը թուի թէ բարի է: Այս բոլորը եւ ասոնցմէ աւելին առաքեալը կը թուէ որպէս սիրոյ մասերը: Ահա կը տեսնե՞ս թէ ինչ որ Օրէնքը, Մարգարէներն ու Աւետարանները կ'ուսուցանեն, սիրոյ մէջ կը բովանդակուի: Ուրեմն, Քրիստոս իրաւամբ կ'ըսէր աշակերտներուն՝ «Ձեր իրար սիրելէն է որ մարդիկ պիտի գիտնան, թէ դուք իմ աշակերտներս էք» (ՅՃ 13.35): Չըսաւ, թէ ինձի աշակերտելու նշանը հիւանդները բժշկելու, կոյրերը լուսաւորելու, անդամալոյծները դարմանելու, դեւերը հանելու, մեռելները յարուցելու կամ լեռները տեղափոխելու մէջ է, այլ՝ զիրար սիրելու մէջ: Որովհետեւ զիտէր, թէ երբ ճշմարիտ սիրով կը սիրեն Աստուած եւ իրենց ընկերները, աստով նաեւ բոլոր պատուիրանները կը կատարուին:

30. Արդ, ինչպէս որ վերը ցոյց տուինք, երբ հոգիին մասերը իրենց կարգաւորութիւնը ուղիղ կը պահեն, որպէսզի իշխանը իշխանութեան մէջ մնայ եւ իշխողը՝ հնազանդութեան, այս բոլոր բարեգործութիւնները անսխալ կը կատարուին: Իսկ եթէ եղծուելով ասպականի վայելուչ կարգը, ծառաները իրենց տէրերուն դէմ կ'ելլեն, իշխանութիւնը կը յափշտակեն եւ տէրերը կը ծառայեցնեն, այսինքն՝ ցանկականը ցաւամտականին եւ ցաւամտականը խոհակականին վրայ կը տիրէ, ամեն բան շփոթուելով կը կործանի, իւրաքանչիւրը հակառակ ներգործութեամբ կը շարժի եւ գործին համաձայն անուն-

ներու փոփոխութիւն ալ կ'ըլլայ. այնուհետեւ՝ խոհականութիւն, արիութիւն, ողջախոհութիւն եւ արդարութիւն չեն կոչուիր, այլ՝ անմտութիւն, սրտմտութիւն, բղջախոհութիւն եւ անիրաւութիւն: Որովհետեւ ո՛չ խոհականը բարին կը խորհի, ո՛չ ցաւամտականը չարին դէմ կը մաքաւի, ո՛չ ցանկականը ողջախոհաբար Աստուծոյ եւ աստուածայիններուն կը ցանկայ եւ ո՛չ արդարութիւնը անոնց ուղղիչ, վերակացու եւ կառավարիչ կը դառնայ, այլ՝ բնականին անբնականի փոխուած՝ չարաչար տապալուծով կը կործանի, ըստ առակողի խօսքին, թէ «Երեւ բաներ կան, որոնցմէ երկիրը կը դողայ, ... Երբ ծառան թագաւոր դառնայ, երբ յիմարը հարստանայ, ... երբ աղախինը իր տիկնոջ տեղը առնէ» (Առ 30.21–23): Քանզի ծառայ սրտմտութիւնը թագաւորեց իշխան խոհականին վրայ, աղախին բղջախոհութիւնը տիկին արիութեան ծառանգորդը դարձաւ, եւ անզգամ անմտութիւնը յագեցաւ փուճ մտածումներու, այսինքն՝ ստութեան, հացով. որով ամեն լաւ վատի փոխուեցաւ, որովհետեւ մոլորած իշխանը ախտերուն ծառայ դառնալէն յետոյ ամեն տեսակ նանրութիւն կը խորհի:

31. Եւ այս է անիրաւ դատաւորը մեր բնութեան քաղաքին մէջ, որուն համար Տէրը Աւետարանին մէջ կ'ըսէ՝ «ո՛չ Աստուծմէ կը վախնար եւ ո՛չ ալ մարդոցմէ կ'ամչնար» (Ղկ 18.2): Որովհետեւ կը խորհի՝ բայց ո՛չ Տիրոջմով. կը դատէ՝ բայց ո՛չ իրաւունքով: Ան որ պէտք էր Տիրոջ օրէնքով խորհէր, չարութեան բոլոր խոկումներուն մէջ կը տարուբերի, եւ բնութեամբ թեթեւ ու դիւրաշարժ ըլլալով՝ շուտով բերապատիկ գարշելի եւ աղտոտ ցանկութիւններ կ'անցընէ միտքէն. ինք գարշելի կը դառնայ մտածումներով եւ իրեն հետ զգայութիւնները կը փոխէ ախտերու: Եւ բնութիւնը անտեսանելի ըլլալով՝ մարդոցմէ չ'ամչնար, այլ նոյնիսկ երբ բազմութեան մէջ ըլ-

լայ, չար յօժարութեան համեմատ կը մղուի ամեն տեսակ պղծութիւններու եւ անօրէն գործ կը կատարէ, թէպէտ ո՛չ մարմինով: Այսինքն, որուն հետ որ ատելութիւն ունէր՝ յօժար կամքով պատիւէ կը ձգէ, ինչքերը կը կողոպտէ, փառքէն կը մերկացնէ, իշխանութեանէն կը տապալէ, անգերծ արգելարանի մէջ կը դնէ, կոճղերու մէջ կ'ամրացնէ (հմմտ Յոբ 33.11), կ'անդամահատէ. եւ ասով ալ չի՛ գոհանար, այլ՝ չարաչար եւ դառն մահուան կը մատնէ: Եւ այս է Որոտման Որդիին ըսածը՝ «Ով որ իր եղբայրը կ'ատէ՝ մարդասպան մըն է» (Ա. ՅՀ 3.15), որովհետեւ թէեւ ո՛չ թէ մարմինով, այլ կամքով եւ յօժարութեամբ սպանեց: Եւ այս՝ սպանութեան կէսն է, որովհետեւ մարդ հոգի եւ մարմին է, — եւ հոգին՝ մարմինէն մեծ—, եւ ան հոգիով սպանեց. ինչպէս որ մարմինը գործերով կը սպանէ, նոյնպէս ալ հոգին՝ կամքով եւ յօժարութեամբ:

32. Եւ եթէ ախտաւոր ցանկութեամբ մէկու մը սիրահարուած է, անարգել կ'երթայ եւ կը շնայ անոր հետ, մինչեւ իսկ եթէ բազմութեան մէջ գտնուի տուփեայր եւ շնալը մարմնապէս անիրագործելի ըլլայ իրեն համար: Որովհետեւ զինք չ'արգիլեր՝ ո՛չ տեղին հեռաւորութիւնը, ո՛չ ճամբուն թշուառութիւնը, ո՛չ փոթորկալի լեռը, ո՛չ տօթագին դաշտը, ո՛չ լայնածաւալ ծովը, ո՛չ պարսպապատ քաղաքը, ո՛չ ամրակառոյց դղեակը, ո՛չ աննուաճելի աշտարակը, ո՛չ կղզուած դուռը եւ ո՛չ պահապաններու վախը. այլ՝ այս բոլորը արհամարհելով, կատարեալ համարձակութեամբ ընթանալով, տուփելիին կը հասնի եւ գարշելի ցանկութիւնը կը կատարէ: Եւ այս է, որ Տէրը կ'ըսէ՝ թէ «Ով որ ցանկութեամբ նայի որեւէ կնոջ՝ արդէն իսկ իր սիրտին մէջ շնութիւն ըրած կ'ըլլայ անոր հետ» (Մտ 5.28). այսինքն՝ հոգիին մէջ: Նաեւ, եթէ կինը այր մարդու ցանկայ, նոյնպէս կը շնայ, որովհետեւ բոլոր ըսուածները ինչպէս այր մարդուն,

նոյնպէս կնոջ համար են: Եւ ինչպէս որ սպանութեան համար ըսինք, նմանապէս եւ ասոր համար կ'ըսենք, որ շնութեան կէսն է, որովհետեւ մարմինով չկատարեց շնութիւնը, այլ՝ հոգիով: Ասոնց նման իմացիր, թէ միտքի բոլոր մղումները բոլոր մեղքերուն համար դիւրաշարժ եւ դիւրակատար են: Եւ որովհետեւ զանոնք գործողը մարդոցմէ անտես ըլլալուն համար չ'ամչնար, նոյնպէս նաեւ ախտաւոր եւ յիմարական ցանկութեան համար Աստուծմէ չի՛ վախնար: Եւ բոլոր մեղքերու պատճառը խոհականին մոլորութիւնը եւ անընտրող յիմարութիւնը կ'ըլլայ. եւ երբ ան, որ միւսներուն վրայ իշխան եւ ուղղիչ էր այսպէս ծառայական ախտերով կը կաշկանդուի, ուրիշներ ասոր մոլար ընտրութեան կը հետեւին. որովհետեւ ամեն ինչ՝ թէ՛ բարի եւ թէ՛ չար՝ նախ կը մտածուի եւ ապա կը գործուի:

33. Իսկ ցամաքական զօրութիւնը կ'եղափոխուի եւ կ'այլափոխուի, որովհետեւ ան, որ երբեմն օտարներուն դէմ կ'արիանար, այսինքն՝ Բանասարկուին եւ անոր չար գործակիցներուն, այժմ կը զինուի ընտանիներուն, այսինքն՝ ամեն բարեգործութեան դէմ. եւ մանաւանդ իր ազգակիցներուն եւ եղբայրներուն վրայ դարձնելով սրտմտութիւնը՝ զազանաբար կը յարձակի: Որովհետեւ անոնց սրտմտութիւնը նման է օձի՝ Սասանայի, իժի եւ քարբի՝ այսինքն անոր դեւերուն. առաւել՝ որովհետեւ իրենց ականջները խցած են ճարտար հմայիչներուն դէմ (հմմտ Սղ 58.4—5)՝ մարգարէներու, առաքեալներու եւ եկեղեցիի վարդապետներու, եւ իմաստուն բժիշկներէն չեն ուզեր ասպաշխարութեան դեղը ատնել եւ ախտէն առողջանալ: Եւ այսպիսիները նուազագոյն թշնամութեան իսկ չեն կրնար համբերել. այլ այսպիսին եթէ պատահի, որ մէկէ մը հակառակութեան կամ արհամարհանքի եւ նախատինքի կասկած ունենայ, անմիջապէս

մեծ բարկութեամբ կ'ընդդիմանայ, կ'աղաղակէ, կը թշնամանէ, կը նախատէ, կը հայհոյէ, կ'անարգէ եւ խելայեղի նման չի՛ գիտեր թէ ինչ կը խօսի: Միեզնած միտքը մեղադրանքի ինչ խօսք որ ծնի, գազաններու արիւնարբու կորիւններու նման սիրտին գառազեղէն լեզուով կը յայտնէ, մինչեւ որ յանդուգն յարձակումէն թոյնն ալ խօսքին հետ դուրս ժայթքէ: Նաեւ, առանց մտածելու ձեռքերը եւ ոտքերը հարուածելու կը շարժէ, եւ յաճախ՝ մինչեւ սպանութեան: Ամեն կերպով դիւահարներու կը նմանի, մանաւանդ դիւահարներէն ալ գէշ է. որքան անոնք կը ջերմանան ակամայ ախտերով, ասոնք՝ կամովին: Եւ որոնց հետ, որ թշնամութիւն ունենան մինչեւ վերջ կ'ատեն, անլուծանելի ոխ կը պահեն, կը նախանձին, կը բամբասեն, նենգութեամբ դարանակալ կ'ըլլան, խօսքով եւ գործով որոգայթներ կը լարեն՝ փառքէ, պատիւէ, իշխանութենէ եւ փարթամութենէ տապալելու համար գանոնք: Եւ ասոնց համար աւելի բաղձալի բան չկայ, քան իրենց նախանձելին թշուառութեան մէջ տեսնել. եւ ոչինչ դժնդակ՝ քան որեւէ բանով զայն ուրախ տեսնել. իրենց թշուառութեամբ այնքան չեն տխրիր, որքան անոնց բարօրութեամբ. որքան հնարաւոր է, բոլորը անոնց հետ թշնամանալու կը մղեն եւ կ'ուզեն, որ անոնք բոլորէն ատելի դառնան: Այսքան եւ ասկէ աւելի է անտեղի բարկացողներուն ատելութիւնը եւ նախանձը:

34. Իսկ ցանկականը, որ այլայլեցաւ ողջախոհութենէն, նաեւ՝ Աստուծոյ եւ ընկերոջ սէրէն, երերալով կը շրջի ամեն տեսակ նիւթական բաղձանքներու մէջ: Որովհետեւ բնական եւ ողջախոհ սէրէն իյնալով, գարշելի ցանկութիւններով կը դառնայ վաւաշոտ տուփանքներու. եւ ո՛չ միայն ցանկութեամբ, այլ նաեւ ամբողջ կորստեան գործով, ո՛չ միայն բնականներու յատուկ, այլ եւ՝ ան-

բնականներու: Ինչպէս որ առաքեալը կ'ըսէ՝ «Նոյնպէս ալ արուները կիներու հետ բնական յարաբերութիւնը ձգած՝ հակաբնական ախորժակներով իրարու ցանկացին. արուները արուներու հետ խայտառակութիւն կը գործէին, եւ իրենց մոլորութեան արժանի հատուցումը կը ստանային Աստուծմէ» (Հռ 1.27): Այսինքն, երկինքէն տեղացող հուրին եւ ծծումբին կիզումը նոր ձեւով մը անձրեւելով հրածին ամպերով, ըստ նորագիւտ հուրին ցանկութեան՝ յաւիտենական եւ մշտավառ բոցին օրինակը կը բերէր: Եւ ո՛չ միայն արուները կ'ամբաստանէ, այլ նաեւ էգերը, ըսելով՝ «Իրենց բնական կարիքները հակաբնական կարիքներու հետ փոխանակեցին» (Հռ 1.26):

35. Կը հրաժարիմ խօսելէ ասոնցմէ աւելի դժնդակ, անբնական եւ բնութենէն դուրս եղող բաներու մասին, որոնք անասնական եւ գազանական պիղծ գործերու կը խոտորին, որ անասուններն ու գազաններն իսկ, թէպէտ բնութեամբ անկապ եւ արձակ ու օրէնքներու սահմաններէն զերծ ըլլալով, ո՛չ իսկ պատուհասի կամ տանջանքի սաստը ունենալով, այլ՝ ստեղծագործութեան ատեն իրենց բնութեան մէջ հաստատուած բնական օրէնքներու հետեւելով, իրենց ընտանի ազգակիցներէն դուրս ո՛չ մէկ ուրիշ տեսակի պատկանող կենդանիի հետ չեն խառնակիր: Ո՛չ ձին արջաուի հետ կամ արջաուր՝ ոչխարին եւ կամ ուրիշները՝ օտար տեսակի հետ. այլ, անասուններու իւրաքանչիւր տեսակը իր ցեղակիցին կը դառնայ. եւ այս ո՛չ թէ անժուժկալութեամբ, այլ՝ սահմանուած ժամանակին արարչագիր հրամանին ծննդագործութեան միայն սպասարկելով, ինչպէս որ ըսաւ՝ «Անեցէ՛ք, բազմացէ՛ք, երկիրը լեցուցէ՛ք» (ՄՆ 1.28): Եւ ասոնք ո՛չ խօսք եւ ո՛չ իմաստութիւն ունին, որպէսզի մտածելով եւ ընտրութեամբ վատթարներէն հեռանան, այլ՝ միայն բնական օրէնքնե-

ըու կը հետեւին: Իսկ մարդիկ՝ պատուած թէ՛ խօսքով եւ թէ՛ լմաստութեամբ,— որոնցմէ լոկ մէկը բաւական էր զանոնք արդարագործութեան չափի եւ սահմանի մէջ պահելու—, ամեն բան արհամարհելով գազաններէն եւ անասուններէն աւելի անմիտ եւ զազրագործ կը թուին:

Գիտեմ եւ լսած եմ ուրիշ աւելի գարշելի եւ աղտեղի բաներ, որոնք այսպիսի անմիտներու կողմէ կը գործուին. բայց չեմ ուզեր խօսքերս զազրելի դարձնել, որպէսզի ողջախոհ մը լսելով տաղտուկ չզգայ. մանաւանդ գիտցողներուն կը թողում, որովհետեւ այժմ բոլորը քաջահմուտ են ասոնց:

36. Արդ, ճշմարիտ ցանկութենէն եւ Աստուծոյ ու բոլոր աստուածայիններու սէրէն այսպիսի մոլորածները, սիրով եւ բաղձանքով ամուր կերպով կը կապուին բոլոր ասպականացու եւ ցնդելի նիւթականներուն, փոխանակելով կեանքին սէրը՝ սնտոխներու, անապականինը՝ ասպականացուներու, անփոփոխելիինը՝ փոփոխելիներու եւ երկնայինինը՝ երկրաւորներու. որովհետեւ ասոնց համար կը քաղցրանայ անցաւոր աշխարհին մեծութիւնը, փառքը, պատիւը, իշխանութիւնը, փարթամութիւնը, որովայնամոլութիւնը, արբեցողութիւնը, զրկանքը, ազահութիւնը, անիրաւութիւնը, յափշտակութիւնը եւ բոլոր սնտոխներու ցնորքը:

37. Իսկ արդարութիւնը կը վերածուի անիրաւութեան, եւ ան որ առաջ լաւագոյններու կ'առաջնորդէր եւ կը կարգաւորէր իրեն ենթակայ մասերը, այժմ ներհակին տնօրէն եւ առաջնորդ կը դառնայ: Այսքան եւ այսպիսի բարիքներու անկարգութիւն եւ չարիքներու կարգաւորութիւն մարմինի անդամներէն յառաջացող՝ բնականներու խտտորումին եւ անբնականներու հետեւելուն պատճա-

ռաւ տեղի կ'ունենան: Ասոր համար շատ զգուշութեամբ եւ արթնութեամբ պէտք է հսկել ամեն մէկուն, որպէսզի իր բնական հոգին, որ Աստուծոյ պատկերն է՝ անձնական առաքելութիւններով զարդարէ. որով սկզբնական լուսատիպ կերպարանքով փայլի եւ նախատիպին նմանութիւնը իր մէջ կերտէ հրաշագարդապէս: Որով տաճար եւ բնակարան կ'ըլլայ անվայրափակ էութեան, ըստ այն խօսքին թէ՛ «Նս ու Հայրս անոր պիտի գանձ եւ անոր հետ բնակիմք» (ՅՏ 14.23):

38. Արդ, մինչ այսպիսի գեղեցկայարմար կարգաւորութեամբ ուղղեցինք առաքելութիւնները, պէտք է անոնց հետեւցնել մարմնական բարեգործութիւնները, առաքեալին համաձայն՝ «Ռպէսզի Աստուծոյ նուիրուած մարդը կատարեալ ըլլայ, ամեն տեսակի բարի գործերու պատրաստ» (Բ. Տմ 3.17): Որովհետեւ ինչպէս որ անձը անդամներով կը զարդարուի, այնպէս ալ մարմինը զգայարաններով կը պայծառանայ:

Հինգ զգայարաններ կան. աչք, ականջ, հոտոտելիք, ճաշակելիք, շոշափելիք: Նախ պէտք է յայտնել, թէ ի՛նչ կը նշանակէ զգայարան, եւ ապա զանոնք իրենց յատուկ ներգործութիւններով զարդարել:

39. Զգայարան կ'ըսուի ան, որ ըստ իր ներգործութեան, դուրսէն ընդունելով ազդեցութիւնները, կը զգայ եւ կը ճանչնայ: Ինչպէս օրինակ՝ աչքը լոյսին ծագումը ընդունելով կը զգայ, կը ճանչնայ եւ կը լուսաւորուի, եւ անով ինչ որ տեսնէ՝ կը զգայ եւ կը ճանչնայ: Ականջը ձայնին հնչումը ընդունելով կը զգայ, թէ որմէ է բացազանջութիւնը: Հոտոտելիքը զանազան հոտերու ազդումները առնելով կ'իմանայ եւ զանոնք իրարմէ կը զանազանէ: Ծաշակելիքը տեսակ-տեսակ կերակուրներու եւ ըմպելիներու քաղցր եւ դառն, ճարպոտ

եւ կծու համը ընդունելով կը զգայ իւրաքանչիւր համադամի ազդեցութիւնը: Շօշափելիքը բազմատեսակ նիւթերու զանազանութիւնը շօշափելով կը զգայ եւ իրարմէ կ'ընտրէ մեծերը եւ ողորկները, կարծրերը եւ փայլունները: Արդ, այս պատճառներով ասոնք զգայարան կը կոչուին:

40. Բայց ասոնք դռներու պէս են մարմինի տան մէջ՝ արտաքին մուտքի եւ ներքին ելքի, ամեն բանի որ լաւ է կամ վատ. ըստ մարգարէին, որ կ'ըսէ՝ «Մահը մինչեւ մեռ պատուհանը բարձրացաւ» (Եր 9.21): Եւ ինչպէս որ դռնէն տուն կը մտցնենք բոլոր պատուական եւ պիտանի գոյքերը, եւ նոյն տեղէն դարձեալ եթէ տան մէջ անպէտք բան մը կայ դուրս կը հանենք, այնպէս ալ բոլոր հոգեւոր հարստութիւնները, — որոնցմով համագգի հոգեղէններու պէս անկարօտ կը ճոխանայ բանական հոգին, — մեր մէջ կ'ընդունինք զգայարաններու դռներէն՝ իւրաքանչիւր ներգործութեան հետ: Եւ երկրաւոր ցանկութեան եւ ստորային սիրոյ աղբը, որոնք որոմնացան թշնամիին սերմերն են (Հմմտ Մտ 13.24—30), իբրեւ վնասակար եւ մահացու՝ ասոնց հետ դարձեալ դուրս հանենք: Եւ ինչպէս որ միշտ փակ չենք պահեր տուններուն դռները, որովհետեւ եթէ միշտ փակ մնան օգտակար հարստութիւնները չենք հաւաքեր եւ տուններն ալ մեզի համար անբնակելի կը դառնան. ոչ ալ միշտ՝ բաց, որովհետեւ այդ ձեւով թշնամիներու, անիրաւ գողերու եւ աւազակներու մուտք ըլլալով՝ պատճառ կը դառնան անձերու կորուստին եւ ինչքերու յափշտակութեան, այլ՝ ժամանակի պատշաճութեամբ կը բանանք եւ կը փակենք, հետեւելով իմաստունին խրատին, որ երկիրքի տակ ամեն բանի ժամ եւ ժամանակ կը սահմանէ (Հմմտ Ժղ 3.1—8), այսպէս ալ մեր զգայարաններուն դռները պէտք չէ՛ միշտ փակել. եւ եթէ միշտ փակ պիտի մնան, բնութենէն ինչո՞ւ հաստատուեցան.

որովհետեւ աչքին գործն է տեսնել, եւ ականջինը՝ լսել, նմանապէս եւ միւսներունը այնպէս ինչպէս իրենց սահմանուած է: Անոնք անպէտք կը դառնան եթէ բնական կերպով չգործեն. այլ, պատշաճ ժամանակին պէտք է բանալ՝ լաւագոյնները հաւաքելու, եւ ուրիշ ժամանակ պէտք է փակել՝ վնասակարները արգիլելու:

41. Ըսելիքս ա՛յս է, թէ պէտք է աչքը փակել ամօթալի հայեացքներէ, եւ բղձախոհ ցանկութեամբ ու վաւաշոտ տուփանքով չզննել էգի կամ արուի գեղեցկութիւնը. որովհետեւ որպէս կորովաճիգ աղեղնաւորէ իր հոգիին մէջ սաստիկ խոցող հարուածներուն նետերը կը ստանայ, որով անմահը մահուամբ կը մեռնի: Որովհետեւ, երբ արտաւոր նայուածքով պղծութեան գործ կը կերպարանէ՝ արդէն կը շնայ անոր հետ, Տիրոջ խօսքին համաձայն որ կ'ըսէ՝ «Ո՛վ որ ցանկութեամբ նայի որեւէ կնոջ՝ արդէն իսկ իր սիրտին մէջ շնութիւն բրած կ'ըլլայ անոր հետ» (Մտ 5.28): Ըստ առաքեալին՝ «Անոնք որ պոռնկութիւն կ'ընեն կամ շնացող են՝ Աստուծոյ արեւայութիւնը պիտի չժառանգեն» (Ա. Կր 6.9—10): Չանց կ'ընեմ բնութենէն դուրս անասնային եւ գազանային պղծութիւնները, որպէս յիշատակութեան անարժան պարագաներ:

42. Դարձեալ, պէտք է աչքը փակել ընդդէմ ընկերներու չար աչքին: Երբ չար աչք ունեցողը տեսնէ, թէ մէկը կեանքի մէջ տէր է յաջողութեան, տունի, զաւակներու, ստացուածքի, իշխանութեան, պատուի, փառքի, բարեհամբաւ անունի, սիրոյ եւ բոլորին մօտ ընդունելութեան՝ սրածայր սուրով կը խոցուի, կը նախանձի եւ աւելի կը նախընտրէ մեծ եւ դժուրակ վնաս կրել. քան թէ դիմացինը այնպէս փառաւոր տեսնել: Շատեր նոյնիսկ մահ կը դաւադրեն անոնց, որոնց չար աչքով կը նային: Եւ ասոր մասին շատ փաստեր ունինք

Սուրբ գիրքէն, մանաւանդ որ մեղքի եւ մահուան սկիզբը ասկէ մտաւ աշխարհ: Որովհետեւ չար աչք բանասարկուն՝ չկարենալով տանիլ նախաստեղծին գերագոյն փառքին տեսքը, անոր մօտեցաւ խաբէութեան հրապոյրով եւ մահուան ճաշակում մատոյց անոր (Հմմտ Ծն 3.1–6): Կայէնի եղբայրասականութիւնն ալ ուրիշ բան չէր. այլ՝ չկրցաւ Աբէլի Աստուծոյ հաճելի դարձած ընծային նայիլ (Հմմտ Ծն 4.2–8): Իսկ Յովսէփի եղբայրները, անոր երազներու բաղձալի տեսութեան նախանձեղով, ուզեցին զայն սպանել եւ ապա օտարականներու ծախսեցին (Հմմտ Ծն 37.12–28), ինչպէս Տէրը՝ չարչարանքի եւ մահուան: Նաեւ, Սաւուղի Դաւիթը սպանելու բազմահար որոգայթները ուրկէ՞ էին (Հմմտ Ա. Թդ 18.6–9), եթէ ոչ՝ զայն ժողովուրդին կողմէ սիրուած եւ պատուած տեսնելէն եւ պարողներէն լսելէն, թէ Դաւիթ բիւրաւորները սպանեց: Իսկ փարիսեցիներու եւ դպիրներու խաչ կանգները եւ փրկութեան Առաջնորդը, որ եկած էր զիրենք բարձրացնելու եւ փառաւորելու, փայտէն կախելը ուրիշ ի՞նչ էր, եթէ ոչ Կենարարին բիւրապատիկ սքանչելիքներուն եւ լուսաւոր վարդապետութեան եւ ժողովուրդէն անոր վայելած փառքին ու պատիւին չկարենալ հանդուրժելը: Թէպէտեւ ան եկած էր, որ մեռնէր եւ իր մահով մարդկային ցեղին դատապարտութիւնը վերցնէր, բայց անոնք չար աչքի նախանձէն խեղդուած, զայն խաչեցին (Հմմտ Մտ 27.35):

Արդ, այսպիսի բոլոր նայուածքներու դիմաց պէտք է աչքը փակել, որպէսզի հոգիները կուրցնող եւ մահացնող տեսութիւնը ներս չընդունուի:

43. Իսկ լաւերուն եւ օգտակարներուն դէմ՝ յօժարութեամբ բանալ եւ ամեն ախտի բիծը, որ գեղեցկագործ տեսութեան արգելք կ'ըլլայ, մաքրել՝ որպէսզի աչքը յստակ նայուածքով կարենայ նայիլ եւ տես-

նել Աստուծոյ սքանչելի գործերը, որուն հետ նաեւ Արարիչին գիտութեան կարենայ հասնիլ վայելչապէս, ըստ առաքեալին, որ կ'ըսէ՝ «Աշխարհի ստեղծումէն ի վեր՝ ստեղծագործութեան ընդմէջէն կ'իմացուին եւ կը տեսնուին Աստուծոյ աներեւոյթ յատկանիշները, այսինքն՝ մշտնջենաւոր զօրութիւնը եւ անոր աստուածութիւնը» (Հռ 1.20):

Արդ, «Երկինքը Աստուծոյ փառքը կը պատմէ», կ'ըսէ Դաւիթ (Սղ 19.1), որ մեծափափաք տեսչանքով աչքերու լուսաւորութիւն կը մաղթէր այսպիսի սքանչելիքներու նայելու. ան կ'ըսէ. «Բա՛ց աչքերս, որպէսզի տեսնեմ Օրէնքիդ հրաշալիքները» (Սղ 119.18). եւ՝ «Լուսաւորէ՛ աչքերս, որպէսզի մահուան քունով չքնանամ» (Սղ 13.3), եւ «Հայեացքս հեռացո՛ւր դատարկ բաներէն» (Սղ 119.37): Ապա, համարձակութեամբ եւ պարծանքով կ'ըսէ՝ «Նս աչքերս չեմ հեռացներ ՏԻՐՈՋՄԷ՛» (Սղ 25.15) եւ «Միշտ Տէ՛րԸ իմ դիմացս ներկայ ունիմ. երբ ան իմ կողքիս է՝ ոչինչ կրնայ զիս սասանեցնել» (Սղ 16.8). այսինքն, միտքի աչքերովս Աստուած միշտ ինծի մօտ եւ իմ աջակողմս կանգնած կը տեսնէի եւ անոր տեսքէն վախնալով եւ պատկառելով, մեղքերէս կը դողայի: Այսպէս ո՛չ միայն Դաւիթի, այլ ամեն մարդու կը պատահի. որովհետեւ՝ երբ մէկը հաւատայ, որ Աստուած իրեն մօտ է եւ զինք կը տեսնէ, ինչպէ՞ս կրնայ մեղանչել: Այսպէս ալ Որոտման Որդին կ'ըսէ՝ «Ով որ Քրիստոսի մնացած կը մնայ՝ չի՛ մեղանչէր» (Ա. ՅՀ 3.6): Որովհետեւ, երբ մարդ մէկու մը մօտ ըլլայ եւ զայն տեսնէ՝ անոր չարիք չ'ըներ. այսինքն, ո՛չ կը շնայ, ո՛չ կը գողնայ, ո՛չ կը սպանէ, եւ ասոնց նման ոչինչ կը գործէ. որչա՛փ դեռ աւելի, երբ ամեն բանի արարիչը, դատաւորը, վրէժխնդիրը եւ գործերու հաստուցողը իրեն մօտ եւ զինք տեսնող հաւատայ, բոլոր մեղքերէն եւ չար գործերէն կը դադրի: Եւ այս գիտնալով Դաւիթ կ'ըսէ՝ «Նս աչքերս չեմ հեռացնէր ՏԻՐՈՋՄԷ՛» (Սղ 25.15): Եւ

Աստուած մարգարէին միջոցաւ կ'ըսէ՝ «Ես Աստուած եմ ամենուրեք, եւ ո՛չ թէ միայն մէկ վայրի Աստուածը» (Եր 23.23), որուն նախանձախնդիրը, Եղիա, ինքզինք միշտ Աստուծոյ ներկայութեան կը համարէր (Հմմտ Գ. Թգ 18.24):

44. Եւ միայն մարմինի գործերը չի՛ տեսներ, այլ եւ միտքի շարժումները. ըստ Դաւիթի՝ «Դուն, արդա՛ր Աստուած, կը քննես մարդոց մտածումներն ու ցանկոյրիւնները» (Սղ 7.9). եւ ուրիշ տեղ, թէ՛՝ «Ես չեմ դատեր այնպէս՝ ինչպէս մարդիկ կը դատեն: Մարդիկ արտաքինին կը նային, մինչ ես՝ սիրտին» (Ա. Թգ 16.7): Եւ միայն սիրտին խորհածը չէ որ կը տեսնէ, այլ եւ այն որ տակաւին ոչ խորհուած եւ ոչ ալ գործուած է. ըստ այնմ՝ «Մամօթ ես բոլոր գործերու» (Սղ 139.3): Եւ ո՛չ միայն չգործուած գործերը կը տեսնէ, այլ նաեւ գրած կը պահէ. ըստ որում կ'ըսէ՝ «Ինձի տրուած կեանքի բոլոր օրերը քու գիրքիդ մէջ գրուած կ'ին» (Սղ 139.16): Արդ, այսպիսի տեսնողը ամեն մարդ պէտք է իրեն մօտիկ համարէ, եւ այն ատեն չի՛ մեղանչեր:

45. Դարձեալ, պէտք է աչքը բանալ արարածները եւ Աստուծոյ սքանչելի գործերը տեսնելու համար. ու մարմինի աչքերուն հետ բանալ նաեւ միտքի աչքերը եւ իմաստութեամբ տեսնել արարածներուն զարմանալի գործերը, որ Դաւիթ տեսնելով կ'ըսէր՝ «Երբ կը դիտեմ երկինքդ, մատներուդ գործը, կը դիտեմ լուսինը եւ աստղերը, որ դուն հաստատեցիր» (Սղ 8.3): Այսինքն, նայիլ երկինքի բարձրութեան եւ ընդարձակութեան, լուսաւորներու պայծառութեան եւ գեղեցիկ կարգաւորութեան, եւ ասոնց յաջորդածներուն՝ ամպերուն, անձրեւին, հովին, ձիւնին, սառնամանիքին, կարկուտին, երկիրին, բոյսերուն, տունկերուն, թռչուններուն, ծովուն,

աղբիւրներուն, գետերուն. եւ ինչո՞ւ զեռ կարգով թուեմ, այլ՝ բոլոր ստեղծուածներուն: Եւ ասկէ, նախ ճանչնալ Աստուծոյ մեծութիւնը, իմաստութիւնը, անչափ զօրութիւնը եւ բարերարութիւնը (Հմմտ Հո 1.19–20), թէ այս բոլորը մեզի համար ստեղծած է: Եւ ասոնցմէ ակելի հրաշային, թէ ինչպիսի՛ նախախնամող զօրութեամբ կը կառավարէ բոլորը եւ կը պահէ զանոնք անխորտակ հաստատութեան մէջ (Հմմտ Կղ 1.17). որովհետեւ այս անհուն ծանրութիւնը աշխարհի մարմինին երկիրի եւ ծովու՝ ո՛չ հիմք, ո՛չ հաստատութիւն եւ ո՛չ ալ սիւներ ունի. այլ, այս ամենքը ոչինչի վրայ հաստատուած են, մանաւանդ՝ Աստուծոյ հրամանին վրայ. ըստ առաքեալին՝ «Իր խօսքին զօրութեամբ տիեզերքը կը պահէ» (Եբր 1.3):

46. Արդ, այս բոլորին եւ այսպիսիներուն պէտք է աչքը բանալ, տեսնել ու ճանչնալ Աստուծոյ անհաս զօրութիւնը, իմաստութիւնը եւ մեծութիւնը: Որովհետեւ երկինքն ու երկիրը եւ անոնց մէջ եղող արարածները՝ որպէս թէ գիրով եւ խօսքով Աստուծոյ մեծութիւնը կը պատմեն: Ինչպէս ըսուած է՝ «Երկինքը Աստուծոյ փառքը կը պատմէ» (Սղ 19.1): Եւ այսպիսի անպատմելի արարչութիւնը տեսնելով, պէտք է միտքը եւ լեզուն գործի մղել Աստուած փառաբանելու եւ բոլոր արարածներուն մէջ արարիչը փառաւորելու: Որովհետեւ ասոնց նայելով Անանիաները բոլոր արարածները Աստուած օրհնելու կը հրաւիրէին, ըսելով՝ «Բոլոր գործերն Տիրոջ, օրհնեցե՛ք Տերը» (Դն 3.57 [գրաբար Աստուածաշունչ]): Եւ շարունակելով կը թուէին, թէ երկինքն ու երկինքին մէջ եղածները եւ օդն ու օդը եղածները Աստուած կ'օրհնեն (Հմմտ Սղ 148.3–4): Եւ ոչ թէ անոնք է, որ Աստուած կ'օրհնեն՝ որովհետեւ խօսք եւ իմաստութիւն չունին, այլ մտաւոր եւ բանաւոր մարդիկը տեսնելով անոնց մէջ եղող սքանչելագործութիւնը՝ արարիչը կը փառաւորեն:

Եւ ո՛չ միայն այսպիսի հրաշագան եւ զարմանազործ տեսքէն հրապուրուած իմաստուն կերպով նայողներ կը փառաւորեն Աստուած, այլ նաեւ այն տեսքերէն, որ շատերուն կը թուի, թէ չարին պատճառէին. որովհետեւ անոնք, որոնք մարմինի աչքին հետ հոգիի աչքն ալ բաց կը պահեն, մեծ շահ կ'ընեն այն բաներէն, որոնցմէ կը վնասեն հոգիով կուրացեալները. բժիշկներուն նման, որոնք յաճախ վնասակարներէն օգտակար դեղեր կ'առնեն, ինչպէս օձերէն կ'առնեն անոնց թոյներուն լուծիչները եւ այլ մահացու դեղերէն՝ մահացնող զօրութիւնները:

47. Եւ եթէ կ'ողէք, պատահած եւ գրուած դէպքերով հաստատեմ ըսածներս. Անտիոք քաղաքին մէջ, գեղեցկութեամբ հոգակուած պոռնիկ մը կար՝ Պեղեգիա անունով, որուն գեղեցկութեան համբաւը ո՛չ միայն այդ քաղաքին, այլ եւ մերձակայ աշխարհին մէջ տարածուած էր եւ ամեն կողմերէ վաւաչոտ երիտասարդներ կու գային անոր մօտ: Ան օր մը բաղնիքէն ելած, եւ բեհեզ ու ծիրանի հագած, եւ ոսկիով, մարգարիտով եւ պատուական քարերով գլուխը, լանջքը եւ վիզը զարդարած, եւ գրեթէ ամբողջ մարմինը, սեւով աչքերը, ճերմակով եւ կարմիրով այտերը, եւ անուշահոտ իւղով օծուած, կու գար լկտի կերպարանքով կ'անցնէր քաղաքին մէջէն, պատուելով այդ հեշտացեալներու շատերէն: Իսկ Նոննոս անունով եպիսկոպոս մը, պոռնիկին անցած պահուն, եկեղեցականներու հետ կը նստէր եկեղեցիի սրահին մէջ, որուն քովէն կ'անցնէր պոռնիկը, եւ ողջխոս ժառանգաւորներէն շատեր իրենց դէմքերը կը դարձնէին զայն չտեսնելու համար: Իսկ սուրբ եպիսկոպոսը շարունակ ապշած կը նայէր անոր. այնքան, որ տեսնողներէն շատեր իրենց միտքէն կը բամբասէին զայն՝ թէ երկար կը նայի պոռնիկին գեղեցկութեան: Իսկ ան յանկարծ փոճկելով դառնապէս կու լար:

Մերձաւորներ, որոնք կը բամբասէին իր դիտելը, մօտենալով կը հարցնէին, թէ ինչո՞ւ պոռնիկին գեղեցկութեան վրայ կ'ապշէր եւ թէ ինչո՞ւ կ'ողբար: Իսկ ան տակաւին արտասուելով կը պատասխանէր. «Վ՛այ ինձի, զաւակներս, որովհետեւ տեսայ այդ կինը, որ իր կարողութեան չափով եւ ամեն հնարներով բազմատեսակ եւ զանազան զարդերով ինքզինք զարդարած էր. եւ այս բոլորը ըրած էր որպէսզի խեղագար եւ մեղսասէր երիտասարդներուն հաճոյ երեւի եւ անոնց ախտաւոր ցանկութիւնը իրեն հետ խառնակելու շարժէ: Իսկ ես երկնաւոր Փեսային հարմանցած եմ, որ ինձի հանդէպ ունեցած իր անճառ եւ սուրբ սիրոյն պատճառաւ իմ գարշութեանս խոնարհեցաւ, խաչով եւ արիւնով զիս զնեց մեղքի ծառայութենէն, լուաց սրբարար աւագանով եւ զարդարեց Սուրբ Հոգիին շնորհքով, տուաւ նաեւ իր գեղեցկացուցիչ պատուիրանները եւ սորվեցուց, թէ ինչպէս անոնցմով օրէ-օր պէտք է հոգիիս եւ մարմինիս մասերը զարդարեմ, որով անճառելի սիրով ան իմ մէջս կը բնակէր եւ ես՝ իր մէջ: Իսկ ես, առակողին համաձայն (Հմմտ Առ 26.11), փխածիս վերադարձայ եւ այն տիղմին մէջ թաւալեցայ, որմէ լուացուած էի, եւ անկէ ստացած շնորհքի զարդարանքները մեղքով աղտոտեցի եւ չփութացի ապաշխարութեան ջուրով անձս վերստին լուալու եւ պատուիրանին պահպանութեամբ զարդարելու որպէսզի հաճելի երեւիմ երկնաւոր Փեսային, որ սիրեց զիս եւ իր անձը ինձի համար մահուան մատնեց»: Եւ այս լսելով, անոր միտքի արթնութեան եւ հոգիին մաքրութեան վրայ զարմացան եւ Աստուած փառաւորեցին:

Ահա, կը տեսնե՞ս, փութացողները եւ արթունները վնասակարներէն կը շահին, իսկ ծոյլերը եւ մեղկերը յաճախ օգտակարներէն կը վնասուին:

48. Արդ, զգայարաններուն առաջին դուռը լաւ փակուեցաւ եւ լաւ բացուեցաւ: Բայց պէտք է նաեւ երկրորդը նոյնպէս փակել բոլոր մահացու եւ կորուստի մատնող բաներու դէմ: Որովհետեւ ինչպէս աչքը տեսնելով դէպի չարութիւն կը խոտորի եւ իրեն հետ ամբողջ մարմինը գործակցութեան կը մղէ, այնպէս ալ ականջը լսելով կ'ապականի եւ ապականութիւն գործող լուրը ներս առնելով, սիրտին շտեմարանին մէջ կ'ամբարնէ՝ յարդին տակ պահուած կայծի նման, որ պատեհ ժամանակին հովէն արծարծուելով այրող բոցը կը բորբոքէ:

Եւ այս սկզբնաւորագոյն մեղքն է, որովհետեւ ամեն բանէ առաջ բանասարկու օձը նախամօր մօտենալով ականջին մէջ թափեց դառնութեան թոյնը. որով ինքը մեռաւ եւ իրմէ ծնածներուն ալ մահուան պատճառ եղաւ: Արդ, ախտաւոր լսելութեան առաջին մուտքը հետեւեալն է. երբ իրարու տուփողներ, այր կամ կին, իրարմէ կակուղ եւ քաղցր խօսքեր կը լսեն, ասոնք երկայրի սուրի նման կը մխուրտ հոգիին մէջ եւ գերի առնելով, ցանկութեան պարանով կ'առաջնորդեն մեղք գործելու:

49. Ասոր կը միանայ նաեւ չար միջնորդներու խօսքը, որ կորուստի տանող պատգամները կը տանի եւ կը բերէ երկու անձերու միջեւ՝ ինչպէս օձը ըրաւ Եւային եւ բանասարկուին միջեւ: Եւ այս շնութենէն աւելի աններելի է. թէեւ դժուրակ եւ չար յանցանք է շնութիւնը, որովհետեւ արքայութենէն դուրս կը հանէ եւ գեհնէնին ժառանգորդ կը դարձնէ, ասկայն մեծագոյն պատճառ եւ մեղքի հարկեցուցիչ ունի մարմինին ցանկութիւնը, սատանային թեկադրութիւնը եւ ախտերուն գարշութեամբ բորբոքելը: Իսկ անօրէն միջնորդը ի՞նչ պատճառաւ այս սաստիկ մեղքին մէջ կը կործանի՝ բնութենէն ո՛չ մէկ հարկ կամ բռնութիւն ունենալով: Արդ, երկու յանցանքներուն

համեմատութեամբ, որոնք մեղքի պատճառ եղան, անօրէն միջնորդը կրկնապէս ու աւելի պատիժ պիտի կրէ դատաստանի օրը՝ գեհնէնի կիզիչ կրակին մէջ:

50. Դարձեալ ականջին միջոցաւ կը լսուին ամեն չար խորհրդակցութիւններ եւ անօրէն գործեր՝ աւագակութիւն եւ գողակցութիւն, որոնցմէ առակի խօսքը կը հրաժարեցնէ ըսելով՝ «Ո՛րդեակս, եթէ մեղաւոր մարդիկ փորձեն քեզ գլխէ հանել, չըլլա՛յ որ անոնց հաւանութիւն տաս: Օրինակի համար, եթէ քեզի ըսեն՝ “Մեզի հետ եկուր, դարան մտնենք եւ սպանենք անցնողը, եւ լոկ հանոյքի համար՝ թակարդի մէջ ձգենք անմեղ մը: Ողջ-ողջ կլլենք գայն, այնպէս՝ ինչպէս մեռելներու աշխարհը կը կլլէ գերեզման իջնողները» (Առ 1.10–12): Նաեւ կը խրատէ ըսելով՝ «Ո՛րդեակս, այդպիսի մարդոց հետ ճամբայ մի՛ ելլեր, հեռացիր անոնց շափոնեղէն» (Առ 1.15):

Նաեւ, մարդոց մասին չարախօսութիւնը ականջով սիրտին մէջ կը մտնէ անփակ լեզուներէ եւ անդուռ բերաններէ, որոնք Սատանայի գործիք եղած, անոր թափած թոյները իրենց լեզուներով ուրիշներու ականջներուն կը մատուցեն եւ զանոնք բարկութեան, ատելութեան, հայհոյութեան, ռիսակալութեան, թշնամանքի, բամբասանքի, մատնութեան, դաւաճանութեան, զրպարտութեան, որոգայթ լարելու, սպանութեան եւ նոյնանման չարիքներու կը մղեն:

51. Այս ալ ականջին ախտն է, երբ ո՛չ թէ միջնորդէ մը, այլ ուղղակի անձէ մը թշնամանք, նախատինք, արհամարհանք, հայհոյութիւն, զրկանք, յափշտակութիւն, տուգանք եւ հեզանք կը կրէ:

Արդ, բոլոր այսպիսիներուն, որ վերեւ յիշեցինք, եւ ասոնց նմանին դիմաց, պէտք է ականջը փակել եւ բնաւ չլսել՝ չիյնալու համար

նախապէս ըստւած չարիքներու մէջ, որովհետեւ այսպիսի ախտեր քաղցկեղի նման կը ճարակեն հոգին: Ընդհակառակը, Դաւիթի հետ բարի նախանձ ունենալ, որ կ'ըսէ՝ «Ականջներս փորձեցի փակել, ամենեւին լուռ մնացի, բայց՝ անօգուտ» (Սղ 39.2): Ով որ կ'ուզէ հոգին փրկել, կամ սկիզբէն չի լսեր, եւ կամ եթէ լսէ՝ չի զայրանար, միտքը չի պահեր եւ չի պատասխաներ:

52. Ականջը եւս լայն բանալ միտքի բոլոր բարի խօսքերուն. այսինքն՝ հաւատքի խօսքի եւ Աստուծոյ պատուիրաններուն, քարոզուող՝ Օրէնքով եւ Մարգարէներով, աւետարանական եւ առաքելական վարդապետութեամբ: Լսել՝ Օրէնքը, որ կ'ըսէ՝ «Տէ՛ր՛՛ մեր Աստուածը, միակ Տէ՛րն է: Սիրէ՛ Տէ՛ր՛՛՛ քու Աստուածդ, ամբողջ սիրտովդ» (Բ. Օր 6.4–5), եւ «Սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս» (Ղկ 19.18). եւ «Պատուէ՛ հայրդ ու մայրդ: ... Մի՛ սպաներ: Մի՛ շնար: Գողութիւն մի՛ ըներ» (Եւք 20.12–15): Եւ՝ մարգարէները, որոնք կ'ըսեն՝ «Հետո՛ւ մնա շարիքէն, եւ բարիք ըրէ, խաղաղութիւն կամեցիր եւ զայն հետապնդէ» (Սղ 34.14): Եւ դարձեալ՝ «Լուացուեցէ՛ք ու մաքրուեցէ՛ք: Գաղթեցէ՛ք շարիք գործել: ... Սորվեցէ՛ք բարիք գործել, փնտտեցէ՛ք արդարութիւնը, օգնեցէ՛ք զրկեալին եւ տէր կանգնեցէ՛ք որբին ու որբեայրիին իրատունիին» (Ես 1.16–17): Եւ՝ «Հացդ անօթիին հետ բաժնես, անտուն աղքատները տունդ ընդունիս, զգեստ տաս անոր՝ որ կը տեսնես թէ մերկ է, եւ ընտանիք ու զաւակդ չզրկես» (Ես 58.7): Եւ՝ սուրբ Աւետարանը, որ կ'ըսէ՝ «Ինչ որ կ'ուզէ՛ք որ մարդիկ ընեն ձեզի, նոյնը ըրէ՛ք դո՛ւք անոնց» (Մտ 7.12), «Սիրեցէ՛ք ձեր թշնամիները եւ աղօթեցէ՛ք ձեզ շարշարողներուն համար» (Մտ 5.44), «Ով որ երեսիդ ապտակ մը զարնէ՛ միւսն ալ դարձուր» (Ղկ 6.29), «Ձեր հարստութիւնը դիզեցէ՛ք երկինքի մէջ» (Մտ 6.20), «Ի՞նչ արժանիք կ'ունենամ՝ եթէ փոխ տամ միայն անոնց, որոնցմէ

կ'ակնկալէ՛ք ձեր տուածը եւս առնել» (Ղկ 6.34): Եւ՝ առաքեալները, որոնք կ'ըսեն՝ «Ձեզմէ՛ արմատախիլ ըրէ՛ք ամեն դառնութիւն, բարկութիւն ու զայրոյթ, պոռչտում ու հայնոյութիւն, եւ առաջըր առած կ'ըլլաք անոնց շար հետեւանմներուն» (Եփ 4.31), «Բարկացած շմնաք մինչեւ իրիկուն» (Եփ 4.26), «Մեղացէ՛ք ձեր մէջ երկրաւոր ցանկութիւնները, այսինքն՝ ձեզմէ՛ դուրս վանեցէ՛ք պոռնկութիւնը, պղծութիւնը, կիրքը, շար ցանկութիւնը եւ ագահութիւնը, ինչ որ կուսպաշտութիւն է» (Կղ 3.5), «Գթասիրտ եղէ՛ք» (Կղ 3.12), «Մէկդի՛ ձգեցէ՛ք ամեն տեսակի շար մտածում ու նենգութիւն, կեղծատրութիւն ու նախանձ եւ ամեն տեսակի շարախօսութիւն» (Ա. Պտ 2.1), «Սիրեցէ՛ք իրար» (Ա. Պտ 1.22), որովհետեւ «Սէրը Աստուծոյ պարգեւն է. ուստի ով որ կը սիրէ՛ Աստուծմէ՛ ծնած է եւ Աստուած կը ճանչնայ» (Ա. ՅՀ 4.7), եւ «Մեր սէրը միայն խօսով ու լեզուով թող չըլլայ, այլ՝ գործով արտայայտուած ճշմարիտ սէր» (Ա. ՅՀ 3.18): Նոյնպէս եւ բոլոր միւս փրկարար եւ հոգին ապրեցնող պատուիրանները, որոնք թիւ չունին:

Ականջները պէտք է բանալ նաեւ ամեն աղաչողի, որ անհրաժեշտ պէտքեր կամ հոգեւոր խրատ կը խնդրէ՝ ըստ մարմինի կարիքներուն, որ աւելի մեծ եւ օգտակար է քան մարմինին կարօտութեան գոհացումը:

Եւ այսպէս, Աստուծոյ կամքին համաձայն կը լիանան ականջները:

53. Եւ հոտոտելիքներդ գոցէ՛ բոլոր ախորժելի եւ ախտաւոր հոտերու դէմ, որոնք սովորաբար վաւաշտաններուն մօտ կը գտնուին, որովհետեւ անուշահոտութեան ամեն տեսակ հնարքներ կը հնարեն իրենց մարմիններուն եւ զգեստներուն ախտաւոր ցանկութեան նիւթ եւ զօրութիւն տալու համար. որով, իրենց հոգիներուն

տուկունութիւնը մեղկացնելով կը թուլացնեն՝ արի կեցուածքի մը պնդակազմ բարձրութենէն գլորելով:

Եւ Հոտտելիքդ բաց՝ Քրիստոսի անուշահոտութեան՝ որ առաքեալներուն միջոցաւ տարածեց ամբողջ տիեզերքի մէջ, ինչպէս Պօղոս ալ կ'ըսէ՝ «Մեր միջոցաւ իր գիտութեան բոյրը կը տարածէ ամենուրեք» (Բ. կր 2.14). եւ թէ՛ «Փրկութեան նամբուն մէջ գտնուողներուն, մեր կեանքերը Քրիստոսի ձեռքով Աստուծոյ ընծայուած անուշահոտ խունկի պէս իրենց բոյրը կը տարածեն» (Բ. կր 2.15): Որովհետեւ անոնք, որոնք ախտաւոր հոտի գարշութիւնը կենդանացուցիչէն աւելի սիրեցին, անոնց մահուան պատճառ եղաւ՝ զանոնք դատապարտելով իրենց անփափաք ըլլալուն համար: Իսկ անոնք, որոնք այս գարշելին արհամարհեցին ճշմարիտ սիրով, անոնց տիրապէս կեանքի պատճառ եղաւ: Նաեւ ասոր փափաքող պանծալի հարսն ալ Երգ երգոցին մէջ կը հռչակէ՝ «Անունդ իսկ կը բուրէ հոտող անուշահոտ իւրի պէս է: Ահա թէ ինչն՝ աղչիկները կը սիրահարուին քեզի» (Երգ 1.3), եւ անախտ սիրով իրենց քաջեցին կեանքդ եւ կեանքիդ միանալով մշտնջենաւոր անմահութեամբ կենդանացան:

54. Անոնք, որոնք կ'ուզեն սրբութեամբ ամենասուրբին հետ հաղորդակցիլ, պէտք է նաեւ իրենց լեզուն փակեն բոլոր վնասակար հեշտութիւններու դէմ:

Թէպէտ Աստուած վեհանձնութեամբ հարկաւորներուն մէջ վայելել շնորհեց, ինչպէս եւ ըսաւ՝ «Ամեն կենդանի արարած ձեզի կերակուր թող ըլլայ, այնպէս՝ ինչպէս բոլոր դպար բոյսերը տուեր էի ուտելու» (ՄՆ 9.3), որովհետեւ որպէս մարմինի արարիչ գիտէր լեզուին տկարութիւնը եւ պէտքերը, սակայն աւելորդութիւնը

արգիլեց որկրամոլութեան պատճառով, որով անմիտները անյագաբար կը խճողեն իրենց որովայնը. չեն գիտեր բնութեան սահմանը, թէ կերակուրը արարիչէն ապրողներուն տրուեցաւ որպէսզի կեանքը, զօրութիւնը եւ առողջութիւնը պահէ մարմինին մէջ, որովհետեւ բնութիւնը Հոսանուտ ըլլալով՝ առածը չի՛ պահեր, եւ այս պատճառաւ թափուածը լեցուելու կը կարօտի: Իսկ անոնք այս անգիտանալով՝ կը կարծեն, թէ իրենց անյագութեամբ աւելի պատիւ կ'ընեն իրենց որովայնին, եւ ո՛չ միայն հոգին, այլ եւ մարմինը՝ որուն օգտակար ըլլալ կը կարծեն՝ կը վնասեն եւ բազմաթիւ ցաւերու կ'ենթարկեն եւ մինչեւ իսկ յաճախ՝ մահուան: Ասոնք անասուններէն աւելի անմիտ են, որովհետեւ անոնք կերակուրի եւ ըմպելիի իրենց պէտքին անհրաժեշտը առնելով, նոյնիսկ եթէ շատ բաներ ըլլան իրենց առջեւ, ո՛չ իսկ կ'ուզեն անոնց նայիլ: Իսկ ասոնք կեանքի միջոցները իրենց անչափութեան համար մահուան կը վերածեն. մարմինը ախտաւոր ցաւերով կը վտանգեն եւ անմահ հոգին յաւիտենական մահուան կը դատապարտեն, մոռնալով առաքեալին զրեհք որբայր, որ կ'ըսէ՝ «Ինչպէս յաճախ կ'ըսէի եւ հիմա ես լալով կ'ըսեմ, մեր մէջ կան շատեր՝ որոնց կեանքը թշնամանք է Քրիստոսի խաչին: Անոնց վերջը կորուստ է, որովհետեւ իրենց Աստուածը իրենց փորձ է: Ամօթալի բաներով կը հպարտանան եւ միայն երկրաւոր բաներու մասին կը խորհին», այսինքն՝ որովայնամոլութիւնը (Փղպ 3.18–19): Եւ զուր տեղ այնպիսիներուն Աստուածը իրենց որովայնը չ'անուաներ, այլ ճշմարտութեամբ, որովհետեւ Աստուծոյ պատիւը անոր պաշտամունքէն կը ճանչցուի եւ պատուիրանին կատարուէն. իսկ որովայնինը՝ անոր սպասաւորութենէն: Արդ՝ անոնք, որոնք որովայնին աւելի կը հնազանդին քան Աստուծոյ պաշտամունքին եւ պատուիրանին՝ բացայայտ է, թէ Աստուած ունին իրենց որովայնը, որուն կը սպասարկեն: Իրաւամբ

այդպիսիները նաեւ խաչի թշնամի կը կոչէ, որովհետեւ խաչին անուներ չարչարանք է՝ ըստ անոր Տիրոջ խօսքին, որ կ'ըսէ՝ «Եթէ մէկը ուզէ ինձի հետեւիլ՝ թող ուրանայ իր անձը, առնէ իր խաչը թող եւ ետեւէս գայ» (Մտ 16.24). այսինքն՝ չարչարանքները: Որովհետեւ ես, կ'ըսէ, մարմինով երկիրի վրայ եղած ատենս խաչի եւ չարչարանքներու ճամբէն քալեցի, որով իմ սեփական փառքս մտայ. եւ ով որ ինձի հետեւիլ կ'ուզէ, խաչին՝ այսինքն չարչարանքներու՝ ճամբով թող գայ, որ նեղ եւ անձուկ է: Որովհետեւ ով որ լայնէն եւ ընդարձակէն ընթանայ, որ որկրամոլութիւն եւ մարմնական այլ հեշտութիւն է, ան ո՛չ թէ կեանքի եւ փառքի կը հասնի, այլ՝ տանջանքի եւ կորուստի (հմտտ Մտ 7.13): Առաքեալն ալ այս կը յայտնէ ըսելով՝ «Քրիստոսի շարչարանքներուն մասնակից կ'ըլլամք՝ որպէսզի իր փառքին ես մասնակից ըլլամք» (Հռ 8.17):

55. Ի՞նչ ըսեմ արբեցողներուն մասին: Արբեցութիւնը չարութեամբ կը գերազանցէ կերակուրներու անյազութիւնը, որովհետեւ անոնք, որոնք շատ կերակուր կ'ուտեն, թէպէտ հոգիին եւ մարմինին կը վնասեն՝ ըստ վերը մեր ըսածին, բայց բանական իմաստութիւնը չեն եղծաներ, որուն միջոցաւ գատորշուեցանք անբան կենդանիներէն. այլ կան եւ կը մնան ամբողջ բանականութեամբ եւ խոհականին ընտրութեամբ: Իսկ արբեցողները կ'ապականեն բանականութիւնը, որ Տիրոջ պատկերն է, որովհետեւ ըստ պատշաճի ո՛չ կը խորհին եւ ո՛չ կը գործեն: Այսպիսով ո՛չ միայն անասուններուն կը հաւասարին, այլ անոնցմէ շատ աւելի անմիտ կը դառնան: Որովհետեւ անասունները թէեւ բանական հանճարէն զրկուած են, բայց ունին բնական շարժումները իրենց կեանքի պէտքերուն համաձայն՝ իրենց օգտակար եղածները ընտրելու համար. այսինքն, իրարմէ կը գատեն կեանք տուող եւ մահացնող կերակուրները, յօշոտող գազաններէ

խոյս կու տան, որոգայթներէ կը խորշին, վախերէ եւ խորխորատներէ հեռու կը մնան, ամառը գով լեռները կ'ելլեն, ձմեռը տաք դաշտերը կ'իջնեն, եւ ասոնց նման ուրիշ շատ բաներով իրենց մէջ խոհականութեան կերպարանքը կը յայտնեն: Տակաւին, ոտքով ուղիղ կ'ընթանան, աչքով անսխալ կը տեսնեն եւ ականջով արագ կը լսեն: Իսկ գինովները ո՛չ միայն բանական իմաստութիւնը եւ խոհական ընտրողութիւնը կը կորսնցնեն, այլ նոյնիսկ այս անասնային բնագոյնները չունին իրենց մէջ, որովհետեւ զգայարաններու բոլոր ներգործութիւնները կը կորսնցնեն. ոտքով չեն կրնար ուղիղ ընթանալ, այլ՝ օրօրուելով, շուտով գետին կ'իյնան եւ իբր մեռած գիակ ուրիշներէ վերցուելով կը տարուին. իրենց աչքը ըստ պատշաճի չի՛ տեսներ, այնքան որ նոյնիսկ բարեկամները եւ թշնամիները իրարմէ չեն կրնար զանազանել. իրենց ականջը յստակ չի լսեր, որովհետեւ շատ մը խօսքեր սխալ կը հասկնան. իրենց լեզուն յօգաւոր եւ կանոնաւոր չի շարժիր խօսք արտասանելու. իրենց ձեռքը պատշաճապէս չի գործադրեր ընելիքները: Իսկ շուայլ եւ անմիտ ծախսերուն մասին, որ գինովը գինարբեցողներու հաւաքոյթին անմտաբար կը ծախսէ եւ յետոյ կը գողայ, ի՞նչ պէտք է ըսել. որովհետեւ շատեր իրենց ապրուստին անհրաժեշտ եղածները մէկ օրուան մէջ կը վատնեն:

Եւ միայն ասոնք չեն արբեցութեան վնասները. այլ, որովհետեւ գինովը խելակորոյս է եւ չի գիտեր ի՛նչ կը խօսի կամ կ'ըսէ, խօսքերով գրգռութեան, հակառակութեան, բարկութեան, սրտմտութեան, կռիւի, թշնամանքի, հայհոյութեան, նախատիւքի, արհամարհանքի եւ անարգանքի կը մատնուի. եւ ասոնցմէ՝ հարուածներու եւ ծեծի, ուրկէ եւ յաճախ սպանութիւններ յառաջ կու գան, որմէ՛ բանտ եւ կապանք, տուգանք եւ ստացուածքներու յափշտակութիւն, անդամներու ջարդ ու չրջապատէն զրկում եւ արտաքսում, եւ կամ մահուան փոխարէն՝ մահ:

Կը տեսնե՞ս, գիտո՞վը ո՛չ միայն անասուններուն կը հաւասարի, այլ խողերէն, շուներէն, գորտերէն եւ ուրիշ գարշելի միջատներէն ա՛լ աւելի վատթար կը դառնայ: Եւ ասոնք մարմինին համար, որոնք շատ չնչին եւ նուաստ են հոգեւորական տուգանքներու հետ բաղդատաբար: Որովհետեւ շուներու, պոռնիկներու, սպանդոններու եւ ուրիշ չարագործներու հետ արքայութենէն կը զրկուի, մշտավառ եւ անշէջ գեհնը կը ժառանգէ՝ ըստ առաքեալին խօսքին, որ կ'ըսէ՝ «Գոմ ձեզ յիսաբէ: Անոնք որ պոռնկութիւն կ'ընեն կամ կոպաշտ են, կամ՝ շնացող, իգացեալ, արուագետ, գող, ագահ, բամբասող կամ յափշտակող՝ Աստուծոյ արքայութիւնը պիտի չժառանգեն» (Ա.Կր 6.9–10):

56. Շատ են նաեւ անոնք, որոնք ո՛չ միայն որկրամոլութեամբ եւ արբեցողութեամբ սահմանէն դուրս կ'ելլեն, այլ Աստուծոյ օրէնքով հաստատուած պահքերը կը լուծեն, ոմանք՝ արգիլուած բոլոր կերակուրներով, իսկ ոմանք՝ ձուկով, գինիով եւ ձէթով: Եւ կը պատրուակեն ըսելով. Աստուած կերակուրներու համար մէկու մը չի բարկանար, որովհետեւ ուտելու համար ստեղծեց զանոնք եւ տուաւ մեզի, որպէսզի իր առատ պարգեւները վայելենք եւ զինք փառաւորենք: Կ'ըսեն. Պէտք է սիրտը չարիքներէ պահել եւ մէկու մը չարիք չպատճառել, որովհետեւ աստուածային պատուիրանները միշտ այս կը սորվեցնեն:

57. Ասոնց կը պատասխանենք՝ թէ ան, որ պահքը օրինադրեց՝ ո՛չ միայն սիրտը չարութեամբ չպղծել կամ ընկերը չտրամեցնել պատուիրեց, այլ՝ նաեւ անոնց կողքին պահք բռնել. արդ, միայն մէկ պատուիրանը պահելը գոհացուցիչ չէ մեզ ուղղելու համար:

Եւ մտիկ ըրէ առաքեալին, որ կ'ըսէ՝ «Մարդ նոյնիսկ եթէ բոլոր

Օրէնքը գործադրէ, բայց մէկ պատուիրանի կատարման մէջ թեւաւնայ, ամբողջ Օրէնքին դիմաց յանցատը կ'ըլլայ» (Յկ 2.10): Արդ՝ ինչպէս, որ մարմինը ո՛չ թէ միակ կերակուրով, այլ բոլոր պիտանի կերակուրներով կը կերակրենք, այնպէս ալ հոգին,– որուն կերակուրը Աստուծոյ պատուիրաններն են,– ո՛չ թէ մէկ հատով կամ քիչով, այլ բոլոր պատուիրաններով պէտք է կերակրել. որովհետեւ Տէրը լոկ չըսաւ, թէ մարդ Աստուծոյ բերանէն ելած մէկ խօսքով կ'ապրի, այլ՝ բոլոր խօսքերով (Հմմտ Մտ 4.4):

58. Իսկ մէկը կրնայ ըսել, թէ արգիլուած կերակուրը միան է եւ ամեն ինչ որ մտեղէն է, որովհետեւ կենդանիներու ծնունդ է. իսկ ձուկը՝ ջուրի եւ ձէթի ու գինին՝ պտուղներու ծնունդ են, ուրեմն պէտք է անխտիր ուտել:

Ինչ անխմաստ եւ յիմար պատճառաբանութիւն. չէ՞ որ բոլոր տարրերը հաւասար են՝ երկիր եւ ջուր, օդ եւ կրակ. եւ նիւթական արարածներէն չկայ էութիւն մը, որ այս չորս տարրերէն գոյացած չըլլայ՝ բանաւորներ եւ անբաններ, կենդանիներ եւ անկենդաններ: Իսկ եթէ դարձեալ ըսէ, թէ Աստուած ըսաւ՝ «Թող երկիրը զանազան տեսակի շնչատու կենդանիներ՝ ամեն տեսակ ընտանի անասուն, սողուն եւ գազան առաջ բերէ» (Մն 1.24). եւ դարձեալ ըսաւ՝ «Թող ջուրերը լողացող կենդանի էակներով լեցուին, եւ թռչուններ թռչին երկիրին վերեւ՝ երկնակամարի տարածքին» (Մն 1.20): Ահաւասիկ անասունները երկիրի ծնունդ են, իսկ ձուկերը՝ ջուրի. արդ, պէտք է ձուկերը ուտել եւ անասունները՝ ոչ: Սակայն սկիզբէն ըսի, թէ երկիրի վրայ մէկ տարրէ գոյացած ոչինչ կայ, եւ ոչ ալ երկուքէ կամ երեքէ. այլ բոլորն ալ՝ չորս տարրէ: Եւ ինչ որ երկիրէ ըսուեցաւ, իրեն հետ ջուրը եւ միւսներն ալ ունի. նմանապէս ինչ որ ջուրէն ըսուեցաւ՝ երկիրի եւ միւսներուն խառնուրդը ունի: Իսկ եթէ դար-

ձեալ կը հակառակիս ջուրէն ըսուածներուն երկիրէ ըսուածներէն նուազ ըլլալը, ինչո՞ւ թոչուններն ալ չես ուտեր, որովհետեւ անոնք ալ ջուրէն են. եւ կամ ինչո՞ւ բոյսերէն եւ սերմերէն հեռու չես կենար, որովհետեւ անոնք ալ երկիրէ են: Իսկ եթէ կենդանութիւնը պատճառ ունիս, ահա եւ ձուկերը կենդանի են, եւ երկիրի վրայ եղող բոլոր կենդանիներէն աւելի մեծ եւ յաղթանդամ են:

59. Այլեւս այս ինչ կամ այն ինչ պատճառը պիտի չթուեմ, այլ սահմանազանցութիւնը. որովհետեւ առաջին պահքին լուծումը, որով անէծքը եւ մահը աշխարհ մտան, միտով կամ ձուկով, գիւնիով կամ ձէթով չէր, այլ՝ պտուղով: Աստուած ըսաւ՝ «Բայց բարիի ու չարի գիտութեան ծառն չուտես» (Մն 2.17), եւ յանցաւորութենէ ետք պատժելով նոյնը երկրորդեց, ըսելով՝ «Որովհետեւ ... կերար այն ծառէն, որմէ փեղի պատուիրեցի չուտել, քու պատճառովդ անիծեալ ըլլայ երկիրը» (Մն 3.17):

60. Արդ, ինչպէս որ աստուածային օրէնադիրները պահքի եւ ուտելիքի օրերը որոշեցին, նոյնպէս եւ կերակուրները զանազանեցին. մարմինի համար զօրաւորները, հեշտալիները եւ ախորժեղիները, որ պատշաճ դատեցին՝ օրինադրեցին պահքի օրերուն չուտել. ո՛չ թէ որովհետեւ Աստուած մեր պահքին կարօտ է, այլ որպէսզի անոր հրամանին հնազանդինք:

Այս եւս մարդոց մէջ կը տեսնուի, որովհետեւ իրենց ձեռքին տակ եղողներուն մեծ կամ փոքր պատճառները այնքան չեն քննարկողքան իրենց հրամանին հանդէպ անհնազանդութիւնը եւ արհամարհանքը. այսպէս ալ ամեն մարդ պէտք է հնազանդի աստուածային օրինադրութեան, որ Աստուած եկեղեցիի առաջնորդներուն ձեռամբ սահմանեց: Եւ այն կերակուրները, որ աստուածային հրա-

մանին համաձայն մարդ իր կոկորդէն կտրեց պահքի օրերուն, հարկաւորներու կարօտներուն տրամադրել յանձնարարեց: Նաեւ բոլոր ապրանքներու, կերակուրներու եւ այլ բաներու աւելորդները առատապէս բաշխել եւ աղքատներուն տալ, որովհետեւ բարեգործութեան արդարութիւնը յաւիտեան պիտի մնայ: Բարերարին խրատին հետեւելով, կերակուրը՝ ցեցի եւ ժանգի ապականացու եւ ցնդելի երկրաւոր նիւթը՝ վաճառականութեան պէս տալ աղքատներուն ձեռքը եւ երկիրքի մէջ գանձել, որ ո՛չ գողերէն կը գողցուի եւ ո՛չ ցեցերէն կը վնասուի, եւ փոխարէն առնել անապական եւ անփոփոխելի երկիրքի արքայութիւնը (Հմմտ Մտ 6.19–20), ըստ բարեգործներու խումբին ուղղուած Տիրոջ երանաւէտ ձայնին, որ կ'ըսէ՝ «Եկէ՛ք, Հօրս կողմէ օրհնեալներ, եւ ժառանգեցէ՛ք այն արքայութիւնը, որ ձեզի համար աշխարհի սկիզբէն պատրաստուած է: Որովհետեւ անօթի էի եւ զիս կերակրեցիք, ծարաւ էի եւ ջուր տուիք, օտարական էի եւ ընդունեցիք զիս, մերկ էի եւ հագցուցիք ինձի, հիւանդ էի եւ հոգ տարիք ինձի, բանտի մէջ էի եւ այցելեցիք ինձի» (Մտ 25.34–35): Անոնք երբ տարակուսեցան այսպիսի փառաւորութեան մէջ տեսնելով զայն եւ ըսուածները անոր համար անարժան համարելով՝ հարցուցին, թէ ե՞րբ քեզ մեզի շնորհակալութիւն յայտնելու չափ կարօտութեան մէջ տեսանք եւ բարեգործեցինք, ըսաւ՝ «Որովհետեւ իմ այս փոքր եղբայրներէս մէկուն ըրիք, ինձի ըրած եղաք» (Մտ 25.40). ես էի, որ անոնց միջոցաւ ձեր ձեռքէն ողորմութիւն կ'առնէի:

Արդ, վերոգրեալներուն համաձայն, այդ բոլոր վնասակարներուն դէմ պէտք է փակել ճաշակելիքը եւ բանալ լաւագոյններուն, ըստ արարչագրի սահմանին, թէ պիտի փոխեմ զայն բնական ներգործութեան:

61. Ասկէ յետոյ պէտք է սանձ դնել նաեւ լեզուին վրայ, որ ըստ առաքեալին՝ «Թէև փոքր անդամ մըն է, բայց մեծամեծ բաներով կը պարծենայ» (Յկ 3.5): Առաքեալը զայն անիրաւութեան զարդ եւ ամբողջ մարմինին ապականիչ կը նկատէ, ըսելով՝ «Անով կ'օրհնենք մեր Տէրը եւ Հայրն Աստուած, եւ դարձեալ անով կ'անիծենք մարդիկը, որոնք Աստուծոյ նմանութեամբը ստեղծուած են» (Յկ 3.9): Եւ քաղցր ու անուշ խօսքերով կը խրատէ՝ ըսելով, թէ պէտք չէ այսպէս ըլլայ, որովհետեւ ինչպէս որ աղբիւրը նոյն ակէն քաղցր եւ դառն ջուր չի բոխեցներ (Հմմտ Յկ 3.11), այնպէս ալ լեզուն, որ որպէս քաղցր եւ շնորհալի գործարան հաստատուեցաւ արարիչէն մեր բնութեան մէջ՝ արդար չէ, որ հայհոյանքի եւ բամբասանքներու, կռիւի եւ հակառակութեան, ստույգեան եւ չարախօսութեան, թշնամանքի եւ զրպարտութեան, քսութեան եւ մատնութեան, խեղկատակութեան եւ դատարկաբանութեան, սուտ երդումի եւ շողորթութեան, եւ այլազան շողակրատութեան դառնութիւնը իրմէ բոխեցնէ: Մանաւանդ անօրէն եւ հոգին կորսնցնող անիծաբանութեան դառնութիւնը, որ որոմնացան թշնամիէն սերմանուած սերմ է եւ անոր կամակատար մշակներէն մշակուած եւ արդիւնագործուած, որ եւ բոլոր յանցանքներէն աւելի դժուակ եւ ծանրագոյն է եւ աւելի կը խաւարեցնէ հոգիին պայծառութիւնը եւ անհրաժեշտ ժառանգորդ կը դարձնէ անչէջ գեհեհի մշտավառ կրակին: Որովհետեւ ըստ Տիրոջ խօսքին՝ եթէ եղբօր յիմար եւ մորոս ըսելը պարտաւոր կը դարձնէ գեհեհի (Հմմտ Մտ 5.22), որչա՛փ եւ աւելի անհնարին եւ դժուակ են անարգանքի եւ նախատինքի խօսքերը՝ ականջին, որպէս միտքի հնոցէն բոխած եւ լեզուէն արձակուած, այնքան որ անասուններու եւ գազաններու օրինակներով կ'անարգեն Աստուծոյ պատկերով ստեղծուած մարդը (Հմմտ Յկ 3.9). որով Աստուծոյ բարկութիւնը եւ վրէժխնդրութիւնը կը շարժեն իրենց

վրայ: Բազմիցս սուրբ եւ անմեղ հոգիներուն կը հայհոյեն, որոնց համար Տէրը ըսաւ, թէ՛ «պիտի չնետէ, ո՛չ այս աշխարհի մէջ եւ ո՛չ ալ հանդերձեալին» (Մտ 12.32):

62. Այս ամբողջ անկարգ արտաբերումին դէմ լեզուն սանձելով, պէտք է զայն դարձեալ գեղեցկապէս շարժել խոստովանելու սուրբ եւ ուղղափառ հաւատքը՝ երեք անձնաւորութիւններու եւ մէկ աստուածութեան, համագոյ եւ հաւասար Երրորդութեան, եւ դաւանելու աշխարհանորոգ ու փրկական տնօրէնութիւնը, եւ օրհնելու ու փառաբանելու անսահման բարերարութիւնն ու առատ պարգեւաբաշխութիւնը, եւ մաղթելու միշտ անձին ու նմաններուն փրկութիւնը, եւ խոստովանելու նախագործեալ յանցանքները՝ անպատկառ յանդիմանութեամբ եւ գովելի ամօթխածութեամբ, իջնելով մեծամեծներէն մինչեւ փոքրերը՝ գործով, խօսքով եւ մտածումով գործուած, եւ խրատելու ու օգնելու անոնց, որոնք հոգեպէս եւ մարմնապէս պէտք ունին անոնց. Գլորածներուն ձեռք կարկառել, սգաւորները մխիթարել, յուսահատութեամբ ինկածները կանգնեցնել, թերահաւատութեամբ փշրուածները բժշկել, ծուլութեամբ վհատածները քաջալերել, արիութեան մէջ տկարացածները պնդակազմել եւ հաստատունները ամրութեամբ զօրացնել: Եւ երբեք չխօսիլ այն ինչ որ ո՛չ իրեն եւ ո՛չ լսողին պիտանի է, այլ՝ խօսիլ ինչ որ հասարակութեան օգտակար է. ըստ առաքեալին, որ կ'ըսէ՝ «Ձեռ խօսեալ միշտ շնորհալի թող ըլլան, աղով համեմուած» (Կղ 4.6), «որպէսզի լսողները Աստուծոյ շնորհովը լեցուին» (Եփ 4.29):

63. Պէտք է նաեւ կարգով շօշափելիքներուն մասին խօսիլ եւ զսպել անոնց յանդուգն յարձակումը, որով միշտ պատրաստ են չարութեան եւ մեղքի մէջ մտնելու:

Նախ, շօշափելիքները պէտք է նուազեցնել գարշելի եւ զագրելի շօշափումէն, որ տեղի կ'ունենայ ամուսնութեան, պրոնկուլթեան, գեղխութեան եւ շուսլութեան մէջ: Ձեռն ակնարկեր զգաստներուն եւ պարկեշտներուն, որովհետեւ անոնք այսպիսի ազդեղութիւններէ կը խորշին: Որովհետեւ բնութիւնը ինքն իրմէ պատշաճ գործիքներ ունի ամեն օգտակար գործի համար. եւ ինչպէս իւրաքանչիւր գործ իր յարմար գործիքներով կը վարուի, նմանապէս եւ ասոնց մէջ իրեններով կը բաւարարուի: Վաւաշտներ կան, որոնք առանց գործակիցի իրենք իրենց հետ կը մաքառին եւ գարշելի ցանկութիւնները ախտերու հոսումով կը կատարեն, որ ո՛չ մէկ բանով պրոնկուլթենէ նուազ է. այլ, նոյն եւ հաւասար ըլլալով շնութեան, գործողները արքայութենէն կը զրկէ եւ գեհեհին ժառանգորդ կը դարձնէ: Ասկէ՛ աւելի՛ պէտք է զգուշանալ, որովհետեւ հեշտութիւնը քիչ է, բայց պատուհասը՝ շատ:

64. Պէտք է նաեւ ձեռքերը գողութենէ արգիլել, ըստ առաքեալին հրամանին, որ կ'ըսէ՝ «Ով որ գողութեամբ կ'ապրէ՝ թող այլեւս չգողնայ, այլ վարժուի արդար վաստակով ո՛չ միայն իր հացը շահելու, այլ նաեւ բարիք գործելու, օգնելով անոնց՝ որոնք կարօտ են» (Եփ 4:28):

Ձեռքերը պէտք է նաեւ կաշառքէ թօթափել, որ կը դատապարտէ մարգարէն ըսելով՝ «Անօրէնութեամբ են անոնց գործերը, եւ անոնց ձեռքը՝ կաշառով լեցուն» (Սղ 26:10): Որովհետեւ կ'ըսէ՝ «Կաշառքը նոյնիսկ յստակատես աշխեր կը կուրցնէ եւ արդար դատաւորներուն ալ վիճակը կ'այլափոխէ» (Ելք 23:8): Անհնար է որ կաշառք եւ իրաւունք միասին ընթանան. ինչպէս որ կրակը մոմը կը հալեցնէ եւ ծուխը մեղուները կը փախցնէ, նոյնպէս ալ կաշառքը՝ իրաւունքը: Իսկ կաշառքէ հեռու մնացածները կը գովաբանուին,

թէ՛ ձեր «ձեռքերը կաշառքէ հեռու պահէք» (Ես 33:15) եւ «Ան՝ որ իր դրամը տոկոսով չի տար, եւ կաշառքի փոխարէն անմեղին դէմ վկայութիւն չի տար: Այսպէս ապրողը երբեք պիտի չսասանի» (Սղ 15:5): Դարձեալ, դրամը տոկոսով վարձու չտալ, որովհետեւ կ'ըսէ իմաստունը՝ «Ով որ տոկոսով ու վաշխով հարստութիւն կը դիզէ, ի վերջոյ կը ժողվէ անոր համար՝ որ բարեհաճ է աղքատներուն հանդէպ» (Առ 28:8): Այլ, Տիրոջ հրամանին համաձայն, թէ՛ եւ չես կրնար փոխ տալ անոնց որոնցմէ ետ առնելու յոյս չունիս (Հմմտ Դկ 6:34), բայց որպէս Քրիստոսի կատարեալ աշակերտ՝ զայն բազմապատկուած առնելու համար արքայութեան մէջ, գոնէ մեղաւորներուն պէս փոխ տուր, որոնք վերստին հաւասար չափը կ'առնեն: Իսկ բնութեամբ անձնուղ դրամը ծննդական դարձնել, Աստուծոյ հակառակ է, որովհետեւ ան կենդանիները ծննդական սահմանեց եւ ո՛չ թէ՛ դրամը: Եւ կենդանիները տարուան մէջ մէկ անգամ կը ծնին, իսկ դրամը՝ ամիսով: Սա ամենէն աւելի դժուարին է եւ դժմ է Աստուծոյ, որովհետեւ դուն որպէս իրմէ աւելի զօրաւոր եւ իմաստուն խորհեցար, թէ՛ կարողացար ընել այն՝ որուն մէջ ան տկարացաւ:

65. Նաեւ, ձեռքը չերկարել մէկը հարուածելու, որովհետեւ Տիրոջմէ զարնել չսորվեցանք, այլ՝ զարնողներուն մեր ծնօտը մատուցել (Հմմտ Մտ 5:39): Եւ ինչ որ խօսքով քարոզեց Տէրը, գործով կատարեց, որովհետեւ իրեն ապտակ զարնող ծառան ո՛չ սաստեց եւ ո՛չ պատժեց (Հմմտ Մտ 26:27–31): Որովհետեւ շատ յաճախ, անկախ սաստկագոյններէն, փոքր հարուածներէն իսկ սպանութիւն կը գործուի:

66. Դարձեալ, ձեռք չերկարենք զրկելու եւ յափշտակելու, մենք՝ որ հրաման ստացանք արդարութեամբ շահուածը սփռելու եւ կա-

րօտեալներուն տալու: Երբ ասոնց Հակառակ եղողներուն եւ օրէնքէն հրաժարածներուն դէմ փակենք մեր ձեռքին կարկառումը, անոնց բարեգործութեան օգտակար եւ պիտանի դռները բանանք, զանոնք մաքուր մաղթանքներով եւ անզբաղ միտքով Աստուծոյ բարձրացնենք, ըստ Դաւիթի խօսքին՝ «Այս սրբավայրին մէջ ձեր ձեռքերը բարձրացուցէք եւ Տէ՛րը օրհնաբանեցէք» (Սղ 134.2), եւ ըստ Պօղոսի՝ «Կ'ուզեմ որ ամենուրեք, երբ այս մարդիկ աղօթքի կանգնին՝ Աստուծոյ բարձրացուցած իրենց ձեռքերը արդար գործերով լեցուն ըլլան, եւ ո՛չ թէ վրէժխնդրութեամբ եւ անիրատութեամբ» (Ա. Տմ 2.8): Որովհետեւ սա բոլոր առաքելութիւններէն աւելի ընտանի եւ Հաճելի է Աստուծոյ. միւս բոլորը իբր Հանդերձանք եւ պատրաստութիւն են Աստուծոյ մօտ մտնելու, իսկ այս՝ Աստուծոյ Հետ դէմ յանդիման խօսակցութիւն է: Որովհետեւ ինչպէս որ երկրագործին բոլոր աշխատանքը պտուղները Հաւաքելու Համար է եւ խոհարարին յոգնութիւնը՝ կերակուրի, այնպէս ալ ամեն բարեգործութիւն, զգաստութիւն եւ պարկեշտութիւն՝ միտքին անզբաղ ճամբայ կտրելու: Որպէս սիրելի բարեկամի մը, Աստուծոյ Հետ աղօթքով խօսակցինք մեր անձին եւ աշխարհի Հոգեւոր եւ մարմնաւոր բոլոր պէտքերը պարզելու եւ Աստուծոյ ամեն բարութեան յաջողութիւն եւ թշնամիի որոգայթներէն փրկութիւն խնդրելու Համար:

67. Առաքելութեան այս մասը միւսներուն նման սահմանաւոր չէ: Զայն առանց սահմանափակումի միշտ գործադրել, ըստ Տիրոջ հրամանին, որ կ'ըսէ՝ «Արթուն եղէք եւ միշտ աղօթեցէք» (Ղկ 21.36), որ մեզի ալ օրինակ դառնալով եւ մեզ յորդորելով, բոլոր մաղթանքները ընդունողը՝ Քրիստոս, յաճախ գիշերը կը լուսցնէր Աստուծոյ աղօթելով (Հմմտ Ղկ 6.12): Եւ առաքեալը անկէ սորված, կ'ըսէ՝

«Անդադար աղօթեցէք: Ամեն բանի համար շնորհակալ եղէք,» (Ա.Թս 5.17–18): Քանզի այսպէս ալ վայել է. նախ, տրուած բարիքներուն Համար զոհանալ եւ ապա զալիքներուն Համար՝ մաղթել: Եւ ոչ միայն անձին, տունին, զաւակներուն եւ ընտանիքին Համար այս ընել, այլեւ՝ բոլոր աշխարհին. իւրաքանչիւրին պէտք եղածը եւ օգտակարը տնօրինել՝ ըստ հոգիի եւ մարմինի. դեռ աւելին, թշնամիներուն եւ ատելիներուն Համար, ըստ խօսքին՝ «Սիրեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարիք ըրէ՛ք ձեզ ատողներուն եւ աղօթեցէ՛ք անոնց համար, որոնք ձեզ կը շարշարեն ու կը հալածեն» (Մտ 5.44):

Սա ամեն ատելութիւն եւ ռիսակալութիւն կը վանէ, որովհետեւ անոնց Համար, որ ճշմարիտ եւ անկեղծ սիրով կ'աղօթէ եւ Տիրոջմէ փրկութիւն կը Հայցէ, ինչպէ՞ս կրնայ ռիսակալ ըլլալ: Ան թէ՛ եւ կրնայ մէկու մը Հետ թշնամութիւն ունենալ, բայց նախ պէտք է Հաշտուի եւ ապա աղօթէ, ըստ Տիրոջ խօսքին. որովհետեւ եթէ նախքան Հաշտութիւնը պատարագը խափանել հրամայեց (Հմմտ Մտ 5.23–24), որ ընդունելի չէր, որչա՛մի առաւել աղօթքը. որով, նախ պէտք է Հաշտուիլ եւ ամեն ատելութիւն ու ռիս լուծել եւ ապա աղօթքի մէջ Տիրոջմէ բարիք խնդրել: Եւ այս ընել, որովհետեւ մենք շատ կարիքներ ունինք: Անբաղդատելի են Աստուծոյ Հանդէպ մեր յանցանքները, եւ մեզի Հանդէպ՝ մեր ընկերներունը, ըստ բիւր. քանքարներու եւ Հարիւր դահեկանի թիւին (Հմմտ Մտ 18.21–35): Ուստի, պէտք է պարտապանին քիչը ներել, որպէսզի մեր ալ շատին թողութիւն գտնենք: Որովհետեւ Տէրը ըսաւ՝ «Եթէ մարդոց ներէք իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի ներէ ձեզի: Իսկ եթէ մարդոց չներէք իրենց յանցանքները, ձեր Հայրն ալ պիտի չներէ ձեր յանցանքները» (Մտ 6.14–15): Արդ, այսպիսի սոսկալի եւ արդար հրամանին պատճառով պէտք է ամբողջ սիրտով ներել պարտա-

կաններուն ու սիրով աղօթել անոնց համար, որովհետեւ ասոր համար Աստուած մեզ մեր մեղքերուն թողութեան վրայ իշխան կարգեց: Ինչ սիրտով որ մենք ներենք մեզի դէմ յանցանք գործողներուն եւ սէր ու գուրթ ցոյց տանք անոնց, նոյն չափով ալ Աստուած մեր յանցանքները կը ներէ եւ իր արարչական սէրը եւ գթութիւնը մեր վրայ կը սփռէ:

68. Առաւօտեան եւ գիշերուան աղօթքի սահմանեալ բոլոր ժամերուն պէտք է Աստուծոյ եկեղեցին երթալ, կամ ուր որ է աղօթքի վայրը, եւ մանաւանդ՝ սոսկալի եւ մեղաքաւիչ պատարագի ատեն: Որովհետեւ եթէ քու Տէրդ իր անբացատրելի սիրոյն պատճառաւ անհուն բարձրութենէն խոնարհեցաւ եւ քու մեղքերուդ քառութեան համար կը պատարագուի՝ Հօր եւ քու միջեւ հաշտութեան միջնորդ եղած (Հմմտ Ա. Տմ 2.5),— որուն համար նաեւ ըսաւ՝ «Աս իմ մարմինս է, որ ձեզի համար տրուած է» (Ղկ 22.19),— որչա՛ն պակասի պէտք է, որ դուն երթաս եւ անոր առջեւ խոնարհիս, գոհանաս եւ շնորհակալութիւն յայտնես անբաւ բարերարութեան համար. ան, որ մեղապարտներու եւ անարժաններու եւ բիւրապատիկ յանցաւորութեամբ իրեն դէմ ապստամբներու փոխարէն՝ իր անձը նուէր եւ հաշտութեան պատարագ կու տայ Հօրը, մեզի պարտապաններու համար: Եւ որովհետեւ մենք միշտ կը մեղանչենք մտածումով, խօսքով եւ գործով, ասոր համար ինք ամեն օր կը պատարագուի, որպէսզի օր առ օր գործուած մեղքերը քաւէ: Եւ եթէ ամեն օր եկեղեցի երթանք սոսկալի խորհուրդին մատուցումին ժամանակ եւ գոհանանք ու շնորհակալութիւն յայտնենք իր մարդասիրութեան համար եւ ճանչնանք իր երախտիքը եւ մեր մաղթանքներն ու արցունքները խառնենք անոր գթութեան եւ բիւրապատիկ երախտագործութեան՝ շնորհք կը ստանանք եւ մեղքերու թո-

ղութիւն կ'ընդունինք: Իսկ եթէ ծուլանանք, արհամարհենք եւ եկեղեցի չերթանք՝ սուրբ խորհուրդի կատարումի ժամուն եւ չաղօթենք ու չգոհանանք անբաւ բարերարութեան համար, եւ մեղքերու թողութիւն չիսնդրենք, այլ մարմնական հոգերն ու սնտոի զբաղումները եւ մարմինի ծուլութիւնն ու հեշտութիւնը նախապատիւ դասենք՝ քան աշխարհը պահող եւ փրկագործող խորհուրդը, ո՛չ միայն անկէ չենք օգտուիր, այլ աւելին, անմեղ բնութիւնը կը բարկացնենք մեր արհամարհանքներուն եւ անտեսումներուն համար: Որովհետեւ եթէ երկրաւոր թագաւոր մը քաղաքի մը բարեգործութեան եւ քաղաքացիներուն նուէրներ բաշխելու համար քաղաք մը դայ, իսկ անոնք ողջոյնի, երկրպագութեան, ծառայութեան եւ շնորհակալութեան համար իր մօտ չգան, այլ արհամարհելով անփոյթ մնան՝ իւրաքանչիւրը իր գործով եւ աշխատանքով զբաղելով, ո՛չ միայն բարիքներու նուէրները չի բաշխեր անոնց, այլ շատ կը բարկանայ եւ կը պատժէ. որքա՛ն աւելի ուրեմն երբ երկնաւոր Թագաւորը դայ անմահ կեանքի եւ պարգեւներու անապակիան շնորհները բաշխելու՝ անտեսենք, ասպականացուները եւ ցնդելիները անապակիանէ նախամեծար դասելով, եւ ան որ միշտ բարեգութ է եւ ողորմած, մեր վրայ աւելի բարկութեան եւ ցասումի կը մղենք, քան թէ ողորմութեան:

69. Ո՛չ միայն աղօթել պէտք է սուրբ պատարագի ընթացքին, այլ նաեւ հաղորդուել փրկական խորհուրդով, որովհետեւ հաղորդուողներուն մեղքերու թողութիւն տուաւ եւ ոչ թէ չհաղորդուողներուն: Որովհետեւ նախ ըսաւ՝ «Աս մարմինս է», եւ ասպա աւելցուց՝ «որ ձեզի համար տրուած է» (Ղկ 22.19): Դարձեալ ըսաւ՝ «Ով որ մարմինէս կ'ուտէ եւ արիւնէս կը խմէ՝ յաիտենական կեանք կ'ունենայ» (ՅՃ 6.54): Եւ դարձեալ՝ «Ով որ մարմինէս կ'ուտէ եւ

արիւնէս կը խմէ՝ մէջս կը բնակի եւ ես՝ անոր մէջ» (ՅՃ 6.56):  
 Կը տեսնե՞ս ահա, որ փրկութիւնը ճաշակողներուն համար է եւ ո՛չ թէ չհաղորդուողներուն: Բայց ո՛չ թէ թեթեւօրէն հաղորդուիլ կը հրամայէ, այլ՝ սրբութեամբ: Որովհետեւ առաքեալը կ'ըսէ՝ «Ամեն մարդ նախ ինքզինքը թող քննէ եւ ապա միայն այս հացէն ուտէ եւ բաժակէն խմէ, որովհետեւ ով որ անարժանութեամբ կ'ուտէ եւ կը խմէ՝ այդ ուտելովն ու խմելովը ինքզինքն դատապարտութեան կ'ենթարկէ: Այս է ահա պատճառը, որ ձեր մէջ բազմաթիւ հիւանդներ ու ցաւագարներ կան եւ բազմաթիւ են նաեւ անոնք՝ որ նոյն պատճառով մեռան» (Ա. Կր 11.28–30). այսինքն՝ անարժան հաղորդութեան պատճառով:

70. Թերեւս մէկը արդարեւ ըսէ՝ սկիզբէն չըսի՞ր, թէ ինքն է քաւիչը ճաշակողներու յանցանքներուն, ինչպէս որ ըսաւ՝ «այս է իմ մարմինս որ ձեզի համար կը բաշխուի իբրեւ թողութիւն մեղքերու»: Իսկ այժմ առաքեալը կը մէջբերես, որ կ'ըսէ՝ «ով որ անարժանութեամբ ուտէ եւ խմէ, իր անձին դատապարտուող կ'ըստէ եւ կը խմէ», եւ ահա տարակուսանք մը. որովհետեւ իրարու հակառակ կը խօսին:

Սակայն լսէ՛ դու. ո՛չ թէ իրարու հակառակ կը խօսին, այլ՝ խիստ շատ համաձայն. եւ այսպէ՛ս է: Մարմինի եւ արիւնի վիճակուած հոգանիւթ մարդը ինչպէ՞ս իր սրբութեամբ կ'արժանանայ Աստուծոյ միանալու, եթէ ոչ՝ անոր արիւնին եւ մարմինին ճաշակումով: Որովհետեւ եթէ սերովբէն չէր համարձակեր մօտենալ անոր նմանակին, այլ ունելիի կը կարօտէր (Հմմտ Ես 6.6–7), մարդը, որ սերովբէի նմանելէ շատ հեռու է, ինչպէ՞ս կրնայ ճշմարտութեան մերձենալ: Սակայն բարերար եւ մարդասէր Աստուած, մարդոց հանդէպ ունեցած անչափ սիրոյն համաձայն, զանոնք իրեն միացնել կամենա-

լով, խոստովանութիւնն ու ապաշխարութիւնը սրբութեան միջոց տուաւ անոնց, որպէսզի ամեն ոք ճշմարիտ սիրտով, ըստ իր միտքի գիտակցութեան, իր սիրտին շտեմարանը մտնելով, մանրամասնօրէն փնտռէ հոգիի, մարմինի, միտքի, խորհուրդներու, խօսքերու եւ գործերու բոլոր սխալները, եւ խոստովանի առանց ամօքնալու եւ ծածկելու, իբրեւ թշնամի ամբաստանելով մեղքերը, եւ իր կարողութեան չափով ապաշխարութեան սահման ճշդէ եւ ապաշխարէ ու սրբուի:

71. Սակայն պէտք է գիտնալ, թէ ո՛չ որ կրնայ յիշել կամ խոստովանիլ իր բոլոր մեղքերը՝ հասնելով մինչեւ չնչինները, թէպէտ եւ հազար անգամ ջանայ: Ընդունինք, թէ գործերու մեղքերը կարենայ յիշել եւ խոստովանիլ. իսկ՝ մտածումներունը եւ խօսքերունը ինչպէ՞ս: Եւ եթէ յիմար եւ մորոս ըսելը գեհնի կը դատապարտէ եւ դատարկաբանութիւնը հաշուետուութեան պահանջի կը տանի (Հմմտ Մտ 5.22), ո՞վ կրնայ այս բոլորը մէկ առ մէկ յիշել եւ խոստովանիլ: Արդ, անձ մը ինչ որ մտածեց եւ խոստովանեցաւ, ապաշխարութեամբ սրբեց. եւ ինչ որ չկրցաւ յիշել, զայն Քրիստոսի մարմինը եւ արիւնը կը սրբեն: Եւ կը ճշմարտուի երկուքին ալ, – Տիրոջ եւ առաքեալին, – խօսքը: Որովհետեւ ով որ առանց խոստովանութեան եւ ապաշխարութեան կ'ըստէ եւ կ'ըմպէ, կը դատապարտուի՝ ըստ առաքեալին (Հմմտ Ա. Կր 11.29), եւ ով որ խոստովանութեամբ՝ ըստ Քրիստոսի: Այս կը յայտնէ նաեւ Որոտման Որդին, երբ կ'ըսէ՝ «Եթէ ըսենք՝ “Մեղի շունիմք”, մենք մեզ կը խաբենք եւ մեր մէջ նշմարտութիւն չկայ: Իսկ եթէ խոստովանիմք մեր մեղքերը, վստահ եղե՛ք թէ Աստուած, որ արդար է, պիտի ներէ մեր մեղքերը եւ մեզ պիտի սրբէ մեր բոլոր անիրաւութիւններէն» (Ա. ՅՃ 1.8–9): Կը թուի, թէ ասոր կ'ակնարկէ, որովհետեւ թէպէտ եւ մէկը խոստո-

վանի, բայց կատարեալ թողութիւնը կը պարգեւէ Քրիստոսի մեղսաքաւիչ մարմինին եւ արիւնին հաղորդութիւնը: Այս կը սորվինք նաեւ մարգարէին եւ սերովբէին օրինակէն, որովհետեւ մարգարէն խոստովանեցաւ, թէ պիղծ շրթունք ունի եւ պղծաշուրթն ժողովուրդի մէջ կը բնակի (Հմմտ ես 6.5): Ապա, սերովբէն ունելիով սեղանին վրայ գտնուող կրակէն առաւ եւ բերաւ մօտեցուց մարգարէին բերանին եւ ըսաւ՝ «Ահա կրակը դպաս շրթներուդ. հիմա յանցանիդ վերցուեցաւ եւ մեղքերդ ներուեցան քեզի» (եւ 6.7): Ահա կը տեսնենք, թէպէտ մարգարէն բոլոր մարդոցմէ աւելի սուրբ էր, այնքան որ բնակարան էր Հոգիին, եւ զօրութիւններու Տէրը տեսաւ փառքի աթոռին վրայ, բայց Քրիստոսի մարմինին օրինակին կարիքը զգաց մեղքերէ մաքրուելու համար:

72. Մեր ձեռքերը մաքուր մաղթանքներով Աստուծոյ բարձրացնելէ ետք, զանոնք ուրիշ բարեգործութիւններով ալ զարդարենք՝ տնանկներուն տալով եւ աղքատներուն ձեռք երկարելով. որովհետեւ այս նուազ չի՛ նպաստեր մեղքերու քաւութեան, ըստ որում՝ «հրաժարէ՛ մեղքերէդ՝ արդարութիւն ընելով, ձգէ՛ անօրէնութիւններդ՝ աղքատներուն ողորմելով, եւ այդպիսով, թե՛րես բարօրութիւնդ աւելի երկարի» (Դն 4.27): Զեռքով աշխատիլ եւ տալ կարօտեայներուն, ըստ Պօղոս առաքեալի խրատին, որ կ'ըսէ՝ «Չձանձրանանք բարիք գործելէ, որովհետեւ եթէ յարատեւենք՝ անպայման որ արդիւնք պիտի փառենք իր առեմիսն» (Գղ 6.9): Եւ բոլոր օգնութեան կարօտեայներուն, – վտանգուածներուն, հիւանդներուն, տկարներուն, ծերերուն, – առանց ծուլութեան սպասաւորել, իւրաքանչիւրին կարիքին համաձայն:

73. Նաեւ, ոտքերը պէտք չէ՛ անջատել ընտանի անդամներու միա-

բանութենէն եւ առանց զարդարանքի անխնամ ձգել, այլ՝ իրենց բնութեան յատուկ ներգործութիւններու գործունէութեամբ պսակել զանոնք: Թէպէտ ոտքերը զգայարաններէն չեն, սակայն անոնցմէ ոչինչ նուազ են՝ իշխանական միտքին առաջնորդութեամբ, եւ իւրաքանչիւր բանի մէջ բարի եւ չար ընդդիմադիր գործերու շարժում ունին: Այս պատճառով, պէտք է խոհականին վերակացութեամբ զօրաւոր եւ անքակտելի կապանքով զանոնք արգիլել անօրէնութեան չար ընթացքէն եւ գնացքէն: Զանոնք չչարժել գողերու եւ աւագակներու միանայու եւ հետեւելու, ըստ իմաստունին խրատին, որ կ'ըսէ՝ «Ո՛րդեակա, այդպիսի մարդոց հետ ճամբայ մի՛ ելլեր, հեռացի՛ր անոնց շափղներէն. որովհետեւ անոնք կը փութան շարիք գործելու, եւ չեն վարանիր արիւն թափելու» (Առ 1.15–16): Ոտքերը դէպի պոռնկութեան կամ արբեցութեան տուն չչարժել, որովհետեւ անոնց երկուքին վախճանը դժոխքին յատակը կը նայի (Հմմտ Առ 14.12). ո՛չ՝ խաղերու եւ լիտի տեսարաններու թատրոններ, որովհետեւ շատ չարիքներու պատճառ են. ո՛չ՝ դիւթիչներու եւ կախարդներու, որովհետեւ Աստուծմէ կը հեռացնեն. ո՛չ՝ չար խորհրդակիցներու եւ գործակիցներու, մէկու մը չարիք խորհելու եւ կամ գործելու համար:

Եւ միանգամայն զանոնք հեռացնել ամեն բանէ, որ չարին ներգործութեամբ ոտքին ընթացքով Աստուծոյ հրամաններէն ապստամբութեան կը դառնայ՝ ենթակային կամ ուրիշներուն: Եւ ասոնցմէ արգիլելով, արդարութեան ուղղել, ըստ առակողին՝ «Ես արդարութեան ճամբէն կը քայլեմ, իրատունի շափղէն կ'ընթանամ միշտ» (Առ 8.20): Այսինքն, միշտ Աստուծոյ եկեղեցին երթալ՝ Աստուած փառաբանելու: Երթալ նաեւ խոստովանահայրերու եւ հոգեւոր խրատներ բաշխողներու՝ խոստովանիլ մեղքերը եւ ապաշխարութեան ու բարեգործութեան խրատ ստանալ: Երթալ նաեւ

հիւանդներ այցելելու եւ բանտին մէջ եղողներու, եւ ըստ կարողութեան օգնել: Ամեն ինչ որ Աստուծոյ պատուիրաններուն համաձայն է՝ անոնց երթալ եւ հրաժարելիներէն հեռանալ. այնքան, որ կարելի ըլլայ Դաւիթի հետ ըսել՝ «Պատուէրներուդ պահանջած ձեռով կ'ընթանամ անա» (Սղ 119.32). նաեւ՝ «Ճշմարտութեան նամբան ընտրեցի» (Սղ 119.30). եւ լսել Տիրոջմէ՝ «Դոմ որ ինձի հետեւեցա՛մ պիտի բազմի՛ս տասներկու գահերու վրայ» (Մտ 19.28):

74. Արդ, ահաւասիկ, Աստուծոյ շնորհքով հոգիի մասերուն, միտքի շարժումներուն եւ մարմինի զգայութիւններուն մեղքի բոլոր մուտքերը փակուեցան, եւ առաքինութեան ու սրբութիւններու բոլոր դոները բացուեցան: Որովհետեւ ա՛յս իսկ է ամբողջ մարդը՝ հոգին եւ իր զօրութիւնները, միտքը եւ իր շարժումները, մարմինը եւ իր զգայութիւնները, որ պէտք է վերագրեալներուն համաձայն պահել ամենայն զգուշութեամբ: Հրաժարեցուածներուն հետ ջրնտեղանալ եւ ոչ ալ համարձակելիներէն հեռանալ. որպէսզի չըլլայ, թէ բարի եւ ընտանի կայքերէն սողոսկելով վար քաշուի Աստուծոյ մարդը եւ արատի բիծ խառնուի իր անարատ մաքրութեան՝ եղծանելով նախատիպ պատկերին լուսանկար գեղեցկութիւնը: Որովհետեւ վերագրեալներով ան ամեն բանով առաջին արարչաստեղծ կերպարանքով պիտի զարդարուի. լաւագոյնով բոլորովին հարուստ եւ հակառակով աղքատ: Որովհետեւ կ'ըսէ՝ «Մարդ նոյնիսկ եթէ բոլոր Օրէնքը գործադրէ, բայց մէկ պատուիրանի կատարումին մէջ թերանայ, ամբողջ Օրէնքին դիմաց յանցաւոր կ'ըլլայ» (Յկ 2.10): Ինչպէս օրինակ՝ եթէ մէկը մարմինին բոլոր անդամներով կազմ եւ պատրաստ ըլլայ եւ մէկով տկար, — աչքով կամ ձեռքով եւ կամ որեւէ անդամով, — այնպիսին ամեն ինչով կատարեալներուն հետ չէ, այլ թերի կը կոչուի: Այս խորհուրդով եւ օրինաւոր հրամանով,

Աստուծոյ ընծայուած պատարագը անարատ մատուցել կը հրամայէր, որովհետեւ կաղը կամ միականին կամ քիթը կտրուածը կամ կզակը կտրուածը եւ ուրիշ որեւէ թերութիւն ունեցող կենդանի ընդունելի չէր պատարագի մէջ (հմտտ Ղկ 22.20—22): Եւ Պօղոս առաքեալ բոլոր օրինակները ապագայ բարիքներուն ստուերը կը համարէր (հմտտ Եբր 10.1): Ուստի, ուրիշներու կարգին, այս ալ ստուեր համարելի է, որովհետեւ այն մարմնաւոր պատարագը հոգեւորի ապացոյց էր. եւ ինչպէս որ հոն մարմինով կատարեալները ընդունելի էին, հոս՝ հոգեւորապէս ամբողջացածները եւ անթերիները:

75. Ուրիշ զօրաւոր եւ ազդու յարացոյց մըն ալ ունինք՝ նիւթականէն աննիւթին եւ ախտաւորէն անախտին բաղդատութեան համար: Մաքրեցէք ձեր միտքն ու խորհուրդը՝ ամեն մարմնաւոր եւ ախտաւոր մտածում ի բաց վանելով եւ ձեր հայեացքը անարատ խորհուրդին սեւեռեցէք: Որովհետեւ փեսան Քրիստոս է եւ կը կոչուի փեսայ եկեղեցիի, վերջինը՝ հարս, անախտաբար միացած Բանին, ինչպէս փեսային բարեկամը, Յովհաննէս, կ'ըսէ՝ «Ով որ հաւսը ունի՝ ան է փեսան» (ՅՀ 3.29): Իսկ հարսնածուն, Պօղոս, կ'ըսէ՝ «Կ'ուզեմ որ միայն Քրիստոսը սիրեմ, ինչպէս մաքուր կոյս մը որ իր սէրը կը վերապահէ անոր՝ որ իր ամուսինը պիտի ըլլայ» (Բ. Կր 11.2): Իսկ եկեղեցիին Փեսան, իր եկեղեցի հարսին հետ ըլլալը ասով կը յայտնէ՝ «Կրնա՞ք հարսանիքի հրաւիրեալներուն ըսել որ ծով պահեն, երբ տակալին փեսան իրենց հետ է» (Մր 2.19): Կը թողում երգ երգոցի խօսքը, որ սկիզբէն մինչեւ վերջ նոյնը կը յեղյեղէ՝ մարմնաւորներով հոգեւորները իմացնելով. ասով ուրիշ բան չյայտնելով, քան Քրիստոսի անչափ սիրոյն առաւելութիւնը իր հաւատացեալներուն հանդէպ: Եւ երկրաւորներուն մէջ սիրոյ ուրիշ ի՞նչ տեսակ կար՝ քան փեսային եւ հարսին սէրը, որ կարողանար Քրիստոսի եկեղեցիին

Հանդէպ ունեցած սէրը յայտնել. որովհետեւ այս ալ անոր կը նմանի:

76. Արդ, ինչպէս որ փեսան իր Հարսին մարմինի անդամներուն վրայ թերութիւն մը չ'ուզեր, այլ ամեն ինչով կատարեալ ըլլալը, այսպէս ալ Քրիստոս իր Հարսնացածէն կ'ուզէ մաքուր անձը սրբութեամբ կատարելապէս իրեն նուիրել, որպէսզի հոգիին մասերէն կամ մարմինի զգայութիւններէն ո՛չ մէկ բան նուազի իրենց բնական ներգործութենէն: Եւ ինչպէս որ փեսան, որքան ալ Հարսը մարմինի անդամներով անթերի ըլլայ, կ'ուզէ իւրաքանչիւր անդամի յարմար զանազան զարդեր հագցնել իր Հարսին՝ զգեստէ, ոսկիէ, մարգարիտէ եւ պատուական քարերէ, որպէսզի իրեն հաճելի ըլլալու համար աւելի գեղեցկանայ, այսպէս ալ Քրիստոս կ'ուզէ առաքիչնի հոգին ո՛չ միայն չարիքէ ազատ պահել, ըստ իւրաքանչիւր մասի եւ զգայութեան, — որովհետեւ ան անդամներու անարատութիւնն է՝ երբ մեղքերու խառնուած չէ, բայց ասով չի՛ դոհանար, — այլ կ'ուզէ իւրաքանչիւրը տեսակ-տեսակ ոսկիանման, մարգարտատիպ եւ գոհարակերպ առաքիչութեամբ՝ իւրաքանչիւրին բնութեան յարմար ներգործութիւններով զարդարել: Ասոր համար ամեն մարդ պէտք է փութայ, որպէսզի պատշաճ առաքիչութիւններէ ո՛չ մէկ բանով պակաս մնայ, որուն համաձայն վերի խօսքերը ցոյց տուին, ըստ հոգիին եւ իր մասերուն, միտքին եւ իր շարժումներուն, մարմինին եւ իր զգայութիւններուն. որոնց միջոցաւ երկնաւոր Փեսային աչքին հաճելի պիտի երեւի եւ վառած լապտերով անոր հետ պիտի մտնէ երկնաւոր Հարսնարանին առաջաստը (Հմմտ Մտ 25.10), անխտ միաւորութեամբ վայելելու անզուգական փառքին մէջ, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսով, որ յաւիտեանս օրհնեալ է. ամէն:

## ՔՆՆԱԿԱՆ ՄՕՏԵՑՈՒՄ ԽՐԱՏ-ԻՆ

Ա. Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻԻ ՎԱՐՔԱԳՐՈՒԹԻԻՆԸ

ա. ՎԱՐՔ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻԻ  
(Սուրբերու կեանքը, Պէյրութ, 1970)

«Հրեշտակ՝ մարմնի մէջ. երկնային զուարթուն՝ կեանքի թէ՛ գործի մէջ, Ս. Գրիգոր Նարեկացի որդին էր երանելի Խոսրով Անձեւացեաց եպիսկոպոսին, Վասպուրականի Անձեւացեաց գաւառէն:

Ծնած է 951 թուականին, Աշոտ Ողորմած Բագրատունի թագաւորին, Վասպուրականի Աբուսահլ Արծրունի թագաւորին եւ Անանիա կաթողիկոսի օրով:

Գեղեցիկ շառաւիղ բարեպտուղ արմատէն, Գրիգոր նախ մեծցաւ իր աւագ եղբօրը՝ Յովհաննէսի, եւ կրտսերին՝ Սահակի հետ, իր բարեպաշտ ծնողքին տունը: Ապա՝ Անանիա Նարեկացիի մօտ, որ վանահայրն էր Նարեկ վանքին, Ռշտունեաց գաւառին մէջ, Վանայ ծովին առընթեր: Անանիան Գրիգորի մօրը հօրեղբայրն էր: Ան Գրիգորը եւ Յովհաննէսը քովը առնելով, զանոնք կրթեց աստուածային ուսմանց եւ առաքիչութեան մէջ: Երկուքն ալ յառաջադէմ էին եւ սրբակեաց:

Երբ Անանիա վախճանեցաւ, ուխտին առաջնորդ ընտրուեցաւ Գրիգորի եղբայրը Յովհաննէս վանական, իսկ Գրիգոր քահանայ ձեռնադրուելով, եղաւ գործակից եղբօրը եւ վարժապետ միայնակեացներու:

իր մեծագույն առաքինությունը խոնարհությունն էր, որով իր անձը միշտ ամենն շնորհակալ էր համարելը: Այս պատճառով ալ եղաւ ընդունարան Ս. Հոգիին եւ վառարան աստուածային սիրոյ, որ հետզհետէ իր մէջ աւելի բորբոքելով, իր անձը լման կերպով նուիրեց աստուածային բաներու հայեցողական տեսութեան, ճգնաւորական վարքով եւ խստամբերութեամբ:

Հրաշալի էր աստուածաբանական վարդապետութեան յաւիտենախօս քարոզութեան մէջ: Անոր սրբութեան եւ իմաստութեան համբաւը տարածուած էր բոլոր թագաւորներուն եւ իշխաններուն մօտ:

Երբ տակաւին նորնծայ քահանայ էր, 26 տարեկան, Գուրգէն Արծրունի թագաւորը՝ որդին Աբուսահլի եւ եղբայրը Աշոտի եւ Սենեքերիմի, անոր յատուկ պատուէր մը դրկեց, գրելու Սողոմոնի “Երգ Երգոցի մեկնութիւնը”: Եւ Աստուծոյ մարդը, առանց դիմադրածելու արքունի հրամանին, եւ իբրեւ Աստուծոյ կողմէ հրամայուած, յանձն առաւ խնդիրը, եւ խնդրանքը կատարեց գործակցութեամբ Ս. Հոգիին, որքան համառօտ, նոյնքան ալ բազմիմաստ մեկնութեամբ: Այնքան պարզ եւ վայելչօրէն յօրինած է այս գիրքը, որ կարելի է ըսել թէ մինչեւ հիմա չէ եղած անոր չափ յաջողը: Այս գործը կատարեց 977 թուականին:

Նոյն ժամանակ Վասպուրական արքայութեան հրաշքատ կաթողիկոսը, որուն տեղ նստաւ նախ Ստեփանոս, ապա Խաչիկ անուն մէկը, վասնզի եպիսկոպոսներուն եւ վարդապետներուն միջեւ հակառակութիւն ինկած էր քաղկեդոնական խնդիրներու պատճառով:

Ս. Գրիգոր, գիտնալով թէ պառակտումը դատապարտելի է եւ վնասակար եկեղեցիին, եւ պառակտեալները նոյն ողջմիտ վարդապետութիւնը կը քարոզեն, յորդորեց զանոնք որ իրար սիրեն եւ

միաբանին: Իսկ անոնք որ կը յամառէին բանակոխներուն մէջ, կը խրատէր, կը յանդիմանէր, եւ հուսկ անուղղաները կը վտարէր:

Անգամ մը որ համոզուէր արժանաւոր ուղղութեան մը կամ բեկարգութեան մը, կը ջանար անպայման ի գլուխ հանել զանոնք:

Եւ քանի որ, կ'ըսեն Յայսմաւուրքները, մեծապէս բժախնդի էր եկեղեցւոյ միասնութեան, եւ կ'ուզէր վերստին հաստատել եւ նորոգել ծոյլ եւ մարմնասէր առաջնորդներուն կողմէ անխնամ թողուած եւ գեղձուած եկեղեցական կարգերը, այս պատճառով ալ անպարկեշտ եւ բիրտ մարդիկ զայն կը կոչէին ծայթ, այսինքն՝ թերահաւատ: Այս նախատական անունը կը տրուէր հոռոմացածներու կամ հաւատափոխներու: Դժբախտաբար այս կոչումով կը թշնամանուէին մարդիկ, որոնք հետամուտ էին ճշմարտութեան եւ ազգին շահին:

Ձեռագիր օրինակներու մէջ կը տեսնենք որ Ս. Գրիգորի հայրն ալ՝ երանելի Խոսրով, կ'աւաղէ այս երեւոյթներուն ի տես:

Երբ չարախօսութիւնները բազմացան Ս. Գրիգորի մասին, այն ատեն եպիսկոպոսները եւ վարդապետները, իշխաններով եւ տանուտէրներով հաւաքուեցան, որպէս զի միասին խորհրդակցին անոր մասին: Եւ պատուիրակ մը դրկելով զայն կանչել տուին, եւ ատենանին առջեւ դատեցին, որպէսզի եթէ յանցաւոր է յանդիմանեն կամ արքայրեն:

Երբ եկան զինք տանելու, Ս. Գրիգոր գուարթադէմ անոնց առջեւ ելաւ եւ անայլայլ դէմքով դիմաւորեց պատուիրակները: Եւ գիտնալով անոնց դիտաւորութիւնը, եւ ուզելով իմաստութեամբ յանդիմանել եկողները, ըսաւ անոնց. «Նախ հաց ուտենք, յետոյ կ'երթանք»:

Եւ այն որ աղանձի հեղութիւն ունէր եւ ի սպառ հրաժարած էր խորտիկներէն, տապկել տուաւ աղանձներ եւ դրաւ եկողներուն

առջև որ ուտեն: Եւ օրն էր Ուրբաթ: Իսկ եկողները աւելի եւս գայ-  
թակղելով՝ ըսին.

- Ներողութիւն վարդապետ, այսօր Ուրբաթ չէ՞:
- Իսկ ան, որպէս անտեղեակ, ըսաւ.
- Ներեցէք, եղբայրներ, մոռցեր էի թէ այսօր ի՛նչ օր էր:
- Եւ ըսաւ տապկուած աղաւնիներուն.
- Ելէք գացէք ձեր տեղերը, ձեր երամին մէջ, որովհետեւ այսօր  
պահք է:

Եւ իսկոյն աղաւնիները թեւեր առնելով՝ թռան ամէնուն առջև:

Եւ եկողները տեսնելով այս հրաշքը, ահով եւ ապուշութեամբ  
լեցուեցան եւ ոտքը իյնալով՝ թողութիւն խնդրեցին անկէ: Եւ ա՛յ  
այնուհետեւ չհամարձակեցան հետապնդել սուրբ մարդը, եւ վե-  
րադաւանալով զիրենք առաքողներուն՝ պատմեցին կատարուած  
հրաշքը, եւ հրաժարեցան իրենց խորհուրդներէն: Եւ իր նշանագոր-  
ծութեանը համար՝ Ս. Գրիգորը անուանեցին երկրորդ Աքանջե-  
լագործ, որ ոմանք նոյնիսկ երկրորդ Լուսաւորիչ:

Եւ նա այսպիսի հրաշագործութիւններով, ճշմարտասէր մտքո-  
վը, խստակօրէն վարքովը եւ աստուածաբան վարդապետութեամբը  
փայլեցաւ աշխարհի վրայ որպէս արեգակ, եւ ըստ աւանդութեան  
մեր ժողովուրդին,- ինչպէս որ ինքը սուրբն ալ լուեկայն կ'ակնարկէ  
իր աղօթքներուն մէջ,- արժանի եղաւ տեսնելու մանկացած Աստուա-  
ծը՝ բազմած ամենօրհնեալ Աստուածածնի գիրկը, Նարեկի վանքին  
դիմացը, Աղթամար ծովուն Առտէր կղզիին վրայ: Եւ զարմանալի չի  
թուիր այս, քանի որ սուրբին սրտի հանապազորդեան խորհուրդնե-  
րը կեղերոնացած էին մարմնացեալ բանին տնօրէնութեան խոր-  
հուրդին մէջ, եւ լեցուած էր Փրկչին, ինչպէս նաեւ սուրբ Աստուա-  
ծամօր սիրով, ինչպէս կը տեսնուի յայտյանդիմանութեամբ ճա-

ւերուն, գանձերուն եւ տաղերուն մէջ այս հոգեչնորհ հոետորին:

Երանելիին գլուխ գործոցը, իր բազմապատիկ հոգեւոր գրու-  
թիւններուն մէջ, ճանչցուած է իր աննման աղօթամատեանը, որ  
Նարեկ կոչուած է անոր վանքին անունէն: Աքանջելի եւ ինքնատիպ  
գործ մը՝ արժանի հանգէտ աղօթողի եւ աստուածիմաստ բա-  
նահիւսի, գոր շարադրեց 1002 թուին, իր կրօնակիցներու խնդրան-  
քով եւ գործակցութեամբ իր եղբօրը Յովհանէսի:

Ասկէ բաւական առաջ յօրինած էր պատմութիւնը Ապարանից  
կոչուած Ս. Խաչին՝ որ Յունաստանէն բերուած էր Հայաստան 983  
թուին, Մոկաց Ստեփանոս եպիսկոպոսին խնդրանքով: Այս գործին  
մէջ գրուած է ներբողեան մը՝ այբուբենական կարգով եւ բարձր ու  
վսեմ ոճով ուղղուած Ս. Աստուածածնի:

Նոյնպէս գրեց ընտիր ներբողական ճառեր սուրբ առաքեալնե-  
րու եւ Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետի մասին: Նոյնպէս՝ քարոզա-  
կան գանձեր (շարականներ) տէրունական տօներու եւ սուրբ մար-  
տիրոսներու մասին, հանդերձ մեղեդիներով եւ տաղերով, որովհե-  
տեւ ինքը կատարեալ քերթող էր, եւ հոետորներու հոետոր:

Ունի նոյնպէս բազմաթիւ այլ գործեր, որոնք դժբախտաբար  
կորսուած են:

Աղօթագիրքը աւարտելէն յետոյ նոյն տարին վախճանեցաւ Ս.  
Գրիգորի անդրանիկ եղբայրը՝ Յովհաննէս վանականը, եւ անկէ ոչ  
շատ ուշ՝ ինքը երանելին Գրիգոր եւս թողուց այս աշխարհը եւ երկ-  
րաւոր հրեշտակը միախառնուեցաւ երկնաւոր հրեշտակներու  
գունդին, 1003 թուին, 51 կամ 52 տարեկանին, Տէր Սարգիսի կա-  
թողիկոսութեան օրով: Մարմինը դրուեցաւ Նարեկի վանքին մէջ:

Տարիներ յետոյ, երբ Վասպուրականի Սենեքերիմ թագաւորը  
Սեբաստիա գնաց, իրեն հետ տանելով Վարագի Ս. Նշանը, իրեն  
հետ գացին նաեւ բազմաթիւ միաբաններ Նարեկի վանքէն: Հոն ար-

քան նոր վանք մը շինեց անոնց համար՝ նոյնպէս Նարեկ անուանով, Ակնի մօտ, եւ սուրբին նշխարները հոն փոխադրեցին, ուր մինչեւ այսօր կը մնայ որպէս ուխտատեղի, եւ բազմաթիւ հրաշքնր կը գործուին հոն:

Յայսմաւուրքը հետեւեալ հրաշքը կը պատմէ Գրիգորի մասին.

Քիւրտ մը կը տիրէր Նարեկ գիւղին: Այս քիւրտը աղքատ գեղղկուհիի մը հաւ մը տուաւ՝ որ իրեն համար թուխսի դնէ: Կինը թուխս գրաւ հաւը եւ ձագեր ելան: Երեք օրէ ի վեր հաւը իր ձագերովը կը շրջէր: Եւ օր մը անձրեւի վախէն, հաւը գնաց եւ իր ձագերով միասին մտաւ երկանաքարի մը տակ: Եւ կնոջ չար բախտէն՝ երկանաքարը ինկաւ հաւին եւ ձագերուն վրայ եւ զանոնք ճգմեց: Այն ատեն կինը ահաբեկ եղաւ քիւրտի վախէն: Եւ Աստուծոյ յուսալով սկսաւ աղօթել, որպէսզի, – ինչպէս որ սուրբ Գրիգոր աղանձինները ողջնցուցած էր, իր հաւը եւ ձագերը կենդանացնէ: Եւ հաւատքով տարաւ դիակները եւ դրաւ սուրբ Գրիգորի գերեզմանին վրայ: Եւ ինքը Ս. Գրիգորին աղօթելով իր գործին գնաց: Հազիւ թէ ժամ մը անցած էր, ահա տեսաւ որ հաւը գրգալով կուգար ձագուկներով միասին: Սաստիկ ուրախացած, սկսաւ մեծածայն տարփողել սուրբին հրաշագործութիւնը:

Արդ, եթէ Ս. Գրիգոր անբաններուն օգնութեան հասաւ, որպէսզի օգնութեան հասնի բանաւորներու հոգեւոր եւ մարմնաւոր կարիքներուն, որքան եւս առաւել պիտի օգնէ անոնց, որոնք իր բարեխօսութեան կը դիմեն՝ իրենց հոգիի եւ մարմինի առողջութեան համար:

Անոր աղօթքներու ընթերցումը շատերուն պարգեւած է հոգեկան եւ մարմնական ախտերու փրկութիւն» (էջ 591–595):

բ. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ (Վարդապետ)

(Թորգոմ պատրիարք Գուշակեան, Սուրբ եւ տօնի Հայաստանեայց եկեղեցոյ, Անթիլիաս, 1981)

«Գերազանցապէս հրեշտակային սուրբը, որ դարերէ ի վեր կ'ապրի ժողովուրդին հոգւոյն եւ հաւատքին մէջ, միեւնոյն ատեն լինելով Հայ Եկեղեցոյ Հոգեւոր գրականութեան պարծանաց պսակը: Եթէ ոչինչ գիտնային իր մաքուր եւ առաքինի կեանքի մանրամասնութիւններէն, միայն իր աղօթամատեանը, որ մեղքին զգացումէն եւ քաւութեան տենչէն ճենճերող հոգիին ողբերգութիւնն է, պիտի կրնար մեր խղճմտանքին առջեւ ներկայացնել զինքը մեծագոյն սուրբի իր լուսապսակովը: Որդին Խոսրով եպիսկոպոսի Անձեւացեաց, ծնաւ անիկա Ռչտունեաց զաւառի Նարեկ գիւղին մէջ, եւ կանուխ աշակերտեցաւ իր մայրենի ազգականներէն Անանիա վարդապետին, որ Նարեկայ վանքին հիմնադիրն ու Առաջնորդն էր եղած ժ. դարուն սկիզբները: Տարակոյս չկայ սակայն թէ այդ կրթաբանէն ալ առաջ, ընտանեկան մաքուր մթնոլորտի մը մէջ, իր հօրը, այդ հոգեշունչ մատենագրին ազդեցութեանը տակ, ստացեր էր սուրբ դաստիարակութիւն մը, իր միւս երկու եղբայրներուն հետ, որոնք միեւնոյն ուխտին միաբաններէն եղան իրեն հետ: Նարեկայ վանքին աշակերտ եւ միաբան նախապէս, յետոյ նաեւ եղաւ հոն վարժապետ, եւ երիտասարդ հասակին մէջ գրեց Երգ Երգոցին վրայ հոգելից մեկնութիւն մը, Արծրունի Գուրգէն թագաւորին խնդրանքով: Իբրեւ միտք, տիեզերական հանճարներէն մին է Նարեկացի. առաջին միաթիքական իմացականութիւնը Հայոց մէջ եւ մեծագոյն բանաստեղծը: Երգ Երգոցի մեկնութիւնէն զատ, գրած է նաեւ Ճառեր եւ Ներբողներ՝ Ապարանից Ս. Խաչին, Առաքելոց, Ս. Աստուածածնի, Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետի, Գանձեր՝ Խաչի, Եկեղեցոյ

եւ Ս. Հոգւոյն վրայ, Տաղեր՝ միշտ հոգեւոր եւ կրօնական ներշնչումներով. ամէնքն ալ բարձր թուիչքով, խորիմաց զգացումներով եւ հոգեկից հոնտորութեամբ, որոնց մէջ կ'արտայայտուի սուրբ սրտի եւ կրօնազգած պարկեշտութեան ներքին կեանք մը: Իր բարոյականին կամ մանաւանդ բարեպաշտութեան վերաբերեալ կարգ մը զրոյցներէն կը հասկցուի թէ, ինչպէս ամէն մեծարժէք անձնաւորութիւն, ինքն եւս զերծ չէ մնացած յաշարկոտներու զրպարտիչ յարձակումներէն. բայց ճշմարտութիւնը յաճախ հրաշալի յայտնութիւններով երեւան եկած, յաղթահարած է ամէնքը, աւելի բարձրացնելով հասարակաց զգացումին մէջ իր սրբութեան համբաւը: Մեռած կը համարուի 1010-ին, իբր վաթնամեայ: Թաղուած էր Նարեկայ վանքին մէջ, Սրբուհի Սանդուխտի խորանին կողքին: 1021-ին, երբ Արծրունեաց Սենեքերիմ թագաւորի հետ Վասպուրականի ժողովուրդէն կարեւոր մաս մը գաղթեց Փոքր Հայք: Սուրբին աճիւններէն մասունք մը փոխադրուեացաւ Ակնայ մօտ, ուր այդ պատճառաւ ուխտատեղի մը կամ վանք մը եւս հիմնուեցաւ, Նարեկայ անուան աղաւաղեալ «Արակայ» կոչումովը» (էջ 218–220):

\* \* \*

Վերեւի մէջբերումներով եւ հատուածներով, Սուրբերու կեանքը եւ Սուրբ եւ տօնի Հայաստանեայց եկեղեցւոյն մեզի կը բերեն Ս. Գրիգոր Նարեկացիի կեանքն ու գործը, առանց արտայայտուելու մեզ շահագրգռող հրատ-ին մասին: Այս կ'արդարացուի անով, որ երկու աղբիւրներն ալ սրբախօսական ու բարոյախօսական բնոյթ ունին եւ բնաւ կարելի չէ մանրամասն, հետազօտեալ ու քննական մօտեցում ակնկալել անոնցմէ:

### Բ. ԽՐԱՏ-ԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գրիգոր Նարեկացիի անունով հրատարակուած եւ անոր գրիչին վերագրուած հրատ-ը բաւական խնդրայարոյց է: Շատ քիչ բան ըսուած է այս մասին եւ ո՛չ մէկ մատենագրական քննական յստակ ու վերջնական կարծիք արտայայտուած է այս գիծով: Մենք շատ հազուադիւր տեղեկութիւններ ու ծանօթութիւններ կրցանք հաւաքել, որ առանձին թուակարգումով ու բաժանումներով կը ներկայացնենք, եւ կը քննարկենք ստորեւ.

Ա. Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի, Նարեկայ վանից վանականի, Մատենագրութիւնի, ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, յամի 1840 ՌՄՁԹ:

- Կը բովանդակէ Նարեկացիի հետեւեալ գործերը.

  1. Մատենան ողբերգութեան
  2. Մեկնութիւն երգոց երգոյն
  3. Պատմութիւն Ապարանից
  4. Ներբող ի Ս. Խաչն
  5. Ներբող ի Ս. Կոյսն
  6. Նորին վերստին ի վերայ գրոյ անուան իւրոյ (ԳՐԻԳՈՐ անուան տառերով սկսող վեց տունէ բաղկացած ներբող մը՝ նուիրուած Աստուածածինի)
  7. Յիշատակագիր նամակ առ Ստեփանոս Մոկ
  8. Ներբող ի Ս. Առաքեալսն
  9. Ներբող ի Ս. Յակոբ Մծբնայ
  10. Գանձ ի գալուստ Ս. Հոգւոյն
  11. Գանձ ի Ս. Եկեղեցի

- 12. Գանն ի Ս. Խաչն աստուածընկալ
- 13. Տաղ՝ ծննդեան եւ յայտնութեան
- 14. Տաղ՝ Բառասնիցն
- 15. Տաղ՝ ի յարութիւն Ղազարու
- 16. Տաղ՝ յարութեան
- 17. Տաղ՝ համբարձման
- 18. Տաղ գալստեան Հոգոյն Սրբոյ
- 19. Տաղ՝ եկեղեցոյ
- 20. Տաղ վարդավառին
- 21. Խրատ (էջ 483–533)

Յիշատակուած վերջին գործը՝ Խրատ-ը կը շահագրգռէ մեզ եւ ուսումնասիրութեանս աշխարհաբարի վերածումը կատարուած է այս հրատարակութենէն:

Խրատ-ին խորագիրն է. «Սրբոյ Վարդապետի յոքներանեան մե- նաւորի Գրիգորի համառոտիւք բան խրատու վասն ուղիղ հաւա- տոյ եւ մաքուր վարուց առաքինութեան ի խնդրոյ նորին հարազա- տի Վարդանայ դիւանադպրի»:

Յիշատակելէ ետք Խրատ-ին խորագիրը, հրատարակիչներ հե- տեւեալ ծանօթագրութիւնը գրած են.

«Զոր Բիւզանդացոց<sup>1</sup> տպագիրք յանուն նարեկացոյ մակագ- րեն զճառս զայս, յարեցաք ընդ աներկբայ առ ի մատենագրեալսն, անխախտ պահեալ զվերնագիր օրինակիս մերոյ գրելոյ ի թուիս իբր ՌՃԾ<sup>2</sup>: Ի նորին անուն եւ Աբրողեր գերմանացի հայագէտ հա- տածս այլ եւ այլ ի ճառէ աստի ածէ ի հայ քերականութեան իւրում. յայտ է թէ չիշխէր այրն օտարագրի անուանց փոփոխումն

<sup>1</sup> Ակնարկութիւն Կոստանդնուպոլսոյ հայոյթեան:  
<sup>2</sup> ՌՃԾ հայկական թուականով կը համապատասխանէ 1150-ի. 1150+551=1701 քրիստոնէական թուական:

առնել ի բնագրին իւրում. որ եւ երէց է ժամանակաւ իբր յիսուն ամոք քան զԲիւզանդացոց առաջին տպագիրն: Այլ թէ անշուշտ նորին երանելոյ իցէ մատենագրեալ ճառս, ի նախնեաց որ ինչ ցարդ առ մեզ գտանին վէպք, չունիմք ասել հաւաստեալ. եւ ի վարս նորա ի Յայսմաւուրս ի մեհեկի իա մի ըստ միողէ թուեալ ամենայն գրութիւնք նորա, գառաջիկայ ճառէդ չյիշատակի ինչ բնաւ: Նմին իրի եւ առ մեօք թուեցաւ ոմանց Գրիգորի սկեւոացոյ արարեալ զսա. թերեւս այնու զի ազգակից է ոճոյ աղօթագրոց սկեւոացոյն ի նոյնօրինակ զանազանութեան միոյ միոյ յախտից եւ յուղղութեանց, անդ խոստովանօրէն մաղթանօք անցեալ ընդ բնաւան, աստ խրատական բանիւ. եւ կամ զի իմաստասիրական ոճ այսր ճառի չմիաբանիցի նարեկացոյ քերթողական ոճոյն: Կալցի զայս որպէս եւ ախորժէ ոք. կամ նախնեացն անփոյթ արարեալ մանր թուել զամենայն գրեալսն ի նարեկացոյն առ ի յետնոցս յիշատակ, եւ կամ չեւ ամենայն պատմական յիշատակացն հնոց առ մեզ հասեալ: Մեք չեւ ի ձեռին ունելով ստուգագոյն ինչ ապացոյց գրաւոր, ոչ իշխեմք զարտուղի յառաջնոց քան զմեզ եր- կատեսակ տպագրաց յանուն նարեկացոյն՝ զճառս զայս յանհա- րագատս գրել նմա» (էջ 483):

Այս ծանօթագրութեան նկատի առնուելիք կէտերն են. Առաջին, այս «ճառ»-ը տպագրիչներ Կ. Պոլսոյ մէջ տպուած օրինակներէ առնելով, միացուցած են այս հատորին մէջ՝ «ան- կասկածօրէն»՝ նարեկացիի գրիչէն ծորած այլ գործերու շարքին. ճառին (կամ խրատին) թուականը «անխախտ» պահած են, այ- սինքն՝ «իբր ՌՃԾ»:

Երկրորդ, կը յիշատակուի թէ Աբրողեր գերմանացի հայագէտը իր Հայ Բերականութիւն-ին մէջ այս ճառէն մէջբերումներ ըրած է՝ նարեկացիի վերագրումը պահելով:

Երրորդ, Վենետիկի այս հատորին տպագրիչները ստոյգ վերագրում մը չեն ըներ. որովհետեւ, նախ, այս մասին «Նախնիներէն ինչ հին պատմութիւններ որ մեզի հասած են հաւաստի ոչինչ կ'ըսեն».

Չորրորդ, Վենետիկի մէջ ալ ոմանք այս ճառը Գրիգոր Սկեւոացիի վերագրած են. որովհետեւ, նախ, այս ճառին ոճը շատ մօտ է Սկեւոացիի Աղօթագիրքի ոճին. նաեւ, նոյնօրինակ ախտեր յիշուած են եւ անոնց դարմանումի միջոցները ճշդուած. սակայն Սկեւոացիի միւս գործերուն ոճը խոստովանական բնոյթ ունի, իսկ հոս՝ խրատական: Երկրորդ, «այս ճառի իմաստասիրական ոճը չի'համաձայնիր Նարեկացիի քերթողական ոճին»:

Հինգերորդ, այս հատորին տպագրիչները յստակ եւ վերջնական հեղինակ մը չեն ճշդեր այս ճառին համար: Որովհետեւ «կամ նախնիներ անպիտի եղան մանրագննին կերպով թուելու Նարեկացիի բոլոր գրութիւնները՝ յետնորդներուն իբր յիշատակ, եւ կամ հիներ յիշատակած են, բայց մեզի չեն հասած հիներու բոլոր յիշատակութիւնները»:

Կեցրակացենն, թէ գրաւոր ստուգագոյն ապացոյց մը չունենալով, չեն համարձակիր իրենցմէ առաջ Նարեկացիի անունով հրատարակուած երկու տպագրութիւններէն տարբեր կարծիք յայտնելով՝ Նարեկացիի չվերագրել այս ճառը:

Այս ծանօթագրութիւնը մեզ կը մղէ գտնելու եւ ստուգելու քահի մը կէտեր.

ա. Մ՞վ է Աբրողեր. ո՞ւր է անոր Հայ Բերականոյթիւնը:

Աբրողերի կամ Շրոտերի յիշեալ գործին մասին չկրցանք բաւա-

րար տեղեկութիւններ գտնել, բայց երկու աղբիւրներ կը յիշեն զինք եւ իր գործը.

1. “Schröder J.J. Արամեան լեզուին գանձ. Hoc est: Joh. Joach. Schroderi Thesaurus linguae armeniacae, antique et hodiernae, cum varia pradios materia, cujus elementum sequens pagina exhibit.- Amstelodami, anno aere Chr. MDCCXI (1711), Armenorum MCLX (1160)” (Կ. Կոստանեանց, Հայագիտութիւնն Արեւմտեան Եւրոպայում, Թիֆլիս, 1910, էջ 120):

2. “Schröder J.J. Thesaurus linguae armeniacae, antique et hodiernae. Cum varia praxios materia, cujus elenchum sequens pagella exhibit. (Index I. Vocum armenorum. II. Vocum latinarum). Amstelodami, 1711. In-8, 410 p. fig.” (Ա. Սալմասեան, Հայկական մատենագիտութիւն, Երեւան, 1969, էջ 335):

բ. Մ՞վ է Գրիգոր Սկեւոացի, որուն նաեւ կը վերագրուի յիշեալ Խրատը:

1. «Գրիգոր Սկեւոացի, ժամանակակից եւ մտերիմ Ներսէս Լամբրոնացու. ինքն էլ Լամբրոնացի, բայց լինելով վանահայր Սկեւոյ վանքի, կոչվել է Սկեւոացի: Սա պետք է լինի Գրիգոր դիտապետ, առաջնորդ Սկեւոյ, որի քեռորդին եւ աշակերտն է Գեորգ Լամբրոնացին: Ներսէս Լամբրոնացու մահից (‘1198 թ’) հետո եղավ ուսուցիչ սկեւոյ վանքում: Լամբրոնացին նրան էր հանձնած Սաղմոսի մեկնութեան արտագրությունը: Խոստովանահայր էր Լևոն Բ թագավորի, որ հունարենից թարգմանել տվեց նրան Նիկիայի Վահան կամ Յովհաննէս արքեպիսկոպոսի թուղթը առ Զաքարիա Զագեցի կաթողիկոս Հայոց՝ Միտում, 1203 թվին: Գրիգորը իրեն օգնական էր վերցրել այս թարգմանության մեջ՝ իր ընկեր Բարսեղին. իսկ թարգմանությունը սրբագրեցին Նիկիֆօս եւ Մի-

խայել քահանաները, որոնք անշուշտ հույն են, ինչպէս երևում է անունների ձևից (Ձեռ. Վենետ. Բ. 1074): Լևոնի մահվան ժամանակ տվավ նրան վերջին հոգևոր մխիթարութիւնը՝ «1219 թ»<sup>3</sup>: Իր թողած գործերն են ճառեր, որոնցից հատկապէս հիշելու արժանի են՝ Պատմութիւն վարուց Գր. Լուսաւորչի (որ է Ագաթանգեղոս կերպարանաւորեսայ), Ներբողեան պատմագրաբար ի վարս Ներսէսի Լամբրոնացւոյ, Ներբողեան Ս. Կուսին, Ի յարութիւնն Քրիստոսի, Կանոն ծննդեան (Արեգակն արդարութեան), Վարք Գրիգորի Նարեկացւոյ, Եսայեայ Տէր. ո՞ հաւատաց (Սիսուան 103 բ, Ձեռ. Վենետ. Բ. 306, որ գրել է Լամբրոնի տեր Կոստանդին իշխանի խնդրանք), Աղօթագիրք (տպ. Պոլիս (1742), Մեկնութիւն Եւագրի (սա մի ընդարձակ եւ ընտիր գործ է, որ հասել է մեզ Վենետիկի թիւ 1552 եւ Երուսաղէմի Հե թիւ 240 ձեռագրերով. Սարգիսեան, Եւագր, ներած. էջ ՃՄԳ-ՃՄԸ համոզիչ կերպով ապացուցում է, որ Եւագրի մեկնիչ Գրիգորը Սկեւացին չէ, այլ Գրիգոր Գ կամ Փոքր Վկայասէր կաթողիկոսը, որովհետեւ մի տեղ հիշում է թե ինքը կաթողիկոս է եղած), Ներբողեան ի փոխումն Աստուածածնին (Ձեռ. Վենետ. Բ. 338): Այս վերջին գրվածքը, որ դեռ ևս հրատարակված չէ, Հ. Բարսեղ Սարգիսեանը իր Ձեռ. Վենետ. ցուցակում, հտ. Բ. 339, գնահատում է այս ձևով. «Հիանալի է ներբողեանս թէ լեզուին եւ ոճին բարձրութեան, եւ թէ խորախորհուրդ վարդապետութեանց համար: Իր տեսակին մէջ եզական է, մանաւանդ պերճախօսական ձեւոց առատութեամբ եւ դարձուածներով. ինչպէս նաեւ Ս. Գրոց եւ Հարց գոհարներու ամենաճարտար յեռումներով: Կարծէք թէ երկրորդ Նարեկացի մ'է եւ Բեռնարդոս»<sup>3</sup> առ ամենասուրբ Կոյան տաճած մշտաբորբոք սիրովն եւ աստուածային գաղափարակաւնովն: Գիւտաւոր է սրտահաճոյ կոչը ուղղեալ առ Տիրամայրն՝ ժո-

<sup>3</sup> Կ'նճթաղրեմ որ Ս. Բեռնարդոս Գլէրվոցիի կ'ակնարկէ (1090–1153):

ղովրդեան ամէն դասակարգի, վիճակի եւ պայմանի համար” (Հրաչեայ Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հատոր ա., Պէյրուս, 1972, էջ 570–571):

Մեզ շահագրգռող Խրատ-ին մասին ոչինչ յիշուած է հոս:

2. «Իսկ վարդապետն այն Գրիգոր՝ է հռչակաւորն եւ յատուկ Սկեւացի մականուանեալ, վասն բնակութեան յայսմ մենաստանի, այլ ծննդեամբ ի նոյն ինքն ի Լամբրոն աւանէ, վասն որոյ կոչի եւ Լամբրոնացի, կենակից գոյով Սրբոյն, եւ յետ նորա առաջին համարեալ ի գիտունս եւ ի խոհականս ... այսինքն հանգոյն կամ հաւասար լինել իւրումն մեծի քեռւոյ Ներսէսի. այլ եւ խորատեսակն Լեւոնի արքայի յետ Ներսիսի զսա մեծարեաց. սմա ետ թարգմանել ի յոյն լեզուէ գթուղթ «Վահանայ կամ Յովհաննու արքեպիսկոպոսի քաղաքին Նիկիոյ, զոր գրեաց առ երանելին Զաքարիայ կաթողիկոս Հայոց», որպէս ասէ Անաւարգեցին ի Յայսմաւուրս իւր, «Սուրբ եւ մեծ վարդապետն Հայոց Գրիգոր Սկեւացի», կոչելով: ... Եւ յորժամ յետ սակաւուց ի միւսում ամին (1220) ի վախճանել Յովհաննու կաթողիկոսի, եւ ի ժողովին յընտրութիւն յաջորդի, երկպառակութիւն լինէր յիշխանան, ոմանք զսա՝ գ Գրիգոր՝ կամէին կացուցանել, պարագլուխ իւրեանց ունելով Զկոստանդին տէր Լամբրոնի, զեղբորորդի Սրբոյն Ներսիսի. յորոյ խնդրոյ արարեալ իսկ է Գրիգորի զգեղեցիկ ճառն ի խորհուրդ մեծի Ուրբաթուն, ի բանն Եսայեայ, Տէր ո՞ հաւատաց լոյ մերում, ... յայտ է ի պատմութեանէ՝ զի փոխանակ նորա նախամեծար եղեւ Կոստանդին Ա Բարձրբերդցի ի Կաթողիկոսութիւն: ... որբացեալն Ներսէս գ Գրիգորս զայս եգիտ իւր երկրորդ հայր եւ վարդապետ, եւ բազում թախանձանօք սմա ետ «արձանացուցանել ներբողիւք զվարան. որոյ ի սկզբան սակաւ ինչ եւ գովելի հակառակութեամբ բերեալ, ըստ սրբոցն օրինի, գերազանցութիւն քան զչափ զօրութեանն զայս

վարկանելով, եւ ապա ... յանձն առնու ... Եւ եղեւ ... գրութիւն ճառիս ի ՌԾԴ<sup>4</sup>: Խոհական գրուած է ճառդ, յստակ ոճով շարագրութեան, եւ ոչ սակաւ գեղեցիկ իմաստիւք, այլ անհաս առ ներսիս սեանն: Ըստ այն իմա եւ զայլ գրուածս նորին. որպիսիք՝ վերողրեալ ճառն Աւագ ուրբաթու, եւ ճառն ի Յարութիւն Տեառն, յաւէտ ի Կանայսն Իւղաբերս, ... յորս ընդ յստակութեան լեզուի՝ խոհական ընտրութիւն մտաց երեւի՝ քան ճարտասանական ձեւք: – Ծանօթ է բազմաց նովին յստակ լեզուաւ եւ մտօք՝ միատարր երկայն Աղօթք նորին, պէսպէս նկատմանք տնտեսութեանց Աստուծոյ առ մարդս, եւ մարդոյս կրից եւ յանցուածոց, “ի դիմաց համօրէն մարդկային սեռի”, որպէս ինքն իսկ ասէ ուրեք ի կարգի բանիցն:

Աղօթասիրութեան նորա պտուղ է եւ խոկումն վարուց գերազոյն աղօթիկերի մերոյ՝ Ս. Գրիգորի Նարեկացւոյ, գորոյ զվարս գրեաց Սկեւռացիս: Ուրոյն է նորա Աղօթք որ ի ժամու խորհրդոյ Պատարագին. միւս եւս Աղօթք առ Ս. Աստուածածինն, որոյ սկիզբն է “Ամենօրհնեալ Աստուածածին, տաճար Բարձրելոյն” ...

Ծանօթագոյն եւս է ամենայն պաշտօնասիրաց յեկեղեցիս Հայաստանեայց՝ գեղեցիկ ցոյց ստեղծաբան հանճարոյն՝ այբենակարգ Շարականն որ ի ծնունդ Յովհաննու Մկրտչի, նուագեալ յամի 1198. “Արեգականն արդարութեան ծագման՝ արուեսակղ առաւօտեալ” ...

Այսչափ ինչ է յիմս հասեալ գիտութիւն՝ ի գրուածոց եւ գործոց իրաւապէս հոչակելոյն ի վարդապետս ժամանակին, Գրիգորի Սկեւռացւոյ կամ Լամբրունեցւոյ...» (Հ. Ղեւոնդ Այլշան, Սիսուան, Վենետիկ, ՌՅԼԵ-1885, էջ 100–101): (Սիսուան–ի մէջ Գրիգոր Սկեւռացի կը յիշուի նաեւ 99, 515, 518, 524, 527, 553 էջերուն մէջ):

<sup>4</sup> ՌԾԴ. հայկական թուակաճով կը համապատասխանէ 1054-ի. 1054+551=1605 քրիստոնէական թուակամ:

Հոս եւս Խրատ–ին մասին ոչինչ ըսուած է: Ո՛չ այդ մասին ակնարկութիւն կայ եւ ո՛չ ալ յստակ վերագրում մը՝ Գրիգոր Սկեւռացիի: Այլշան կ'ըսէ. «Այսչափ ինչ է յիմս հասեալ գիտութիւն...» (էջ 101):

գ. Ո՞վ է Վարդան դիւանադպիր, որուն խնդրանքով գրած է Նարեկացի Խրատ–ը:

Վարդան Վասպուրականի Սենեքերիմ թագաւորին դիւանադպիրն էր: Սենեքերիմ թագաւորի յիշատակութեան կը հանդիպինք նաեւ.

ա. «Նարեկացու “Մատեան ողբերգութեան” հին ձեռագրերից մեկի հիշատակարանում (1391) Վարդան գրիչը Գրիգորի մասին գրում է. “... Իսկ Վասպուրականի թագաւորն էր Սենեքերիմ բարեպաշտ յԱրծրունեաց...”» (Արշաւիր Մխիթարեան, Գրիգոր Նարեկացի տաղեր, Երևան, 1957, էջ 11):

բ. «Բերված պարգեւները զանազան վայրերում պահելուց հետո՝ ի վերջո մեծ շուքով ու հանդեսով, որին մասնակցում են եւ Արծրունի թագաւորներ՝ Աշոտ, Սենեքերիմ եւ Գուրգեն եղբայրները, տեղափոխում են Աստուածամոր եկեղեցին» (Մ. Մկրյան, Գրիգոր Նարեկացի, Երևան, 1955, էջ 133):

դ. Նարեկացիի նախորդ տպագրութիւնները ո՞ւր եւ ե՞րբ տեղի ունեցած են:

Նախորդ տպագրութիւնները տեղի ունեցած են Վենետիկէն դուրս՝ Պոլիս (1755, 1774, 1807), որոնց մէջ գտնուող Խրատ–ը Նարեկացիի կը վերագրուի:

Բ. Խրատ–ը կը գտնենք նաեւ ճառք եւ խոստովանութիւնք հաւա-

տոյ արարեալ սրբոց հարց մերոց Գրիգորի Նարեկացոյ եւ Վահրամայ վարդապետի հատորին մէջ, «տպեալ ի հայրապետութեան տ.տ. Ներսեսի վեհափառ սրբազնազոյն կաթողիկոսի եւ ի պատրիարքութեան սրբոյ աթոռոյս Երուսաղէմի տ. Յովհաննու սրբազան արքեպիսկոպոսի եւ ի պատրիարքութեան Պօստյ տ. Յակոբայ սրբազան արքեպիսկոպոսի, յԵրուսաղէմ, ի տպարանի Սրբոց Յակովբեանց, 1856»:

Հարկ կը զգամ յիշեալ հատորին “Յառաջաբան”-էն մէջքերել բաժին մը, ուր արդէն կը պարզուի գրքոյկին բովանդակութիւնը.

«Առաջինն է սրբոյ Գրիգորի Նարեկացոյ ասացեալ Բան ուղիղ հաւատոյ եւ բարի վարուց. որոյ թէ եւ գոն յազգիս կրկին տպագրութիւնը, այլ առ դիւրագնի առնել զայն եւ առձեռն պատրաստ ամենեցուն, գերրորդ իմն փոյթ կալաք առ ի մէնջ ընծայել տպագրութեամբ՝ բաղդատեալ ընդ այլ ձեռագիրս<sup>5</sup>:

Երկրորդն է Վահրամայ վարդապետի Բաբուն կոչեցելոյ, այն է քարտուղար Լեւոն Բ. Հայոց արքայի, արարեալ ճառ հոգեկից ի սուրբ Երրորդութիւնն՝ ըստ խնդրոյ բարեպաշտ թագաւորին: Դարձեալ նորին ճառ երկրորդ ի Մարդեղութիւնն Քրիստոսի: Յերկոսին իսկ ճառս փայլէ լուսաւոր միտք եւ խորին հմտութիւն երեւելի մատենագրիս ի խնդիրս աստուածաբանականս: Առաջնոյ ճառիս չորք օրինակք էին առ մեզ՝ ո՛ր բոլորգիր եւ որ նօտրագործ, զորս ընդ հին տպագրին բաղդատութեամբ ուղղեցաք: Իսկ երկրորդին մի եւ եթ օրինակ՝ գրեալ ի թուին Հայոց ՌՃԺԷ. վասն որոյ ուրեք ուրեք յանկամս թողաք ըստ ընազրին՝ կարօտ այլոց օրինակաց: Շատացեալ առ այժմ այստքիւք մատուցանել իջամբ մտաց հոգեխրաց, թողումք այ-

<sup>5</sup> Իմ օգտագործած բնագիր աղբիւրներուն մէջէն հնագոյնն է Վեներտիկի հրատարակութիւնը (1840), ապա՝ Երուսաղէմիւնը (1856) եւ յետոյ՝ Կ. Պոլիսիւնը (1956):

լում ժամանակի ընծայել ի լոյս եւ զայլ աշխատասիրութիւնս սրբոց հարց մերոց յայսմ կարգի, ջանալով զայնս ի ձեռս բերել՝ եթէ ողջախոհ ուսումնասիրաց ի նոյն օգնեցեցն մեզ յօժարութիւնք» (էջ ii–iii):

Նախքան այս հրատարակութեան մէջ գտնուող Խրատ-ին մասին խօսելը, հարկ կը զգամ անդրադառնալու Վահրամ վարդապետին, որուն գործին հետ հրատարակուած է Խրատ-ը.

«Վահրամ վարդապետ Սեւեռնցի, կոչված Բաբունի. Լեւոն Գ-ի ատենադպիրն էր Ստում. Լեւոն Գ-ի օժման օրը գրեց “Ճառ ի Մեծի աւուր յայտնութեան” “1271 թ.” հրտր. Այրարատ 1869, փետր. ապր. եւ առանձին տպ. Երուսաղէմ. նրա խնդրով է գրել նաեւ “Ճառ ի Ս. Երրորդութիւնն եւ ի մարդեղութիւն”. ունի դարձյալ. Յաղագս փրկական տնօրէնութեան, Ի մկրտութիւն Տեառն, Ի ծաղկազարդն եւ Ի համբարձումն, Վասն թաղման, Վասն գալստեան Քրիստոսի յԵրուսաղէմ, Դաւանութիւն Վահրամ վարդապետի, Լծմունք գրոց Պորփիրի, Պատասխանիք հարցմանց Հեթմոյ արքայի, թերեւս եւ Հարցում-պատասխանիք, բայց ամենակարեւորն է Ոտանաւոր պատմ. Ռուբինեանց՝ իբր շարունակութիւն Շնորհալոյ Վիպասանութեան, որ գրել է Լեւոն թագաւորի խնդրանօք» (Հրաչեայ Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հատոր ե., Պէյ-րութ, 1972, էջ 26):

Խրատ-ը կ'ընդգրկէ 1–114 էջերը: Կանխող էջին վրայ գրուած է. «Սրբոյ վարդապետի յոքներանեան մենաւորի Գրիգորի Նարեկացոյ համառօտիւք Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան ի խնդրոյ նորին հարազատի Վարդանայ դիւանադպիր»։ Իսկ էջ 1-ը կը սկսի այսպէս. «Սրբոյն Գրիգորի Նարեկացոյ Բան վասն ուղիղ հաւատոյ եւ խրատ մաքուր վարուց առաքինութեան»։ Էջատակերուն յիշատակուած են աստուածաշնչական մէջբերումները: Խրատ-ը գլխակարգումներ չունի:

Գ. Խրատ-ը պարունակող երրորդ բնագիրը կը գտնուի Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացոյ հոգեկիր հոետորի Հատորին մէջ, «տպագրեալ արդեամբ՝ բարեպաշտ տիար Գրիգոր Գուլում-ճեանի, ի Հայրապետութեան մեծին գահին Էջմիածնի Տ.Տ. Գէորգ Չ. վեհ. կաթողի ամեն. Հայոց, եւ սրբոյ աթոռոյն Երուսաղէմի տեառն Կիւրղի ս. արքեպիսկոպոսի, եւ ի պատրիարքութեան Թուրքիոյ տեառն Գարեգին ս. արքեպիսկոպոսի, յամի Տեառն 1956, իսկ ի մերումս՝ Ռեն-Ռեն, Իսթանպուլ քաղաքի՝ ի տպարանի Հերմոն Սվաճեանի»:

Կը բովանդակէ Նարեկացիի հետեւեալ գործերը.

1. Մատեան ողբերգութեան
2. Յիշատակարան մատենիս գրութեան
3. Յիշատակ վարուց հոգեկիր հոետորի սրբոյն Գրիգորի
4. Նշանակութիւն խրթին բառից ինչ մատենիս
5. Յուցակ գլխատր տարբերութեանց ինչ մերումս՝ յայլոց ձեռագիր, կամ տպագիր օրինակաց
6. Մեկնութիւն Երգոց երգոյն Սողոմոնի
7. Յիշատակարան
8. Ճառս Ապարանից խաչի
9. Ներբող Տիրուհոյն
10. Ներբող երկոտասան առաքելոց
11. Ներբող սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետի
12. Քարոզ ի գալուստ Սուրբ Հոգոյն
13. Քարոզ ի սուրբ եկեղեցի
14. Քարոզ ի սուրբ խաչն
15. Բժշկութեան շորս հատուածներ՝ Աւետարաններէն քաղուած
16. ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՅԻՈՅ Հրեշտակական Սրբոյ Վարդապետի, եւ Հայցողին Ջրիատրի, ձգնագրեաց Մաքրափայլ Հեղի-

նակի, Համառօտիւք Բան Խրատու Վասն Ուղիղ Հաւատոյ Իսկ եւ Մաքուր Վարուց Առաքինութեան, Ի խնդրոյ Նորին Հարագաւաի ՎԱՐԳԱՆԱՅ Դիւանապարի

17. Չորս Բերթուածներ, գիրքը տպագրողին կողմէ, նուիրուած Գրիգոր Նարեկացիի

Ինչպէս կը տեսնենք, 16-րդ գործն է Խրատ-ը (էջ 705–767), որ բովանդակութեան տարբերութիւններ ունի Վենետիկ տպագրուած օրինակին հետ բաղդատաբար: Այս Հատորին մէջ Խրատ-ը մասնաւոր գլուխներու չէ բաժնուած. այլ, գրեթէ առանց իմաստային յաջորդականութեան, նոր տողերու կը հանդիպինք միայն: Հարկ կը զգանք ընդգծել, թէ որպէս տպագրութիւն Խրատ-ը ընտիր չէ:

Տպագրիչներ Խրատ-ը կանխած են ներածականով մը, որ կու տանք.

«Մանուցումն առ Աստուածասէր եւ Ընթերցասէր Անձինսդ

Ձեզ նարդենիս եւ զայս գանձս ծածկեալ եւ աղբիւրս կնքեալ կամելով ի լոյս ածել. եւ իբր յոսկեղէն սափորոջ զքաղեալս մանանայ ախորժափորձ կողորդաց ձերոց ի զմայլումն տալ. այսինքն՝ զտետրակս լի արդեամբ, արդիւնաւոր Հրեշտակական Վարդապետին Եկեղեցոյ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ. զոր ի խնդրոյ Վարդանայ Դիւանապարիս Սէնէքարիմայ Արծրունեաց Արքայի՝ արքունական հրովարտակաց գծագրողին յարմարեալն էր՝ մեք ըստ խնդրոյ ոմանց հոգեսէր բարեպաշտաց հրաման տալով տպեցման, զոր եւ սրբագրեալ ձեռովք մերովք, ի լրումն բաղձանաց նոցա ըստամբայել թող տւաք: Որ ունի յինքեան գլի եւ զկատարեալ դաւանութիւն հաւատոյ առ ամենայն մասունս հաւատալեաց չորեքտասան աստիճանացն՝<sup>6</sup> եւ զմասանց հոգւոյ եւ զմտաց. եւ զգայութեանց մարմ-

<sup>6</sup> Ակնարկութիւն դաւանութեան կատարելութիւնը յատկանշող Հայ եկեղեցոյ Հաւատոյ հանգանակի յորտտ-ի Աշած 14 նախադասութիւններուն:

նոյ մտիցն մեղաց դրանց զփակարան. եւ առ առաքլինութիւնս՝ զբանալի, զհայելի եւ զցուցակ: Եւս՝ թէ նորօք՝ այսինքն ներքին եւ արտաքին զգայութեամբք զի՞նչ ըստ հոգւոյ արդիւնաւորիմք. եւ թէ որպէս ընդդէմ մոլութեանց զդրունս գայնս փակեմք եւ բանամք: Յիրաւի այս փոքրիկ գրքուկ՝ բանալի բարեգունից՝ եւ փակարան մոլեկանաց կրից. որ սակաւուք շատացողին է մեծագոյն գանձ: Զի որպէս ասի՝ ի փրկութիւն՝ միմիայն բան բաւական. կորուսելոյն՝ համայն իմաստ է զուր ջան:

Արդ՝ մեք կամելով զճրագն յայսքան ժամանակ ի ներքոյ գրուանի գեղեալն դնել յաշտանակի՝ ի լոյս տալ որք ի տան եկեղեցւոյ մանկունքն իցեն մակաղեալք, յօժար կամօք հրաման տուաք տպեցման: Եւ զի ծանիցի առատաապարգեւի Հոգւոյն սրբոյ այլազանութիւն շնորհացն բաշխման, թէ որպէս միով լեզուաւ զզանազանս գանազանակերպ տայ բանահիւսել շարադրութիւնս: Որպէս սրբոյն Գրիգորի երբեմն զարթօթականս ըստ խնդրոյ կրօնաւորաց՝ խրթնագոյնս տալով յարմարել. եւ այս՝ որ՝ ի խնդրոյ արքունական առն՝ (իւրոյ հարազատի եւ արենակցի) դիւրիմաց կերպիւ շարագրել: Որպէս յայտ է եւ յառակացն Սաղոմոնի եւ յիմաստութեան գրքոյն. զորոց եթէ զշարադրութեանցն կերպ նկատիցես, յայլեայլ անձանց զոգցես զնոսին յարմարեալս: Իսկ եթէ յայսքան ժամանակ զիա՞րդ աղբիւրս այս կնքեցեալ էր եւ գանձս այս ծածկեալ, մի ոք տարակուսեսցի. զի եւ արեւն որ ի ցայգոջ ի մէջ՝ անտես լինի, զհակոտնեայս լուսաւորէ, եւ ի տունջեան ի յայտ գայ: Այսպէս եւ Աստուածն անարգամեծար՝ կամելով յարգել զփոքրիկ բան սրբոյ Վարդապետին, յայտ երբ խորոց. եւ իբր զդանդադամած հուր սեղանոյն (հանեալ ի Նէեմեայ ջրհորոյն<sup>7</sup>) յանդիման արեւոյն ի ցոյց բերելով վերստին արծարծեաց: Ուրեմն այսու գրքիւ ոչ միայն գովելի է

<sup>7</sup> Հմմտ Բ.Ս՛կ 1.20:

սրբոյն Գրիգոր Նարեկացի, (որ խնդրողին ետ եւ բաղխողին եբաց) այլեւ՝ գովելի է անձն խնդրողին բարեպաշտ իշխանին՝ Վարդանայ դիւանադպրին: Որ թողեալ զհոգս արքունեաց գործոց՝ (ոչ ըստ մոլեկանաց՝ յԱստուծոյ զգանձս խնդրեաց ի լրումն անկատարից մեղաց) այլ ի պաշտօնէ նորա զհոգեցոյց տեսրակս գայս աղերսեաց: Եւ ոչ տրտմեցաւ ընդ դժուարութիւն օրինադրութեան սրբոյ Վարդապետին ըստ մեծատանն ընչեղի՝ մինչ լուաւ թէ երթ վաճառեա գինչս քո եւ տուր աղքատաց: Եւ ոչ գիտեն թէ որք զբազումս առնուն յԱստուծոյ զինչս, այնքան պարտաւորին ի սիրել զնա եւ ծառայել նմա. եւ զնորայն՝ առատապէս նուիրել նորայնոցն: Զի որում շատ տուաւ յԱստուծոյ, շատ խնդրի յընդունողէն, եւ այլն<sup>8</sup>: Ուրեմն եւ ես այժմ փորձեցից զՋերմեռանդիցդ իղձս՝ թէ զո՞րպիսի սէր ունելոց էք առ բան սրբոյ Վարդապետին. եւ որպէս ընթեռնելոց. սիրով զփարիլոց, եւ գործով կատարելոցդ էք՝ որք ի սմին տեսրակի բանքն են: Զի մանաւանդ սպեղանիք արին խօթացելոցդ հոգւով, քան թէ ի խնդիր խրախուսել Հիփոկրատեայ բժշկապետի: Այսինքն՝ ոչ ի խօսողն, որքան ի խօսեցեալսն նկատելով: Եւ այսու՝ սիրահարացն ըղձից բանի սրբոյ Վարդապետին բաւ առնէք՝ թէ ոչ ի զուր ինչ վաստակեալք իցեն ի տպումն սորին:

Արդ՝ ես նուաստագոյն Յակոբ իբր Պատրիարքս<sup>9</sup> զսորին գաղափարն զոր ընկալեալ էի յԱսպատացի Պետրոս<sup>10</sup> լուսաւորեալ հոգի գերզգօն եւ աստուածաբան վարդապետէն ի հնագոյն գրքէ միոջէ, ետու ի լրումն ըղձից տպել տուողաց սորին: Զորս՝ եւ զիս անարժանս յիշման ի Տէր Յիսուս արժանի արասջիք ով Ջերմեռանդ ընթերցողք. ողջ կալով առ յոյսն բնաւից՝ ի Սուրբ Երրոր-

<sup>8</sup> Հմմտ Ղկ 12.48:  
<sup>9</sup> Յակոբ Նալեան, պատրիարք Պոլսոյ 1741–1749:  
<sup>10</sup> Պետրոս վարդապետ Ասպատացի, տաղասաց (ԺԸ դար) (Հրաչեայ Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, Բատոր դ., Պէյրութ, 1972, էջ 260):

դուժիւն եւ ի մի աստուածութիւնն, ամէն» (էջ 705–707):

Այս “Օանուցումն”-ը մեզ կ’առաջնորդէ երկու կէտի խորհրդածումի.

Առաջին, Խրատ-ին պարզ ոճը համեմատելով Նարեկացիի աղօթքներու խրթնագոյն ոճին հետ, Նալեան պատրիարք կ’ենթադրէ, թէ ան արքունական (որ աշխարհական է) եւ իր (Նարեկացիի) համար հարագատ եւ արիւնակից եղող անձէ մը խնդրուած ըլլալով, պէտք էր որ պարզ, դիւրահասկնալի եւ խրատական ոճով գրուած ըլլար:

Երկրորդ, եթէ գտնուի Ասպատացի Պետրոս վարդապետի մօտ եղած «հնագոյն գրքոյկը», որուն վրայէն կատարուած է Խրատ-ին տպագրութիւնը, Խրատ-ին որո՛ւ պատկանելուն հարցը կը լուծուի՝ եթէ հոն հեղինակը յիշատակուած է:

## Գ. ԽՐԱՏ-ԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻԻՐՆԵՐ

Վերեւ յիշուած երեք հրատարակութիւններուն կողքին՝ անհրաժեշտ կը նկատեմ նաեւ ակնարկ մը նետել այն աղբիւրներուն վրայ, որոնք կը յիշեն Նարեկացիի Խրատ-ը եւ անոր մասին կարծիք կը բանաձեւեն.

Ա. Հ. Արսէն Ղազիկեան, Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի, *ա. հատոր, Վենետիկ, 1909–1912:*

Մեր գործածած եւ Վենետիկ հրատարակուած օրինակին մէջ գտնուող Խրատ-ին մասին գրելով, Ղազիկեան կը յիշէ մեր դիտել տուած ծանօթագրութիւնը եւ կ’աւելցնէ երկու տեղեկութիւն.

*ա. «Գեր. Սուք. Սոմալ<sup>11</sup> իր Quadro-ին մէջ կը գրէ այս առթիւ. “È da notarsi però che il Trattato sulla dottrina cristiana, in cui dottamente vengono compendiate i fondamenti principj, e le massime della santa religione, per sentimento dei migliori critici non appartiene a questo Gregorio Nareghense, sebbene sotto il di lui nome sia stato pubblicato a Costantinopoli nel 1774, e si trovi citato da Giovanni Gioachino Schröder prima ancora del riferito anno. Si crede anzi, e con maggior fondamento, ch’esso debbasi attribuire ad altro Gregorio, detto l’Iscevrese (Սկեւոացի), il quale visse sul principe del secolo terzodecimo.” (էջ 66)» (էջ 472–473):*

<sup>11</sup> Ո՞վ է Սոմալ. “Somal S. P. Quadro delle opere classiche dei SS Padri e di altri scrittore anticamente tradotte in armeno. Venezia, S. Lazzaro, 1825, In-8” ... “Somal S. P. Quadro della storia letteraria d’Armenia. Venezia, S. Lazzaro, 1829, In-8, VIII + 241 p.” (Սալմալեան, Գոյն, էջ 302):

բ. Կը կարգանք դարձեալ «Zenker<sup>12</sup> Հատ. Բ. 206. «Un traité sur la doctrine chrétienne publié sous le nom de Grégoire Narégatzi, imprimé à Constaninople en 1774 et cité par Schröder, est probablement l'ouvrage de Grégoire d'Isguévre (Գրիգոր Ալեկուացի): Voyez Somal, Quadro, p. 66» (էջ 473):

«Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք, ի Վենետիկ, ի տպարանի սրբոյն Ղազարու, 1827, հատորին մէջ կը կարգանք. “Նարեկեան գուարթնոյն,— կ'ըսեն հրատարակողք ի յառաջաբանին,— հոգեշարժ Ողբերգութեանց մատենան, ինքնագիւտ եւ յոգնադիմակ ստեղծաբանութեամբքն Հայկազանցս սիրելի, ահաւաստի վերստին ելանէ ի լոյս՝ հանդերձ այլովք ամենեւումբք, որ յանուն նորին գրչի մնացուածք են տառից յայտնիք առ մեզ, անեղծք եւ անթերիք ... Զայլ եւ այլ գունակս ընթերցուածոց օրինակաց աւելորդ վարկաւ ժողովել եւ յայս տիպ. որ բազում անգամ, այլ եւ արդ իսկ այլուր տուեալք են ի մէջ՝ Հատ լիցին:

Զնորին գհետ գան Պատմութիւն Ապարանից, Ներբողեանք ի փայտն կենաց, եւ ի սուրբն կոյսն, յերանելի յառաքեալան եւ ի սուրբն Յակոբ Մծբնայ, գանձք երեք եւ տաղք գանազան եւ մեկնութիւն Երգոց երգոյն, յորս յամենեսին երեւի այլ եւ այլ հասակ եւ կերպարանք ոճոյ Նարեկեան գրչին:

Է մերոյս Գրիգորի եւ այլ գրած վայելուչ ի մեկնութիւն յովբեան Ով է դային, զոր չեղեւ մեզ վստահելի առ ժամս ընդ սոսին ածել ի տիպ միով եւեթ ընտիր՝ այլ հնտտի օրինակաւ, յուսով սպասեալ՝ զլաւագոյնն հայրենասէր վաստակոցս ընդունել փոխարէնս ի հայրասէր մերազանց”» (էջ 472):

Ուրեմն, Վենետիկի այս առաջին հրատարակութեան մէջ չենք հան-

<sup>12</sup> Ո՞վ է Զեմգեր. “Zenker J. Th. Catalogus universi cleri archidiaecesis Leopoliensis ritus Armeni pro anni domini. Leopoli, 1859” (Սպամապետն, 1859, էջ 173):

դիպիր Նարեկացիի Խրատ-ին, բայց 1840-ի հրատարակութիւնը թէեւ կու տայ զայն, սակայն ծանօթագրութեամբ մը կը լուսաբանէ տպագրութեան պարագան:

1700-ին Կ. Պոլիս հրատարակուած օրինակին մէջ եւս Խրատ-ը չկայ: Նաեւ՝ 1726-ի եւ 1755-ի պոլսական օրինակները չունին զայն: 1763-ին լոյս տեսած օրինակին մէջ կը գտնուի Խրատ-ը, ուր կը կարգանք. «Գրիգորի Նարեկացոյ, Հրեշտակական Սրբոյ Վարդապետի, եւ Հայցողին Ձրիատրի, Ճգնազգեաց Մաքրափայլ Հեղինակի: Համառօտիւք Բան Խրատու վասն Ուղիղ Հաւատոյ: Իսկ եւ Մաքուր Վարուց Առաքինութեան: Ի խնդրոյ Նորին Հարազատի Վարդանայ Դիւանադարի» (էջ 482):

Յետոյ կայ “Մանուցումն առ Աստուածասէր եւ ընթերցասէր անձինսք”, ուր կը կարգանք. «... Արդ՝ ես նուաստագոյն յակօբ իբր Պատրիարքս՝ զսորին գաղափարն զոր ընկալեալ էր յԱստապատցի Պետրոս լուսաւորեալ հոգի գերզգօն եւ Աստուածաբան Վարդապետէն ի հնագոյն գրքէ միջէ, ետու ե լրումն ըղձից տպել տուողաց սորին<sup>13</sup>» (էջ 482):

“Յիշատակարան Տպեցման սրբոյ Մատենիս” մէջ կը կարգանք. «Յաւելեալ ի սմա եւ զգիրք իմն փոքրիկ սոյն հեղինակիս, որ կոչի Բան խրատու վասն ուղիղ Հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան, ի խնդրոյ Վարդանայ դիւանադարի յօրինեալ: Որ քաղաքիս մեծի՝ Աստուածաբան Պատրիարքին շնորհելովն՝ եղաւ ի վերջոյ» (էջ 482–483):

1774-ին Կ. Պոլիս տպագրուած Հատոր երկրորդ ներբողինաց նաւից շորեցունց արժանատուաց գովեստից՝ ասացելոց ի սրբոյ հո-

<sup>13</sup> Մեր օգտագործած Կ. Պոլսոյ հրատարակութեան մէջ եւս այս ստղերուն կը հանդիպինք: Այս ենթադրել կու տայ, թէ 1763-ին լոյս տեսած օրինակին վրայէն տեղի ունեցած է մեր ունեցած օրինակին տպագրութիւնը՝ անոր “Մանուցումն” ալ կցելով:

րէն մերմէ Գրիգորէ Նարեկացոյ-ն մէջ կայ Խրատ-ը. «Այսինքն. Ապարանից սրբոյ Խաչին: Սրբուհւոյ Կուսին Մարիամու Աստուածածնին: Առաքելոցն երկոտասանից. եւ Եօթանասունեւերկու Աշակերտացն Քրիստոսի. Սրբոյն Յակօբայ Աբանչեղազոր՝ մծբնայ Հայրապետին: Հանդերձ հետեւեցելով փոքր գրքկաւ բանիւ հաւատոյ» (էջ 484–487):

«... Խրատքը ճիշդ նախընթաց տպագրութեան ոճովը. մինչեւ 239 էջը (մէջը սխալմամբ 139 գրուած է)» (էջ 487):

1782-ին Կ. Պոլսոյ մէջ լոյս տեսած օրինակը «... նոյն է ըստ ամենայնի հինգերորդ տպագրութեան<sup>14</sup> հետ» (էջ 488):

1807-ին, Կ. Պոլիս՝ Գիրք աղօթից... մաղթանաց «Յաւելեալ եւ եւս ինչ ի վերայ նոցունց՝ ի բանից սրբոյն, եւ յայլմէ. եւ համեմատեալ նախապէս սրբագրեցեալ ընտիր օրինակաց» (էջ 490):

Իսկ «Յիշատակարան»-ը կ'ըսէ. «... Որպէս յայսմիկ ռազմապատ՝ եւ թղթոց եւ այլոց նիւթոց գործարանիս պիտանացու երոց՝ հագուագիւտ եւ թանկագին վայրկենի, զօգնութիւնն աներեւոյթ ի թիկունս հասուցեալ մեզ, ոչ միայն ղե գլխոց Աղօթականին Հատոր (որ ի բազում ամաց հետէ, որպէս թէ՛ օրէն եղեալ, առանձին տպեցաւ՝ ուր եւ տպեցաւ) այլ եւ Ներբողականին. ուր եւ Բան խրատու վասն ուղիղ Հաւատոյ եւ մաքուր վարուց առաքիւնութեան՝ ասացեալ մակագրին ի ներքոյ եղեալ՝ համայն Քրիստոնէիցս հարկաւոր գիտելեաց եւ գործելեաց կրթարան՝ ճոխաբանութիւնն» (էջ 492):

Ղազիկեան կը յիշատակէ նաեւ 1856-ին Երուսաղէմ հրատարակուած մեր գործածած օրինակը (էջ 499), որուն անդրադարձանք արդէն իր տեղին:

Բ. Հրաչեայ Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հատոր ա., Պէյրութ, 1972:

<sup>14</sup> 1763:

«Գրիգոր (սուրբ) Նարեկացի, որդի Խոսրով եպիսկոպոսի Անձեւացեաց. ծնվել է “951 թվին”. մանուկ հասակից որբ մնաց մորից, ինչպէս ակնարկուած է ինքն էլ Նարեկ ՄԱ. “Առ մայրն իմ որ երկնեաց, եթէ կասեցան գլթութիւնքն ընդ նահանջել կենդանութեանն”:

Աշակերտեց Անանիա Նարեկացուն, որ իր մոր հորեղբորորդի էր եւ Նարեկայ վանքի ու դպրոցի հիմնադիրը: Նշանավոր եղավ իբրեւ սրբակյաց վանական նույն վանքի եւ խորհրդապաշտ (միստիկ) բանաստեղծ: Ժ դարի մեր նշանավոր մատենագիրն է. իր գործերն են Նարեկ աղօթագիրքը (գրված “1002 թ”), Մեկնութիւն Երգ երգոցի (“977 թ”), Պատմութիւն եւ ներբող Ապարանից Ա. Խաչին, Գովեստ երգաբանութեան Տիրուհւոյ կամ Գովեստ կուսի, Ներբողեան գովեստի ի համօրէն գունդս առաքելոցն, Բան նուիրական գովեստի ի մեծ հայրապետն Ա. Յակոբ Մծբնայ, Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքիւնութեան (երկբայելի), Մեկնութիւն Ո՛վ է դայի, Ընդդեմ Թոնդրակեցոց, Ներբող Շողակաթի, Խրատք վասն աղօթից եւ վասն արտասուց յուսոյ եւ սիրոյ (Ձեռ. Վենետ. Բ. 1059), Տաղ գալստեան Հոգւոյն “Յանկարծահնչեաց հայրաշարժ բղխումն հրահոսավտակ բոցաշաւիղ եռանդն” (Ձեռ. Վենետ. Բ. 1064), Երկինքն ի յերկիրս եւ երկիրս ի յերկինքն, վայրէջք ի խոնարհ եւ վերելք ի բարձունս (անդ), եւ այլ գանձեր ու տաղեր, որոնց մեծ մասը հավաքված է մի հատորի մէջ՝ “Գրիգորի Նարեկայ վանից մատենագրութիւնք” (տպ. Վենետիկ 1840): ... Նարեկացին մեռավ “1003 թ”, 53 տարեկան հասակում եւ թաղվեց Նարեկայ վանքում, ուր այժմ էլ ցույց են տալիս գերեզմանը (Սրուանձտեանց, Հնոց եւ նորոց, էջ 14)» (էջ 543–546):

Գ. Մաղաբիա Արք. Օրմանեան, Ազգապատում, ա. հատոր, Պէյրութ, 1959:

«Նարեկ աղօթագիրքին թուական նշանակուած է, 451 = 1002 տարին (Նար. 268), իսկ միւս գրուածներուն, Առաքելոց եւ Յակոբ Մօքնայի ներբողներուն, դանձերուն եւ տաղերուն ժամանակները որոշակի չեն նշանակուած, եւ Հարկաւ առիթներու համաձայն դանազան ատեններ պատրաստուած են; իսկ Ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարոց խրատին (Նար. 483) հեղինակութեան ստուգութիւն ճշգրիտ մատենագրութեամբ զբաղողներուն կը թողունք» (էջ 1180):

Գ. Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգութեան, գրաբարից թարգմանեց Մկրտիչ Խերանյան, Երևան, 1960:

Այս թարգմանութեան յառաջաբանին մէջ Մ. Մկրեան կը գրէ. «Նրա այն բոլոր երկերը, որոնք հին ձեռագիր կենսագրականներու մ հիշատակվել են, հասել են մեզ: Բանաստեղծի առաջին գրվածքը համարվում է 977 թվականին գրած Սողոմոնի “Երգ երգոց”-ի մեկնությունը. այնուհետեւ նա գրել է “Ապարանից խաչի պատմությունը”, “Գանձեր”, “Ներբողներ”, “Տաղեր” եւ այլ ժանրի գործեր: Նարեկացու վերջին ստեղծագործությունը նրա հանճարեղ “Մատյան ողբերգության” պոեմն է, որը նա ավարտել է վախճանվելուց մի տարի առաջ՝ 1002 թվականին» (էջ xii):

Կարեւոր է մատնանշել, թէ «... եւ այլ ժանրի գործեր» գրելը, առանց մանրամասնելու եւ բացայայտելու, մեզ կը տանի «ժանր» բառին ետին գտնուող գործերուն: Այս ենթադրել կու տայ նաեւ լուռ առնչութիւն մը Խրատ-ին, որ եթէ ոչ ստուգապէս, գոնէ ենթադրաբար կրնայ վերագրուել Նարեկացիի, որպէս “Երգ Երգոց”-ի մեկնութենէն, Գանձերէն, Ներբողներէն, Տաղերէն եւ “Մատնան ողբերգութեան”-էն տարբեր «ժանր»-ի գործ մը:

Ե. Նարեկ, Աղօթամատեան Ս. Գրիգոր Նարեկացու, արդի հայերէնի վերածեց թորգոմ եպիսկոպոս, Անթիլիաս, 1970:

Յառաջաբանին մէջ՝ “Ս. Գրիգոր Նարեկացի, ակնարկ մը իր կեանքին եւ գործերուն վրայ”, կ’ակնարկուի խնդրոյ առարկայ Խրատ-ին եւ կ’ըսուի. «... Խրատ վասն ուղիղ Հաւատոյ եւ մաքուր վարուց» տիտղոսուած ճառ մը որ իրաւամբ անհարազատ կը նկատուի...» (էջ 17):

Սակայն, սրբագանը ո՛չ կը ճշդէ անհարազատութեան պատճառը եւ ո՛չ ալ Խրատ-ը ուրիշի մը կը վերագրէ:

Զ. Մանուկ Աբեղեան, Հայոց հին գրականութեան պատմութիւն, գիրք առաջին, Պէյրութ, 1955:

Կը կարդանք. «Նա եղել է քաջ մեկնիչ Ս. Գրքի, գրել է մեկնություններ եւ ճառեր՝ “Վասն աղօթից, պահոց եւ արտասուաց”, “Վասն գղջման եւ արտասուաց եւ աղօթից”, եւ մի ուրիշը՝ “Խրատ հոգեւոր թէ որպէս կարասցէ մարդ որոշել զմիտս յերկրաւորաց եւ զայս կեանս արհամարհել եւ Աստուծոյ միայն ցանկալ եւ արքայութեան նորա” [Ծանօթ.] Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկաց վանից վանականի մատենագրութիւնը, Վեմետիկ, 1840»: “Այս գրուածքը «Խրատ ոգեշահ, թէ որպէս կարասցէ մարդ զմիտս որոշել յերկրաւորաց» վերնագրով՝ ձեռագիրների մէջ կայ նաեւ Անանիա Սանահնեցու անունով: Տես «Արարատ», Էջմիածին, 1901, էջ 274»» (էջ 550):

Այս վերեւ յիշուած Խրատ-ը չի կրնար մեր ուսումնասիրած Խրատ-ը ըլլալ, սակայն նիւթի տեսակէտէ՛ կրնայ նմանութիւն մը ունենալ անոր հետ:

Աբեղեան նաեւ կը գրէ. «Երկերը:- Մենք մինչեւ այժմ դժբախտաբար չենք կարող ասել, թէ նրանից որքան երկեր են մնացել: Յայտնիները հետեւեալներ են (1՝ 1. Գանձեր (թուով երեք), 2. Տաղեր ու մեղեդիներ (քսանից աւելի), 3. Մի թուղթ թոնդրակեցիների

դէմ, 4. “Մեկնութիւն Երզոց երգոյն”, որ գրուած է Վասպուրականի Գուրգէն թագաւորի հրամանով Հայոց ՆԻԶ-մեր թ. 977 թուին, 5. “Պատմութիւն Ապարանից խաչին, եւ Ներբող Ս. Խաչի եւ Ներբող Ս. Աստուածածնի”, որոնք գրուած են Մովսէս Կալիկոպոս Ստեփանոսի խնդրով 989 թուից յետոյ եւ Ողբերգութիւնից առաջ, 6. “Ներբող առաքելոց”, որ գրուած է Ողբերգութիւնից առաջ, 7. “Ներբող Ս. Յակոբայ Մծբնայ Հայրապետին”, 8. “Մատեան ողբերգութեան”, որ մեր բանաստեղծի ամենամեծ երկն է» (էջ 553–554):

Խրատ-ը չկայ թուակարգուածներուն մէջ:

է. Հենրի Գաբրիելյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, Հատոր Բ., Երևան, 1958:

Գաբրիելյան այս Հատորին մէջ վերլուծած է Ս. Գրիգոր Նարեկացիի «միստիցիզմը»: Ան օգտագործած է նաեւ ԽՐԱՏ-ի 1856-ի Երուսաղէմի հրատարակութիւնը:

Նարեկացիի միստիցիզմին ելակէտը Աստուած ընդունելէ ետք, կը գրէ. «Աստվածն այն է, որը “ոչ որեւէ մեկից է եղել եւ ոչ էլ ինքն է իրեն ստեղծել, ոչ մի բան չկա նրանից առաջ, եւ ոչ էլ նրան Հավասար, այլ ինքը ամեն բանի սկիզբ եւ պատճառ է լինում. այն է՝ Համագոյնների ծնունդով եւ լինելությամբ, իսկ ստեղծվածներին՝ արարչությամբ” [Ծանօթ.] Ծառք եւ խոստովանանք հաւատաց արարեալ Սրբոց հարց մերոց Գրիգոր Նարեկացոյ եւ Վահրամ վարդապետի, Երուսաղէմ, 1850, էջ 8<sup>15</sup>, գրուած է Նարեկացին: Մարդը, պիտի աշխատի ոչ թէ մտքով Հասնել աստուծուն, քննել ու զննել նրա որպիսութիւնը, այլ “Հավատալ գԱստուած Հայր էութ-

<sup>15</sup> Հոս թէ՛ գիրքի խորագիրին եւ թէ՛ տպագրութեան թուականին մէջ սխալներ կան. պէտք է ըլլայ. «Ծառք եւ խոստովանութիւնը հաւատոց արարեալ սրբոց հարց մերոց Գրիգորի Նարեկացոյ եւ Վահրամայ վարդապետի, Երուսաղէմ, 1856»:

թիւն ճշմարիտ»» [Ծանօթ.] Ծառք, էջ 5 (էջ 43):

Նիւթի եւ աստուածութեան յարաբերութեան մասին խօսելով, կը գրէ եւ կը մէջբերէ. «... նյութը տիառնագործվելով՝ չի անէանում աստվածության մեջ եւ ոչ էլ աստվածութիւնն է նույնանում դրա հետ, այլ տեղի է ունենում կողմերի խառնուրդ, որն իրենց ինքնութիւնը պահպանածների միասնութիւնն է: Նա գրուած է. “Ոչ անբացատրելի պարզութիւնը եւ աստվածային էութիւնն անմարմին լինելը փոխվեց մարմնի նյութական եւ բաղադրյալ ծանրութիւն, եւ ոչ էլ մարմնի հյութավոր եւ թանձր բնութիւնը եղավ աննյութ աստվածական պարզութիւն, այլ երկուսի էական Հատկութիւնն էլ անշփոթ կերպով պահելով եւ անպատմելիորեն միացրեց իրար քան ամեն խառնում ու միութիւն» [Ծանօթ.] Ծառք, էջ 10–11: Ուրեմն, նյութը երբեք չի նույնանում աստծո հետ, եւ ոչ էլ սա է նույնանում նյութի հետ, երկուսն էլ գոյութիւն ունեն կողք-կողքի առանց փոխադարձ ձուլման ձգտման կամ կարողութիւն» (էջ 49):

Խրատ-ին մէջ բացայայտուած զգայարանական ներգործութեանց բաժինէն օգտուելով, կը ճշդէ. «“Մտքի տեսութիւն” առարկան տրվում է զգայարանների միջոցով: “Զգայնութիւնն այն է, որ ըստ յուր գորութիւն, ինչ ներգործութիւն էլ դրսից ընդունում է, զգում է եւ ճանաչում” [Ծանօթ.] Ծառք, էջ 51: Եվ Նարեկացին մեկ առ մեկ քննութիւն է առնում զգացութիւնն օրգանների դերն այդ տեսակետից: Զգայութիւնն օրգանները կարող են մեզ տալ նաեւ վատ զգայութիւններ, բայց դրանից չի հետեւում, թե Հարկավոր է այդ օրգաններն անգործունէութիւնն մատնել, ասում է նա: “Զգայութեանց մեր դրուես ոչ Հանապազ պարտ է փակել”: Նարեկացին ծայրահեղ ասկետիզմին կողմնակից չէ: Զգայութիւնն օրգաններն ստեղծված են արտաքին աշխարհի հետ Հարաբերութիւնն մեջ մտնելու, այն տեսնելու եւ ճանաչելու համար: “Ական

գործ է տեսանելն, եւ ունկան՝ լսելը, նմանապէս եւ այլոցն ըստ ինքեանց սահմանի՝ [Ծանօթ.] Ծառք, էջ 52–54, գրում է Նարեկացին» (էջ 51):

Նարեկացիի թոնդրակեցիներու հանդէպ դիրքորոշումին մէկ տպաւորութիւնը նկատելով Խրատ-ին մէջ յիշատակուած նախադասութիւն մը, կը գրէ. «Թոնդրակեցիները պատասխանեցին, թե հարկավոր է փոխել այդ իրականութիւնը, հարկավոր է պատժել մեղավորներին, նոր ու արդար կարգեր սահմանել երկրի վրա: Դրա համար Նարեկացին թոնդրակեցիներին անվանեց խառնակիչներ եւ անիծեց որպէս աստվածուբացներ: Դեռ ավելին. նա Հայտարարեց “Եթե վայելչական կարգը եղծվելով ոչնչանում է եւ ծառաները դուրս են գալիս տերերի դեմ եւ իշխանութիւնը հափշտակում, եւ տուփական զգայնականութիւնը բանականութեան է տիրում, իսկ բանականութիւնը՝ խոհականին, ամեն բան խառնակվում է, վայրիվերո կործանվում եւ յուրաքանչյուրը դեպի հակառակ գործողութիւնն է շարժվում”» [Ծանօթ.] Ծառք, էջ 39 (էջ 52):

Ը. Հայկական սովետական հանրագիտարան, Հատոր 3, Երևան, 1977:

«Գրիգոր Նարեկացի (951–1003), հայ բանաստեղծ, փիլիսոփա, երաժիշտ: ... Գ. Ն-ուց մնացել են բավական թվով գործեր՝ “Մեկնութիւն երգոց երգոյն Սողոմոնի”, չորս ներբող, գանձեր, տաղեր. (թվով 30-ից ավելի), “Մատեան ողբերգութեան” պոեմը, թղթեր եւ այլ գործեր» (էջ 218–219):

Հոս եւս չէ յիշատակուած Խրատ-ը. բայց պէտք է դիտել տանք, թէ այլ գործեր եւս չեն յիշատակուած: Աւելի ճիշդ եւ արդար կ'ըլլար, եթէ փոխանակ «եւ այլ գործեր» ըսելու, խմբագրողներ յստակեցնէին նաեւ մնացեալ գործերը:

Թ. Հայր Միքայէլ Չամչեան, Պատմութիւն հայոց, Հատոր Բ., Վենետիկ, 1785:

«... Արար սա եւ զճառս եւ զներբողեանս եւ զգանձս գեղեցիկս, եւ զմեղեղիս բազում: Արար եւ զմեկնութիւն ո՛վ է դային ի գրոցն Յոբայ: Արար դարձեալ եւ զհրահանգութիւն հաւատոյ եւ վարուց ի խնդրոյ ազգականին իւրոյ վարդանայ՝ որ էր դիւանադպիր սենեքերիմայ արքային արծրունեաց. եւ զայլ յորվագոյն գրուածս եւ խրատական ճառս հոգեղիս» (էջ 853):

Փ. Հայր Գարեգին Զարբհանալեան, Հայկական հին դպրութեան պատմութիւն (դ–ժգ դար), Վենետիկ, 1897:

«Նալեան պատրիարքին տպագրութեան մէջ կայ նաեւ հոգեւոր խրատ մը որ Հրահանգ հաւատոյ կը կոչուի. եւ ուսկից իրմէն առաջ ալ Շրոտէր գերմանացին վկայութիւն կը բերէ իր Արամեան գանձարանին մէջ, եւ Նարեկացոյ երկասիրութիւն կը համարի: Մեր տեսած գրչագրաց մէջ այս հրահանգին վերնագիրն է. “Արեւոյ վարդապետի յոքներանեան մենաւորի Գրիգորի՝ համառօտիւք բանք խրատու վանս ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան, ի խնդրոյ նորին հարագատի Վարդանայ դիւանադպիրի”։ Այս վերնագիրին մէջ որովհետեւ Նարեկացոյն անունը չի գտնուիր, հաւանական կ'ընենայ թէ ուրիշ համանուն Գրիգորի մը երկարասիրութիւն ըլլայ, որ հայերէն լեզուի կարգաւորեալ հմտութիւն, եւ աստուածաբանական իմաստից ալ ներհուն եւ քաջավարժ տեղեկութիւն ունեցեր է: Ոմանք ալ կարծեցին թէ Գրիգորի Սկեւոացոյ կամ Լամբրոնացոյ աշխատասիրածն ըլլայ: Նարեկացոյն չըլլալուն գլխաւոր ապացոյցն ալ այն կ'ընենայ որ Վարդան անուամբ եղբայր չունէր Նարեկացին, այլ ըստ աւանդելոյ պատմութեան՝ երեք եղբարք էին ասոնք, Սահակ, Յովհաննէս եւ Գրիգոր» (էջ 548–549):

ԺԱ. Բարբէն աթ. կթղ., Յուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Ազգային մատենադարանի հայոց, Անթիլիաս, 1961:

«Թիւ 131, ՆԱՐԵԿ – Յանկ գրոց սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ. եր 540–542» (էջ 815–818): Միայն այս յիշուած է եւ ամբողջական ցանկը չէ տրուած Յուցակ-ին մէջ:

Թիւ 105, ՀԱԻԱՔԱՇՈՅ (այլ եւ այլ հեղինակներու կողքին յիշուած է Խրատ-ը եւ տրուած է անոր բովանդակութեան ամբողջական պատկերը՝ բաժանումներով միատեղ):

«Մերոյ վարդապետի յոֆնեանեան մենատրի Գրիգորի, համառաւիւք բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան, խնդրոյ նորին հարագատի վարդանաւ/դիանադարի. “Տէրունեանն հաւանեալ խրատու որ ըստ պարգեւասէր եւ յոքնառատ բարեբարութեանն ... անախտ միաւորութեամբ յանգուգական փառան վայելել ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր որ է օրհնեալ յաւիտեանս ամէն”. (եր. 109–169):

Այս գրուածքը այլ եւ այլ մասեր ունի, որոնք նշանակուած են ստորին լուսանցքներու վրայ.

- “Հաւատոյ դաւանումն վասն անձնաւորութեանցն”. (եր. 111–112):

- “Դաւանումն երից անձանց եւ մի բնութեան Աստուծոյ ի կատարեալ բնութեանց անչիոթ միացեալ”. (եր. 113–114):

- “Վասն Հաւատոյ, վասն անարատ մարմնոյ եւ արեան Տեառն, վասն դարձի եւ ապաշխարութեան”. (եր. 117):

- “Վասն դատաստանաց եւ Հատուցման”. (եր. 118):

- “Վասն Հաւատոյ”. (եր. 119–120):

- “Վասն գործոց եւ Հատուցմանց”. (եր. 121–122):

- “Վասն զգայարանաց”. (եր. 123):

- “Վասն բանականին եւ մասանց սորին”. (եր. 124–125):

- “Վասն սիրոյ պատուիրանին”. (եր. 126):
- “Վասն եղբայրսիրութեան”. (եր. 127–128):
- “Յաղագս ողջախոհութեան եւ բղջախոհութեան”. (եր. 129):
- “Վասն շնութեան”. (եր. 130):
- “Վասն ցամաքականին”. (եր. 131):
- “Վասն նախանձու”. (եր. 132):
- “Վասն անսահման խառնակութեան”. (եր. 133):
- “Վասն գարշ գործոց”. (եր. 134):
- “Խրատ առաքինի վարուց”. (եր. 135):
- “Վասն Ե. զգայութեանց մարմնոյ”. (եր. 136–137):
- “Վասն չար նախանձու”. (եր. 138):
- “Վասն ականն”. (եր. 139):
- “Վասն ի ծածուկ տեսողին Աստուծոյ”. (եր. 140–141):
- “Վասն ամենայն եղելոցս յանգուցից յարարչէն”. (եր. 142):
- “Վասն ողջախոհեացն”. (եր. 143):
- “Զգուշութիւնք ախտից”. (եր. 144–145):
- “Վասն անփակ լեզուի”. (եր. 146):
- “Վասն զբարին խօսելոյ”. (եր. 147):
- “Վասն սիրոյ”. (եր. 148):
- “Վասն ի հոտ գիտութեան”. (եր. 149):
- “Վասն յորովայնի, վասն արբեցողաց”. (եր. 150–151):
- “Ե. զգայութեանցն”. (եր. 152):
- “Պահոց պնդութեանն, վասն ձուկն եւ ձէթ եւ գինի ոչ ուտելոյ”. (եր. 153–154):
- “Վասն լեզու”. (եր. 155–156):
- “Վասն կարճել ի մեղաց”. (եր. 157):
- “Վասն կաշառոց եւ տոկոսեաց”. (եր. 158):
- “Վասն աղօթից”. (եր. 159–161):

- “Վասն սո/ւրբ պատարագին ժամու” (հր. 162):
- “Վասն մարմնոյ եւ արեանն: Վասն անարժան Հաղորդելոց” (հր. 163):
- “Վասն խոստովանութեան” (հր. 164–166):
- “Վասն ոտիցն ընթացից” (հր. 167):
- “Վասն մաքրութեան մտաց” (հր. 168):
- “Ի քրիստոս եւ յեկեղեցի” (հր. 169)» (էջ 667–671):

ԺԲ. Հ. Մկրտիչ Աւգերեան, Լիակատար վարժ եւ վկայաբանութիւն սրբոց ուր կան ի հին տօնացոցի Եկեղեցոյ հայաստանեայց, ի Վենետիկ ի վանս սրբոյն Ղազարու, յամի Տեառն 1810:

«... Արար եւ զմեկնութիւն Ով է դային՝ որ ի գիրս Յորայ. թող զայլ գործս՝ որ չերեւին ի միջի» (էջ 496):

Խրատ-ին մասին ոչ Հաստատում կայ եւ ոչ՝ Հերքում:

ԺԳ. Եղիշէ արքեպս. Դուրեան, Պատմութիւն հայ մատենագրութեան, Երուսաղէմ, 1933:

«Ընդունուած է սակայն որ Նարեկացիի գլուխ գործոցն է իր Աղօթագիրքը: Տեսակին մէջ անհասար գրուած մը, գոր ՆԾԱ (= 1002) թուականին աւարտած է Հեղինակը, իրեն աշխատակից ունենալով իր Հարազատ Յովհաննէս եղբայրը: [Ծանօթ.] Իր միւս եղբայրն էր Սահակ, որ հօրը գործերուն ընդօրինակութիւնն ըրած է: Բայց որովհետեւ Վարդան անունով եղբայր մըն ալ չէ ունեցած Նարեկացին, անհարազատ պէտք է համարել իրեն ընծայուած խրատ դասանութեան ընդարձակ գրութիւնը, որուն ոճն ալ արդէն չի կրնար Նարեկացիի ոճին հետ համեմատուիլ» (էջ 172):

ԺԴ. Հայ մշակույթի նշանավոր գործիչները եւժը դարեր, Երևանի Համալսարանի Հրատարակչութիւն, Երևան, 1976:

«Նարեկացոց մնացել են բավական թվով գրվածքներ: Ինչ որ նրա երկերից հիշատակված են հնագույն կենսագրականներում, բոլորն էլ հասել են մեզ. դրանց թվում են “Մեկնութիւն Երզոց երգոյն Սողոմոնի”, չորս Ներբողներ (Նվիրված Ս. Խաչին, Աստուածածնին, Առաքյալներին եւ Հակոբ Մծբնա եպիսկոպոսին), Ապարանից խաչի պատմութիւնը, գանձեր, տաղեր (թվով 25-ից ավելի), “Մատեան ողբերգութեան” պոեմը, թղթեր ու այլ գործեր» (էջ 181):

ԺԵ. Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, Երևան, 1983:

“Մխիթար Անեցու պատմութեան ձեռագիրը եւ ներկայ հրատարակութիւնը” բաժնին մէջ, կը կարդանք. «Մխիթար Անեցու Պատմութեան մեզ հասած հատվածի պետերբուրգյան հրատարակութեան համար հիմք էր ծառայել Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանի ձեռագրերից մեկը: Վերջինիս մահից հետո, 1879 թվականին, 81 այլ ձեռագրի հետ այն եւս բերվում է Էջմիածին եւ մուծվում Գեորգյան Հավաքածու (№. 95, Մաշտոցի անվան մատենադարան №. 2678) [Ծանօթ.] Տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի», հ. Ա, Երևան, 1965, էջ 54–55» (էջ 43–44):

Ապա կը տրուի բովանդակութիւնը, որուն «Թ. 25ա-34բ.»-ն է. Գրիգորի սրբոյ վարդապետի ... բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութենէ, ի խնդրոյ նորին հարազատի Վարդանայ» (էջ 45):

ԺԶ. Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի, Հատոր ա., Երևան, 1965:

«576, ժողովածու. Գրիգորի կր-ի Բանք խրատու» (էջ 352–353):

«1217, ժողովածու. Գր. Սկեւոացոյ Դաւանութիւն» (էջ 503):

«2178, ժողովածու. Գր. Սկեւոացոյ Դաւանութիւն» (էջ 739):

«2678, ժողովածու. Գրիգորի /Նարեկացի, թե՞ Սկեւոացի/ Դաւանութիւն» (էջ 851):

«3087, ժողովածու. Գրիգորի վրդ-ի /Նարեկացի, թե՞ Սկեւոացի/ Դաւանութիւն» (էջ 938):

Այս թիւերուն վրայ աստղեր նշանակուած են եւ Գրիգոր Սկեւոացիի անուան տակ կը կարդանք. «(Մանոթ. թիւ 576, 581, 1217, 2178, 2678, 3087 ձեռագրերում եղած Բան խրատու վասն ուղիղ Հաւատոյ. “Տէրունեանն Հաւանեալ խրատու...” նյութը վերագրվում է ե՛ւ Նարեկացուն ե՛ւ Սկեւոացուն, ուստի Համարները կրկնում ենք երկուսի էլ անվան տակ»):

Յիշուած թիւ 581-ը աստղ չունի: 581, ժողովածու. Խրատը (Անանիա... Գր. Նարեկացի, անանունք) (էջ 354):

ԺԷ. Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի, Հատոր բ., Երևան, 1970:

«8697, ժողովածու. Գր. Նարեկացոյ Խրատ վասն Հաւատոյ» (էջ 796):

ԺԸ. Բարգէն աթոռակից կաթողիկոս, Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից, 1957, Անթիլիաս:

«111 Հաւաքածոյ (Դաւիթ Անյաղթ, Գր. Նարեկացի, Ն. Շնորհալի, Գիրք բնութեան, եւ այլն)

գ. “Մերոյ վարդապետի յոբնեւանեան մենատրի Գրիգորի, Հա-

մառաւտիւրք Բան խրատու վասն ուղիղ Հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան, ի խնդրոյ նորին Հարազատի, Վարդանա՛ դիւանադարի”:

Վարի լուսանցքին վրայ.- “Գրիգորի Նարեկացոյ Խրատ վարուց եւ գործոց”, էջ 179–252» (էջ 565–567):

ԺԹ. Հայր Գարեգին Զարբհանալեան, Հայկական մատենագիտութիւն, Վենետիկ, Մխիթարեան, 1883:

«Նարեկացի (Ս. Գրիգոր)» (էջ 482–493):

Ի. Նորայր եպս. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, Հատոր ե., Երուսաղէմ, 1960:

«652, ժողովածոյ, նամականի. Ն. Շնորհալի. Բովանդակութիւն. Ա. էջ 1. Ս. Վարդապետին յոքներանեան մենաւորի Գրիգորի Նարեկացոյ, Համառաւ/օ/տիւրք բան խրատու վասն ուղիղ Հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան ի խնդրոյ նորին Հարազատի Վարդանայ դիւանայդարի. Տէրունեանն Հաւանեալ խրատու...» (էջ 235):

«698, Նարեկ. ... Խօսեցաւ այլեւս յարտաքոյ ճառերս յաւելի քան զգիրքս, բայց մեք ոչ պատահեցաք եւ ոչ որոնեցաք գրել աստ» (էջ 304):

ԻԱ. Հ. Բարսեղ Սարգիսեան, Մերոյ հօրն Եւագրի Պոնտացոյ վարժ եւ մատենագրութիւնմ թարգմանեալք ի յունէ ի հայ բարբառ ի հինգերորդ դարու, Վենետիկ, 1907:

«Ժ. դարուն Նարեկայ անապատի մեծ ճգնողը՝ Գրիգոր Նարեկացին եւ՝ թէպէտեւ Եւագրի եւ իր գրուածներուն բացորոշակի յիշատակութիւն չըներ – ինչպէս նաեւ միւս հոգեւոս Հայրերուն, – սակայն ու՛ ուշի ուշով կարդացեր է անոր գէթ երկու գրութիւննե-

ըը, այսինքն՝ Նարեկը՝ զոր յօրինած է իր միաբան Հարց խնդրանօք, եւ Խրատները (Ծանօթ.) Որում խորագիրն է. “Սրբոյ վարդապետի յոգնեբանեան մեծաւորի Գրիգորի, համառօտիւք բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան, ի խնդրոյ նորին հարագատի՝ վարդանայ Դիւանադպրի”։ Հ. Յովհ. Չօհրապեան 1749ին ընդօրինակելով զայս, Կ. Պոլսի Պատրիարիքաբանի թիւ 87 գաղափարէն, կը գրէր փակագծի մէջ թէ. “Որ երեւի լինել Գրիգորի Սկեռացոյ”։ Սակայն իրաւամբ Նարեկացոյ անուամբ եւ Նարեկ գրոց հետ հրատարակեց զայն Յակ. Նալեան, եւ անկէ յառաջ ալ Սքրոտէր գերմանացիին՝ Արամեան զանձին մէջ։ Հ. Մ[ի]ք. Չամչեան (տես Պատմ. հտ. ք. եր 853) ոչ միայն Գր. Նարեկացոյ վաւերական գործ կ’ենթադրէ, այլ վարդանն ալ Արծրունեաց Սեմեքերիմ թագաւորին դիւանադպիր եղած, բայց առանց պատմագրէ մը կոչում ընելու։ Սակայն վաւերականութեան ամենագօրեղ կոուանը տուած է արդէն Խրատներու հեղինակը։ Արդ՝ սա ազատաբար մէջ բերելէն ետք բոլոր իր հաւատալիքը, ապա այսպէս կը գրէ. “Չայս վայելչական կարգ հաւատոց գոցես եւ յընդհանրական դաւանութիւն սուրբ եւ տիեզերական ժողովոյն Նիկիոյ” եւ այլն։ Եւ իրօք, երբ մենք կը գտնենք Նարեկին մէջ (եր. 201 եւ 428) երկիցս Նիկիական հաւատոյ դաւանութիւնը, այլ եւս տարակուսելու բանաւոր պատճառ չունինք՝ որ Խրատներուն վրայ խորագրուած մեծաւոր Գրիգորը՝ նոյն ըլլայ Նարեկի հեղինակին հետ։ *Իր հարագատին վարդան գիւանադարի յանձնարարութեամբ, պիտի տեսնէ ակներեւ Եւագրի ճառերու ազդեցութեան նորաբանչ ծնունդը ասոնց գրողին մէջ. եւ կարելի ալ չէ որ նա կարգացած եւ ներշնչուած չըլլար Նիտրիոյ մեծ խորհողէն, ինչպէս եւ Եփրեմ Խուրին Ասորիէն։ Եւ ստուգել՝ բոլոր մարդկային այն խորհուրդները, կիրքերը, ներգործութիւնները եւ վարդա-*

